Lиц
526,549

№ 1282

Հրատարակութիւն Կենդրոնական Գրավաճառանոցի

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Աշխատասիրեց

ՀԱՅՈՐԴԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

Тифлисъ, типог. М. Вартанянцъ, Троиц. пер. д. № 11.

1889

Дозволено Цензурою Тифлисъ, 27-го Апрѣля 1889 года.

Կ530

549-2009

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ա. Աշխարհի ստեղծագործութիւնը և առաջին մարդկանց կեանքը դրախտի մէջ։

(5198 տարի Ք. Ա.)

1. ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՀՈԳԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ.

Սկզբումն Աստուած ստեղծեց անտեսանելի աշխարհը, այսինքն այն անմարմին հոգիները, որոնք ունէին բանականութիւն և ազատ կամք և որոնց մենք հրեշտակներ ենք անուանում։ Հրեշտակ՝ նշանակում է համբաւաբեր։ Նրանք այն պատճառով համբաւաբեր էին կոչվում, որ Աստուծոյ կամքով ստանում էին տեսանելի մարմին, երևում էին մարդկանց և Աստուծոյ պատուէրները յայտնում էին նրանց։

Բոլոր հրեշտակները բարի ստեղծուեցան։ Բայց բարձրագոյն հրեշտակներից մինը գոռոզացաւ և մտքումը դրեց որ հաւասարուի Աստծուն։ Աստուած էլ զրկեց նրան սրբութիւնից և նա դարձաւ չար ոգի։

Որպէս Աստուծոյ հակառակորդ՝ նա սատանայ կոչուեցաւ, իսկ որպէս հակառակորդ ամենայն բարիքների—դեւ, այսինքն զրպարտող բանսարկու։ Սատանան հրեշտակներից շատերին իր կողմը գրաւեց։ Աստուած զայրացաւ նրանց վրայ և թոթափեց երկնքից։ Այսպիսով հրեշտակները բաժանուեցան երկու դասակարգի—բարի և

նուր հրեշտակներ։ Այն հրեշտակները, որոնք իրանց Արարչին հնազանդ մնացին, ամրացան իրանց բարութեան մէջ և եղան բարեգործութիւնների օգնող, մարդկանց չարից և փորձանքից ազատող

և Աստուծոյ պատուէրները նրանց հաղորդող։ Աստծուց հեռացած հրեշտակներն էլ ամրացան իրանց չարութեան մէջ և ամէն բարի բաների մշտական հակառակորդները եղան։

2. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Հրեշտակների հետ Աստուած ստեղծել էր եւ երկիրը։ Բայց երկիրը դեռ եւս աներեւոյթ էր եւ անպատրաստ ու որոշ ձեւ չէր առած. ստեղծուած էր միայն այն նիւթը, որից յետոյ Աստուծոյ խօսքով՝ գոյացաւ տեսանելի աշխարհը։ Այս անկերպարան նիւթի վրայ շրջում էր Աստուծոյ կենդանարար Հոգին։

Եւ ասաց Աստուած. «Լոյս լինի»։ Եւ լոյս եղաւ։ Աստուած լոյսը բաժանեց խաւարից. լոյսն անուանեց ցերեկ, իսկ խաւարը՝ գիշեր։ Սկսուեցաւ ժամանակի հաշիւը։ Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ—օր առաջին։

Յետոյ Աստուած ասաց. «Լինի հաստատութիւն ջրերի մէջ»։ Եւ այդպէս էլ եղաւ. աշխարհի նախաստեղծ նիւթը բաժանուեցաւ եւ բազմաթիւ երկնային մարմիններ կազմեց, որոնք հաստատ կացած են երկնքի վրայ։ Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ առաւօտ—օր երկրորդ։

Երրորդ օրն Աստուած ասաց. «Թող մի տեղ հաւաքուին այն ջրերը, որոնք երկնքի տակ են եւ թող երեւան գայ ցամաքը»։ Երբ որ Աստուծոյ խօսքով ձեւակերպուեցաւ ցամաքը եւ ջրերը հաւաքուեցան ծովերի, լճերի եւ գետերի մէջ, Աստուած ասաց. «Թող երկիրն աճեցնէ բանջար եւ խոտ, ցանելու սերմեր եւ պտղատու ծառեր»։ Եւ երկրի վրայ երեւեցան սերմնառատ բանջարներ, խոտեր եւ պտղատու ծառեր։

Չորրորդ օրն Աստուած ասաց. «Թող երկնային հաստատութեան վրայ լոյս լինի, որ լոյս տայ երկրին»։ Եւ արեգակի, լուսնի ու աստղերի լոյսը տեսանելի եղաւ երկրի վրայ։

Հինգերորդ օրը Աստուծոյ հրամանով երկիրն արտադրեց ջրի միջի ձկները, զեռունները եւ թռչունները, որոնք թռան օդի մէջ։

Վեցերորդ օրն Աստուծոյ խօսքով երկիրն արտադրեց ամենատեսակ սողուններ եւ գազաններ։ Երբ որ երկրի վրայ կենդանի արարածներ երեւեցան, Աստուած ստեղծեց նաեւ մարդկանց՝ այր եւ կին։

Եւ նայեց Աստուած այն բոլորին, ինչ որ ստեղծել էր, եւ տեսաւ, որ բարի են։

Եօթներորդ օրն Աստուած դադարեց ստեղծագործութիւնից, այսինքն էլ ոչինչ չ'ստեղծեց։ Նա օրհնեց այդ օրը եւ սրբեց նրան։ Եօթներորդ օրը կոչվում է շաբաթ, որ կընշանակէ հանգիստ։ Այդ օրը նուիրում ենք աշխարհի ստեղծագործութեան յիշատակին։

3. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Աստուած մարդուն հողից ստեղծեց. նա կաւից շինեց նրա մարմինը, կենդանի շունչ փչեց նրա մէջ եւ մարդը կենդանի հոգի եղաւ։ Իր պատկերի եւ նմանութեան պէս ստեղծեց նրան, այն է՝ շնորհեց մաքուր խելք եւ սուրբ կամք *)։ Մարդս մնացած կենդանիներից գլխաւորապէս

*) Աստուծոյ պատկերը յայտնվում է մեր հոգեկան ընդունակութիւնների և կարողութիւնների մէջ։ Աստուած աներևոյթ Հոգի է, որ երկրիս վրայ ամեն տեղ գտնվում է, ամեն բան կենդանացնում է. բայց միևնոյն ժամանակ նա երկրից բոլորովին անջատ էութիւն է։ Մարդուս հոգին նոյնպէս անտեսանելի է, գտնվում է ամբողջ մարմնի մէջ և կենդանութիւն է տալիս նրան։ Բայց կարող է գոյութիւն ունենալ և առանց մարմնի։ Աստուած յաւիտենական է, հոգին ևս անմահ է։ Աստուած ամենիմաստ է և ամենագէտ, մարդուս հոգին էլ ունի ընդունակութիւն իմանալու ներկան, մտաբերելու անցեալը և նախագուշակելու ապագան։ Աստուած ողորմած է, մարդու հոգին էլ ընդունակ է սիրել ուրիշին և նրա համար իր անձը զոհել։

սրանով է տարբերվում։ Առաջին մարդն անուանուեցաւ Ադամ, որ կընշանակէ երկրաւոր։ Աստուած բնակեցրեց նրան դրախտում, Եդեմական գեղեցիկ այգում։ Դրախտն այն երկրումն էր գտնվում, ուր հոսում են Տիգրիս եւ Եփրատ գետերը։ Տէրը նրա համար կերակուր նշանակեց խոտերի սերմերը եւ ծառերի պտուղները. իսկ երկրաւոր կենդանիների համար որոշեց կանաչեղէն խոտը։ Բացի սովորական բոյսերից դրախտումն աճում էին կենաց ծառը, որի պտուղներն ուտելով մարդս ազատ էր մնում հիւանդութիւնից եւ մահից, եւ լաւն ու չարին ճանաչելու ծառը (ծառ գիտութեան բարւոյ եւ չարի)։ Աստուած, երբ Ադամին ներս բերեց դրախտը, օրէնք սահմանեց, պատուիրելով պահպանել եւ մշակել նրան։ Այնուհետեւ Աստուած բոլոր կենդանիները նրա առաջ բերեց։ Ադամը իւրաքանչիւրին յարմարաւոր անուն դրեց, բայց նկատեց, որ այդ կենդանի էակների մէջ մինը չ'գտնուեցաւ, որ կարողանար իրան ընկերակից լինել։ Այդ բանը շատ տխրացրեց Ադամին։ Այն ժամանակ Աստուած ասաց. «Լաւ

Աստուած ամենակարող է, մարդու հոգին էլ ունի կարողութիւն ընտրել ինչ-որ իրան լաւ է թւում։ Բայց մարդու հոգին Աստուծոյ մասն չէ, անսահման տարբերութիւն կայ նրա և Աստուծոյ կարողութիւնների մէջ. Աստուծոյ կարողութիւններն անսահման են. մարդուս հոգեկան կարողութիւնները սահմանափակ։ Աստուծոյ նմանութիւնը մեր հոգեկան ընդունակութիւնների բարի ուղղութեան մէջ է կայանում։ Եթէ մարդս ձգտում է դէպի բարին, դէպի ճշմարիտը և դէպի արդարացին, ապա նա լինում է ըստ նմանութեան Աստուծոյ, իսկ եթէ նա սիրում է միայն իր անձը, կեղծում, թշնամանում, չարութիւններ է գործում և միայն իր մարմնական պիտոյքների, իր երկրաւոր շահերի վրայ է հոգում, ապա դադարում է ըստ նմանութեան Աստուծոյ լինելուց, նմանվում է չար ոգիներին կամ անբան կենդանիներին։

չէ որ մարդս մենակ լինի. դրան մի օգնական ստեղծենք իրան նման»։ Եւ Տէրը խոր քնի մէջ ընկղմեց տրտմած Ադամին, հանեց նրա կողերից մինը եւ այդ կողից նրա համար կին ստեղծեց, յետոյ բերեց նրան Ադամի մօտ, օրհնեց եւ ասաց. «Աճեցէք եւ բազմացէք եւ լցրէք երկիրը, տիրեցէք դրան եւ իշխեցէք բոլոր կենդանիներին։

Որպէսզի մարդիկ իրանց մեծութեամբ չըգոռոզանան եւ չըմոռանան, որ նրանց վրայ իշխում է ինքն Աստուած, Տէրը մի պատուիրան տուեց նրանց, որ սրբութեամբ պիտի պահէին։ Երբ որ առաջին անգամ Ադամին դրախտը մտցրեց, ասաց նրան. «Ամեն ծառի պտուղները կեր, բայց **դու՝ բարին ճանաչելու ծառի** պտուղից չուտես, որովհետեւ ինչ օր որ նրան կըճաշակես, մահով կըմեռնիս»։ Ադամն էլ այս պատուէրը կնոջը հաղորդեց։

Առաջին մարդիկ դրախտի մէջ երջանիկ կեանք էին վայելում. Նրանք չունէին ոչ հիւանդութիւն եւ ոչ որ եւ է երկրաւոր տառապանք։ Նրանց սրտերի մէջ սուտը եւ թըշնամութիւնը տեղ չէր գտել. նրանք անմեղ էին եւ ամօթ չըգիտէին։ Քանի որ նախաստեղծները դրախտի մէջ էին՝ ինքը Տէրը շատ անգամ երեւում էր նրանց, հետները խօսում էր, ընդունում էր որպէս իր որդիք եւ սովորեցնում էր այն ամենը, ինչ-որ պէտք էր իմանալ եւ ինչ-որ իրանք անձամբ չէին կարող գտնել։

4. ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ՄԵՂԱՆՉԻԼԸ.

Առաջին մարդկանց երջանկութիւնը երկար չըտեւեց. սատանան նախանձեց նրանց երանական կացութեանը եւ մտքումը դրեց գայթակղեցնել եւ Աստուծոյ պատուիրանը լուծել տալ։ Նա օձի կերպարանք առաւ եւ գնաց արգելեալ ծառը բարձրացաւ։ Եւան մօտեցաւ ծառին։ Օձը հարցրեց կնոջը. «Ճշմարիտ է արդեօք, որ Աստուած արգելել է ձեզ ուտել դրախտի պտուղներից»։ Կինը պատասխանեց. «Բոլոր ծառերի պտուղները կարող ենք ուտել, միայն այն ծառի պտուղից չըպիտի ուտենք, որ դրախտի միջումն է, որովհետեւ Աստուած ասել է՝ չուտէք նրանից եւ չըմերձենաք, որ չըմեռնիք»։ Սատանան պատասխանեց. «Ոչ, չէք մեռնիլ. Աստուած գիտէ, որ երբ նրա **պտուղից ճաշակէք**, ձեր աչքերը կըբացուին եւ դուք կըլինիք իբրեւ աստուածներ, կիմանաք չարն ու բարին, այդ պատճառով էլ արգելել է, որ չուտէք եւ Իրան չըհաւասարուիք»։

Սատանայի խօսքերը կնոջ հետաքրքրութիւնը շարժեցին. Նա սկսեց կասկածել այն պատուիրանի մասին, որ Ադամը հաղորդել էր իրան։ Ծառի պտուղներն անչափ գեղեցիկ երեւեցան նրան. Նա կամեցաւ ճաշակել արգելեալ պտուղներից եւ չըկարողացաւ զսպել իր ցանկութիւնը։ Նա քաղեց եւ կերաւ արգելեալ պտուղը եւ իր մարդուն էլ ուտացրեց։

5. ՄԵՂՔԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ.

Մեղանչելուց յետոյ՝ նախաստեղծների համար ամեն բան փոխուեցաւ։ Նրանք զրկուեցան հոգեկան հանգստութիւնից. խիղճը տանջում էր նրանց. Նրանք ամաչում եւ վախենում էին։ Վրդովուած, միմեանցից ամաչելով, Նրանք թզենու տե-

բեմներից իրանց համար սփածանելիք շինեցին, որ դրանով ծածկեն իրանց մերկութիւնը: Երբ որ երեկոյեան հովն ընկաւ, նրանք լսեցին, որ Աստուած ման էր գալիս դրախտումը: Առաջ Տիրոջ գալն ուրախացնում էր նրանց, այժմ դա սարսափեցրեց, եւ երկիւղից թագ կացան ծառերի մէջ: Մոռացան նրանք, որ ամենատես եւ ամենագէտ Աստուծուց թագչիլ չէր կարելի. ահա թէ յանցանքը որքան էր կուրացրել

նրանց: Աստուած ցանկանում էր, որ նախամարդիկ իրանց յանցանքն իրանք խոստովանեն, այս պատճառով հարցրեց. «Ո՞ւր ես, Ադամ»: Ադամը պատասխանեց. «Լսեցի Քո ձայնը դրախտի մէջ եւ վախեցայ, եւ որովհետեւ մերկ եմ, թագնուեցայ»:—Իսկ ո՞վ ասաց քեզ՝ թէ մերկ ես, միթէ կերար այն ծառի պտուղից, որ արգելել էի, հարցրեց Տէրը: Ադամը փոխանակ իր մեղքը խոստովանելու, յանցանքը կնոջ վրայ

ձգեց, միեւնոյն ժամանակ կասես Աստուծուն մեղադրելով՝ որ տուել էր իրան այդ կինը: «Կինը, որ դու տուեցիր, խաբեց ինձ եւ կերայ»: Այն ժամանակ Աստուած դէպի կինը դարձաւ. «Այդ ի՞նչ արեցիր դու»: Եւան իր մարդու օրինակին հետեւելով, պատասխանեց. «Օձը խաբեց ինձ եւ կերայ»: Այսպիսով նախաստեղծներն իրանց յանցանքի պատճառով հեռացան Ամենասուրբ Աստուծոյ ներկայութիւնից եւ չ՛կամենալով խոստովանուել այդ յանցանքը, իրանք իրանց պատժեցին:

Բայց Ամենողորմ Տէրը չըցանկացաւ, որ իր ստեղծած մարդը յաւիտեան կորչի եւ սատանայի ձեռքը մատնուի: Նա պատժեց նրանց, բայց միեւնոյն ժամանակ փրկութեան յոյս տուեց: Ամենից առաջ Նա սատանային անիծեց, որ օձի կերպարանք էր առած, եւ ասաց նրան. «Թշնամութիւն եմ դնում քո եւ այս կնոջ, քո սերունդի եւ սրա սերունդի մէջ. Նա պիտի ջախջախէ քո գլուխը, իսկ դու պիտի խածանես նրա գարշապարը» *):

Սատանային պատիժ սահմանելուց յետոյ, Տէրը մարդկանց էլ պատիժ նշանակեց: Եւային Նա ասաց. «Ցաւերով որդի ծնես եւ քո այրդ իշխէ քեզ վրայ»: Յետոյ Նա դարձաւ Ադամին այսպիսի խօսքերով. «Անիծուած է երկիրը քո պատճառով, փուշ եւ տատասկ բուսցնէ նա քեզ եւ վայրի խոտերով կերակրուիս: Քո երեսի քրտինքով ուտես քո հացը. մինչեւ դառնաս դէպի հողը, որից առնուեցար»:

---

*) Այս խօսքերը սատանային պատիժ էին նախագուշակում, իսկ մարդկանց փրկութեան յոյս էին տալիս: Աստուած նախասահմանեց որ կնոջից կառաջանայ մի Մարդ, որի գարշապարից կըխածանէ օձը և Նա դրա գլուխը կըջախջախէ, այսինքն թէև նրանից զրկանքներ կըկրէ, բայց վերջը նրա իշխանութիւնը կըկործանէ և մարդկանց կ՛ազատէ նախնական մեղքի հետեւանքները կրելուց:

Կենդանիների կաշուից Աստուած Ադամի եւ Եւայի համար զգեստ կարեց եւ ապա արտաքսեց նրանց դրախտից։ Աստուծոյ հրամանով Քերովբէն՝ հրեղէն սուրը ձեռքին, կանգնեց դրախտի դրան առաջ եւ մարդկանց թոյլ չտուեց կենաց ծառին մերձենալ։

Բ. Մարդկային ազգը մինչեւ ջրհեղեղը։

6. ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԷԼ.

Դրախտից արտաքսուելուց յետոյ Ադամն ու Եւան որդիք ունեցան։ Երբ որ առաջին որդին ծնուեցաւ, Եւան ասաց. «Ես մարդ ստացայ Աստծուց» եւ անունը Կայէն դրեց, որ կնշանակէ «ստացուած»։ Երեւի նա կարծեց, թէ այս որդին է խոստացեալ Փրկիչը։ Բայց շուտով զգաց, որ խաբուել է, ուստի եւ երկրորդ որդուն Աբէլ անուանեց, որ կնշանակէ լաց։

Ադամի որդիները մեծացան եւ գործի կանգնեցին։ Աբէլը խաշներ էր արածեցնում, Կայէնը երկիրն էր մշակում։ Մի անգամ Կայէնն ու Աբէլը զոհ բերին Աստծուն. Կայէնը բերեց երկրի բերքերից, իսկ Աբէլն իր հօտի անդրանիկ գառներից։ Աբէլը բերեց մաքուր սրտով ու կատարեալ հաւատով եւ ջերմ աղօթքով իր մեղքերին թողութիւն խնդրեց. իսկ Կայէնը բերեց առանց հաւատի, միայն ձեւի համար։ Աստուած Աբէլի զոհն ընդունեց, իսկ Կայէնինը չընդունեց։ Այդ օրից Կայէնն սկսեց նախանձել իր եղբօրը եւ մտքումը դրեց սպանել նրան։

Աստուած չէր ցանկանում, որ Կայէնն այդպիսի չարագործութիւն անէ։ Նա ասաց Կայէնին. «Ինչի՞ վշտացար դու եւ գլուխդ կախ գցեցիր։ Նայիր, յանցանքը մօտենում է

քեզ. նա քեզ իր մէջը կքաշէ, բայց դու իշխիր նրան (այսինքն հեռացրու քեզանից այդ զգացումը)»։ Կայէնը չզսպեց իր սրտի մէջ արթնացած չար զգացումը. Նախանձը սարսափելի մեղքի մէջ գլորեց նրան։ Նա իր եղբօրը խաբէութեամբ դաշտը տարաւ եւ սպանեց։ Այն ժամանակ Աստուած հարցրեց Կայէնին. «Ո՞ւր է քո Աբէլ եղբայրը»։ Կայէնը յանդգնաբար պատասխանեց. «Չգիտեմ, մի՞թէ ես նրա պահապանն եմ»։ Աստուած ասաց Կայէնին. «Քո եղբօր արեան ձայնը երկրից բողոքում է դէպի Ինձ. որովհետեւ դու այդ չար գործը կատարեցիր, հալածեալ եւ տատանեալ լինիս երկրի վրայ»։ Կայէնը դողդողաց, բայց ոչ թէ զղջալուց, այլ երկիւղից, որ եղբօր մահուան համար վրէժխնդիր են լինում։ —Իմ պատիժս այնքան մեծ է, որ անկարելի է նրան տանել, ասաց նա Տիրոջը. ահա դու արտաքսում ես ինձ երկրի երեսից. ես կթագչեմ Քեզանից եւ այնուհետեւ ամեն ոք կսպանէ ինձ»։ Աստուած պատասխանեց. «Այն մարդը, որ Կայէնին կսպանէ, եօթնիցս կպատժուի»։ Եւ Աստուած Կայէնին այնպիսի մի նշան յատկացրեց, որ նրան պատահողները ճանաչեն ու ձեռք չտան։ Այնուհետեւ Կայէնն էլ չկարողացաւ մնալ այն երկրում, ուր Աստուած յայտնվում էր մարդկանց. Նա իր ընտանիքով հեռացաւ եւ բնակուեցաւ Եդեմից դէպի արեւելք։ Կայէնի արարքը մեծ վիշտ պատճառեց իր ծնողներին։ Աստուած նրանց մխիթարելու համար ուրիշ որդի պարգեւեց, որին Սէթ անուանեցին։ Սէթը մեծացաւ եւ իր առաքինի վարք ու բարքով մխիթարում էր նրանց։

---

7. ՍԵԹԻ ԵՒ ԿԱՅԵՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ.

Ադամն ապրեց 930 տարի։ Նա բացի Սէթից եւ Կայէնից ուրիշ որդիք եւս ունեցաւ։ Նրա մահից յետոյ գերդաստանը կառավարում էր ցեղի անդամներից ամենամեծը, որ նահապետ էր կոչվում։ Եւ որովհետեւ Ադամի գերդաստանը՝ դեռ նրա կենդանութեան ժամանակ, երկուսի էր բաժանուել, այդ պատճառով էլ նրան կառավարում էին երկու նահապետներ՝ Կայէնը եւ Սէթը։ Գերդաստանի բոլոր անդամները լսում եւ հնազանդւում էին իրանց նահապետին, որպէս հարազատ հօր։ Նա վճռում էր ընտանեկան գործերը, քննում էր վէճերը, պատժում էր յանցաւորներին։ Տան միւս անդամները նրանից էին գաղափար ստանում Աստուծոյ եւ նրա կամքի մասին, նա էր զոհ մատուցանում Տիրոջը։ Այսպիսով նահապետը իր ցեղի համար եւ թագաւոր էր, եւ քահանայ, եւ հայր, եւ ուսուցիչ։ Այս պատճառով էլ ինչպիսի մարդ որ նահապետն էր, նրա ցեղն էլ նոյնպէս էր լինում։

Կայէնի ցեղը շուտով մոռացաւ Աստուծուն եւ միմիայն իր երկրաւոր պիտոյքների համար էր հոգում։ Շատ օգտակար բաներ հնարեցին նրանք կեանքի յարմարութիւնների համար։ Նրանք գտան երկաթ ու պղինձ կռանելու հնարը, շինեցին երաժշտական գործիքներ, ձեռագործներ եւ հագուստին վերաբերեալ զարդեր, նրանց կեանքն՝ ըստ երեւոյթին, շատ ուրախ էր անց կենում․ բայց այդ կեանքի մէջ բախտաւորութիւն չըկար։ Կայէնի սերունդի մէջ իւրաքանչիւր մարդ իր անձի համար էր հոգում եւ իր եղբայրակիցների վրայ ամենեւին չէր մտածում։ Սրանց մէջ յայտնուեցան մինչեւ անգամ հսկաներ, որոնք սկսեցին ճնշել տկարներին եւ թոյլերին։ Եւ որովհետեւ նրանք Աստուծոյ ճանապարհով չէին

1010
91292
5/9-2009

գնում եւ Աստուածահաճոյ գործեր չէին գործում, այդ պատճառով էլ կոչուեցան որդիք մարդկան։

Այսպէս չէր առաքինի Սէթի սերունդը։ Այնտեղ պահպանուեցաւ հաւատը դէպի Աստուած, յոյսը դէպի ապագայ Փրկիչը, սէրը դէպի բարին ու ճշմարիտը։ Սէթի սերունդի անդամները միմեանց հետ սիրով եւ համաձայնութեամբ էին ապրում, օգնում էին իրար եւ իրանց գործերի մէջ առաջնորդ ունէին Աստուծոյ կամքը, այս պատճառով էլ որդիք Աստուծոյ կոչուեցան։ Աստուած իր ողորմութիւնը շնորհում էր առաքինիներին, թեթեւացնում էր նրանց թշուառութիւնները եւ երկար կեանք էր պարգեւում։ Նրանք ապրում էին համարեա մինչեւ հազար տարի (այսպէս աւա՝ Ադամն ապրեց 930 տարի, Սէթը՝ 912 տարի, իսկ Մաթուսաղան 969 տարի)։ Այս ցեղի նահապետներից ամենանշանաւորն էր Ենովքը, որ իր մաքուր եւ սուրբ կենցաղավարութեան համար կենդանոյն երկինք վերացաւ։

Կայէնի եւ Սէթի սերունդներն սկզբում միմեանցից խորշում էին. նրանք իրար հետ ոչինչ հաղորդակցութիւն չ՚ունէին. իսկ երբ երկու կողմից էլ մարդիկ բազմացան, ապա հեռաւոր ցեղերը սակաւ առ սակաւ սկսան մօտենալ միմեանց եւ իրար հետ յարաբերութիւն հաստատել։ Կայէնի սերունդի ուրախ եւ անհոգ կեանքը հաճելի եղաւ Սէթի սերունդից մի քանիսին։ Նրանք սկսեցին յաճախել ամբարիշտների հասարակութիւնը, կին առան այդ սերունդի անդամներից եւ փոքր առ փոքր ընտելացան այն գէշութիւններին, որ նկատում էին իրանց նոր ազգականների մէջ։ Այսպիսով ամբարշտութիւնը, որ սկիզբն էր առել Կայէնի սերունդից, ժամանակի ընթացքում աւելի ու աւելի տարածուեցաւ եւ մուտ գործեց նա եւ Սէթի սերունդի մէջ։ Վերջապէս այն կէտին հասաւ, որ բոլոր մարդիկ ապականուեցան եւ շաղախուեցան

չարութեան մէջ։ Այս ընդհանուր ամբարշտութիւնների մէջ մի մարդ միայն հաւատարիմ մնաց Աստուծուն եւ դեռ չէր կորցնում իր հաւատը մարդկային ազգի փրկութեան համար։ Սա Նոյ նահապետն էր՝ Սէթի ցեղից։ Նոյը արդար եւ սմբիծ մարդ էր։

8. ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՋՐՀԵՂԵՂ.

(2956 Տ. Ք. Ա.)

Աստուած երբէք չէ ցանկանում մեղաւորներին միանգամից կորուստ պատճառել. Նա այնքան ողորմած է, որ միշտ յանցաւորին նախազգուշացնում եւ միջոց է տալիս իր մեղքերն ապաշխարելու։ Մարդկային ազգն ամբարշտութեան մէջ ընկղմելուց յետոյ, Աստուած Նոյի միջնորդութեամբ իմացրեց նրանց, որ եթէ 120 տարուայ ընթացքում չեն դառնալ եւ չեն ապաշխարիլ, սարսափելի կերպով կըպատժուին։ Նոյի քարոզը զուր անցաւ. մարդիկ չ՚զղջացին։

Այն ժամանակ Աստուած յայտնեց Նոյին, որ ջրհեղեղով պիտի ջնջէ երկրիս վրայի բոլոր ապրողներին։ Նա հրամայեց շինել մի տապան (մեծ նաւ), որի մէջ հնար լինէր տեղաւորել իր ընտանիքը եւ բոլոր երկրաւոր կենդանիների ներկայացուցիչները։ Տապանը պատրաստուեցաւ։ Աստուած Նոյին հրամայեց, որ իր ընտանիքով մտնէ նրա մէջ, վեր առնէ իր հետ այն կենդանիներից, որոնք զոհ էին բերւում եւ մաքուր էին համարւում, եօթը-եօթը զոյգ, իսկ անսուրբ անասուններից երկ—երկու զոյգ։ «Եօթն օրից յետոյ, յայտնեց Աստուած, անձրեւներ կ՚սկսուին եւ կըշարունակուին քառասուն ցերեկ եւ քառասուն գիշեր»։ Նոյը կատարեց Աստուծոյ հրամանը։ Տապանը մտնողներն ութ հոգի էին՝ Նոյը, նրա կինը, երեք որդիքը—Սեմ, Քամ, Յաբէթ եւ նրանց կանայքը։

Սկսուեցան աշնանային յորդ անձրեւները եւ շարունակուեցան քառասուն ցերեկ եւ քառասուն գիշեր։ Բացի անձրեւներից՝ ծովերի ջրերն իրանց եզերքներից դուրս եկան, հարիւր յիսուն օր շարունակ բարձրացան, ծածկեցին բոլոր երկիրն ու ամենաբարձր սարերը եւ խեղդեցին ամեն շնչաւոր արարածները։ Միայն տապանն էր լողում ջրի երեսին։ Այս ջրհեղեղը, որ բոլոր աշխարհը ծածկեց, կոչուեցաւ համաշխարհային ջրհեղեղ։

Հարիւր յիսուն օրից յետոյ Աստուծոյ հրամանով սաստիկ քամի բարձրացաւ եւ հալածեց անձրեւաբեր ամպերն ու ջուրն էլ մղեց երկրի երեսից դէպի իրանց սահմանները։ Այդ ժամանակ Նոյեան տապանը կանգնեց Հայաստանի ամենաբարձր սարի՝ Արարատի գագաթին։ Անուը միւս սարերի

կատարներն էլ երեւեցան: Նոյը դրանից յետոյ դարձեալ քառասուն օր սպասեց եւ ապա տապանից դուրս ուղարկեց մի ագռաւ: Ագռաւը հեռացաւ, բայց ոտը դնելու տեղ գտնելով՝ դիակների վրայ՝ չըդարձաւ: Ետեւից արձակեց աղաւնին, որ ոտը դնելու տեղ չըգտնելով՝ վերադարձաւ եւ կանգնեց տապանի ծածկոցի վրայ: Նոյը ձեռքը մեկնեց եւ բռնեց նրան: Եօթն օր եւս սպասելուց յետոյ, Նոյը երկրորդ անգամ արձակեց աղաւնին: Փոքր ժամանակից յետոյ աղաւնին վերադարձաւ մի ձիթենու թարմ ոստ բերանին: Ձիթենին Աստուծոյ ողորմութեան եւ հաշտութեան նշանն էր: Նոյը ուրախութեամբ ներս ընդունեց աղաւնին՝ որպէս համբաւաբեր Աստուածային գթութեան: Եօթն օրից յետոյ աղաւնին նորից արձակուեցաւ, բայց այլեւս չըվերադարձաւ: Մի քանի ժամանակ եւս սպասելով՝ երբ երկիրը բոլորովին ցամաքեցաւ եւ բոյսերով ծածկուեցաւ, Նոյը Աստուծոյ հրամանով դուրս եկաւ տապանից:

9. ՆՈՅԻ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ՈՐԴԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ.

Տապանից դուրս գալուց յետոյ, Նոյը սեղան կազմեց եւ ողջակէզ զոհ բերեց Աստծուն: Աստուած ընդունեց Նոյի զոհը եւ օրհնեց նրան եւ նրա որդիներին, հրամայեց տիրել բոլոր երկրին, թոյլ տուեց իբրեւ կերակուր գործածել բոլոր կենդանիների միսը: Նա մահու պատիժ նշանակեց այն մարդուն, ով որ կըհամարձակի մարդ սպանել: Բացի սրանից՝ Աստուած խոստացաւ որ այլեւս համաշխարհական ջրհեղեղով չի պատժիլ մարդկութիւնը եւ իբրեւ նշան իր խոստման՝ ցոյց տուեց ծիածանը:

Ջրհեղեղից յետոյ չարութեան նշանները նորից երեւեցան

մարդկանց մէջ: Նոյը Մասիսի ստորոտում բնակութիւն հաստատեց, (գուցէ Ակուռիի մօտ), խաղողի այգի տնկեց եւ երբ որ պտուղը հասունացաւ, հաւաքեց եւ նրա նիւթից ըմպելիք պատրաստեց: Նա երեւի չէր իմանում, որ խաղողի հիւթից գինի կըգոյանայ, որից շատ խմելով՝ մարդս կարող է արբենալ: Իր ծարաւը կոտրելու համար Նոյը իր շինած ըմպելիքից խմեց, արբեցաւ եւ մերկանդամ պառկեց իր վրանի տակ: Քամը տեսաւ իր հօր մերկութիւնը եւ չարամիտ ծաղրով պատմեց եղբայրներին: Բայց Սէմը եւ Յաբէթն իսկոյն գնացին հօր վրանը եւ շուտով ծածկեցին նրան, աշխատելով միեւնոյն ժամանակ նրա մերկութիւնը չըտեսնել: Երբ Նոյը արթնացաւ եւ իմացաւ այս բանը, մօտ կանչեց իր զաւակներին: Նա անիծեց Քամին, նրա որդի Քանանին դառնալով, եւ Աստուծոյ ազդմամբ նախագուշակեց, որ երբ մարդիկ կըցրուին աշխարհիս այլ եւ այլ կողմերը եւ իրանց ազգակցութիւնը կըմոռանան, Քանանի սերունդները արհամարհելի ստրուկներ կըլինին Սէմի եւ Յաբէթի սերունդների առաջ: Միեւնոյն ժամանակ Նոյ նահապետն օրհնեց Սէմին եւ Յաբէթին: Սէմին ասաց, որ աստուածպաշտութիւնը նրա սերունդի մէջ կըմնայ եւ Տէր Աստուածը նրա մէջ կըյայտնուի, իսկ Յաբէթին թէ նրանից կըսերուին շատ ազգեր, նրանք տէր կըլինին Սէմի սերունդների երկիրներին եւ կըվայելեն Աստուծոյ գթութիւնը, որ այդ երկիրների մէջ կ՚երեւի:

---

10. ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

Նոյի երեք որդիներից մարդկային ցեղը նորից բազմացաւ: Սկզբում բոլոր մարդիկ միասին էին ապրում, որպէս մէկ մեծ ընտանիք, եւ մէկ լեզուով էին խօսում: Բայց յետոյ չարագործութիւններն ու երկպառակութիւնները օրէ ցօր բազմացան եւ մարդիկ զգացին, որ իրարից պէտք է հեռանան: Այդ ժամանակ Քամի զաւակները, որոնց ամենից շատ էր սպառնում Նոյի մարգարէութիւնը, մտածեցին արգելք դնել մարդկանց ցրուելուն: Նրանք Սէմի եւ Յաբէթի սերունդներից մի քանիսի հետ խօսք կապեցին եւ վճռեցին շինել իրանց համար քաղաք եւ աշտարակ, որի բարձրութիւնը երկինք հասնի, որպէսզի աշխարհի երեսին սփռուելուց առաջ անուն թողնեն (փառք ժառանգեն) եւ ուր էլ որ գնալու լինին, նրան նայելով ցանկացած ժամանակ նոյն տեղը կարողանան վերադառնալ: Եբեր նահապետի բարեպաշտ սերունդը (Սէմի տոհմից) չըմասնակցեց այս շինութեանը: Անբարտաւան գործը սկզբումը շատ յաջող էր առաջ գնում: Բայց այդ ձեռնարկութիւնն Աստծուն հաճոյ չըթուեցաւ: Նա կործանեց նրան: Կառուցանողների լեզուն այնպէս խառնեց, որ նրանք այլեւս չըկարողացան միմեանց հասկանալ: Այն ժամանակ մարդիկ շինութիւնը ձգեցին եւ ցրուեցան դէպի զանազան կողմեր: Այն քաղաքը, ուր սկսեցին շէնքը, բայց չըկարողացան վերջացնել, անուանուեցաւ Բաբելոն, որ կընշանակէ խառնակութիւն:

Լեզուների խառնակութիւնից յետոյ՝ Յաբէթի ցեղերը Բաբելոնից դէպի հիւսիս դիմեցին եւ փոքր առ փոքր տարածուելով՝ բռնեցին Ասիայի արեւմտեան կողմը, Աֆրիկէի հիւսիսային կողմերը եւ գրեթէ բոլոր Եւրոպան: Քամի ցեղը

բռնեց Աֆրիկան եւ Ասիայի մի մասը (Հնդկաստան): Սէմի ցեղը մնաց Ասիայում եւ բռնեց գլխաւորապէս միջին եւ արեւելեան Ասիան:—Բաբելոնին տիրեց Նեբրովթը կամ Բէլը (Քամի թոռը), որ նշանաւոր որսորդ եւ քաջ տղամարդ էր:

Դէպի այլ եւ այլ կողմեր տարածուելով՝ Նոյի սերունդները մոռացան իրանց ցեղակցութիւնը, փոքր առ փոքր նրանց լեզուներն էլ բոլորովին փոփոխուեցան եւ կորցրին իրանց ցեղական նմանութիւնների մեծագոյն մասը եւ աստիճանաբար օտարացան իրարից: Այդպիսով առաջ եկան այլ եւ այլ ազգեր, որոնք խօսում էին այլ եւ այլ լեզուներով:

11. ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԷՋ.

Քանի որ բոլոր մարդիկ միասին և միմեանց մօտ էին ապրում, նրանք կանոնաւոր գաղափար ունէին Աստուծոյ մասին: Այդ գաղափարը պահպանվում էր բարեպաշտ նահապետների ձեռքով, որոնք նոյն իսկ Աստծուց էին ընդունում յայտնութիւնները, իսկ երբ մարդիկ ցրուեցան երկրի երեսին, ապա փոքր առ փոքր սկսան մոռանալ այն, ինչ որ նահապետներն իրանց հաղորդել էին: Միեւնոյն ժամանակ դրանք առաքինի չէին, որ արժանի լինէին նորանոր յայտարարութիւններ ստանալու Աստուծուց: Այսպիսով ճշմարիտ հաւատի փոխանակ նրանց մէջ աստիճանաբար զարգացան անճիշդ գաղափարներ, սնապաշտութիւններ:

Մարդիկ իրանց շուրջը շատ սքանչելի, բայց իրանց համար անհասկանալի երեւոյթներ էին տեսնում: Այդ երեւոյթների եւ զօրութիւնների բուն պատճառները բացատրել չըկարողանալով նրանք աստուածացնում էին դրանց: Միեւնոյն ժամանակ աստուածացնում էին և այն բոլոր բաները, որոնցից մի չօշափելի օգուտ կամ վնաս էին ստանում: Այսպիսով նրանցից ոմանք աստղերին, լուսնին, արեգակին երկրպագեցին. միւսներն աստուածացրին երկրի բուսական ոյժը, ծովը, կրակը, այլ և այլ կենդանիները. մի քանի ցեղեր մինչև անգամ քաջ մարդկանց աստուած համարեցին: Եւ այսպէս՝ միակ անտեսանելի Աստուծոյ փոխանակ մարդիկ ունեցան բազմաթիւ տեսանելի աստուածներ:

Մի քանի ցեղեր այդ աստուածներն երկու դասակարգի էին բաժանում—չար և բարի աստուածներ, նայելով թէ օգուտ են ստանում նրանցից թէ վնաս։ Ցանկանալով աւելի ևս մօտեցնել իրանց այդ աստուածները, աւելի ևս շօշափելի դարձնել, մարդիկ քարից, փայտից, մետալից և այլ նիւթերից շինեցին նրանց պատկերները։ Այդ ձեռագործ պատկերները կուռքեր էին կոչվում։ Սկըզբում մարդիկ կուռքերն ընդունում էին իբրև իրանց երեւակայած աստուածների սոսկ պատկերներ, յետոյ սկսեցին կարծել, թէ դրանց մէջ բնակվում է մի աստուածային զօրութիւն, ապա այն տեղը հասցրին, որ կուռքերը հէնց աստուած համարեցին և սկսան երկրպագել իբրև ճշմարիտ Աստուծոյ։ Կուռքերի երկրպագուներին սովորաբար անուանում են կռապաշտ կամ հեթանոս։

Հեթանոսներն զգում էին, որ իրանց մեղքերով վշտացրել են Աստծուն, այս պատճառով էլ ծանրագին զոհերով և երկար աղօթքներով աշխատում էին շարժել իրանց աստուածների գութը։ Նրանք կարծում էին, որ բաւական չէ իրանց աստուածներին մատուցանել ամենալաւ կենդանիները, ապա սկսեցին մարդիկ ևս զոհել։ Առաջ զոհում էին իրանց թշնամիներին, որոնց պատերազմի ժամանակ գերի էին անում, իսկ յետոյ սկսան մինչև անգամ իրանց հարազատ զաւակներին զոհ մատուցանել։ Զոհ մատուցանողներին քուրմ էին կոչում։ Իսկ այն տեղերը, ուր զետեղած էին կուռքերը —մեհեաններ կամ կռատուններ։ Կռապաշտների կարծիքով այդ մեհեանների մէջ էին բնակվում աստուածները, իսկ քուրմերն իրանց և աստուածների մէջ միջնորդներ էին համարվում։ առանց քուրմերի, կարծում էին, թէ չեն կարող աստուածների ողորմութեանն արժանանալ։

Իհարկէ կռապաշտութիւնն աստիճանաբար մտաւ մարդկանց մէջ, բայց ժամանակի տեւողութեան հետ նա անչափ տարածուեցաւ և ընդհանրացաւ, այնպէս որ համարեա բոլոր մարդիկ սկսան կուռքերին երկրպագութիւն տալ։ Ճշմարիտ Աստծուն հաւատարիմ մնաց միմիայն մի մարդ, Աբրահամ անունով, որ Թարայի որդին էր, Եբեր *) Նահապետի ցեղից։ Աբրահամն ապրում էր Քաղդէացոց աշխարհում մը Ուր կամ Ուռհայ քաղաքի մէջ։

*) Այս Նահապետի անունով էլ Աբրահամի սերունդը կոչվում է նաեւ Եբրայեցի։

12. ԱԲՐԱՀԱՄԻ ԿՈՉՈՒՄԸ.

Թարան ունէր երեք որդի՝ Աբրահամ, Նաքովր եւ Առան։ Թարայի կենդանութեան ժամանակ նրա փոքր որդին վախճանուեցաւ եւ Ղովտ անունով մի արու զաւակ թողեց։ Թարան շատ հարուստ հովիւ էր։ Նա իր որդիներին վեր առաւ եւ Ուռհայից, որ Քաղդէացոց երկրի հիւսիսային մասումն էր գտնվում, գնաց Խառան, ուր աւելի յարմարութիւն կար իր բազմաթիւ խաշների համար։ Խառանը գտնվում էր բուսականութեամբ հարուստ դաշտավայրում, Եփրատ գետից դէպի արեւելք։

Կռապաշտութիւնը մարդկանց մէջ ընդհանրանալով՝ Տէրն Աբրահամին ընտրեց ճշմարիտ հաւատի եւ Աստուածպաշտութեան պահապան։ Մի անգամ նա յայտնուեցաւ Աբրահամին եւ ասաց. «Դուրս եկ այդ երկրից եւ արի այն երկիրը, որ ցոյց կըտամ քեզ։ Ես մեծ ազգ կըշինեմ քեզ, կ՚օրհնեմ եւ կըբարձրացնեմ քո անունը եւ ժողովրդով կ՚օրհնուին երկրի բոլոր ազգերը»։

Աբրահամը կատարեց Տիրոջ հրամանը. նա վեր առաւ իր կին Սարրային, եղբօրորդի Ղովտին, իր բոլոր կայքը եւ Քաղդէացոց երկրից ուղեւորուեցաւ դէպի Աստծուց ցոյց տուած Քանանացոց երկիրը։ Քանանացոց երկրում ապրում էին ամենաամբարիշտ կռապաշտներ։ Այդ ժամանակ Աբրահամը 75 տարեկան էր։

Առաքինի եւ աստուածապաշտ Աբրահամի համար շատ ծանր էր անհաւատ Քանանացոց մէջ ապրիլը։ Նա այդտեղ բարեկամներ չ՚կարողացաւ գտնել եւ բոլորից հեռացած՝ միայնակ ապրում էր, իր վրաններն օտար հողի վրայ վայր թողելով։ Նրան մխիթարում էր միայն իր մաքուր հաւատը դէպի կենդանի Աստուածը եւ յոյսը դէպի խոստացեալ Փըր-

կիչը։ Աբրահամն առաջ Սիւքէմի մօտ բնակութիւն հաստատեց։ Այդտեղ Աստուած երեւեցաւ նրան եւ ասաց. «Այս երկիրը Ես քո սերունդին պիտի տամ»։ Սիւքէմից Աբրահամը դէպի Բեթէլ ուղեւորուեցաւ եւ ապա իր խաշների հետ թափառում էր Բեթէլի եւ Քանանացոց երկրի հարաւային սահմանների մէջ, երբեմն մինչեւ Եգիպտոս հասնելով։

Երբոր Աբրահամը Քանանացոց երկրում բնակութիւն հաստատեց, ամենից աւելի նեղութիւն պատճառեց նրան իր եղբօրորդի Ղովտը։ Աբրահամը հարազատ որդու պէս սիրում էր նրան. օտար երկրի մէջ սա էր նրա միակ ազգակիցը։ Բայց նրանց մէջ անբաւականութիւններ ծագեցան։ Աբրահամն ու Ղովտը անասնապահութեամբ էին պարապում։ Երկուսն էլ մեծամեծ հօտերի տէր էին։ Արօտատեղիների համար երկուսի հովիւների մէջ կռիւ էր ծագում։ Ղովտը պաշտպան էր հանդիսանում իր հովիւներին։ Այդ գժտութիւններին վերջ տալու համար՝ Աբրահամն ասաց Ղովտին. «Վայել չէ, որ իմ ու քո մէջ երկպառակութիւն ընկնի. բաժանուիր ինձանից. եթէ դու կ՚ընտրես աջ կողմը, ես կ՚ընտրեմ ձախը, իսկ եթէ ձախը կ՚ընտրես, ինձ ընդունելի է աջը»։ Այդ միջոցին նրանք Բեթէլի մօտ էին բնակվում։ Ղովտը Սոդոմի գեղեցիկ հովիտն ընտրեց, որի միջով հոսում էր Յորդանան գետը եւ որտեղ գտնվում էին Սոդոմ եւ Գոմոր քաղաքները։ Այդ քաղաքների շրջակայքում կային շատ նաւթի փոսեր։ Իր ընտրութեան ժամանակ Ղովտը միայն տեղի գեղեցկութեանն ու արօտատեղիների փարթամութեանը նայեց. նա ամենեւին չմտածեց, որ այդ հովտի բնակիչները չար են եւ Տիրոջ առաջ մեղաւոր։ Նրանք բաժանուեցան։ Ղովտը բնակուեցաւ Սոդոմ քաղաքում։ Աբրահամը մնաց Բեթէլի մօտերքում։ Այստեղ Աստուած երեւեցաւ նրան եւ ասաց. «Այդ տեղից սկսած, ուր կանգնած ես, նայիր դէպի հիւսիս ու հարաւ, դէպի արեւելք եւ արեւ-

մուտք. բոլոր այդ երկիրները, որ դու տեսնում ես, քեզ եւ քո զաւակներին եմ տալիս մշտապէս։ Ես կբազմացնեմ քո զաւակը որպէս երկրի աւազը, որին թիւ չկայ»։ Աբրահամը հաւատով ընդունեց Աստուծոյ խոստումը։ Նա լաւ դիտեց երկիրը, յետոյ չուեց Բեթէլից դէպի հարաւ եւ իր վրանները վայր թողեց Մամբրէի կաղնու մօտ (Քեբրոնում)։

13. ՂՈՎՏԻ ԳԵՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ.

Աբրահամից բաժանուելուց շատ ժամանակ դեռ չէր անցել, Ղովտին մեծ ձախորդութիւն պատահեցաւ։ Այն տարին, երբ նա բնակութիւն հաստատեց Սոդոմում, այդ հովիտների թագաւորներն իրանց դրացի թագաւորին սովորական հարկը չվճարեցին։ Թագաւորը յարձակուեցաւ դրանց վրայ, քաղաքները կողոպտեց եւ գերի արեց մարդիկ ու ստացուածներ։ Ղովտն էլ գերի տարուեցաւ։ Երբ որ Աբրահամը իր եղբօրորդու գերութեան լուրն առաւ, իսկոյն ժողովեց իր ծառաներին (318 հոգի) օգնութեան կանչեց դրացիներին եւ թշնամու յետեւից հասնելով՝ անակնկալ վերաները յարձակուեցաւ եւ բոլոր աւարն ու գերիները յետ խլեց։

Երբ որ Աբրահամը վերադառնում էր տուն՝ յաղթուած թագաւորները հանդիսաւոր կերպով նրա առաջը դուրս եկան։ Այդ թագաւորներից մինը, Մելքիսեդէկ Սաղէմի թագաւորը, հաց եւ գինի մօտ բերեց իբրեւ պատարագ եւ օրհնեց նրան։ Մելքիսեդէկի ծագման եւ նրա մահուան մասին մեզ ոչինչ յայտնի չէ. գիտենք միայն, որ նա միեւնոյն ժամանակ թագաւոր էր եւ քահանայ բարձրեալ Աստուծոյ։ Աբրահամը մեծ ուրախութեամբ ընդունեց նրա օրհնութիւնը եւ իր աւարից տասանորդ տուեց նրան։ Սոդոմի թագաւորն առա-

ջարկեց Աբրահամին, իբրեւ պարգեւ, իր բոլոր հարստութիւնը, որ նա խլել էր թշնամուց. բայց Աբրահամը հրաժարուեցաւ դրանից. «Բարձրացնում եմ իմ ձեռքը դէպի Աստուած (երդվում եմ Աստուծով), ասաց նա, որ մի թել անգամ եւ ոչ իսկ մի կօշիկի կապիչ չեմ վեր առնիլ այդ ամենից, որպէսզի չ'ասես, թէ ես հարստացրի Աբրահամին»։

Այս յաղթութիւնից յետոյ՝ Քանանացիք սկսան նախանձիլ Աբրահամին եւ վախենալ նրանից։ Այն ժամանակ Աստուած երեւեցաւ Աբրահամին եւ ասաց. «Մի՛ երկնչիր, Աբրահա՛մ, ես կըլլինիմ քո վերակացուն եւ քո վարձքդ շատ կըլլինի»։ Աբրահամը պատասխանեց. «Տէ՛ր, ի՞նչ պիտի տաս ինձ, քանի որ ես կորչում եմ անորդի. իմ ժառանգս Դամասկոսցի Եղիազարն է մնալու»։ Աստուած ասաց. «Նա քեզ ժառանգ չի լինիլ. ժառանգդ նա կըլլինի, ով որ կըսերուի քեզանից։ Նայիր երկինքին եւ համարիր աստղերը, այդքան կըբազմանան եւ քո զաւակները»։ Աբրահամը հաւատաց Աստծուն։ Աստուած այդ բանն արդարութիւն համարեց նրան։

13. ԻՍՄԱՅԷԼԻ ԾՆՈՒՆԴԸ.

Չնայելով Աստուծոյ յաճախակի խոստումներին, Սարրան որդի չէր բերում. նա արդէն 85 տարեկան էր։ Յոյսը կտրած լինելով՝ նա առաջարկեց Աբրահամին, որ իր Ագար անունով աղախնին կին առնի, միայն այն պայմանով, որ նրանից ծնուած զաւակն իրը համարուի։

Աբրահամն ընդունեց կնոջ առաջարկութիւնը։ Բայց Եգիպտացի աղախինն Աբրահամի կինը դառնալով, անչափ գոռոզացաւ եւ սկսեց արհամարհել իր նախկին տիրուհուն։ Սարրան գանգատուեցաւ մարդուն։ Այն ժամանակ Աբրահամն ասաց. «Վարուի՛ր նրա հետ, ինչպէս կամենում ես»։ Սարրան սկսեց ճնշել Ագարին. նա էլ տանից փախաւ։ Եգիպտոսի ճանապարհին Աստուծոյ հրեշտակը պատահեցաւ նրան եւ հրամայեց որ վերադառնայ Սարրայի մօտ եւ հնազանդ լինի նրան։ «Ահա՛ դու կըծնես որդի, ասաց հրեշտակը, եւ նրա անունն Իսմայէլ կըդնես. նա վայրագ մարդ կըդառնայ. նրա ձեռքն ամենքի, իսկ ամենքի ձեռքը նրա վրայ. նա կը բնակուի իր եղբայրների յանդիման»։ Ագարը տուն դարձաւ եւ կարճ ժամանակից յետոյ ծնեց մի արու զաւակ, որին եւ Իսմայէլ անուանեցին։

14. ԱՍՏՈՒԾՈՅ ՈՒԽՏԸ ԱԲՐԱՀԱՄԻ ՀԵՏ.

Երբ որ Աբրահամը 99 տարեկան դարձաւ, իսկ Սարրան 90 տարեկան, Տէրը երեւեցաւ նրան եւ ասաց. «Ես եմ քո տէր Աստուածը՝ հաճոյ եղիր Իմ առաջ եւ անարատ եղիր, եւ Ես յաւիտենական ուխտ կըդնեմ քեզ հետ. դու շատ ազգերի հայր կըլլինիս եւ այլ եւս Աբրամ (բարձրապատիւ հայր) չես կոչուիլ, այլ կըկոչուիս Աբրահամ (հայր բազմութեան)։ Եւ կըդնեմ Իմ ուխտը քո եւ քո սերունդների մէջ—ուխտ յաւիտենական այն մասին, թէ Ես եմ քո Աստուածը եւ քո զաւակների Աստուածը եւ Քանանացոց բոլոր երկիրը կըտամ քեզ իբրեւ մշտնջենական ժառանգութիւն. իսկ իմ ուխտի նշանն այս կըլլինի. ամեն արու զաւակ՝ ծնեուց ութ օր յետոյ, թլպատուի։ Անթլպատը չի պատկանիլ Իմ ազգին։ Եւ քո կնոջն էլ այսուհետեւ Սարայ (տիրուհի) չ'կոչես. այլ Սարրայ (տիրուհի բազմութեան) թող լինի դրա անունը։ Ես կ'օրհնեմ նրան եւ քեզ զաւակ կըտամ նրանից. ազգեր եւ ազգերի թագաւորներ կըսերուին նրանից»։ Աբրահամը ծիծաղեց եւ մտածեց. «Մի՞թէ հարիւր տարեկան մարդուց եւ իննսուն տարեկան կնոջից կարող է որդի ծը-

նուիլ»։ Բայց Աստուած հաստատեց իր խոստումը եւ ասաց. «Իսկ եւ իսկ Սառրան, քո կինը, կըծնի քեզ որդի եւ նրա անունն Իսահակ կըդնես (որ կընշանակէ ծիծաղ)։ Աբրահամն իսկոյն կատարեց Տիրոջ հրամանը, ինքը թլփատուեցաւ եւ թլփատեց Իսմայէլին, ծառաներին, ընդոծիններին եւ կռապաշտներից գնած ստրուկներին։

15. ԵՐԵՔ ԱՆՑՈՐԴՆԵՐԸ. ՍՈԴՈՄ ԵՒ ԳՈՄՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.

Մի անգամ Աբրահամը նստած էր իր վրանի դրանը (Մամբրէի կաղնու տակ). յանկարծ նա տեսաւ, որ իր առաջ կանգնած են երեք անցորդներ։ Հիւրասէր Աբրահամն իսկոյն նրանց առաջը գնաց, երկրպագեց մինչեւ գետին եւ ասաց գլխաւորին. «Տէր, եթէ շնորհ գտայ քո առաջ, մի՛ ղանց անիր քո ծառայից. ահա փոքր ինչ ջուր կըբերեն եւ ձեր ոտքերը կըլուանան, կը հանգստանաք այս ծառի տակ, մինչեւ ես հաց կըբերեմ, որ ուտէք եւ ապա ճանապարհ ընկնիք»։ Անցորդներն ընդունեցին Աբրահամի հրաւէրը։ Երբ որ նրանք նստած հաց էին ուտում, Աբրահամը ծառի մօտ կանգնած ծառայում էր նրանց։ Անցորդներից մինն ասաց, որ մի տարուց յետոյ նա Սառրայից որդի կ'ունենայ։ Այն ժամանակ Աբրահամը հասկացաւ, որ իր առաջ կանգնողները հասարակ ճանապարհորդներ չեն, եւ երբ նրանք վերկացան եւ ուղեւորուեցան, երկիւղածութեամբ ճանապարհ ձգեց նրանց։

Ճանապարհին անցորդների գլխաւորը, որ ինքն Աստուած էր, ասաց Աբրահամին. «Մի՞թէ կըթագցնեմ իմ Աբրահամ ծառայից, ինչ-որ պիտի անեմ». եւ իմացրեց, որ կործանմամբ պիտի պատժէ Սոդոմի եւ Գոմորի բնակիչներին

իրանց ծանր յանցանքների համար։ Այդ ժամանակ անցորդներից երկուսն ուղեւորուեցան դէպի Սոդոմ։ Աբրահամը հասկացաւ, որ իր հետ խօսողն ինքն Աստուած է եւ դիմեց նրան, բարեխօսելով ամբարիշտ քաղաքների համար։ «Տէր, Մի՞թէ արդարն ամբարշտի հետ կըկործանես, ասաց նա. կարելի է այդ քաղաքում յիսուն արդար կայ. մի՞թէ Դու չես խնայիլ այդ քաղաքը յիսուն արդարի համար»։ Տէրը պատասխանեց. «Եթէ ես Սոդոմում յիսուն արդար գտնեմ, նրանց համար կըներեմ քաղաքին»։ Այն ժամանակ Աբրահամն ասաց. «Ահա ես հող եւ մոխիր վստահացայ խօսիլ Տիրոջ հետ. գուցէ յիսուն արդարից հինգը պակաս լինի. մի՞թէ Դու հինգը պակաս լինելու համար կըկործանես ամբողջ քաղաքը»։ Տէրը պատասխանեց. «Չեմ կործանիլ, եթէ այնտեղ գտնուի քառասուն եւ հինգ արդար»։ Աբրահամը շարունակեց. «Գուցէ գտնուի այնտեղ քառասուն»։ Աստուած պատասխանեց. «Քառասունի համար եւս չեմ անիլ այդ բանը»։ Աբրահամը նորից ասաց. «Թող իմ խօսքս չ'բարկացնէ իմ Տիրոջը. գուցէ այնտեղ երեսուն գտնուի»։ Աստուած խոստացաւ ներել քաղաքին նաեւ երեսուն, մինչեւ անգամ քսան արդարի համար։ Աբրահամն ասաց. «Թո՛ղ ներէ Տէրը իր ծառային, որ վերջին անգամ համարձակւում է խօսիլ. կարելի է գտնուի այնտեղ տասն արդար»։ Տէրը խոստացաւ չ'կործանել այդ քաղաքը նաեւ տասնի համար։ Աբրահամն այլ եւս ոչինչ չ'ասաց. նա վերադարձաւ իր վրանը։

Այդ միեւնոյն օրը երկու ուղեւորները մօտեցան Սոդոմին։ Երեկոյեան ժամին Ղովտը նստած էր քաղաքի դրան մօտ. նա տեսաւ անցորդներին եւ խնդրեց, որ մտնեն իր տունը գիշերելու։ Երբոր նրանք տուն մտան, Սոդոմի ամբարիշտ բնակիչները հաւաքուեցան նրա դրան առաջ եւ պահանջեցին, որ իր հիւրերը նրանց ձեռքը տայ չարչարելու։ Ղովտն ասաց. «Մի՛ անէք այդ չարութիւնը. ես չեմ համա-

ձայնուիլ անպատուութեան տալ իմ հիւրերիս»։—Դու, պանդխտական, եկար բնակուեցար մեր մէջ եւ հիմա մեզ դատաստան էլ ես կամենում անել. այժմ քեզ եւս դրանց հետ կըչարչարենք, աղաղակեցին Սոդոմացիք եւ կամենում էին նրա տան դռները խորտակել։ Այդ ժամանակ անցորդները Ղովտին ներս քաշեցին եւ ամբարիշտների աչքերն այնպէս կուրացրին, որ դուռը գտնել չ'կարողացան։ Աստուծոյ հրեշտակները իրանց գալու պատճառը յայտնեցին Ղովտին եւ պատուիրեցին վեր առնել իր բոլոր ազգականներին եւ առաւօտը շատ վաղ դուրս գնալ քաղաքից։ Ղովտը կանչեց իր փեսացուներին եւ առաջարկեց, որ դուրս գնան նրա հետ, բայց նրանք չ'ընդունեցին նրա առաջարկութիւնը եւ չ'եկան նրա հետ։ Առաւօտը շատ վաղ Ղովտը թողեց քաղաքը, իր կնոջ եւ երկու աղջիկների հետ։ Հրեշտակներից մինն ասաց. «Բարձրացի՛ր այդ սարը եւ ազատուի՛ր. թող ձեզնից ոչ ոք յետ չ'նայի, որպէսզի չըկորչի»։ Հազիւ թէ Ղովտը կարողացաւ իր աղջիկների հետ Սիգոր քաղաքը հասնել եւ ահա հուր եւ ծծումբ անձրեւի պէս թափուեցաւ երկնքից եւ այրեց ամբարիշտ քաղաքները բոլոր բնակիչների եւ կալուածների հետ։ Հովիտը իր հինգ քաղաքներով—(Սոդոմ, Գոմոր եւ հարեւան երեք քաղաքները—Պէնտէպօլիս) ամբողջապէս ցածացաւ եւ գոյացրեց Ասֆալտեան ծով (77 վերստ երկայնութեամբ եւ 24 վերստ լայն.)»։ Եւ որովհետեւ Յորդանան գետից այդ լիճը մտնող ձուկը իսկոյն սատկում է, այդ պատճառով լիճն անուանուեցաւ Մեռեալ ծով։ Այս երկրի արեւմտեան կողմը Ղովտը իր երկու աղջիկների հետ բնակութիւն հաստատեց. իսկ նրա կինը՝ հրեշտակի պատուէրը չ'պահելով, յետ էր նայել եւ աղի արձան էր դարձել։

Ղովտը երկու որդի ունեցաւ, Մովաբ եւ Ամմոն։ Մովաբից առաջացան Մովաբացիք, իսկ Ամմոնից—Ամմոնացիք։ Սրանք վերջը Աբրահամի սերունդին թշնամի դարձան։

16. ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՋՈՀ ԲԵՐՈՒԻԼԸ.

Կործանուած քաղաքներից սարսափելի գարշահոտութիւն էր բարձրանում. դրանից ազատուելու համար Աբրահամը հարկադրուեցաւ Մամբրէի կաղնու մօտից չուել դէպի փղշտացոց երկիրը, ուր եւ ապրեց նա շատ տարիներ։

Այստեղ Աբրահամը ջրհոր փորեց եւ անուանեց՝ Ջրհոր երդման։ Ջրհորն այն պատճառով այդպէս կոչուեցաւ, որովհետեւ Աբրահամը փղշտացի թագաւորներից մինի հետ դրա մօտ երդման դաշն կապեց։ Այս երկրում կատարուեցաւ Աստուծոյ խոստումն եւ հարիւրամեայ Աբրահամը որդի ունեցաւ, որին Իսահակ անուանեցին։

Երբոր Իսահակը մեծացաւ, Սառրան նկատեց, որ Իսմայէլը քամահարում է նրան։ Այդ բանը սաստիկ վշտացրեց որդեսէր մօրը։ Նա ասաց Աբրահամին. «Արտաքսի՛ր աղախնիս եւ նրա որդուն, որպէսզի նա հաւասար ժառանգակից չ'լինի իմ զաւակին»։ Աբրահամը դժուարանում էր կատարել իր կնոջ պահանջը։ Բայց Աստուած ասաց նրան. «Մի՛ վշտանար աղախնիդ եւ մանկանդ համար, լսի՛ր Սառրայի խօսքը. ընտրեալ ազգը Իսահակից պիտի սերուի։ Բայց քո աղախնու որդուց էլ կըյառաջացնեմ մեծ ժողովուրդ, որովհետեւ նա եւս քո որդին է»։ Միւս առաւօտ Աբրահամն արձակեց Ագարին եւ Իսմայէլին։ Նա ճանապարհի համար տուեց Ագարին բաւականաչափ հաց, մի տիկ ջուր եւ պատուիրեց, որ հայրենիք վերադառնայ։ Ուղեւորները մոլորուեցան անապատի մէջ. ջուրը վերջացել էր եւ անջրութիւնից նրանց մեծ վտանգ էր սպառնում. (Բերսաբէի անապատում)։ Ագարն ուսից ցած դրեց մանկան մի թփի ստուերի տակ, ինքը հեռացաւ մի նետընկեցաչափ տեղ, որպէսզի որդու մահը չ'տեսնէ, եւ դառնապէս արտասուեցաւ։ Յանկարծ նա

ձայն լսեց երկնքից, որ ասում էր. «Կանգնի՛ր, վերցրու մանկանդ. Ես նրան մեծ ազգի հայր կըդարձնեմ»: Վերկացաւ Ագարը եւ տեսաւ, որ մօտից մի պաղ աղբիւր է բըղխում. Նա խմեց ու խմացրեց իր մանկանը, յետոյ տիկը լցնելով՝ ճանապարհը շարունակեց:

Իսմայէլը բնակութիւն ձգեց Բերսաբէից դէպի հարաւ Փառանի անապատում, ապառաժ Արաբիայի մէջ: Նրանից սերուեցան Իսմայէլացիք եւ Արաբացիք, որոնք չափազանց պատերազմասէր ժողովուրդ էին:

Շուտով Աստուած փորձեց Աբրահամին: Երբոր Իսահակը 17 տարեկան դարձաւ, Աստուած երեւեցաւ Աբրահամին եւ ասաց. «Աբրահա՛մ, վերցրու քո միակ որդուդ—Իսահակին, որին դու սիրում ես եւ գնա Մօրիա երկիրը եւ ողջակէզ արա նրան այն լեռան վրայ, որ ես քեզ ցոյց կըտամ»: Ծանր էր Աբրահամին կատարել այս հրամանը, բայց նա որպէս Աստուծոյ ճշմարիտ ծառայ, որոշեց զոհել իր միակ զաւակը: Առաւօտը վաղ նա համետեց իր էշը, վերցրեց իր ծառաներից երկուսին, Իսահակին, ողջակէզի համար փայտ կտրտեց եւ ուղեւորուեցաւ դէպի ցոյց տուած երկիրը: Երեք օր ճանապարհին էին, բայց Աստուած դեռ եւս չէր ցոյց տուել ողջակէզի տեղը: Սարսափելի տանջանքներ վրդովում էին ծերունի հօր սիրտը. ամբողջ երեք օր նա իր սրտի մէջ զոհած ունէր Իսահակին, երեք օր շարունակ որդին մեռած էր հօր համար: Վերջապէս Աբրահամը տեսաւ այն սարը, որի վրայ պիտի կատարուէր զոհաբերութիւնը (Գողգոթայ): Սարի ստորոտում նա թողեց ծառաներն ու էշը, փայտն Իսահակի շալակը տուեց, իսկ ինքը վերցրեց կրակն ու սուրը: Հայրն ու որդին սարը բարձրացան: Ճանապարհին Իսահակը հարցրեց. «Հա՛յր իմ, ահա՛ սուրը եւ հուրը, ո՞ւր է ողջակէզի ոչխարը»: Աստուած կըտեսնէ իր ողջակէզի ոչխարը, որդեակ իմ, պատասխանեց Աբրահամը: Երբոր հասան այնտեղը, որ

ցոյց էր տուել Աստուած, Աբրահամը սեղան կազմեց, փայտերը դարսեց նրա վրայ, կապեց Իսահակին եւ դրեց փայտակոյտի վրայ: Նա վերցրեց դանակը, ձեռքը բարձրացրեց եւ կամենում էր մորթել իր զաւակը. այդ րոպէին ձայն լսուեցաւ երկնքից. «Ա՛բահամ, Աբրահա՛մ, ձեռք մի՛ տար այդ պատանիին, գիտեմ, որ երկնչում ես Աստծուց եւ մինչեւ անգամ չ'խնայեցիր Նրա համար քո միակ որդիդ»: Այս ասողն Աստուծոյ հրեշտակն էր: Աբրահամը ցած թողեց ձեռքը: Նա կատարեց Աստուծոյ կամքը եւ միեւնոյն ժամանակ իր որդին ողջ մնաց: Աչքը բարձրացրեց Աբրահամը եւ տեսաւ, որ մի ոչխար եղջիւրներից կախուած է ծառերի ճիւղերի մէջ: Աբրահամը բռնեց նրան եւ իր որդու փոխանակ զոհեց Աստծուն: Այդ ժամանակ նա նորից լսեց հրեշտակի ձայնը, որ խօսում էր Աստուծոյ կողմից. «Որովհետեւ դու ինձ համար չ'խնայեցիր քո միակ որդիդ, ես կ'օրհնեմ եւ կըբազմացնեմ քո սերունդը, ինչպէս աստղերը երկնքում եւ որպէս աւազը ծովի եզերքում եւ նորանով կ'օրհնուին երկրի ազգերը»:

17. ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ.

Երբոր Իսահակը 37 տարեկան դարձաւ, նրա մայր Սարրան մեռաւ Քեբրոնում: Աբրահամը մեծ հարստութեան տէր էր, բայց սեպհական հող չ'ունէր, որ կարողանար թաղել իր կնոջ մարմինը: Նա Քանանացի իշխաններից (Եփրոնից) գնեց մի այր իր մօտն եղած ագարակներով եւ ծառաստանկներով եւ նրա մէջ ամփոփեց իր կնոջ դիակը: Այրը կոչվում էր Կրկին այր: Սա Աբրահամի առաջին անշարժ կալուածքն էր Քեբրոնում:

Աբրահամն ինքն էլ ծերացել եւ ուժից ընկել էր: Նա սկսեց մտածել իր որդուն ամուսնացնելու մասին, միայն

ոչ քանանուհու վրայ: Երբոր Իսահակը քառասուն տարեկան դարձաւ, Աբրահամը կանչեց իր աւագ ծառային (Եղիազարին, որ իր բոլոր հարստութեան վերակացուն էր, եւ ասաց նրան. «Երդուիր ինձ Աստուծոյ անունով, որ դու իմ որդու համար կին չես ընտրիլ Քանանացի աղջիկներից, այլ կ'երթաս իմ հայրենիքը եւ այնտեղից կին կ'առնես Իսահակի համար»: Ծառան երդուեցաւ եւ իսկոյն ճանապարհ ընկնելու համար պատրաստութիւն տեսաւ: Այն ժամանակ սովորութիւն կար, որ փեսան իր հարսնացուի ծնողներին պարգեւներ էր տալիս: Այս պարգեւները վարձանք կամ օժիտ էին կոչւում: Որքան հարսը հարուստ լինէր, այնքան էլ վարձանքն ընտիր եւ շատ պիտի լինէր: Աբրահամի ծառան ընծայի համար վերցրեց թանկագին իրեր եւ տասն հատ ուղտ առած՝ ուղեւորուեցաւ դէպի Միջագետքի Խառան քաղաքը, որտեղ ապրում էր Աբրահամի եղբայր Նաքովրը: Երբոր քաղաքին մօտեցաւ, Եղիազարը կանգնեց եւ աղօթքով դէպի Աստուած դարձաւ՝ խնդրելով, որ Նա ցոյց տայ իրան Իսահակի հարսնացուն: Աբրահամի ծառան այսպէս աղօթք արաւ. «Իմ տէր Աբրահամի Աստուած, շնորհ արա Քո ծառային եւ Նրա հարսնացուն ինձ մօտ ուղարկիր. ահա ես կըկանգնեմ այս աղբիւրի մօտ, որից քաղաքիս աղջիկները ջուր են կրում, այն աղջիկը՝ որ իմ խնդրանքով ուսից ցած կըդնէ սափորը եւ ինձ ջուր տալուց յետոյ կ'ասէ՝ խմ ես ուղտերիդ համար էլ ջուր կըհանեմ, որ խմեն, նա կըլինի Քեզանից ընտրած կինը Իսահակի համար»: Հէնց որ նա այս աղօթքը վերջացրեց, իսկոյն մի գեղեցիկ օրիորդ՝ սափորն ուսին, մօտեցաւ ջրհորին, ջուր հանեց եւ կամենում էր յետ դառնալ: Եղիազարն ասաց նրան. «Աղջիկ, մի փոքր ջուր տուր ինձ խմեմ քո սափորից»: —Խմիր, տէր, պատասխանեց աղջիկը եւ կուժն ուսից դրեց կռան վրայ: Երբոր Եղիազարը խմեց, օրիորդն ասաց. «Ես քո ուղտերիդ համար էլ ջուր կըհանեմ, մինչեւ

որ խմեն կշտանան ամենքը»: Եւ այս ասելով՝ սկսեց ջուր հանել եւ ածել աւազանի մէջ, որ ուղտերը խմեն: Երբոր ուղտերը խմելուց դադարեցան, Եղիազարը օրիորդին ընծայեց ոսկէ գինդեր եւ ապարանջաններ ու հարցրեց, թէ ո՞ւմ աղջիկն ես եւ քո հօր տանը գիշերելու տեղ կըգտնուի՞ արդեօք մեզ համար: Օրիորդը պատասխանեց. «Ես Նաքովրի որդի Բեթուէլի դուստրն եմ. մենք յարդ եւ խոտ շատ ունինք, նոյնպէս եւ իջեւանելու տեղ»: Աբրահամի ծառան չոքեց եւ գոհացաւ Աստուծուց: Ռեբեկան—այսպէս էր աղջկայ անունը, երբ իմացաւ որ անծանօթն Աբրահամի ծառան է, վազեց դէպի տուն եւ բոլորը պատմեց: Նրա եղբայր Լաբանն իսկոյն դուրս եկաւ աղբիւրի մօտ եւ ասաց Եղիազարին. «Ե՛կ, մտիր մեր տունը, օրհնեալդ Աստուծոյ. ինչո՞ւ ես այստեղ կանգնել. ես քո ուղտերիդ համար էլ տեղ եմ պատրաստել»: Ծառան գնաց նրանց տուն: Այնտեղ ուղտերի բեռները ցած դրին, խոտ ու յարդ տուին նրանց եւ ըստ սովորութեան նորեկների ոտները լուացին: Յետոյ սեղան բաց արին նրանց համար: Բայց Եղիազարը չ'կերաւ. նա պատմեց թէ ինչու համար է եկել ինքը, ինչպէս Տէրը լսեց նրա աղօթքը եւ ցոյց տուեց Ռեբեկային՝ որպէս Իսահակի ամուսին, եւ այսպէս վերջացրեց իր զրոյցը. «Ասացէք ուրեմն. մտադիր էք շնորհ անել իմ տիրոջը»: Բեթուէլն ու Լաբանը պատասխանեցին. «Աստուծուց է կարգադրուած այդ բանը եւ մենք չենք կարող դրան ընդդիմանալ: Ահա Ռեբեկան քո առաջդ է, վեր առ եւ գնա՛. թող նա քո տիրոջ որդու կինը լինի, ինչպէս ասաց Աստուած»: Ծառան հանեց ոսկէ եւ արծաթէ իրեղէններն ու հանդերձեղէնները եւ հարսնացուին ու նրա ազգականներին պարգեւեց: Միւս օրը Եղիազարը խնդրեց, որ իրան արձակեն: Ռեբեկայի մայրն ու եղբայրը կամենում էին նրան համոզել, որ մի քանի օր եւս մնայ, բայց Եղիազարը պատասխանեց. «Մի արգելէք ինձ, որովհետեւ Տէրն

օրհնեց իմ ճանապարհը»։ Այն ժամանակ ծնողքը կանչեցին Ռեբեկային եւ հարցրին, թէ կըգնա՞յ այն մարդու հետ եւ երբոր Ռեբեկան համաձայնուեց, օրհնեցին եւ ճանապարհ ձգեցին։ Երբոր ճանապարհորդներն Աբրահամի վրաններին մօտեցան, Իսահակը նրանց առաջն ելաւ եւ ընդունեց իր հարսնացուին։

ԻՍԱՀԱԿԸ ԵՒ ՆՐԱ ՈՐԴԻՔԸ.

175 տարի ապրելուց յետոյ մեռաւ Աբրահամը եւ թաղուեցաւ կրկին այրի մէջ՝ իր կնոջ մօտ։ Հօր մահից յետոյ Իսահակը ժառանգեց մեծ հարստութիւն, փառաւոր անուն եւ այն աւետումն, թէ նրանից կըծագէ այն մեծ սերունդը, որ բոլոր մարդկանց պիտի շնորհէ Աստուծոյ օրհնութիւնը։ Իսահակն էլ, Աբրահամի նման, հլու եւ հաւատարիմ էր Աստծուն, այս պատճառով Աբրահամի Աստուածն էր եւ Իսահակի Աստուածը։ Բայց նրա կեանքն էլ, Աբրահամի կեանքի պէս, վշտերից ու փորձութիւններից ազատ չէր։ Քսան տարի անցաւ ամուսնութիւնից յետոյ, բայց նա դեռ եւս որդի չ'ունէր։ Չնայելով այս բանին, նա հաւատում էր, որ Աստուծոյ խոստումն անպատճառ կըկատարուի եւ ինքն անզաւակ չի մնալ։ Այսպէս էլ եղաւ։ Ռեբեկան ծնեց երկու որդի — երկուորեակներ, որոնց անուանեցին Եսաւ եւ Յակոբ։ Եսաւը խստաբարոյ եւ թեթեւամիտ մարդ դարձաւ. նա պարապում էր որսորդութեամբ եւ դաշտակեաց կեանք էր վարում։ Իսկ Յակոբը մեղմ եւ հանդարտ բնաւորութիւն ունէր եւ վրանակեաց կեանք էր վարում։ Իսահակը սիրում էր իր անդրանիկ որդուն, Եսաւին, իսկ Ռեբեկան սիրում էր Յակոբին։ Անդրանիկ որդին այն ժամանակ մեծամեծ իրաւունքներ ունէր, որոնք անդրանկութեան իրաւունքներ էին կոչվում։ Հայ-

րը մեռնելու ժամանակ, իշխանութիւնն աւագ որդուն էր յանձնում։ Նրան էր ընկնում նոյնպէս հօր հարստութեան մեծագոյն մասը եւ, որ ամենից գլխաւորն էր, Աստուծոյ աւետումն, թէ նրանից պիտի առաջ գայ մեծ սերունդը — Փրկիչը։ Այս իրաւասութիւնը անդրանկածնի օրհնութիւն էր կոչվում։ Եսաւը՝ որպէս անդրանիկ, իրաւունք ունէր ստանալ այդ օրհնութիւնը։ Բայց նա իր թեթեւամտութեամբ մի աման ոսպաթանի (շիլաթանի) համար այդ իրաւունքը Յակոբին տուեց։ Մի անգամ Եսաւը դաշտից վերադարձաւ տուն եւ տեսաւ, որ Յակոբը ոսպէ ապուր է պատրաստել։ Նա յոգնած էր եւ սոված. եղբօրից խնդրեց, որ մի աման էլ իրան տայ։ «Կըտամ, եթէ քո անդրանկութեան իրաւունքն ինձ կըտաս», ասաց Յակոբը։ Եսաւը պատասխանեց, «Ես սոված մեռնում եմ, ինչի՞ս պէտք է անդրանկութիւնը»։ Եւ երդուեցաւ, որ հրաժարվում է անդրանկութեան իրաւունքից։ Երբոր Ռեբեկան իմացաւ այս, սաստիկ ուրախացաւ։ Եսաւի կանայքը շարունակ վշտացնում էին նրան, այս պատճառով նա հաւատացած էր, որ եթէ աւագութիւնը Եսաւին ընկնի, ինքը՝ մարդու մահից յետոյ խաղաղ եւ հանգիստ չէ կարող ապրել։

Իսահակը ծերացել էր. նրա աչքերը լաւ չէին տեսնում։ Նա մտածում էր, որ մահը հեռու չէ իրանից։ Մեռնելուց առաջ ծերունին կամեցաւ իր հայրական օրհնութիւնը եւ նահապետական իրաւունքները, ըստ սովորութեան, իր աւագ որդուն տալ։ Նա կանչեց Եսաւին եւ ասաց նրան. «Ահա ես ծերացել եմ եւ չեմ իմանում, թէ երբ վրայ կըհասնի իմ մահուան օրը։ Գնա՛ դաշտը, որս արա՛ ինձ համար, պատրաստի՛ր իմ սիրած կերակուրը, որ ուտեմ եւ օրհնեմ քեզ, քանի դեռ կենդանի եմ»։ Եսաւը որսի գնաց։ Ռեբեկան լսեց հօր խօսակցութիւնը եւ վախեցաւ, որ չլինի թէ Յակոբը զրկուի այն օրհնութիւնից եւ ասաց նրան. «Ես

լսեցի ինչպէս հայրդ պատուիրում էր Եսաւին, որ որս անէ ու նրա մսից կերակուր պատրաստէ, որ ինքն ուտէ եւ օրհնէ նրան։ Այժմ, որդեակ իմ, լսիր ինձ. գնա ընտրիր հօտի միջից երկու լաւ ուլեր եւ բեր, ես նրանցից հօրդ համար այնպիսի կերակուր կըպատրաստեմ, ինչպիսին նա սիրում է. դու այդ կերակուրը ներս կըտանես նրա սենեակը. նա կուտէ եւ մահից առաջ կ՚օրհնէ քեզ»։ Յակոբն ասաց. «Եսաւը բոլորովին մազոտ է, մինչդեռ իմ մարմինս լերկ է. ի՞նչ կըլինի իմ դրութիւնը, եթէ հայրս կամենայ շօշափել իմ մարմինը. այն ժամանակ ես մի խաբեբայ կ՚երեւիմ նրա առաջ եւ փոխանակ օրհնութեան անէծքի կ՚արժանանամ»։—Ես ինձ վրայ եմ առնում անէծքը, միայն դու լսիր ինձ եւ բեր՝ ինչ-որ ասում եմ, պատասխանեց Ռեբեկան։ Յակոբը կատարեց մօր հրամանը։ Այն ժամանակ Ռեբեկան պատրաստեց կերակուրը եւ տուեց Յակոբին, որ տանէ հօրը։ Միեւնոյն ժամանակ նա հագցրեց նրան Եսաւի շորերը, իսկ ձեռներն ու պարանոցը փաթաթեց ուլի մորթով։ Յակոբը մտաւ իր հօր վրանը։ «Ո՞վ ես դու», հարցրեց հայրը։—Ես քո անդրանիկ Եսաւն եմ, պատասխանեց Յակոբը. կատարեցի՝ ինչպէս պատուիրեցիր, վե՛ր կաց, հա՛յր, վայելիր կերակուրը եւ օրհնիր ինձ։ Իսահակը կասկածեց՝ մի գուցէ իրան խաբում են։ «Մօտ եկ, շօշափեմ, տեսնեմ՝ իմ որդի Եսաւն ես, թէ ոչ», ասաց հայրը։ Երբոր Յակոբը մօտ եկաւ, ծերունին շօշափեց նրան եւ ասաց. «Ձայնդ Յակոբինն է, իսկ ձեռներդ Եսաւինը։ Ուրեմն դո՞ւ ես իմ որդի Եսաւը»։ Յակոբը պատասխանեց՝ «Ես եմ»։ Իսահակը կերաւ կերակուրը եւ ասաց Յակոբին. «Մօտ եկ, համբուրիր ինձ, որդեակ իմ»։ Յակոբը հագել էր Եսաւի շորերը։ Եւ որովհետեւ Եսաւը գլխաւորապէս դաշտերումն էր ապրում, նրա շորերից դաշտային խոտերի հոտ էր գալիս։ Իսահակն զգաց այս հոտը եւ կասածը փարատուեցաւ։ Այն ժամանակ նա օրհնեց Յակոբին եւ ասաց.

«Ահա իմ որդու հոտը, իբրեւ լի անդի հոտ, որը օրհնեց Տէրը։ Եւ տա՛յ քեզ տէր Աստուածը երկնային ցօղից եւ երկրի պարարտութիւնից եւ շնորհէ քեզ առատութիւն ցորենի եւ գինու։ Ազգերը ծառայեն քեզ եւ իշխանները երկրպագեն քեզ. եւ տէր լինիս քո եղբօրը եւ քո հօր որդիքը երկրպագեն քեզ։ Ով որ քեզ անիծէ, թող անիծեալ լինի, եւ ով որ քեզ օրհնէ՝ օրհնեալ լինի»։

Հէնց որ Յակոբը դուրս եկաւ Իսահակի մօտից, ներս մտաւ Եսաւը, բերելով որսի մսից պատրաստած խորտիկը, եւ խնդրեց հօրից խոստացած օրհնութիւնը։ Իսահակը սարսեցաւ. նա հասկացաւ, որ իրան խաբել են, բայց որովհետեւ իր օրհնութիւնն արտայայտել էր Աստուածային ազդմամբ, համոզուեցաւ որ այդպէս է եղել Աստուծոյ կամքը։ Նա ասաց Եսաւին. «Եղբայրդ եկաւ եւ խորամանկութեամբ վերցրեց քո օրհնութիւնը»։ Եսաւը դառնապէս արտասուեցաւ եւ աղաչում էր հօրը, որ իրան էլ օրհնէ։ Այն ժամանակ Իսահակն օրհնեց եւ Եսաւին ու միեւնոյն ժամանակ նախագուշակեց. «Քո բնակութեանդ երկիրը պարարտ կըլինի եւ երկնային ցօղից կըլինի քո օրհնութիւնը եւ դու կ՚ապրիս քո սրովը եւ կըծառայես եղբօրդ. բայց կըգայ ժամանակ, երբ դու կըթօթափես նրա լուծը քեզանից»։

Այդ օրից Եսաւը սաստիկ զայրացած էր Յակոբի դէմ եւ մտքումը դրեց հօր մահից յետոյ սպանել նրան։ Նա իր մտադրութիւնը չէր ծածկում եւ մի օր մինչեւ անգամ ծառաների առաջ ասաց պարզապէս, որ հօր մահից յետոյ եղբօրը պիտի սպանի։ Յակոբը իր մօր խորհրդով առժամանակ հեռացաւ հայրենական տնից եւ գնաց Խառան, իր քեռի Լաբանի մօտ։ Ճանապարհ ընկնելիս հայրն օրհնեց նրան եւ պատուիրեց, որ Լաբանի աղջիկներից իրան կին առնէ։

19. ՅԱԿՈԲԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԼԱԲԱՆԻ ՄՕՏ.

Յակոբը Բերսաբէից ճանապարհ ընկաւ դէպի Միջագետք բոլորովին միայնակ, որպէսզի եղբայրը չիմանայ. Նա միայն մի փոքրիկ պաշար վեր առաւ ճանապարհի համար: Արեգակը մայր մտնելիս՝ նա հասել էր այնտեղը, ուր հնումը շինած էր Բեթէլը: Տխուր էր Յակոբը եւ վշտացած. Նա իրան բոլորովին անօգնական էր համարում: Ճանապարհի երկարութիւնից վաստակած՝ նա վերցրեց մի քար, դրեց գլխատակը եւ քնեցաւ: Քնի մէջ նա մի զարմանալի տեսիլ տեսաւ: Նրա մօտից բարձրանում էր մի սանդուղք, որի մի ծայրը երկրի վրայ էր հաստատուած, իսկ միւսը երկինքն էր հասնում: Աստուծոյ հրեշտակներն այդ սանդուղքի վրայով ելնում եւ իջնում էին, իսկ Տէր Աստուածը կանգնած էր վերեւում եւ ասում էր. «Ես եմ քո հայր Աբրահամի եւ Իսահակի Աստուածը, մի՛ երկնչիր, այդ երկիրը՝ որի վրայ պառկած ես, քեզ ու քո զաւակներիդ կըտամ: Կըբազմացնեմ քո զաւակներդ որպէս երկրի աւազը եւ քեզանով ու քո սերունդներովդ կ՚օրհնուին երկրի բոլոր ազգերը. Ես կըպաշտպանեմ քեզ՝ ուր եւ գնաս դու եւ կըվերադարձնեմ այս երկիրը»: Յակոբը զարթեցաւ եւ ասաց. «Սա Աստուծոյ տուն է եւ երկնքի դուռը», եւ այդ տեղն անուանեց Բեթէլ, որ կընշանակէ տուն Աստուծոյ:

Յակոբը հասաւ Խառան քաղաքը, ուր բնակւում էր նրա քեռին: Լաբանը սիրով ընդունեց նրան: Յակոբը բնակւում էր նրա մօտ եւ պահում էր նրա խաշները:

Լաբանը տեսաւ Յակոբի ջանքերը եւ առաջարկեց նրան որ իր աշխատանքի համար որոշ վարձ նշանակէ: Յակոբը պատասխանեց. «Եօթը տարի կըծառայեմ քեզ քո փոքր դըստեր՝ Ռաքէլի համար»: Այդ ժամանակները փեսացուն էր հարսի համար վարձանք տալիս, ինչպէս հիմա էլ շատ նահապետական ժողովուրդների մէջ լինում է: Լաբանը համաձայնուեցաւ եւ խօսք տուեց եօթը տարուց յետոյ իր կըրտսեր դուստրը նրան կնութեան տալ: Եօթը տարին անցաւ: Հարսանիքի ժամանակն եկաւ: Հարսը սաւանապատ էր, երեսը քողով ծածկած: Երբ հարսանիքից յետոյ, Յակոբը վերցրեց իր կնոջ քողը, տեսաւ որ իրան խաբել են. Լաբանն Ռաքէլի փոխանակ իր մեծ աղջիկն (Լիան) էր տուել նրան: «Ինչի՞ այդպէս վարուեցար ինձ հետ», վշտացած ասում էր Յակոբը: Լաբանն արդարանում էր նրանով, որ իրանց երկրում սովորութիւն չէ փոքր աղջկան մեծից առաջ մարդու տալ, եւ խօսք տուեց Ռաքէլին էլ եօթն օրից յետոյ նրան կնութեան տալ, եթէ նա կըխոստանայ նրա համար եւս եօթը տարի ծառայել: Յակոբը համաձայնուեցաւ եւ Ռաքէլն էլ նրան կին դարձաւ: Յակոբը Ռաքէլին Լիայից աւելի էր սիրում: Պայմանադրած եօթը տարին եւս անցաւ: Յակոբը խնդրեց իր աներոջը, որ թոյլ տայ իրան վերադառնալ իր հօր տունը: Լաբանն աշխատում էր յետ պահել նրան, որովհետեւ նրա աշխատութիւնից ամենամեծ օգուտներ էր ստացել: Այն օրից, երբ Յակոբը նրա մօտ ծառայութեան մտաւ, Լաբանի հարստութիւնը եռապատկուել էր: Բայց Յակոբը հաստատապէս վճռել էր վերադառնալ իր հօր տունը, այս պատճառով էլ իր աներոջ առաջարկութիւնները մերժեց եւ հաստատապէս յայտնեց նրան, որ ձրի այլեւս չ՚պիտի ծառայէ իրան, որովհետեւ ինքն էլ ընտանիքի տէր է եւ պարտաւոր է իր տան համար աշխատել: Լաբանը հարցրեց, թէ որքան վարձով կըհամաձայնի արածացնել եւ պահպանել նրա հօտը: Յակոբն առաջարկեց, որ իրան իբրեւ վարձատրութիւն տայ այն բոլոր այծերը, որոնք պիսակաւոր (չալ) կըծնուին եւ այն բոլոր ոչխարները, որոնք գորշ կըծնուին: Լաբանը հա-

մաձայնուեցաւ: Աստուած վարձատրեց Յակոբին, պիսակաւոր այծերը եւ գորշ ոչխարներն անչափ շատ ծնուեցան: Լաբանը նախանձեց Յակոբին եւ պայմանը փոխեց: Բայց ինչ գոյնի այծ ու ոչխար որ նշանակւում էր Յակոբի համար, մեծ մասը հէնց այդ գոյնի էր ծնւում: Այսպիսով Յակոբը վեց տարուայ ընթացքում սաստիկ հարստացաւ: Լաբանն ու իրայիններն աւելի սկսան նախանձիլ Յակոբին եւ նեղութիւն էին տալիս Նրան: Նրանից ազատուելու համար Յակոբը վեր առաւ իր ընտանիքը եւ բոլոր շարժական հարստութիւնն ու ծածուկ դուրս գնաց Խառանից դէպի Քանանացոց երկիրը: Այն ժամանակ Նա ունէր տասն եւ մէկ տղայ (Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Զաբուղոն, Դան, Նէփթաղիմ, Գադ, Ասեր եւ Յովսէփ) եւ մի աղջիկ (Դինա): Որդիներից միայն մէկն էր Ռաքէլից, այն է Յովսէփը:

20. ՅԱԿՈԲԻ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ.

Երբոր Յակոբը մօտեցաւ Քանանացոց երկրի սահմաններին, տեսաւ մի խումբ հրեշտակներ, որոնք դուրս գալով Նրա առաջ, ճանապարհի մօտ բանակ էին դրել. Նա այդտեղը Բանակ անուանեց: Չ՚նայելով այս բարեգուշակ նշանին՝ Յակոբը սաստիկ վախենում էր, մի՛ գուցէ իր եղբայր Եսաւը դեռ եւս մոռացած չլինի իր քէնը եւ կամենայ Նրանից վրէժխնդիր լինել: Մանաւանդ Նրա երկիւղը սաստկացաւ այն ժամանակ, երբ իր մարդիկը, որոնց ուղարկել էր Եսաւին իր գալն իմացնելու համար, յետ դարձան եւ ասացին, թէ ահա ինքը Եսաւը գալիս է քո առաջ 400 ձիաւորներով: Իր եղբօր բարկութիւնը մեղմացնելու եւ իր ընտանիքն ապահովելու համար Նա իր կալուածքից ջոկեց ընտիր ընտիր ոչխարներ, ձիեր, եզներ եւ այլն, եւ ընծայ ուղարկեց Եսաւին.

այնուհետեւ իր հօտն էլ երկու մասը բաժանեց. մտածելով՝ որ եթէ Եսաւը յարձակուի մի մասի վրայ, միւսը գոնէ ազատ կըմնայ: Իր ընտանիքն էլ, ապահովութեան համար, անցկացրեց Յաբեթի հեղեղատի միւս ափը եւ ինքը մնաց միայնակ: Նա դարձաւ դէպի Աստուած եւ Նրանից օգնութիւն խնդրեց: Յանկարծ, գիշերային մթութեան մէջ, մի մարդ մօտեցաւ Նրան եւ սկսեց հետը մարտնչիլ: Մենամարտութիւնը շարունակուեցաւ մինչեւ արշալուսի բացուիլը: Յակոբն զգում էր, որ իր հետ մարտնչողը հասարակ մահկանացու չէ, այլ մի գերբնական ուժի տէր ոմն, ուստի եւ մարտնչում էր երկիւղածութեամբ եւ աղօթելով: Մարտնչողը չյաղթեց Յակոբին, միայն նրա ոտի ամոլաջիլը (կռաջիլը) ընդարմացրեց: Երբոր ծէգը բացվում էր, մարտնչողն ասաց Յակոբին. «Այժմ արձակի՛ր ինձ»:—Ոչ, տէ՛ր, չեմ արձակիլ՝ մինչեւ որ չ՚օրհնես ինձ», պատասխանեց Յակոբը: Տէրը հարցրեց. «Ի՞նչպէս է քո անունը»: Պատասխան տուաւ՝ «Յակոբ»: Այն ժամանակ Նա ասաց. «Այսուհետեւ քո անունը Յակոբ չի լինիլ, այլ Իսրայէլ (այսինքն Աստուծոյ հետ մարտնչող), որովհետեւ դու Աստուծոյ հետ մարտնչեցար եւ մարդկանց պիտի յաղթես», եւ օրհնեց Նրան: Յակոբն այդ տեղն անուանեց Պենուէլ, որ տեսիլ Աստուծոյ կընշանակէ: Այնուհետեւ Յակոբը մինչեւ իր մահը կաղ մնաց: Միւս օրը Եսաւը սիրով հանդիպեցաւ իր եղբօրը, փաթաթուեցաւ Նրա պարանոցովը եւ երկուսն էլ արտասուեցան: Եսաւը վերադարձաւ Սէիր՝ իր երկիրը, որ գտնվում էր Մեռեալ ծովի հարաւային կողմը: Իսկ Յակոբն անցաւ Յորդանանի միւս կողմը: Սկզբումը Նա իր վրանները ցած թողեց Սիւքէմի մօտ, որի իշխանից իր ոչխարներն արածեցնելու համար մի դաշտ գնեց, յետոյ Աստուծոյ հրամանով չուեց դէպի Բեթէլ: Այստեղ կրկին անգամ երեւեցաւ Նրան Աստուած եւ կրկնեց իր խոստումը՝ տալ Նրան եւ Նրա որդոցը Քանանացոց երկիրը: Յակոբը Բե-

թէլից առաջ գնաց դէպի հարաւ։ Դեռ Իսահակի վրաններին չհասած, Նրան նոր դժբախտութիւն պատահեցաւ. Բեթղեհէմի մօտ Նրա սիրելի կինը, Ռաքէլը, որդի ծնեց, որից յետոյ ինքը հիւանդացաւ եւ մեռաւ։ Ծանր էր Յակոբի համար այս վիշտը։ Բայց Նա հաւատում էր, որ ամենաողորմած Աստուածը ամէն բան, մինչեւ իսկ դժբախտութիւնները, մարդուս օգտի համար է սահմանում, ուստի եւ Ռաքէլից ծնած տղային անուանեց Բենիամին, որ կնշանակէ երջանիկ։ Այդտեղից Յակոբը գնաց իր հօր մօտ եւ բնակւում էր Նրա հետ Քեբրոնում, իսկ Եսաւը բնակութիւն հաստատեց Նրանցից դէպի հարաւ, այն երկրում, որ Եդովմ էր կոչւում։ Երբոր Իսահակը վախճանուեցաւ, որդիները թաղեցին Նրան Աբրահամի մօտ, կրկին այրի մէջ։ .

21. ՅՈՎՍԷՓԻ ԵՐԱԶՆԵՐԸ.

Քանանացիք, որոնց հողի վրայ Յակոբը ձգել էր իր վրանները, յարգում էին Նրան այնպէս, ինչպէս Իսահակին։ Աբրահամի եւ Իսահակի Աստուածը միեւնոյն ժամանակ եւ Յակոբի Աստուածն էր։

Իր բոլոր զաւակներից Յակոբն ամենից շատ Յովսէփին էր սիրում, որ Ռաքէլի անդրանիկն էր։ Յովսէփը չափազանց հեզ եւ բարի պատանի էր։ Նա երբէք չէր վշտացնում իր հօրը միւս եղբայրների պէս, որոնք իրանց ինքնակամ արարքներով շատ անգամ վրդովում էին Նրան։ Հայրը Նրա համար կարել էր տուել ծաղկեայ պատմուճան եւ միշտ իրան մօտ էր պահում։ Այս բանը դուր չէր գալիս մեծ եղբայրներին։ Նրանք նախանձում էին իրանց կրտսեր եղբօրը եւ երկիւղ ունէին. մի՛ գուցէ հայրը Նրան տայ անդրանկութեան իրաւունքները։ Նրանց նախանձը սաստկացաւ եւ ատելութեան

փոխուեցաւ մանաւանդ այն ժամանակը, երբ Յովսէփը երազ տեսնելով միամտաբար պատմեց Նրանց։ «Լսեցէք, թէ ինչ տեսայ ես երազումս, ասաց Նա մի անգամ։ Ինձ երեւեցաւ, իբր թէ մենք՝ բոլոր եղբայրներս արտը հնձում եւ խուրձեր էինք կապում։ Իմ խուրձը բարձրացաւ եւ կանգնեց ուղղագիր, իսկ ձեր խրձերը շրջապատեցին Նրան եւ երկրպագութիւն տուին»։ Եղբայրները բարկացան. Նրանք մտածեցին, որ Յովսէփն երեւի այնքան է մտածում աւագութեան վրայ, որ երազումն էլ է տեսնում։ «Մի՞թէ դու միտք ունիս իշխել մեզ վրայ», ասացին Նրանք։ Նրանց ատելութիւնն աւելի եւս սաստկացաւ, երբ մի քանի օրից յետոյ Յովսէփը մի ուրիշ երազ պատմեց Նրանց։ «Ես տեսայ, որ արեգակը, լուսինը եւ տասն եւ մէկ աստղեր երկրպագութիւն էին անում ինձ»։ Այս երազը լսելով՝ հայրն անգամ սաստեց Նրան. «Այդ ինչ է նշանակում. մի՞թէ ես, մայրդ եւ եղբայրներդ պիտի գանք եւ երկրպագութիւն տանք քեզ»։

22. ՅՈՎՍԷՓԻ ՎԱՃԱՌՈՒԻԼԸ.

Մի կողմից ատելութիւնը, միւս կողմից երկիւղը, որ մի՛ գուցէ իրանց կրտսեր եղբայրը մեծ պատուի արժանանայ, այն տեղը հասցրին Յակոբի որդոցը, որ Նրանք վճռեցին սպանելով ազատուել Նրանից, միայն իրանց մտադրութիւնը կատարելու համար յարմար միջոց էին որոնում։ Մի անգամ Յովսէփի եղբայրներն իրանց հօտը արածացնելու տարան Սիւքէմի կողմերը։ Յակոբը Նրանցից երկար օրեր համբաւ չ՚ունեցաւ. Նա շատ անհանգիստ էր լինում, ուստի ասաց Յովսէփին. «Գնա՛, տես առո՞ղջ են եղբայրներդ եւ անվնա՞ս է մեր հօտը»։ Յովսէփը հագաւ իր ծաղկեայ պատմուճանը եւ գնաց։ Սիւքէմի մօտ Նա չ՚գտաւ իր եղբայրներին եւ հարց-

նելով իմացաւ, որ նրանք հօտը քշել են դէպի հիւսիս։ Առաջ գնալով՝ նա տեսաւ նրանց Դոթայիմ քաղաքի մօտ։ Եղբայրները հեռուից տեսան նրան եւ ասացին. «Ահա երազատեսը գալիս է, եկէք սպանենք նրան, ձգենք մի խորխորատի մէջ եւ ասենք թէ վայրենի գազանն է պատառել նրան. տեսնենք յետոյ, թէ ինչպէս կըկատարուին նրա երազները»։ Բայց

ամենից մեծ եղբայր Ռուբէնը չհամաձայնուեցաւ եւ ասաց միւսներին. «Ինչո՞ւ համար անմեղ արիւն թափենք, լաւն այն է գցենք նրան մի փոսի մէջ եւ թող իր մահովը մեռնի»։ Այդ խորհուրդը տալով՝ Ռուբէնը մտքումն ունէր գիշերը գալ, հանել նրան փոսից եւ տանել հօր մօտ։ Եղբայրներն ականջ դրին նրան։ Երբոր Յովսէփը մօտեցաւ, նրա ծաղկեայ պատմուճանը հանեցին եւ իրան ձգեցին գուբի մէջ, իսկ

իրանք նստան հաց ուտելու։ Քիչ ժամանակից յետոյ դըրանց մօտով անցնում էր Իսմայէլացի վաճառականների մի կարաւան։ Յուդան առաջարկեց, որ Յովսէփին հանեն գուբի միջից եւ վաճառեն Իսմայէլացոց. «Ի՞նչ օգուտ մեզ, եթէ սպանենք մեր եղբօրը եւ ծածկենք նրա արիւնը. վաճառենք նրան եւ մեր ձեռքը չ՚շաղախենք նրա արիւնի մէջ, որովհետեւ նա մեր եղբայրն է»։ Յուդայի առաջարկութիւնն ընդունուեցաւ։ Երբ որ վաճառականները մօտ եկան, եղբայրները հանեցին Յովսէփին եւ վաճառեցին քսան դահեկանի (փոքր ինչ աւելի 17 մանէթից)։

Ռուբէնն այդտեղ չէր։ Երբ նա վերադարձաւ եւ եղբօրը գուբի մէջ չ՚գտաւ, սաստիկ վշտացաւ, պատառեց իր շորերը եւ ասաց. «Պատանին գուբի մէջ չէ, ինչ անեմ, ո՞ւր կորչեմ ես այժմ»։ Եղբայրներն աշխատում էին հանգստացնել նրան։ Վերջապէս խորհուրդ արին միասին, մի ուլ մորթեցին, Յովսէփի պատմուճանը թաթախեցին նրա արիւնի մէջ, ուղարկեցին իրանց հօրը՝ ապսպրելով թէ՝ իրանք գտել են այդ արիւնաթաթախ զգեստը եւ կարծում են, որ Յովսէփինը պէտք է լինի։ Յակոբն իսկոյն ճանաչեց որդու պատմուճանը եւ բացականչեց. «Այո, Յովսէփինն է սա. վայրենի գազանն է լափել նրան, յօշոտուել է իմ զաւակս»։ Եւ դառն, անմխիթար կերպով արտասւում էր նա իր սիրած որդու վրայ։

23. ՅՈՎՍԷՓԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ.

Իսմայէլացիք Եգիպտոսում վաճառեցին Յովսէփին Փարաւոնի իշխաններից մինի վրայ, որի անունն էր Պետափրէս։ Յովսէփը Պետափրէսի մօտ առաջ ծառայի պաշտօն էր կատարում, բայց փոքր ժամանակից յետոյ տէրը տեսնելով նրա ուշիմութիւնը եւ հաւատարիմ ծառայութիւնը՝ նշանակեց

իր տան վերակացու: Տարաբախտաբար Պետափրէսի կինը բարկացաւ Յովսէփի վրայ, որովհետեւ նա չէր կամենում կատարել նրա կամքը եւ խաբել իր տիրոջը: Տիկինն ամբաստանեց նրան իր մարդու առաջ, զանազան անվայել մեղադրանքներ բարդելով անմեղ պատանու վրայ: Պետափրէսը հաւատաց իր կնոջը եւ հրամայեց բանտ ձգել նրան: Բայց Աստուած այնտեղ էլ անպաշտպան չթողեց Յովսէփին: Բանտապետը շատ սիրեց նրան եւ բոլոր բանտարկեալները նրա խնամքին յանձնեց եւ նա եղաւ նրանց կառավարիչը: Նոյն բանտի մէջ կային Թագաւորի առաջին իշխաններից երկուսը, որոնց վրայ փարաւոնը բարկացել ու բանտն էր ուղարկել: Դրանցից մինը Թագաւորի տակառապետն էր, իսկ միւսը նրա մատակարարը: Յովսէփը ծառայում էր նրանց: Մի անգամ նա մտաւ նրանց բնակարանը եւ նկատեց, որ երկուսն էլ սաստիկ ամբոխուած են: Ցանկանալով մխիթարել բանտարկեալներին, նա հարցրեց նրանց տխրութեան պատճառը: Նրանք պատասխանեցին. «Երազ ենք տեսել եւ ոչ ոք չկայ, որ բացատրէ մեզ»: Յովսէփն ասաց. «Աստուծոյ ձեռքին է երազների մեկնութիւնը. պատմեցէք տեսնեմ»: Տակառապետն ասաց. «Ես երազումս տեսայ, որպէս թէ իմ առաջս կար մի որթ, որթը ունէր երեք հատ խիստ կանաչ ոստեր, ոստերի վրայ երեք հասած ողկոյզներ կային: Եւ փարաւոնի բաժակը ձեռիս բռնած, ես վեր էի առնում խաղողը, ճմլում էի բաժակի մէջ եւ տալիս էի Թագաւորին»: Յովսէփը բացատրեց. «Երեք ոստը երեք օր է նշանակում. երեք օրից յետոյ դու կ՚ազատուիս բանտից եւ քո նախկին պաշտօնդ կ՚ստանաս»: Յովսէփը հաւատացած էր, որ իր կանխասացութիւնն անպատճառ կկատարուի, այդ պատճառով խնդրեց իշխանին, որ իր համար բարեխօսէ փարաւոնի առաջ եւ բանտից ազատէ. «Ինձ գողացան Եբրայեցոց երկրից եւ առանց որեւէ յանցանքի գցեցին այս բանտի մէջ», ասաց նա:

Իշխանը խոստացաւ: Յետոյ դառնալով դէպի մատակարարը՝ հարցրեց թէ՝ «դու ինչ տեսար»: Մատակարարը պատմեց իր երազը. «Ես տեսնում էի, որպէս թէ իմ գլխիս դրած էր երեք զամբիւղ. վերին զամբիւղի մէջ դրած էին Փարաւոնին վայել կերակուրներ. Թռչունները գալիս էին եւ կտցահարում այդ զամբիւղի կերակուրներից, որ դրած էր գլխիս»: Յովսէփը պատասխանեց. «Երեք զամբիւղը երեք օր է: Երեք օրից յետոյ փարաւոնը քո գլուխդ կտրել կտայ. քո դիակդ կկախեն ծառից եւ երկնքի Թռչունները կկտցահարեն քո մարմինդ»: Յովսէփի ասածներն ամբողջապէս կատարուեցան: Բայց տակառապետն իր նախկին պաշտօնն ստանալով, բոլորովին մոռացաւ Յովսէփին:

24. ՅՈՎՍԷՓԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ.

Անցաւ էլի երկու տարի եւ Յովսէփը դեռ բանտումն էր: Մի անգամ փարաւոնը երազ տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած էր Նեղոս գետի եզերքին: Եւ ահա դուրս են գալիս գետի միջից եօթը հատ գեղեցիկ եւ պարարտ երինջներ եւ արածում են եզերքում եղած առատ խոտերի մէջ: Նրանցից յետոյ գետից դուրս են գալիս եօթը հատ զզրատեսիլ եւ վտիտ երինջներ, որոնց նմանը նա տեսած չէր ամբողջ Եգիպտական աշխարհում, եւ կանգնում են նոյն երինջների մօտ, գետի եզերքում: Եւ վտիտ ու զազիր երինջներն ուտում են պարարտ ու գեղեցիկ երինջներին, բայց իրանք չեն պարարտանում—նոյն են մնում: Փարաւոնը տեսնում է դարձեալ, որ ահա մի ցօղունից դուրս են գալիս եօթը հատ ընտիր եւ գեղեցիկ հասկեր. նրանց մօտից բուսնում են եօթը հատ նիհար եւ խորշակահար հասկեր: Եօթը նիհար հասկերը կուլ են տալիս եօթը պարարտ հասկերը եւ իրանք էլի

նիհար են մնում: Թագաւորը զարթնում է եւ մտածում, որ այս երազները մի տարօրինակ նշանակութիւն պիտի ունենան, բայց թէ ինչ է դրանց նշանակութիւնը, չէ կարողանում հասկանալ: Նա ժողովում է իր երկրի բոլոր իմաստուններին եւ երազագէտներին, բայց նրանք եւս չեն կարողանում բացատրել այդ երազները: Այն ժամանակ տակառապետը մտաբերում է Յովսէփին եւ կամենալով հաճելի լինել իր թագաւորին, պատմում է թէ ինչպէս պատանի Եբրայեցին մեկնեց նրա եւ մատակարարի երազը: Փարաւոնը հրամայում է բերել տալ Յովսէփին եւ երբ նա եկաւ, փարաւոնն ասաց. «Ես տարօրինակ երազներ եմ տեսել եւ ոչ ոք չ'կայ, որ նրանց նշանակութիւնը մեկնէ. իսկ քո մասին լսել եմ, որ երազները բացատրում ես»: Յովսէփը պատասխանեց. «Այդ իմ շնորհս չէ. Աստուած պատասխան կըտայ փարաւոնին իր ժողովրդի երջանկութեան համար»: Այն ժամանակ թագաւորը պատմում է նրան իր երազները:—Փարաւոնի երկու երազի իմաստն էլ մէկ է, պատասխանում է Յովսէփը. Աստուած իմաց է տալիս փարաւոնին, ինչ որ անելու է. եօթը գեղեցիկ երինջները եւ եօթը լիք հասկերը եօթը տարի է. իսկ եօթը վտիտ եւ զազիր կովերն ու եօթը դատարկ եւ խորշակահար հասկերը՝ նոյնպէս եօթը տարի է: Ահա կ'սկսեն բոլոր Եգիպտական աշխարհում եօթն առատ տարիներ: Նրանցից յետոյ կըգան եօթը սովի տարիներ: Սովի տարիներն այնչափ սաստիկ կըլինին, երկրի աճեցողական ոյժն այնպէս կընուազի, որ մարդիկ միանգամայն կըմոռանան առաջուայ առատութիւնը:

Երազները մեկնելուց յետոյ՝ Յովսէփը խորհուրդ տուեց, որ կարգուին առանձին վերակացուներ եւ առատ տարիների ընթացքում ցորենի պաշար ժողովեն, որպէսզի եօթը սով տարիներին էլ բաւականանայ: Երազների մեկնութիւնը եւ խելացի խորհուրդը շատ հաւանելի թուեցան թէ թագաւորին

եւ թէ բոլոր պալատականներին: «Դժուար թէ կարողանանք գտնել մի մարդ, որի մէջ լինէր Աստուծոյ շնորհը, բացի քեզանից», ասաց թագաւորը եւ Յովսէփին Եգիպտոսի գըլխաւոր կառավարիչ նշանակեց, պատուիրելով, որ նա պտղառատ տարիների ընթացքում ցորենի մեծ պաշար ժողովէ: Թագաւորն իր մատանին նրա մատը դրեց, հագցրեց նրան բեհեղեայ պատմուճան, պարանոցը ոսկէ մանեակ գցեց եւ տուեց նրան արքայական երկրորդ կառքը: Յովսէփն ամուսնացաւ Արեգ (Իլիոպոլիս) քաղաքի քրմի դստեր Ասանէթի վրայ: Այդ ժամանակ նա 30 տարեկան էր:

25. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԳԻՊՏՈՍ ԳԱԼԸ.

Յովսէփի նախագուշակութիւնները կատարուեցան: Սկսուեցան անչափ առատ տարիները եւ Յովսէփը եօթը տարի շարունակ հացի ահագին պաշար ամբարեց: Առատութեան տարիներին յաջորդեցին կատաղի սովի տարիներ: Ոչ միայն Եգիպտոսը, այլեւ հարեւան երկիրները մեծ նեղութեան մէջ ընկան: Յակոբը Քանանացոց երկրում հաց չ'ճարելով, իր որդիներին ուղարկեց Եգիպտոս, որ ցորեն առնեն, որովհետեւ լսել էր թէ այդ երկրում հացի մեծ պաշար կայ: Բոլոր որդիները գնացին, մօտը մնաց միայն Բենիամինը, որին չ'կամեցաւ արձակել. որդեկորոյս հայրը վախենում էր, մի գուցէ Բենիամինին ուղարկելով, մի նոր փորձանքի հանդիպի: Օտար երկիրներից ցորենի եկողները պէտք է Յովսէփին ներկայանային: Յակոբի որդիներին էլ բերին նրա մօտ: Յովսէփն իսկոյն ճանաչեց նրանց եւ սաստիկ ուրախացաւ, որ կարող է վերջապէս հօր մասին տեղեկութիւններ ստանալ: Բայց եղբայրները չ'ճանաչեցին նրան: Յովսէփը նախ եւ առաջ կամեցաւ փորձել, թէ արդեօք ուղղուել են: Նա ձեւացաւ իբր

թէ ամենեւին չէ ճանաչում նրանց եւ հարցրեց. «Որտեղից էք եկել դուք»: Նրանք պատասխանեցին. «Քանանացոց երկրից՝ ցորեն գնելու»:—Դուք լրտեսներ էք, եկել էք դիտելու այս երկրի ել ու մուտը», ասաց նա բարկացած: «Ոչ, պատասխանեցին նրանք, քո ծառաներն անվտանգ մարդիկ են եւ եկել են հաց գնելու: Մենք բոլորս մէկ մարդու որդի ենք, մենք խաղաղ մարդիկ ենք. քո ծառաները լրտես չեն»: Այն ժամանակ նա սկսեց հարց ու փորձ անել նրանց ընտանիքի, բարեկամների մասին, թէ արդեօք կենդանի՞ է նրանց հայրը, ունի՞ն ուրիշ եղբայրներ: Եղբայրները բոլորը պատմեցին մի առ մի եւ յիշեցին, որ ունին նաեւ մի եղբայր, Բենիամին անունով, որ մնացել է տանը հօր մօտ: «Այո, ասաց Յովսէփը, ամեն բանից երեւում է, որ լրտեսներ էք: Բայց ահա ինչո՞վ կ'ապացուցանէք թէ խաղաղ մարդիկ էք. Թող ձեզանից մէկը մնայ այստեղ հսկողութեան տակ, իսկ միւսներդ վերադարձէք, տարէք ցորենը եւ երբ կրկին կրգաք, հետներդ բերէք ձեր փոքր եղբօրը, որ տեսնեմ նրան եւ հաւատամ, թէ դուք ստախօսներ չէք: Դէ՛հ, գնացէք եւ այլեւս մի՛ երեւաք ինձ»: Յովսէփը նրանց հետ թարգմանի միջնորդութեամբ էր խօսում: Եղբայրները կարծում էին, թէ նա իրանց լեզուն չէ հասկանում, ուստի սկսեցին Եբրայեցերէն խօսել իրար հետ: «Այս բոլորը Աստուծոյ պատիժն է, որ արդարացի կերպով թափվում է մեր գլխին՝ մեր հարազատ եղբօր դէմ գործած անիրաւութիւնների համար. մենք տեսանք թէ նա ինչպէս հոգեպէս տանջվում էր, ինչպէս աղաչում էր մեզ, բայց չ'խղճացինք նրան, այդ պատճառով էլ այս պատուհասը հասաւ մեզ. անմեղ պատանու վրէժը Աստուած պահանջում է մեզանից»: Այս խօսքերին Ռուբէնը պատասխանեց. «Ես ձեզ չ'ասացի թէ մի՛ մեղանչէք, մի՛ վնասէք դրան, բայց դուք չ'լսեցիք. այժմ նրա անմեղ արիւնը պահանջվում է մեզանից»: Յովսէփը երբ այս խօսքերը լսեց, չ'կարողացաւ պահ-

պանել իր սառնասրտութիւնը, շտապեց դուրս եւ արտասուեցաւ: Հանգստանալուց եւ իրան զսպելուց յետոյ, նա ներս մտաւ, որ ստուգէ թէ արդեօք 'ի սրտէ է նրանց զղջը: Նա եղբայրներից մինին (Շմաւոնին) պահեց իր մօտ, իսկ միւսներին արձակեց: Միեւնոյն ժամանակ հրամայեց, որ ծածուկ նրանց բեռների մէջ դնեն այն արծաթը, որ վճարել էին ցորենի համար: Յովսէփի եղբայրները տուն հասան, պատմեցին իրանց հօրը բոլորը, ինչ-որ պատահել էր եւ աւելացրին թէ այն երկրի իշխանը խստապէս պատուիրեց, որ առանց Բենիամինի այլեւս աչքին չ'երեւինք: Այդ լուրը սաստիկ վշտացրեց ծերունուն, նրա անհանգստութիւնը սաստկացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ բեռները բանալով՝ ամեն մէկի բեռան մէջ գտաւ տարած արծաթը: Տխուր ձայնով նա յայտնեց իր անբաւականութիւնը. «Դուք խլեցիք իմ բոլոր մանուկներիս. Յովսէփը կորաւ, Շմաւոնը չ'կայ եւ հիմա էլ կամենում էք Բենիամինը տանել»: Այս ժամանակ Ռուբէնն առաջ եկաւ եւ ասաց. «Սպանիր իմ երկու զաւակներին, հա՛յր, եթէ ես Բենիամինին ողջ եւ առողջ քեզ չ'հասցնեմ: Իմ ձեռքս յանձնիր նրան եւ ինձանից էլ պահանջիր»: Բայց Յակոբն ասում էր. «Ո՛չ, ո՛չ, իմ որդին չի գնալ ձեզ հետ. ես չեմ կարող թողնել նրան, որովհետեւ նրա եղբայրը մեռաւ եւ նա միայն է իր մօրից յետոյ»:

26. ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԵԳԻՊՏՈՍ ԳԱԼԸ.

Անցաւ մի տարի: Սովը չէր դադարում: Եգիպտոսից բերած ցորենն էլ սպառուել էր: Հարկաւոր էր կրկին անգամ գնալ Եգիպտոս՝ ցորեն գնելու. բայց Յակոբի որդիներն առանց Բենիամինի չէին կամենում տեղներից շարժուել: Իսրայէլին նոր վիշտ էր սպառնում. կամայ ակամայ նա պի-

տի բաժանուէր Բենիամինից: Բայց նա դեռ եւս ընդդիմանում էր: Այս ժամանակ Յուդան ասաց. «Պատանին արձակիր, հա՛յր, ես պատասխանատու եմ իրա մասին. ինձանից պահանջիր նրան, եթէ ես չբերեմ նրան՝ թո՛ղ մինչեւ վերջը պարտաւոր մնամ քո առաջդ»: Ուրիշ ճար չ՛կար. Յակոբը համաձայնուեցաւ: «Մեր երկրի բերքերից վեր առէք հետներդ ընծայի համար, ասաց նա, եւ կրկնապատիկ արծաթ տարէք. ձեր ձեռքով վերադարձրէք նմանապէս եւ այն արծաթը, որ գտնուեցաւ ձեր բեռների մէջ. գուցէ դա մի սխալմունք է: Տարէք եւ ձեր փոքր եղբօրը: Ամենակարող Աստուածը թող շարժէ դէպի ձեզ այն նշանաւոր մարդու գութը եւ շնորհը, որպէսզի վերցնէք բերէք եւ ձեր միւս եղբօրը. իսկ եթէ ինձ վիճակուած է անզաւականալ, ապա թող օրհնեալ լինի Տիրոջ կամքը»:

Եղբայրները տեղ հասան: Յովսէփը քաղցրութեամբ ընդունեց նրանց եւ հօր առողջութիւնը հարցրեց: Եղբայրները պատասխանեցին. «Առողջ է քո ծառան՝ մեր հայրը», եւ այս ասելով երկրպագութիւն տուին նրան մինչեւ գետին: Նրանք մատուցին նրան բերած ընծաները եւ այն արծաթը, որ գտել էին իրանց բեռներում: Բայց Յովսէփն ասաց նրանց. «Հանգիստ մնացէք, ձեր Աստուածն է տուել ձեզ այդ գանձը, իսկ ես ցորենի գինն ստացել եմ արդէն ձեզանից»: Յետոյ բերել տուեց Շմաւոնին, ամենքին էլ տարաւ իր տուն ճաշի եւ ամենից աւելի փաղաքշում էր Բենիամինին: Միասին ճաշեցին: Բայց Յովսէփը դեռ եւս չէր յայտնում իր ով լինելը: Եղբայրները չէին կարողանում հասկանալ, թէ ինչո՛վ արժանացան Եգիպտոսի առաջնակարգ իշխանի ուշադրութեանը եւ թէ ինչու է նա այդպիսի պատիւ տալիս նրանց:

Մինչդեռ եղբայրները ճաշում էին, Յովսէփի հրամանով նրանց ջուալները լցրել էին ցորենով եւ իր արծաթէ գաւաթը դրել էին Բենիամինի բեռան մէջ: Ճաշից յետոյ Յովսէփը

քաղցրութեամբ արձակեց նրանց: Դեռ քաղաքից շատ չէին հեռացած, ահա Յովսէփի կառավարիչը նրանց յետեւից հասաւ եւ ասաց, որ նրանք գողացել են իր տիրոջ արծաթէ գաւաթը: Յովսէփն այս խորամանկութիւնը նրա համար էր գործ դրել, որ տեսնէ թէ եղբայրներն ինչպէս կվարուին ձախորդութեան ժամանակ եւ կըզոհեն արդեօ՞ք իրանց կրտսեր եղբօրը: Յակոբի որդիքը համոզուած էին, որ իրանք անմեղ են եւ որ կառավարչի մեղադրանքը իզուր է, այդ պատճառով պատասխանեցին. «Ինչի՞ է մեր տէրն այդպիսի խօսքեր ասում: Ո՛չ, քո ծառաներդ այդպիսի գործ չեն գործել: Ահա մենք մինչեւ անգամ յետ բերինք գտած արծաթը, ուրեմն ինչ պէտք ունէինք գողութիւն անելու: Բայց որովհետեւ դու մեզ մեղադրում ես, որոնի՛ր մեր բեռները եւ որիս մօտ որ գտնուի քո տիրոջ գաւաթը, թող նա մահով պատժուի, իսկ մենք ամենքս քո տիրոջ ստրուկները լինինք»: Բեռները որոնեցին եւ գաւաթը գտնուեցաւ Բենիամինի ջուալի մէջ: Սարսափ կալաւ բոլորին. նրանք չէին հասկանում, թէ ինչպէս պատահեցաւ այդ քամբախտութիւնը: Ամենքն էլ վերադարձան Յովսէփի մօտ: «Ի՞նչ ասենք մեր տիրոջը, ինչով արդարանանք. Աստուած մեզ մեղաւոր գտաւ եւ մեղաւոր էլ ենք: Ահա մենք ամենքս քո ծառաներն ենք, մենք եւ նա, ում մօտ գտնուեցաւ գաւաթը»: Բայց Յովսէփն ասաց. «Ո՛չ, ես այդ բանը չեմ անիլ, ինձ մօտ ստրուկ կըմնայ միայն նա, ում մօտ գտնուեցաւ սկիհը, իսկ դուք խաղաղութեամբ գնացէք դէպի ձեր հայրը»: Այն ժամանակ Յուդան մօտեցաւ նրան եւ ասաց. «Եթէ ես առանց պատանիի տուն դառնամ, հայրս վշտից կըմեռնի: Ես եմ պատասխանատու եղել հօրս առաջ այդ պատանու համար. ուրեմն դրա փոխանակ թո՛ղ ես գերի եւ ստրուկ մնամ, իսկ պատանին վերադառնայ դէպի իր ծերունի հայրը»: Յովսէփը համոզուեցաւ, որ եղբայրներն ուղղուել են, որ նրանք պատրաստ

են յանձն առնել ամեն նեղութիւն, միայն թէ ցաւ չպատճառեն իրանց հօրը։ Սիրտը յուզուած, էլ չկարողացաւ համբերել եւ յայտնեց իր ով լինելը։ «Ես ձեր եղբայր Յովսէփն եմ, ասաց նա արտասուելով, տակաւին կենդանի՞ է իմ հայրս»։ Եղբայրներն այն աստիճան վախեցան, որ մի խօսք անգամ չկարողացան ասել։ Բայց նա աշխատում էր հանգստացնել նրանց. «Մի՛ վշտանաք, թէ ինչի ինձ վաճառեցիք, ասաց նա։ Աստուած ուղարկեց ինձ այս երկիրը ձեր կեանքի եւ այս աշխարհի փրկութեան համար։ Գնացէք, պատմեցէք հօրս իմ ունեցած փառքս եւ բերէք նրան այստեղ. դեռ եւս հինգ տարի կայ, երբ ոչ վար պիտի լինի, ոչ հունձ»։ Այնուհետեւ նա արտասուալից աչքերով գրկեց Բենիամինին, համբուրեց բոլոր եղբայրներին եւ լաց եղաւ։ Այսպէս ահա Յովսէփը, որ առանց յանցանքի, անմեղ վաճառուեցաւ եղբայրների ձեռքով մի քանի արծաթի, որ անմեղ տեղը չարչարուեցաւ Եգիպտոսում, մարդկային ցեղի ազատարար դարձաւ ընդհանուր սովամահից։

Լուր հասաւ փարաւոնին, որ Յովսէփի եղբայրներն եկել են։ Թագաւորը եւ բոլոր մեծամեծներն անչափ ուրախացան, որովհետեւ ամենքն էլ սիրում էին նրան։ Փարաւոնը հրամայեց նրան, որ իր հօրը եւ եղբայրներին բերել տայ Եգիպտոս։ Նրա հրամանով Յովսէփը նշանաւոր ընծաներ ուղարկեց հօրը եւ բազմաթիւ կառքեր նրանց տեղափոխութեան համար, նոյնպէս եւ ճանապարհի պաշար։

27. ՅԱԿՈԲԻ ԵԳԻՊՏՈՍ ՏԵՂԱՓՈԽՈՒԻԼԸ.

Յակոբի որդիքը Եգիպտոսից վերադարձան Քանանացոց աշխարհը եւ մի առ մի պատմեցին բոլորը, ինչ-որ պատահել էր։ Սկզբումը Յակոբը չէր կամենում հաւատալ նրանց խօսքին, բայց երբ տեսաւ մեծամեծ ընծաները եւ արքայական կառքերը, հոգով խնդաց եւ ասաց. «Մեծ բան է ինձ համար, եթէ արդարեւ կենդանի է տակաւին իմ որդին, գնամ տեսնեմ նրան, քանի որ դեռ չեմ մեռել»։

Բայց Քանանացոց երկրից դուրս գալուց առաջ, Իսրայէլը կամեցաւ իմանալ Աստուծոյ կամքը։ Նա գնաց Երդմնան ջրհորի մօտ եւ զոհ մատոյց Աստուծուն։ Աստուած ասաց նրան. «Աներկիւղ գնա՛ Եգիպտոս, այնտեղ ես մեծ ազգ կ՚անեմ քեզ եւ ապա կըհանեմ եւ կըդարձնեմ քո երկիրը»։ Այնուհետեւ Յակոբը վեր առաւ իր ընտանիքը (75 հոգի), հօտը եւ բոլոր ունեցածը եւ փարաւոնի կառքերով գնաց Եգիպտոս։ Երբոր հասաւ Եգիպտական աշխարհի այն մասը, որ Գեսէմ էր կոչւում, Յովսէփը դուրս եկաւ իր հօր առաջը, գրկախառնեց նրան եւ երկուսն էլ արտասուեցան։ Այնուհետեւ Յովսէփն իմացրեց փարաւոնին իր հօր գալուստը եւ իր եղբայրներից հինգին ներկայացրեց նրան։ Փարաւոնը հարցրեց. «Ի՞նչ է ձեր պարապմունքը»։ Յակոբի որդիքը պատասխանեցին. «Հովիւներ են քո ծառաները, եկել ենք այս երկրում ապրելու, որովհետեւ Քանանացոց երկրում սաստիկ սով է։ Արդ թոյլ տուր քո ծառաներին ապրել Գեսէմ երկրում»։ Փարաւոնն ասաց Յովսէփին. «Թող բնակուին Գեսէմում եւ եթէ դրանց մէջ ընդունակ մարդիկ կան, իմ խաշների վրայ վերակացու կարգիր»։ Յովսէփը ներկայացրեց փարաւոնին նաեւ իր հօրը։ «Քանի տարեկան ես», հարցրեց փարաւոնը։ Յակոբը պատասխանեց. «Իմ պանդխտութեան օրերը հարիւր

երեսուն տարի է միայն, սակայն եւ դժուարին էին իմ կեանքի օրերը եւ իմ հայրերի կեանքի օրերին չ՚հասան»։ Թագաւորի մօտից դուրս գալիս՝ Յակոբն օրհնեց նրան։ Եբրայական ցեղը բնակուեցաւ Եգիպտոսի ամենալաւ մասում—Գեսէմ աշխարհում։ Յովսէփը կերակրում էր նրանց արքունի շտեմարանից։

28. ՅԱԿՈԲ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՀԸ.

Յակոբը տասն եւ եօթը տարի ապրեց Եգիպտոսում։ Զգալով որ մահը մօտենում է, նա Յովսէփին եւ նրա որդիներին իր մօտ կանչեց եւ օրհնեց նրանց։ Յովսէփի երկու որդիներին՝ Մանասէին եւ Եփրեմին նա իր միւս որդիների հաւասար համարեց եւ օրհնելիս ձեռքը խաչաձեւ դրեց նրանց գլխին ու նախագուշակեց, որ փոքրը՝ Եփրեմը, իր աւագ եղբօրից բարձր կլինի։ Հայրը Յովսէփին ժառանգ անուանեց այն փոքրիկ հողամասին, որ գնել էր Քանանացոց երկրում։ Այնուհետեւ Իսրայէլը կանչեց եւ իր միւս որդիներին, օրհնեց նրանց եւ ամեն մինի ապագան նախագուշակեց։ Օրհնութեան ժամանակ նա անդրանկութեան իրաւունքը իր չորրորդ որդուն՝ Յուդային տուեց։ Յակոբը նախագուշակեց, որ նրա սերունդները պիտի ունենան իրանց թագաւորները եւ իշխանները, մինչեւ այն ժամանակ՝ երբ կըգայ Հաշտարարը։ Յետոյ նա պատուիրեց, որ իրան մարմինը թաղեն Աբրահամի եւ Իսահակի մօտ։ Հօր մահից յետոյ, Յովսէփը սրբութեամբ կատարեց նրա վերջին կամքը։ Եգիպտական սովորութեամբ զմռսեց նրա մարմինը եւ փառաւոր հանդէսով տարաւ թաղեց նրան Քանանացոց երկրում իր պապական գերեզմանատան մէջ։ Եգիպտոս վերադառնալով՝ Յովսէփը երկար տարիներ ապրեց եւ խնամեց իր ցեղը։ Մեռնելիս նա կտակեց,

որ երբ Աստուած կըհանէ նրանց Եգիպտոսից, իրան ոսկորներն օտար հողի մէջ չ՚թողնեն, այլ տեղափոխեն իր հայրենի գերեզմանատունը։ Յովսէփը մեռաւ հարիւր տասը տարեկան հասակում։

29. ԻՍՐԱՅԷԼԱՑՈՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ.

Յովսէփի մահից յետոյ, Յակոբի գերդաստանը սաստիկ բազմացաւ եւ մի ամբողջ ազգ կազմեց։ Այդ ցեղն այնուհետեւ կոչվում էր Իսրայէլական կամ Եբրայական, իրանց երկու նահապետների անունով՝ Իսրայէլի եւ Եբերի։ Յակոբի տասներկու որդիների թւին համեմատ, Իսրայէլացոց ազգը բաժանուեցաւ տասներկու տոհմերի։ Իւրաքանչիւր տոհմ իր ցեղապետի անունն էր կրում։

Եբրայեցիք սկզբում չէին մօտենում կռապաշտ Եգիպտացոց, նրանց հետ չէին խառնվում։ Նրանք ապրում էին Գեսէմում, վրաններ տակ եւ պարապում էին գլխաւորապէս անասնապահութեամբ, որ Եգիպտացոց համար արհամարհելի պարապմունք էր համարվում։ Նրանք ունէին իրանց սովորութիւնները, իրանց տօները, իրանց հաւատը։ Բայց ժամանակի ընթացքի հետ, նրանք կամաց-կամաց սկսան մօտենալ եւ յարաբերութիւն հաստատել կռապաշտ բնիկների հետ։ Նրանց սովորութիւններն ընդունելով, շատերն այնտեղը հասան, որ մոռացան իրանց Աստուծուն եւ Եգիպտացոց պէս սկսան երկրպագել եւ զոհ մատուցանել եզան, կոկորդիլոսին, կատուին . . . Եգիպտացոց աստուածների հետ, նրանք ընդունեցին եւ նրանց բոլոր մոլութիւններն ու արատները։ Շատերն սկսեցին շըջմոլիկ կեանք վարել, կռուիլ իրար հետ եւ միայն անձնական օգուտների յետեւից ընկնել, զոհելով ընդհանուր, ցեղական օգուտներն իրանց մասնաւոր շահերին։

Այդ ժամանակ Աստուած պատժեց նրանց նոյն Եգիպտացոց ձեռքով, որոնց ամբարշտութիւններին նրանք հաղորդակից եղան: Վաղուց մեռել էին Յովսէփի ժամանակուան փարաւոնները. Նրա արած բարերարութեան յիշատակն էլ մոռացել եւ իր նշանակութիւնը կորցրել էր նոր փարաւոնի համար, մինչդեռ Իսրայէլացիք մի քանի տասնեակ հոգուց մի մեծ ցեղ էին կազմել, որի ապստամբութիւնը կարող էր վտանգաւոր երեւել Եգիպտացոց: Նոր փարաւոնն ուշադրութիւն դարձրեց հէնց այդ կէտի վրայ եւ վախեցաւ, մի՛ գուցէ Իսրայէլացիք միանան իր օտար թշնամիների հետ, կամ միջոց գտնեն թողնել եւ հեռանալ Եգիպտոսից: Թագաւորին հաճելի չէր նրանց հեռանալը. միեւնոյն ժամանակ նա չէր ցանկանում, որ նրանք բազմանան: Նա մտածեց սահմանափակել նրանց ազատութիւնը: Եգիպտացիներից վերակացուներ նշանակելով նրանց վրայ, նա տաժանակիր աշխատութիւններ յանձնեց նրանց, մշակեցնելով այլ եւ այլ շինութիւնների վրայ: Այսպիսով մի անկախ ժողովուրդ փոքր ժամանակից յետոյ համարեա Եգիպտացոց ստրուկը դարձաւ: Վերակացուները հարկադրում էին նրանց մշակել հողը, աղիւս կտրել, քաղաքներ շինել, բուրգեր կանգնեցնել, եւ շատ խստութեամբ էին վարւում հետները: Չնայելով այս ամեն տառապանքներին, Աստուած բոլորովին աչքից չէր գցում նրանց եւ նրանք շարունակ բազմանում էին: Այդ բազմանալու առաջն առնելու համար փարաւոնը հրամայեց գետամահ անել բոլոր Իսրայէլացոց նորածին արու զաւակներին: Թշուառութիւնը հարկադրեց Իսրայէլացոց մտաբերել իրանց Աստուծուն. նրանք դարձան եւ արտասուալից աչքերով խնդրեցին Նրա օգնութիւնը:

---

30. ԲԱԶՄԱՉԱՐՉԱՐ ՅՈԲԸ.

Այն միջոցին, երբ Իսրայէլացիք Եգիպտոսում բազմացել էին, Արաբիայում ապրում էր մի բարեպաշտ մարդ, Եսաւի ցեղից, Յոբ անունով, որ կուռքերին երկրպագութիւն չէր տալիս եւ հաւատում էր անտեսանելի Աստուծուն: Ամբողջ Արաբիայում Յոբը հռչակուած էր որպէս ամենահարուստ, արդարադատ, բարեպաշտ եւ առաքինի մարդ: Նա յօժարութեամբ օգնում էր ամենքին, ով որ օգնութեան կարօտ էր: Յոբը իր ընտանիքի մէջ բախտաւոր էր: Նա եօթը տղայ եւ երեք աղջիկ ունէր: Նրա որդիքը իրար հետ շատ սիրով էին ապրում եւ ամեն օր, փոխ առ փոխ, հաւաքւում էին միմեանց մօտ եւ ուրախութիւններ էին անում: Երբոր ժողովների հերթը վերջանում էր, Յոբը իր մօտ էր հաւաքում նրանց եւ ամեն մինի փոխանակ ողջակէզ էր մատուցանում Աստուծուն՝ աղօթելով նրանց մեղքերի թողութեան համար: Սատանան նախանձեց առաքինի Յոբի երջանիկ դրութեանը, բայց Աստուած նրա առաքինութիւնն աւելի յայտնի անելու համար՝ թոյլ տուաւ սատանային ծանր փորձութիւն բերել արդարին: Մի անգամ, երբ նրա տղաներն ու աղջիկները հաւաքուել էին իրանց աւագ եղբօր տանը, յանկարծ համբաւաբեր է գալիս Յոբի մօտ եւ ասում է. «Քո եզները զոյգ զոյգ արածում էին դաշտումը, նրանց մօտ եւ քո էշերը, յանկարծ աւազակները յարձակուեցան եւ քշեցին նրանց, իսկ ծառաներին կոտորեցին. ես միայն ազատուեցայ եւ եկայ քեզ իմացնելու»: Դեռ նա խօսքը չէր վերջացրել, գալիս է մի ուրիշ համբաւաբեր եւ պատմում է, որ երկնքից հուր իջաւ եւ այրեց բոլոր հօտն ու հովիւները: Նրանցից յետոյ եկաւ մի ուրիշը եւ յայտնեց, որ ասպատակաւորներ՝ երեք խումբ բաժանուած, յարձակուեցան մեզ

վրայ, շրջապատեցին եւ ասպատակեցին բոլոր ուղտերը, իսկ ծառաներին կոտորեցին։ Սրանից յետոյ մօտ վազեց չորրորդ համբաւաբերը եւ ասաց. «Սարսափելի մրրիկ բարձրացաւ անապատից, չորս կողմից շրջապատեց այն տունը, որի մէջ ժողոված՝ ուրախութիւն էին անում որդիքդ եւ կործանեց նրան։ Բոլորը կորան, միայն ես ազատուեցայ եւ եկայ քեզ տեղեկացնելու»։ Այսպիսով Յոբը յանկարծակի զրկուեցաւ բոլոր կարողութիւնից, կորցրեց ամենը՝ կայք, որդիք եւ մնաց աղքատ ու միայնակ։ Բայց ոչ մի տրտունջ չ՚լսուեցաւ նրա բերանից։ Նա ծունկ չոքեց, երկրպագեց Աստուծուն եւ ասաց. «Մերկանդամ ծնուեցայ ես իմ մօրից եւ մերկանդամ կըդառնամ մայր հողի գիրկը։ Տէրը տուեց եւ Տէրն առաւ. ինչպէս Իրան հաճոյ թուեցաւ, այնպէս եղաւ. օրհնեալ լինի Տիրոջ անունը»։ Բայց ուրիշ, աւելի ծանր փորձութիւն էր սպասում Յոբին։ Նրա բոլոր մարմինը սարսափելի կերպով— տարափոխիկ եւ դժուարաբուժելի խոցերով ծածկուեցաւ։ Ինքը դեռ կենդանի, մարմինը փտում էր։ Այդպիսի հիւանդութիւնով վարակուածները չէին կարող մարդամիջի բնակուիլ։ Նրանք պէտք է բնակութիւնից հեռու, բաց դաշտի մէջ ապրէին, որպէսզի ուրիշներին չ՚հիւանդացնէին։ Ապաբախտ Յոբը քաղաքից դուրս նստած էր մոխրի վրայ եւ խեցիով մաքրում էր իր խոցերի թարախը։ Նրա վէրքերից այնպիսի դաժան հոտ էր բարձրանում, որ ոչ ոք չէր կարողանում մօտենալ նրան։ Նրա բոլոր ծանօթները մահ էին խնդրում նրա համար, որով միայն կարող էր այդ աննկարագրելի տանջանքներից ազատուիլ։ Այն ժամանակ կինը մօտենում է նրան եւ ասում. «Դու դարձեալ պինդ բռնած ես քո առաքինութիւններդ։ Դժգոհութիւն յայտնիր քո Աստուծուց, որպէսզի մահով մեռցնէ քեզ»։ Բայց Յոբը պատասխանում է. «Դու խօսում ես ինչպէս անզգամ կանանցից մինը. եթէ

բարիքը սիրով ընդունում էինք Աստուծոյ ձեռքից, չարիքին պատրաստ չե՞նք համբերել»։

Բայց մի վերջին փորձանք եւս սպասում էր նրան. մարդկային ճարտար լեզուն այս տարաբախտութիւնների վրայ աւելանալով, գալիս էր նրան յուսահատութեան մէջ ձգելու։ Յոբի հեռաւոր բարեկամները լսելով այն ձախորդութիւնների մասին, որին հանդիպել է նա, նրան մխիթարելու եկան։ Երբոր Յոբին տեսան, նրանք սարսափից բացականչեցին, պատառոտեցին իրանց շորերը եւ աւազ ցանեցին գլխներին։ Եօթը ցերեկ եւ եօթը գիշեր նստոտած էին նրա առաջ եւ խօսք չէին գտնում նրան մխիթարելու համար։ Վերջապէս Յոբը խօսել սկսեց։ Նա գանգատվում էր, թէ ինչի՞ է ինքը ծնուել, երբոր այսպիսի տանջանքներ էր սպասում իրան։ «Անիծուի այն օրը, երբ ես ծնայ եւ այն գիշերը, երբ ասացին թէ ահա արու»։ Նրա բարեկամներն էլ խօսեցան, բայց իրանց խօսքերով աւելի սաստկացրին նրա տառապանքները։ Նրանք կարծում էին, թէ Յոբը մեծ մեղապարտ է, եթէ այսպիսի չարչարանքների է ենթարկվում։ Եւ սկսեցին համոզել նրան, որ խոստովանի իր ծածուկ մեղքերը եւ զղջայ, որպէսզի փրկութիւն գտնէ։ Յոբը պաշտպանում էր իր անձը, ասում էր, որ ինքը ոչինչ յանցանք չէ գտնում իր մէջ եւ այս ամենը ասելիս՝ յայտնում էր իր հաւատը դէպի աշխարհի Փրկիչը եւ դէպի մեռեալների յարութիւնը *)։ Այդ ամենը գոռոզութեան վերաբերելով՝ բարեկամները յորդորում էին թողնել ինքնագովութիւնը եւ խոստովանիլ։ Նրանց կասկածը

*) Յոբի խօսքերը. «Ես գիտեմ՝ որ մշտնջենաւոր է Նա, որ վերջին օրը պիտի յարուցանէ երկրից այս իմ նեխուող մարմինս, և ես իմ անձիս մէջ իրազէկ եմ. Ես ինքս տեսնում եմ Նրան. իմ աչքերս և ոչ ուրիշի աչքերն են տեսնում Նրան»։ (Յոբ. XIX, 25—26)

սաստիկ վշտացնում էր անբախտին։ Յոբը վերջապէս դիմեց Աստուծուն եւ խնդրեց, որ Ինքը յայտնուի եւ վկայէ նրա անմեղութեան մասին։ Տէրը իսկապէս յայտնուեցաւ։ Կայծակների եւ որոտմունքների միջից Նա իր բարկութիւնը յայտնեց Յոբի բարեկամներին իրանց անարդար դատողութիւնների մասին եւ խոստացաւ ներել նրանց, եթէ միայն ինքը Յոբը կըմիջնորդէ եւ կ՚աղօթէ նրանց համար։

Աստուած բաւական համարեց Յոբի չարչարանքը եւ իր անդրդուելի հաւատի եւ անսահման համբերութեան համար վարձատրեց նրան առատապէս։ Նա կատարելապէս առողջացաւ։ Ազգականներն անչափ ուրախացան, երբոր նրա առողջութեան լուրն առան։ Շտապեցին եկան նրանք, մխիթարեցին նրան եւ ամեն մէկը մի ընծայ բերեց նրա համար։ Շուտով նրա անասուններն առաջուանից երկու անգամ աւելի շատացան։ Նա ունեցաւ դարձեալ եօթը տղայ եւ երեք աղջիկ։ Այս չարչարանքներն ու ձախորդութիւնները կրելուց յետոյ՝ նա ապրեց էլի 170 տարի եւ խորին ծերութեան մէջ մեռաւ, ամենքիս իր զարմանալի համբերութիւնը օրինակ թողելով *) . . .

31. ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ. ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ, ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓԱԽՈՒՍՏԸ.

Աստուած լսեց իր ժողովրդի աղօթքը եւ նրանց համար մի ազատարար ուղարկեց։ Ղեւի թոռը՝ Ամրամ անունով, մի արու զաւակ ունեցաւ։ Փարաւոնի հրամանին համեմատ

*) Յոբի կեանքը եւ նրան պատահած արկածները նկարագրուած են մի առանձին գրքում, որ Աստուածաշունչի մէջ յայտնի է գիրք Յոբայ անունով։

մանուկը պիտի գետը ձգուէր։ Բայց մայրը ցանկացաւ ազատել նրան եւ երեք ամիս ծածուկ պահեց տանը։ Մանուկը մեծացաւ։ Թագցնել այլեւս անկարելի էր։ Նա եղեգից հիւսած մի տապանակ վեր առաւ, ձիւթեց նրան, մէջը փափկացրեց եւ իր սիրուն մանուկը նրա մէջ դնելով, գցեց Նեղոսի եզերքում բուսած եղեգների մէջ։ Այս անելուց յետոյ ինքը տուն դարձաւ, իսկ իր Մարիամ անունով աղջկան

հրամայեց թագչիլ գետի մօտ եւ դիտել թէ ինչ կըպատահի մանկանը։ Տէրը փրկեց նրան։ Փարաւոնի դուստրն եկաւ գետի ափը լողանալու, եղեգների մէջ նկատեց զամբիւղը եւ իր աղախնին ուղարկեց, որ նրան բերէ։ Երբոր զամբիւղը մօտ բերին, բացեց եւ մէջը գտաւ մի մանուկ, որ լալիս էր։ Օրիորդը ցաւակցեց նրան եւ որդեգրեց։ Փարաւոնի դուստրը նրան

Մովսէս» անուանեց, որ կնշանակէ Ջրից հանած: Այս իսկ մանուկն էր, որին Աստուած Իսրայէլական ազգի ազատարար նշանակեց:

Մովսէսը մեծացաւ Թագաւորի պալատում. Նա ուսաւ այն ամէն գիտութիւններն ու իմաստութիւնները, որոնք այդ ժամանակ ծաղկած էին Եգիպտոսում: Բայց նա գիտէր եւ չէր մոռանում, որ Եբրայեցիք իր եղբայրներն են, մանաւանդ, որ նրան ծիծ էր տուել եւ մեծացրել իր հարազատ մայրը: Երբոր նա քառասուն տարեկան դարձաւ, գնաց Գեսէմ եւ տեսաւ, որ Իսրայէլացոց աշխատութիւնները վերին աստիճանի ծանր ու սրտամաշ էին: Նրա ներկայութեամբ մի անցք պատահեցաւ, որին նա սառնութեամբ նայել չ'կարողացաւ: Մի Եգիպտացի անողորմ կերպով ծեծում էր մի Իսրայէլացու, որ աւելի թուլակազմ լինելով, չէր կարողանում յաջողութեամբ կատարել այն գործը, որ յանձնած էր նրան: Մովսէսը պաշտպանեց իր արենակցին: Կռուի բռնուելով նա սպանեց խստասիրտ Եգիպտացուն, եւ նրա դին ծածկեց աւազի տակ: Միւս օրը նա տեսաւ, որ երկու Իսրայէլացիք կռւում են նոյն տեղը: Մովսէսը մօտեցաւ եւ ասաց յանցաւորին. «Ընկեր, ինչի՞ ես ծեծում քո մերձաւորին»: Այս խօսքերը կռուողներին դուր չ'եկաւ, ծեծողն ասաց նրան. «Քեզ ո՞վ է տէր եւ դատաւոր կարգել մեր գլխին, գուցէ դու միտք ունիս ինձ եւս սպանել, ինչպէս երէկ սպանեցիր Եգիպտացուն»: Մովսէսը վախեցաւ. Նա չէր կարծում թէ երէկուայ իր արարքն այդպէս կըհռչակուի: Այդ միջոցին փարաւոնն էլ իմացաւ Եգիպտացու սպանման մասին եւ հրամայեց պատժել Մովսէսին: Մովսէսը փախաւ Եգիպտոսից դէպի Արաբիայի անապատը:

32. ՄՈՎՍԷՍԻ ԿՈՉՈՒՄԸ.

Մովսէսը Մադիամացի մի բարեպաշտ քահանայի մօտ ծառայութեան մտաւ: Յոթորը — այսպէս էր քահանայի անունը — նկատելով նրա առաքինութիւններն ու որդիական ջանքերը, փեսայացրեց իրան: Մովսէսը արածեցնում էր իր աներոջ ոչխարների հօտը: Մի անգամ նա անապատի մէջ բաւական հեռացաւ իր ոչխարներից եւ մօտեցաւ Քորէբ սարին: Յանկարծ նա մի անսովոր երեւոյթ տեսաւ: Մորենի թուփն ամբողջապէս կրակի մէջ էր, բայց չէր այրւում *): Նա մօտ գնաց, որ տեսնէ թէ ինչպէս է, որ չէ այրւում թուփը, բայց երբոր մօտեցաւ, մորենու միջից ձայն լսեց: Ձայնն ասում էր. «Հանիր ոտնամաններդ, որովհետեւ այդ տեղը, ուր կանգնած ես, սուրբ է»: Մովսէսը ոտնամանները հանեց եւ ակնածութեամբ կանգնեց թփի առաջ: Ձայնը թփի միջից ասաց. «Ես եմ քո հայր Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը. Ես տեսայ Իմ ժողովրդի տառապանքները Եգիպտական աշխարհում եւ գալիս եմ փրկելու նրանց անտանելի գերութիւնից: Ուրեմն գնա փարաւոնի մօտ եւ դուրս բեր Իմ ժողովուրդս Եգիպտոսից»: Մովսէսը պատասխանեց. «Ես ո՞վ եմ, որ համարձակուիմ գնալ փարաւոնի մօտ եւ դուրս բերել Եգիպտոսից Իսրայէլի զաւակները»: Տէրն ասաց նրան. «Ես քեզ հետ կըլինիմ, եւ ահա քեզ նշան, թէ Ես եմ ուղարկել քեզ. երբոր դու դուրս կըբերես Իմ ժողովուրդը, դուք այս սարի վրայ Աստուծուն պաշտամունք կըմատուցանէք»: Մովսէսը պատասխանեց. «Ահա՛ ես կըգնամ

*) Այդ տեսիլքը ցոյց էր տալիս Մովսէսին, որ փարաւոնի հալածանքները չեն կարող ոչնչացնել Իսրայէլացոց ազգը, ինչպէս որ կրակը չէ ոչնչանցում մորենին:

Իսրայէլի զաւակների մօտ եւ կ՚ասեմ, թէ ձեր հայրերի Աստուածը ուղարկեց ինձ ձեզ մօտ. իսկ նրանք կըհարցնեն ինձանից, թէ ի՞նչ է Նրա անունը. ի՞նչ պատասխանեմ»: Տէրն ասաց. «Ես եմ Աստուած Որ Էն (Եհովայ)։ Գնա՛ եւ ասա՛, Որ Էնն ուղարկեց ինձ»: Մովսէսը պատասխանեց. «Իսկ եթէ նրանք չ՚հաւատան ինձ եւ ասեն թէ Տէրը երեւեցած չէ քեզ, ի՞նչ ասեմ»:—Այդ ի՞նչ է ձեռքինդ, հարցրեց Տէրը: «Գաւազան», պատասխանեց Մովսէսը:—Վայր գցի՛ր դրան, ասաց Տէրը: Մովսէսը վայր ձգեց եւ գաւազանն օձ դարձաւ: Մովսէսը վախեցաւ եւ յետ ու յետ գնաց: Բայց Աստուած հրամայեց. «Բռնի՛ր նրա տտնից»: Մովսէսը բռնեց եւ օձը կրկին գաւազան դարձաւ: «Այդպէս կ՚անես», ասաց Աստուած, որպէսզի հաւատան թէ Տէրն է ուղարկել քեզ: Իսկ եթէ դրանից յետոյ էլ չ՚հաւատան քեզ, ահա ինչ կ՚անես. «Ձեռդ ծոցդ դի՛ր»: Մովսէսը դրեց, յետոյ հանեց եւ տեսաւ, որ նա բորոտութիւնից ձիւնի պէս սպիտակել է: Մովսէսը վախեցաւ: Այն ժամանակ Աստուած հրամայեց, որ ձեռքը նորէն ծոցը դնէ, եւ նա առաջուայ պէս առողջացաւ: «Եթէ այդ երկու նշանից յետոյ եւս չ՚հաւատան, այն ժամանակ գետից բռնով ջուր կըվերցնես, շաղ կըտաս ցամաքի վրայ եւ ջուրն արիւն կըդառնայ»: Այս ամենից յետոյ Մովսէսը դարձեալ հրաժարվում էր. «Ես նրբաձայն եւ ծանրալեզու եմ, Տէր, աղաչում եմ, ինձանից աւելի արժանաւորին եւ հզօրին ընտրի՛ր այդ պաշտօնի համար»: Բայց Տէրը պատասխանեց. «Ո՞վ մարդուն բերան տուեց, կամ ո՞վ ստեղծեց խուլն ու համրը, ականին եւ կոյրը, ոչ ապաքէն Ես: Գնա՛ ուրեմն: Ես կըբանամ քո բերանը եւ կ՚ուսուցանեմ, ինչ-որ պիտի խօսես: Ահաւասիկ քո եղբայր Ահարոնը քեզ օգնական եմ նշանակում. դու Իմ պատգամներս նրան կըհաղորդես, իսկ նա քո փոխանակ կըխօսի ժողովրդի հետ:

Վերցրու գաւազանդ, նրանով պէտք է նշաններ անես»: Մովսէսը հպատակեցաւ:

33. ԻՍՐԱՅԷԼԱՑՈՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ.

Անապատից Մովսէսը վերադարձաւ աներոջ մօտ եւ նրա օրհնութիւնն առնելով իր կնոջ եւ երկու որդիների հետ Եգիպտոս գնաց: Աստուծոյ հրամանով նրա եղբայր Ահարոնը առաջը դուրս եկաւ եւ ուրախութեամբ ընդունեց նրան: Երկու եղբայրները ժողովեցին Իսրայէլի ծերերին եւ յայտնեցին Աստուծոյ կամքը: Ահարոնը պատմում էր ժողովրդին Աստուծոյ ասածները, իսկ Մովսէսը նշաններ էր անում: Բոլոր ժողովուրդը հաւատաց եւ երկրպագեց Աստուծուն, որ իր ողորմութեամբ այցելութիւն է անում իրանց:

Ժողովուրդին նախապատրաստելուց յետոյ, Մովսէսն ու Ահարոնը գնացին փարաւոնի մօտ եւ Եհովայի, Իսրայէլացոց Աստուծոյ կողմից, յայտնեցին, որ թոյլ տայ իրանց ազգին գնալ երեք օրուայ ճանապարհ հեռաւորութիւն ունեցող անապատը եւ Աստուծուն զոհ մատուցանել: Փարաւոնը պատասխանեց, թէ ո՞վ է ձեր Եհովան, Որին ես պարտաւոր լինիմ լսելու. ես չեմ ճանաչում Եհովային եւ չեմ արձակիլ Իսրայէլացոց: Այնուհետեւ թագաւորը հրամայեց իր վերակացուներին, որ այլեւս յարդ չ՚տան նրանց աղիւս շինելու համար (թող իրանք գնան ժողովեն ծղօտատեղիներից) եւ միեւնոյն ժամանակ խստորէն պահանջեն, որ նրանք ամեն օր այնքան աղիւս պատրաստեն, որքան առաջ (երբ յարդ էին ստանում): «Նրանք պարապ ժամանակ ունին, ասաց փարաւոնը, դրա համար էլ աղաղակ են բարձրացնում, թէ թոյլ տուր գնանք մեր Աստուծուն երկրպագենք եւ զոհ մատուցանենք»: Իսրայէլացոց դրութիւնն աւելի ծանրացաւ:

Այդ ժամանակ Մովսէսն ու Ահարոնը նորից գնացին փարաւոնի մօտ։ Նրան հաւատացնելու համար, թէ իրանք իսկապէս Աստուծոյ առաքեալներ են, Մովսէսը ձգեց իր գաւազանը եւ նա օձ դարձաւ։ Փարաւոնը կանչեց Եգիպտական կախարդներին, որոնք իրանց հմայութիւններով իրանց գաւազաններն էլ օձ դարձրին։ Բայց Մովսէսի գաւազանը կլանեց նրանց գաւազանները։ Չնայելով այս հրաշքին՝ փարաւոնը մերժեց Իսրայէլացոց խնդիրը։ Այն ժամանակ Աստուած սկսեց հարուածել Եգիպտացոց սարսափելի պատուհասներով։

1. Եգիպտոսի բոլոր ջրերը արիւն դարձան։

2. Անհամար գորտեր երեւեցան եւ լցուեցան տներն ու դաշտերը։

3. Օդը լցուեցաւ խայթող մուներով (մժեղ, մնծակ)։

4. Շնաճանճերով լցուեցաւ երկիրը, որոնք կծոտելով անհանգիստ էին անում ամենքին։

5. Ժանտախտը կոտորեց բոլոր ընտանի կենդանիներին։

6. Կեղտով եւ ուռոյցքներով ծածկուեցան մարդիկ եւ մնացած անասունները։

7. Փոթորիկն ու կարկուտը աւերեց նրանց դաշտերն ու արտերը։

8. Մորեխը փչացրեց բոլոր կանաչը։

9. Երեք օր շարունակ թանձր խաւար պատեց բոլոր Եգիպտոսը։

Այս հարուածներն աւերում էին միմիայն այն տեղերը, ուր Եգիպտացիք էին բնակած։ Գեսէմն ազատ էր այս պատուհասներից։ Իւրաքանչիւր պատուհաս սկսւում եւ վերջանում էր Մովսէսի խօսքով։ Սկզբում Եգիպտոսի կախարդներն աշխատեցին առաջ բերել դոյնպիսի հրաշքներ, բայց շուտով համոզուեցան եւ փարաւոնին էլ ասացին, որ Մովսէսի գործերում խառն է Աստուծոյ մատը եւ մարդիկ չեն կարող այդպիսի բաներ անել։ Բայց փարաւոնի սիրտը քարա-

ցել էր։ Երբոր հրաշալի պատուհասն սկսւում էր, նա խոստանում էր արձակել Իսրայէլացոց, իսկ երբ պատիժը վերջանում էր՝ նա կամ ուրանում էր իր խոստումը կամ ուղղակի հրաժարւում էր նրան կատարելուց։ Սկզբում նա թոյլ տուեց Իսրայէլացոց զոհ մատուցանել իրանց Տիրոջ, միայն ոչ անապատում, այլ Եգիպտոսում, յետոյ համաձայնեցաւ, որ նրանք գնան անապատ, միայն իրանց մանուկներին տանը թողնեն. յետոյ թոյլ տուեց, որ մանուկներին էլ հետները տանեն, բայց թողնեն բոլոր անասունները. վերջապէս իններորդ պատժից յետոյ, նա սրտմտութեամբ դուրս արեց իր մօտից Մովսէսին եւ ասաց, որ մահով կըպատժէ նրան, եթէ միւս անգամ կըհամարձակուի իր մօտ գալ։ Այն ժամանակ Աստուած յայտնեց Մովսէսին, որ նա մի անգամ էլ կըպատժէ Եգիպտացոց, որից յետոյ թագաւորը կ՚արձակէ Իսրայէլացոց եւ հրամայեց, որ գարնանային առաջին ամսի տասներորդ օրը (Նիսան—Մարտ) իւրաքանչիւր Հրէայ մի մի արու միամեայ անարատ (առանց որեւէ մարմնաւոր պակասութեան) գառը ջոկեն եւ պահեն. նոյն ամսի 14-ին երեկոյեան մորթեն այդ գառները, նրանց արիւնը սրսկեն իրանց տների սեամերին ու դռների ճակատներին, գառը խորովեն կրակի վրայ եւ առանց ոսկորը կոտրելու ուտեն։ Տանտիկինները այդ երեկոյի համար թող թխեն բաղարջ հաց եւ եթէ ընտանիքը փոքր է, թող հրաւիրէ իր հարեւանին, որովհետեւ այդ վերջին ընթրիքը պիտի լինի Եգիպտոսում եւ ընթրիքից ոչ մի պատառ չպիտի մնայ։ Ուտելուց առաջ Իսրայէլացիք պէտք է բոլորովին պատրաստ լինեն դուրս գնալու, եւ ընթրիքը պիտի անեն կանգնած, ճանապարհի շորերով, կօշիկները հագին եւ գաւազանը ձեռին։ Գառը պէտք է ուտել բաղարջ հացով եւ եղեգով (դառն խոտով), որովհետեւ սա Տիրոջ Զատիկը կամ Պասէքն է։ «Գիշերն Ես կ՚ուղարկեմ Իմ հրեշտակը եւ կոտորել կտամ Եգիպտացոց բոլոր

անդրանիկները, մարդից սկսած մինչեւ անասունները եւ արիւնը նշան կլինի ձեր դռներին։ Ես կտեսնեմ արիւնը եւ մօտից կ'անցնեմ (Պասէք նշանակում է անցումն ի մօտոյ) եւ կորստաբեր հարուածը ձեր մէջ չի մտնիլ։ Այս տօնի յիշատակը կկատարէք սերունդէ սերունդ»։

Իսրայէլացիք կատարեցին Տիրոջ հրամանը։ Եւ ահա Նիսան ամսի տասն ու հնգի գիշերը Տէրը կոտորեց Եգիպտացոց բոլոր անդրանիկներին, մարդից սկսած մինչեւ անասունները։ Սարսափելի ողբ եւ աղաղակ ընկաւ Եգիպտացոց տները. ամեն տուն իր անդրանիկի յանկարծակի մահն էր սգում։ Թագաւորի պալատն էլ ազատ չէր այս ողբ ու կոծից։ Փարաւոնը սարսափեց. նա կանչեց Մովսէսին եւ Ահարոնին եւ պատուիրեց շուտով հեռանալ իր երկրից։ «Գնացէք, մատուցէք ձեր պատարագը Եհովային, տարէք ձեզ հետ եւ ձեր անասուններն ու կարողութիւնը, միայն թէ օրհնեցէք ինձ գնալուց առաջ»։ Եգիպտացիք այն աստիճան շտապեցնում էին Իսրայէլացոց, որ սրանք չ'կարողացան հաց թխել իրանց համար, այլ խմոր հունցեցին եւ առանց քացախելու փաթաթեցին կտաւների (մեզարների) մէջ ու հետները տարան, որ ճանապարհին նրանից բաղարջ թխեն։ Մովսէսը կատարեց Յովսէփի վերջին կտակը եւ նրա ոսկրներն էլ հետը վեր առաւ։ Այս ազատութեան յիշատակը կատարելու համար Մովսէսը սահմանեց Զատկական եօթնօրեայ տօնը *) եւ օրէնք

*) Զատիկը կամ Պասէքը պէտք է յիշեցնէր Իսրայէլացոց իրանց դառն ստրկութիւնը Եգիպտոսում և ազատութիւնը Աստուծոյ օգնութեամբ։ Պասէքը օրինակ էր նրանց համար և ապագայ Փրկչի. ինչպէս որ Եգիպտոսում գառան արիւնը կոտորածից ազատեց նրանց, այնպէս էլ պիտի գար ժամանակ, երբ անմեղ Փրկիչը որպէս գառն անարատ, խաչի վրայ պիտի թափէր իր արիւնը մարդկանց մեղքերի համար և ազատէր նրանց սատանայի

տուեց Իսրայէլացոց, որ Աստուծուն նուիրեն բոլոր անդրանկածինները արական սեռի, մարդկանցից սկսած մինչեւ անասունները, այնպէս որ անասունների անդրանիկները զոհեն եւ ազատեն մարդկանց անդրանիկների կեանքը։

34. ԻՍՐԱՅԷԼԱՑՈՑ ԿԱՐՄԻՐ ԾՈՎԻՑ ԱՆՑՆԻԼԸ.

Իսրայէլացիք, որոնք 74 հոգով Եգիպտոս էին մտել, մինչեւ այդ օրը բաւական բազմացել էին։ Եգիպտոսից դուրս գալիս զէնք կրելու ընդունակ Իսրայէլացոց թիւը հասնում էր 600,000։ Բացի սրանից նրանց հետ միացան շատերը այլ եւ այլ ցեղերից։ Տէրը Իսրայէլացոց Եգիպտոսից դուրս գալուց յետոյ եւս չ'խնայեց Իր հովանաւորութիւնը։ Նրա հրամանով օդի մէջ մի սիւն երեւեցաւ, որ ցերեկը ամպի ձեւով, իսկ գիշերը կրակի նմանութեամբ առաջնորդում էր նրանց անծանօթ անապատի մէջ։ Այսպէս հրեղէն սիւնին հետեւելով՝ Իսրայէլացիք հասան Կարմիր ծովի եզերքը, ուր եւ բանակ տուին։

Իսրայէլացոց հեռանալուց յետոյ՝ Եգիպտացիք ափսոսացին, որ արձակել են նրանց։ Այդ ժամանակ զգացին թէ ինչքան շատ գործ էին կատարում նրանք իրանց համար։ Փարաւոնն ուրախացաւ, երբոր լսեց, թէ նրանք ուղեւորուել են դէպի Կարմիր ծովը, նա կարծեց թէ մոլորուել են եւ հեշտ է յետեւներից հասնել ու յետ դարձնել։ Իսկոյն վերցրեց 600 կառք ու բոլոր Եգիպտական հեծելագունդն եւ յետեւներից ընկաւ։ Հեռուից նա տեսաւ, որ նրանք բանակ

իշխանութիւնից։ Զատկական գառը օրինակ էր Աստուծոյ գառան՝ Յիսուս Քրիստոսի։

են տանել ծովի եզերքին։ Սաստիկ վախեցան Իսրայէլացիք, երբոր տեսան Եգիպտական հեծելագունդը, եւ փոխանակ Աստուծոյ օգնութեանը դիմելու, սկսեցին տրտնջալ Մովսէսից, թէ ինչի՞ հանեց նրանց Եգիպտոսից։ Մովսէսը հանգստացրեց ժողովուրդին. «Մի՛ երկնչիք, դուք ձեր աչքով կը տեսնէք, թէ ինչպէս կ'ազատէ ձեզ Աստուած։ Շուտով այս Եգիպտացիք կ'ոչնչանան ամենքն էլ»։ Այս ասելուց յետոյ՝ Աստուծոյ հրամանով ձեռքը ձգեց դէպի ծովը եւ գաւազանով խփեց ջրին։ Ջուրը պատառուեցաւ։ Ապա բարձրացաւ արեւելեան սաստիկ հողմը, ջրերը յետ քաշուեցան եւ ծովի յատակը ցամաքեցաւ։ Այդ միջոցին ամպը բաժանում էր Եգիպտացոց Իսրայէլացիներից։ Իսրայէլացոց կողմը նա պայծառապէս լուսաւորում էր, իսկ Եգիպտացոց կողմը խաւար էր տիրում, այնպէս, որ նրանք չէին տեսնում նրանց։ Իսրայէլացիք արդէն մտել էին ծովը եւ նրա միջից անցնում էին։ Ջրերի կուտակները սարի պէս կանգնած էին նրանց աջ ու ձախ կողմը։ Լուսաբացին Եգիպտացիք նկատեցին անցկացողներին եւ նրանց յետեւից ընկան։ Երբոր սրանք ծովի մէջտեղը հասան, Իսրայէլացոց բանակի վերջին կարգերը դուրս էին գալիս միւս եզերքը։ Մովսէսը յետ նայեց, ձգեց ձեռը դէպի ծովը եւ ջուրը մրրկալից եւ որոտաձայն ցած իջաւ, իր առաջին դիրքը բռնեց։ Բոլոր Եգիպտացիք խեղդուեցան։

Իսրայէլացիք ծովի միւս եզերքին Մովսէսի եւ Ահարոնի առաջնորդութեամբ փառաբանական երգերով գոհացան իրանց Աստուծուց, Որը այդպէս հրաշալի կերպով օգնեց եւ ազատեց իրանց վերահաս վտանգից։

35. ԻՍՐԱՅԷԼԱՑՈՑ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ՍԻՆԱՅ ԼԵԱՌԸ.

Մի ամայի անապատի միջով Իսրայէլացիք գնում էին դէպի Քանանացոց երկիրը։ Աստուած դիտմամբ ծռում էր նրանց ճանապարհը եւ արգելքներ էր յարուցանում, որպէսզի մեղմացնէ նրանց բնաւորութիւնը եւ նրանց հաւատն ու յոյսը դէպի Աստուած՝ ամրացնէ։ Երեք օր գնում էին Իսրայէլացիք (Սուր) անապատի միջով եւ ջուր չէին գտնում։ Երրորդ օրը նրանք մի աղբիւր գտան, որին անուանեցին Մեռայ՝ այսինքն դառնութիւն, որովհետեւ աղբիւրի ջուրն այնքան դառն էր, որ խմել չէր կարելի։ Իսրայէլացիք տրտունջ բարձրացրին Մովսէսից, որ իրանց քաղցած ու ծարաւ կոտորում է։ Մովսէսը դիմեց Աստուծուն։ Նա ցոյց տուեց մի տեսակ փայտ, որ գցում էին ջրի մէջ եւ դառնութիւնը ոչնչացնում էր։

Այստեղից եկան Եղիմ, ուր գտան տասներկու սառն աղբիւրներ եւ 70 արմաւենի. կերան խմեցին եւ փոքր ինչ հանգստացան։ Շարունակելով իրանց ճանապարհը (Սին անապատի մէջ) նրանք նոր արհաւիրքի մէջ ընկան. ուտելու ոչինչ չէին գտնում, իսկ իրանց վերցրածն սպառուել էր ահա։ Յուսահատուած, նրանք ասում էին. «Երանի մեզ Աստուած Եգիպտոսում կոտորէր, քան թէ այսպիսի նեղութիւնների հանդիպէինք. այնտեղ գոնէ մսի կաթսաների մօտ նստած կուշտ ուտում էինք. իսկ այստեղ ինչ է մեր դրութիւնը»։ Այդ ժամանակ Մովսէսն ասաց նրանց Աստուծոյ անունով. «Երեկոյեան միս կ'ուտէք, իսկ առաւօտը հացով կըկշտանաք»։ Նրա խօսքերը կատարուեցան։ Այդ օրը երեկոյին երեւեցաւ մեծ բազմութիւն լորամարգիների եւ ծածկեց բոլոր բանակը, իսկ առաւօտը երկրի երեսը ծածկուեցաւ մի տեսակ մանր

հատիկներով՝ գինձի սերմի նման։ Իսրայէլացիք շուարած հարցնում էին միմեանց՝ «Ի՞նչ է այս»։ «Սա այն հացն է, որ Աստուած ուղարկում է ձեզ համար իբրեւ կերակուր», պատասխանեց Մովսէսը։ Այս երկնատուր հացը մանանայ անուանուեցաւ։ Այդ օրից սկսած, ամեն առաւօտ, բայց շաբաթ օրերից, Եբրայեցիք մանանայ էին ժողովում։ Ցերեկը դա չէր լինում, այլ միայն առաւօտը՝ ցօղը երկրից վերանալուց յետոյ։ Արեւը դուրս էր գալիս թէ չէ, նա հալվում ոչնչանում էր։ Մանանան համի կողմից նման էր մեղրի ծորից շաղախած խորսխի։ Նրան կարելի էր աղալ երկանով, ծեծել անկանի մէջ, եփել եւ թխել։ Մի նոր փորձութիւն ցոյց տուեց, թէ ո՛րքան թոյլ է Իսրայէլացոց հաւատը։ Նրանք դարձեալ ջրի պակասութիւն զգացին եւ սկսեցին նորից տրտունջ բարձրացնել (այդ ժամանակ նրանք բանակուած էին Ռափիդիմի մէջ)։ «Ինչի՞ դուրս բերեցիր մեզ Եգիպտոսից՝ մեզ, մեր որդոցն ու անասուններին կոտորելո՞ւ», գոռում էին նրանք։ Մովսէսը Տիրոջ հրամանով գաւազանով զարկեց ապառաժին եւ նրանից ջուր բղխեց *)։ Այդտեղ նրանց վրայ յարձակուեցան Ամաղեկացիք, առաջները կտրեցին եւ կամենում էին պատերազմ տալ։ Իսրայէլացիք Յեսու Նաւեայի առաջնորդութեամբ նրանց հանդէպ դուրս եկան։ Մովսէսը բարձրացաւ դիմացի բլուրը եւ ձեռքերը երկինք բարձրացրած՝ աղօթում էր Աստուծուն։ Աստուած լսեց նրա աղօթքը։ Ամաղեկացիք յաղթուեցան։

Այսպէս ահա, Աստուած առաջնորդում էր Իսրայէլացոց անապատի մէջ, ուտելիք ու խմելիք էր տալիս նրանց եւ օգնում էր իրանց նոր թշնամիների հետ ունեցած պատերազմների ժամանակ. բացի սրանից իրանց ուղեւորութեան

*) Այդտեղը փորձութիւն և բանբասանք անուանուեցաւ։

ժամանակ նրանց շորերը չէին հնանում եւ ոտները չէին ցաւում։ Բայց Աստուած Իր օգնութիւնը միանգամից չէր տալիս նրանց, որպէսզի նրանք հասկանային, թէ ամեն նեղութիւնների ժամանակ Իրանից միայն կարող են փրկութիւն ստանալ։ Այս մասին ինքը Մովսէսը այսպէս ասաց ժողովրդին. «Յիշի՛ր բոլոր ճանապարհը, որով անցկացրեց քեզ Աստուած, որպէսզի զսպէ, հանդարտեցնէ քեզ եւ ճանաչէ, թէ ի՞նչ կայ քո սրտի մէջ, որ գիտենայ, թէ պիտի պահես Իր պատուիրանները թէ ոչ։ Նա չարչարեց քեզ, սովաբեկ արաւ եւ կերակրեց մանանայով, որը դու չէիր ճանաչում, որպէսզի ցոյց տայ քեզ, թէ միայն հացով չէ ապրում մարդ, այլ ամեն խօսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանից *)։

36. ՍԻՆԱՅԻ ՕՐԷՆՔՆԵՐԸ.

Երկրորդ ամսին Իսրայէլացիք հասան Սինայի անապատը եւ Սինայ սարի ստորոտումը ցած թողեցին իրանց վրանները։ Այստեղ Մովսէսը Աստուծոյ անունից յայտնեց ժողովրդին. «Դուք ինքներդ տեսաք, թէ ո՛րքան բաներ արեցի Եգիպտացոց, եւ ձեզ, որպէս թէ արծուի թեւերի վրայ,

*) Այն ողորմութիւնները, որ Աստուած շնորհում էր Իսրայէլացոց անապատի մէջ, ապացոյց էին այն ամենամեծ ողորմութեան, որ պիտի ուղարկէր նրանց ապագայում։ Փայտը, որ Մեռայի ջրերի դառնութիւնը ոչնչացրեց, Քրիստոսի խաչափայտի օրինակն էր, որ պիտի փարատէր կեանքի դառնութիւնները (մեղքը)։ Անապատի մանանան և ապառաժը, որից ջուր բղխեց, այն հացի և ըմպելիքի (Քրիստոսի մարմնի և արեան—հաղորդութեան) օրինակն էր, որ իջանելով երկնքից, մարդկային ազգի փրկութեանը պիտի ծառայէր։

վեր առայ եւ Ինձ մօտեցրի։ Արդ եթէ լսելով լսէք Իմ ձայնին եւ պահէք Իմ ուխտը, բոլոր ազգերի միջից դուք միայն կըլինիք Իմ սեպհական ժողովուրդը, որովհետեւ բոլոր երկիրն Իմն է, դուք կըլինիք Ինձ համար թագաւորութիւն, քահանայութիւն եւ սուրբ ազգ»։ Ժողովուրդը պատասխանեց. «Ամեն բան, ինչ-որ ասաց Աստուած, կըլսենք եւ կըկատարենք»․ եւ այնուհետեւ սկսեց աղօթքով եւ ծոմապահութիւնով պատրաստուել Աստուծոյ պատգամները լսելու համար։

Եգիպտոսից դուրս գալու յիսուներորդ օրը՝ Իսրայէլացիք տեսան, որ Սինայ սարը ծածկուել է թանձր ամպով, սարսափելի որոտումներ լսուեցան, կայծակներ փայլատակեցան, փողերի ուժգին ձայներ հնչեցին։ Մովսէսը եւ Ահարոնը բարձրացան սարը եւ կանգնեցան ժողովրդի հանդէպը։ Ժողովուրդը սարսափած եւ դողալով կանգնած էր սարի ստորոտում։ Սարի գագաթից ահաւոր ձայն էր գալիս։ Աստուած աւանդում էր Իր պատգամներն ասելով։

ա․ Ես եմ Տէր Աստուած քո․ մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն։	ա․ Ես եմ քո Տէր Աստուածը, ինձանից աւելի ուրիշ Աստուածներ չունենաս։
բ․ Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան․ մի՛ երկրպագանիցես նոցա և մի՛ պաշտեսցես զնոսա։	բ․ Քեզ համար կուռքեր չշինես որեւիցէ բանի նման, նրանց չ՚երկրպագես և չըպաշտես նրանց։
գ․ Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց։	գ․ Քո Աստուծոյ անունը սնոտի բաների վրայ չ՚յիշես։
դ․ Յիշեսջիր զօրն շաբաթու սրբել զնա։	դ․ Շաբաթ օրերը միտդ բեր, որ սուրբ պահես նրան։
ե․ Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի քեզ բարի լիցի և երկայնակեաց լիցիս	ե․ Պատուի՛ր քո հօրը և մօրը, որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս երկ-

ի վերայ երկրին բարութեան, զոր Տէր Աստուած քո տացէ քեզ։	րի վրայ, որ քո Տէր Աստուածը կըտայ քեզ։
զ․ Մի՛ սպանաներ։	զ․ Սպանութիւն մի՛ անիր։
է․ Մի՛ շնար։	է․ Շնութիւն մի՛ անիր։
ը․ Մի՛ գողանար։	ը․ Գողութիւն մի՛ անիր։
թ․ Մի՛ սուտ վկայեր։	թ․ Սուտ վկայութիւն մի՛ տար։
ժ․ Մի՛ ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամենայնի՝ զինչ ընկերի քո իցէ։	ժ․ Ցանկութիւն մի՛ ունենար քո ընկերոջ տան վրայ, և ո՛չ այն ամեն բանին, ինչ որ քո ընկերինն է։

Իսրայէլացիք սարսափած լսում էին Աստուծոյ պատգամները։ Երբոր Աստուծոյ ահաւոր ձայնը դադարեց, ժողովրդի ծերերն եկան Մովսէսի մօտ եւ ասացին. «Այսուհետեւ դու խօսիր մեզ հետ. թող Աստուած այլեւս չըխօսի մեզ հետ, մի՛ գուցէ մեռնինք»։ Ժողովրդի խնդիրը լսեց Աստուած եւ այսպէս պատասխանեց Մովսէսին. «Ուղիղ խօսեցան նրանք։ Քո ժողովրդի միջից կըյարուցանեմ քեզ նման մի մարգարէ եւ Իմ պատգամներս նրա բերանով կ՚աւանդեմ, եւ կըխօսէ նրանց հետ, ինչպէս որ Ես կըպատուիրեմ։ Եւ այն մարդը, որ չի լսիլ՝ ինչ-որ կըխօսէ մարգարէն Իմ անունով, Ես վրէժ կ՚առնեմ նրանից։ Այժմ հրամայիր նրանց վերադառնալ իրանց վրանները, իսկ ինքդ մնա Ինձ մօտ։ Ես կ՚ասեմ քեզ բոլոր պատուիրաններն ու օրէնքները, որոնցով պիտի կառավարուին նրանք այն երկրում, որ Ես նշանակել եմ նրանց համար»։

Մովսէսն իջաւ սարից եւ ժողովրդին յայտնեց Աստուծոյ կամքը։ Ժողովուրդը պատասխանեց. «Ամենը, ինչ-որ հրամայել է Աստուած, կըկատարենք եւ կըհնազանդուինք»։ Միւս առաւօտ Մովսէսը զոհ մատուց Աստուծուն եւ զոհած կենդանու արիւնը սրսկեց ժողովրդի վրայ։ Այսպիսով ժո-

ժողովուրդը կամաւորապէս ուխտ կապեց Աստուծոյ հետ։ Տէրը խոստացաւ լինել Նրանց Աստուածը, իսկ ժողովուրդը երդուեց՝ իր Երկնաւոր Թագաւորի հրամանները սրբութեամբ կատարել։

Մինչեւ այդ ժամանակներն Աստուծոյ յայտնութիւնները մարդկանց յիշողութեան մէջ էր միայն մնում, բերանացի աւանդւում էր որդուց որդի եւ սերունդից սերունդ։ Իսկ այժմ Աստուած պատուիրեց բոլոր աւանդած օրէնքները գրի անցկացնել։ Այսպիսով Եբրայեցիք ունեցան Սուրբ Գիրք, որի մէջ գրւում էր աստուածաւանդ օրէնքները։ Սինայի օրէնքները գրուեցան 50-րդ օրը Եգիպտոսից դուրս գալուց յետոյ։ Այդ օրը նրանք սուրբ համարեցին եւ դրա յիշատակի համար տօն սահմանեցին, որ կոչուեցաւ Պենտեկոստէ։

37. ՏԱՍՆԱԲԱՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ.

Իսրայէլացիք իրանց խոստմանը երկար ժամանակ հաւատարիմ չմնացին։ Մովսէսը եւ Յեսու Նաւեան բարձրացան սարը, որ Աստուծուց հրամաններ ընդունեն, եւ մնացին այնտեղ քառասուն օր։ Այդ ժամանակ Մովսէսն ստացաւ օրէնքներ, թէ ինչպէս պէտք է շինել Վկայութեան խորանը եւ Ուխտի տապանակը, այսինքն այնպիսի մի շարժական տաճար, որի մէջ ժողովուրդը կարողանար զոհ մատուցանել Աստուծուն եւ աղօթել դէպի Նա։ Քառասուն օրից յետոյ Աստուած տուեց Մովսէսին երկու քարէտախտակներ, որոնց վրայ Աստուծոյ ձեռքով գրած էին տասն պատուիրանները։

Այդ միջոցին Իսրայէլացիք տեսնելով որ Մովսէսը երկար ժամանակ բացակայ է եւ չէ իջնում սարից, կարծեցին,

թէ Նրան մի փորձանք է պատահել եւ սկսեցին հոգս քաշել թէ ով կ՚առաջնորդէ իրանց անապատից անցնելու։ Նրանք հաւաքուեցան Ահարոնի շուրջը եւ պահանջեցին, որ Նա իրանց համար այնպիսի աստուած շինէ, որ գնայ նրանց առաջից։ Ահարոնը չկարողացաւ զսպել եւ յետ կանգնեցնել

ժողովրդին այս անօրէնութիւնից։ Նա պահանջեց, որ ամենքը բերեն իրանց կանանց ոսկէ զարդարանքները, հալեց, հորթ ձուլեց նրանցից եւ ասաց, թէ սրան նայելով փառաբանեցէք բարձրեալ Աստուծուն։ Բայց ձուլուած պատկերին

նայելով ժողովուրդը յիշեց Եգիպտական աստուածները եւ ճշմարիտ Աստուած համարելով նրան, սկսեց պարելով ու երգելով իր ուրախութիւնը յայտնել։ Աստուած ասաց Մովսէսին. «Նտայլիր, ժողովուրդն անօրինեցաւ, շինեց իրան համար ձուլած հորթ, երկրպագեց եւ աստուած անուանեց նրան։ Ես կըջնջեմ նրան եւ քեզանից նոր ու բազմաթիւ ժողովուրդ կըյառաջացնեմ»։ Բայց Մովսէսն ընկաւ Աստուծոյ առաջ եւ խնդրեց, որ խնայէ նրանց։ Աստուած լսեց Մովսէսի աղաչանքը։

Մովսէսը ցած եկաւ սարից. բայց երբոր տեսաւ հորթը եւ ժողովուրդը, որ նրա շուրջ պար բռնած ուրախութիւն էին անում, սաստիկ զայրացաւ։ Բարկութիւնից նա վայր ձգեց ձեռքի տախտակները եւ խորտակեց նրանց։ Յետոյ այրեց հորթը, խորտակեց, փոշի շինեց եւ ջրի հետ խառնելով, հրամայեց Իսրայէլացոց խմել, որպէսզի լաւ հասկանան իրանց ձուլած հորթի ոչնչութիւնը։ Ապա նա կանգնեց բանակի դըռան առաջ եւ կանչեց. «Ով որ Տիրոջն է, ինձ մօտ գայ»։ Ղեւիի բոլոր որդիքը նրա մօտ հաւաքուեցան։ Մովսէսը հրամայեց նրանց անցնել բանակի մի ծայրից մինչեւ միւս ծայրը եւ կոտորել ամենին, ով 'որ կըհանդիպի նրանց։ Այսպիսով այդ օրը կոտորուեցան քսան եւ երեք հազար մարդ։ Միւս օրը Մովսէսը նորից ջերմ աղօթեց Աստուծուն, որ ներէ իր ժողովրդի յանցանքը։ Աստուած լսեց նրա աղօթքը, հրամայեց պատրաստել երկու քարեղէն տախտակներ եւ նորից ելնել սարը։ Մովսէսն երկրորդ անգամ մնաց սարի վրայ 40 օր եւ այդ ժամանակամիջոցում ոչ հաց էր ուտում եւ ոչ ջուր էր խմում։ Աստուած նորից տուեց նրան իր գրաւոր պատգամները։ Այդ ժամանակ Տէրը ցոյց տուեց նրան իր փառքը, որի հետքերը ճաճանչաձեւ մնացին նրա ճակատին։ Երբոր Մովսէսը սարից իջաւ, նրա երեսն այնպէս էր փայլում, որ

նա պէտք է քողով ծածկէր, որպէսզի ժողովուրդը կարողանար նայել նրան։

38. ԽՈՐԱՆ, ՍՐԲԱԶԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ, ՏՕՆԵՐ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ.

Իսրայէլացիք մի ամբողջ տարի մնացին Սինայ սարի մօտ։ Այդ ժամանակ Մովսէսը Աստուծոյ հրամանով շինեց Վկայութեան խորանը։ Դա թանկագին կերպասներով զարդարուած մի շարժական տաճար էր։ Խորանը վարագոյրով բաժանվում էր երկու մասի։ Առաջին մասը Սրբութիւն էր ասվում։ Այդտեղ աջ կողմում դրըվում էր մի սեղան՝ ոսկով պատած։ Այդ սեղանի վրայ դրվում էր տասներկու հաց, որոնք առաջաւորութեան հաց էին կոչվում։ Այս հացերը Իսրայէլացոց տասներկու ցեղերի աստուածպաշտական նուէրներն էին և ամեն շաբաթ օր նորոգվում էին։ Ձախ կողմում կար մի ոսկեղէն աշտանակ՝ եօթը կանթեղներով։ Վարագոյրի հանդէպը կար մի այլ սեղան, որ կոչվում էր սեղան խնկոց և որի վրայ առաւօտ երեկոյ ծխում էին անուշահոտ խունկ։ Խորանի երկրորդ մասը՝ վարագոյրի միւս կողմը, կոչվում էր Սրբութիւն Սրբոց։ Այդտեղ անփուտ փայտից շինած մի քառանկիւնի արկղ կար, ոսկով պատած, իսկ կափարիչը յատակ ոսկուց էր։ Սրա մէջ պահվում էր տասն պատուիրանների տախտակները և ոսկէ սափորով մանանան։ Այս արկղը կոչվում էր Տապանակ վկայութեան կամ Տապանակ ուխտի։ Խորանի մէջ ոչ մի պատկեր չ'կար, միայն վարագոյրի վրայ գործուած էին երկու հրեշտակներ, իսկ երկու ոսկեձոյլ հրեշտակներ էլ կային Տապանակի երկու կողմից։ Խորանի շուրջը շինած էր որմը, իսկ սրահումը ողջակէզի սեղանը, որի վրայ զոհ էին մատուցանում և այրվում էր անշիջանելի կրակը։ Այդտեղ կար մի պղնձէ աւազան, որ լուացարան էր կոչվում։ Դրա մէջ քահանաները լուանում էին իրանց ձեռներն ու ոտները, երբ կամենում էին Սրբութեան խորանը մտնել։

Աստուծոյ հրամանով Մովսէսը Վկայութեան խորանի համար պաշտօնեաներ նշանակեց։ Ահարոնը քահանայապետ ընտրուեցաւ, իսկ նրա որդիքը քահանաներ։ Մովսէսը յայտնեց միենոյն

ժամանակ Աստուծոյ կամքը, որ բոլոր քահանայապետները և քահանաները Նրա ցեղից ընտրուին. Ղևիի ցեղը որոշուեցաւ խորանի սպասաւորութեան համար, իբրև ստորին պաշտօնեաներ. դրանք կոչուեցան Ղևտացիք։ Քահանայապետը ժողովրդի կողմից դէպի Աստուած միջնորդ էր և բարեխօս։ Նա իր կրծքին կրում էր լանջապանակ (փոքրիկ քառանկիւնի թաշկինակ) տասներկու գոյնզգոյն քարերով, որոնց վրայ փորագրած էին Իսրայէլացոց տասներկու ցեղերի անունները։ Քահանայապետը միայն, որպէս միջնորդ, իրաւունք ունէր մտնել խորանի Սրբութիւն Սրբոց կոչուած մասը, այն էլ տարէնը մի անգամ։ Նա էր օրէնքի գլխաւոր պաշտպանը և Նրա կատարման վրայ հսկողը։ Քահանաների պարտականութիւնն էր անշէջ պահել կրակը, զոհ մատուցանել, ժողովրդի աղօթքի թարգման լինել դէպի Աստուած և քարոզել Նրան Աստուծոյ օրէնքները։ Նրանք իրաւունք ունէին մտնել սրբարան կոչուած մասը, ուր վառում էին կանթեղները, խունկ էին ծխում և փոխում էին առաջաւորութեան հացը։ Ղևտացիք օգնում էին քահանաներին զոհաբերութիւնների ժամանակ, բարեկարգում էին խորանը, կրում էին Նրան ճանապարհորդելիս և փողահարների պաշտօն էին կատարում աստուածպաշտութեան ժամանակ։

Աստուածպաշտութեան գլխաւոր մասը զոհաբերութիւնն էր կազմում։ Զոհը երկու տեսակ էր՝ արիւնոտ և անարիւն։ Մեղքերի քաւութեան համար մատուցանվում էր ողջակէզը։ Մեղաւորը բերում էր մի հորթ, մի ոչխար կամ մի նոխազ և իր ձեռները դնում էր նրա վրայ։ Քահանան մորթում էր կենդանուն, արիւնը թափում էր զոհարանի շուրջը, իսկ մարմինն այրում էր սեղանի վրայ. կաշին քահանային էր մնում։ Աստուծուց գոհանալու կամ Նրա ողորմութիւնը հայցելու համար մատուցանվում էր հաշտութեան կամ քաւութեան զոհ. կենդանու արիւնը թափվում էր զոհարանի շուրջը, ճարպը և երիկամունքն այրում էին, կուրծքը և աջ թիակը տրվում էր քահանային, իսկ մնացածն ուտում էին խորանի մօտ զոհ մատուցանողները։

Անարիւն զոհը լինում էր ալիւր, ձէթ (մեռոն), խունկ և գինի։ Այս ընծայաբերութիւնների մի մասը այրվում էին, իսկ միւս մասը տալիս էին քահանաներին։ Ամենահանդիսաւոր զոհաբերութիւնը լինում էր քաւութեան օրը (Սեպտեմբերի կէսին)։ Այդ օրը Տապանի առաջ բերում էին երկու նոխազ։ Քահանայապետը վիճակ

ձգելով՝ ընտրում էր մինը և մորթում էր ժողովրդի մեղքերի քաւութեան համար։ Նոխազի արիւնն առած՝ նա մտնում էր Սրբութիւն Սրբոց և Նրան սրսկում էր Տապանակի կափարիչի վրայ, աղօթելով՝ որ Աստուած քաւէ իր ժողովրդի յանցանքները։ Այս պատճառով կափարիչը կոչվում էր քաւարան։ Յետոյ նոխազն այրում էին բանակից դուրս։ Միւս նոխազի վրայ քահանայապետը խոստովանում էր իր ժողովրդի մեղքերը և հրամայում էր դուրս քշել Նրան բանակից հեռու՝ բաց անապատները։ Բացի շաբաթ օրուայ, Պասէքի, Պէնտէկոստէի և քաւութեան տօներից Մովսէսը սահմանեց նաև հետևեալ գլխաւոր տօները՝—Եօթներորդ կամ Շաբաթական տարին և Յոբելեանի տարին։ Շաբաթական տարին տօնվում էր եօթը տարին մի անգամ։ Այդ տարին Իսրայէլացիք չ՚պէտք է մշակէին, չպէտք է ժողովէին այն ամենը՝ ինչ-որ նրա վրայ կ՚աճէր, այլ այդ ամենը պիտի թողէին չքաւորներին. իրանց ցեղակիցների պարտքերը պիտի բաշխէին և պիտի արձակէին պարտքի պատճառով՝ ստրուկ դարձած պարտապաններին։ Յոբելեանի տարին կատարվում էր իւրաքանչիւր յիսուն տարին մի անգամ։ Այդ ժամանակ բացի Շաբաթական տարուայ բոլոր պատուէրները կատարելուց, հրամայուած էր յետ դարձնել իրանց նախկին տէրերին բոլոր գնուած և գրաւ դրուած տներն ու կալուածքները։

39. ՀՐԷԻՑ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ՔԱՆԱՆԱՑՈՑ ԵՐԿԻՐԸ.

Սինայ սարի մօտից Հրէաներն ուղևորուեցան դէպի Քանանացոց երկիրը։ Ուղևորուելուց առաջ Մովսէսը ժողովուրդը տասներկու կարգ բաժանեց, իրանց ցեղերին նայելով՝ որպէսզի ուղևորութիւնն աւելի կարգին ու անշփոթ կատարուի։ Երբ ամեն ինչ պատրաստ էր, ամպեղէն սիւնը, որ միշտ ծածկած ունէր Վկայութեան խորանը, բարձրացաւ և ժողովուրդը հետևեց նրան։ Իսրայէլացիք ուրախ էին, որովհետև ուղղակի դիմում էին դէպի Աւետեաց երկիրը։

Բայց ճանապարհին փոքր ինչ նեղութեան հանդիպելով՝ սկսեցին տրտնջալ Աստուծոյ դէմ, որի համար Տէրը բանակի մի մասը հրով ոչնչացրեց։ Մի քանի օրից յետոյ օտարազգի ուղեկիցներն սկսան անբաւականութիւն յայտնել. նրանց հետ ձայնակից եղան եւ Հրէաները. «Ով մեզ կըկերակրէ մսով, լաց լինելով ասում էին նրանք. մենք մտաբերում ենք Եգիպտոսի ձուկը, վարունգը, սեխը, սոխը եւ սխտորը. իսկ այժմ սրտներս նուաղում է. ոչինչ չ՚կայ՝ բայց միայն մանանայ»։ Դառն էր Մովսէսին լսել այս տրտունջներն ու անտեղի պահանջները։ Արտասունքն աչքերին նա մահ էր խնդրում իրան համար։ Աստուած հրամայեց յայտնել ժողովրդին, որ նա միս կ՚ունենայ, բայց ոչ թէ մի օրուայ համար, այլ մի ամսուայ համար, մինչեւ որ զզուին նրանից։ Աստուծոյ հրամանով հնչեց սաստիկ հողմը եւ մեծ քանակութեամբ լորամարգեր ածեց բանակը։ Ժողովուրդը հաւաքեց եւ անյագաբար կերաւ։ Բայց իր ագահութիւնը պատժուեցաւ, սարսափելի ախտով կոտորուեցան նրանցից շատերը։ Այդ տեղը Հրէաներն անուանեցին գերեզմանք ցանկութեան։

Մեռեալներին թաղելուց յետոյ՝ նրանք առաջ ընթացան։ Այստեղ Մովսէսին վշտացրին նոյն իսկ իր ազգականները։ Մարիամը եւ Ահարոնը յանդիմանում էին նրան, որ նա ամուսնացել է Եթովպացի կնոջ վրայ, եւ նրա արժանաւորութիւնները, որպէս Աստուծոյ առաքեալ, ստորացնում էին ասելով՝ «Միթէ միայն Մովսէսի հետ խօսեցաւ Աստուած»։ Մովսէսն ամենահեզ մարդն էր եւ համբերութեամբ տանում էր բոլոր յանդիմանութիւնները։ Բայց Աստուած պատժեց Մարիամին բորոտութեամբ, որից առողջացաւ նա եօթն օրից յետոյ, Մովսէսի աղօթքով։

Հրէաները հասան Քանանացոց երկրի սահմանները եւ Փառանի անապատի մէջ՝ Կադէսում, բանակ տուին։ Մովսէսը Իսրայէլի տասներկու ցեղերից մի մի մարդ ընտրեց եւ ու-

ղարկեց Քանանացոց երկիրը լրտեսելու։ Ընտրուածների մէջն էր Քաղէբը եւ Յեսու Նաւեան։ Լրտեսներն անցան բոլոր Քանանացոց երկիրը՝ Կադէսից սկսած մինչեւ նրա հիւսիսային սահմանները։ Քառասուն օրից յետոյ նրանք վերադարձան։ Բոլորն էլ գովում էին երկրի բերքերի առատութիւնը. բայց նրանցից միքանիսը աւելացնում էին, որ երկրի բնակիչներն ուժեղ են, քաղաքները մեծամեծ եւ ամուր, որ մինչեւ անգամ այնտեղ կան հսկաների ցեղեր։ Այս լուրը ահ ու դողի մէջ ձգեց Իսրայէլացոց։ Քաղէբը եւ Յեսու Նաւեան աշխատում էին հանգստացնել եւ խրախուսել ժողովուրդը, ասում էին, որ նրանք շատ հեշտութեամբ կըտիրեն երկրին. բայց մնացած տասն լրտեսները ապացուցանում էին, որ անհնարին է մտնել այդ երկիրը։ «Մենք այդ ժողովրդեան դէմ գնալ չենք կարող, ասում էին նրանք, այնտեղ մենք այնպիսի հսկաներ տեսանք, որոնց առաջ մենք համարեա մորեխներ ենք»։ Սարսափը տիրեց վատասիրտ ժողովրդին։ «Ո՞ւր ենք գնում մենք, ողբալով ասում էին նրանք, մեր կնիկները եւ մանուկները թշնամիների ձեռքը կըմատնուին։ Լաւ չէր լինիլ, եթէ Եգիպտոս վերադառնայինք»։ Եւ մոռանալով բոլորը, ինչ-որ Աստուած Մովսէսի միջնորդութեամբ արել էր նրանց, նրանք խօսք կապեցին, որ նոր առաջնորդ ընտրեն իրանց համար եւ վերադառնան Եգիպտոս, իսկ Մովսէսին, Ահարոնին, Յեսու Նաւեային եւ Քաղէբին քարկոծեն։

Այդ ժամանակ Աստուծոյ փառքն ամպի ձեւով իջաւ խորանի վրայ եւ Մովսէսն այնտեղից լսեց Տիրոջ խօսքը, որ ասում էր. «Մինչեւ երբ պիտի բարկացնէ Ինձ այդ ապերախտ ժողովուրդը եւ չ՚պիտի հաւատայ Ինձ այն ամեն նշաններից յետոյ, որ ցոյց տուի իրան։ Ասա նրանց Իմ կողմից, որ դուք չէք մտնիլ այն երկիրը, որ խոստացել էի տալ ձեզ, բացի Քաղէբից եւ Յեսու Նաւեայից, Ձեր որդոցը, որոնց

մասին ասում էիք, թէ թշնամիների ձեռքը կըմատնուին, Ես կըմտցնեմ այն երկիրը, իսկ ձեր դիակները կ՚ընկնին ու կըփտին անապատի մէջ: Քառասուն օր լրտեսեցիք դուք երկիրը, քառասուն տարի կըկրէք ձեր յանցանքի պատիժը եւ այն ժամանակ կըզգաք, թէ ինչ կընշանակէ ընդդիմանալ Աստուծոյ հրամաններին»: Այն տասը լրտեսները, որոնք իրանց խօսքերով խռովութիւն էին գցում ժողովրդի մէջ, իսկոյն եւեթ մահով պատժուեցան:

Իսրայէլացիք, երբ լսեցին իրանց համար սահմանած պատիժները, վճռեցին հակառակ Աստուծոյ կամքի մտնել Քանանացոց երկիրը: Իզուր անցան Մովսէսի յորդորները, որ այդ բանը չ՚անեն: Նրանք չ՚լսեցին նրան եւ բարձրացան սահմանագլխի սարերը, այնտեղից յարձակումն անելու մտքով: Բայց Քանանացիք դուրս եկան նրանց դէմ եւ հալածեցին իրանց սահմաններից: Եւ յետ դարձան նրանք նոր ի նորոյ թափառելու Արաբիայի անապատում:

40. ԿՈՐԽԻ, ԴԱԹԱՆԻ ԵՒ ԱԲԻՐՈՆԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆԸ. ԱՀԱՐՈՆԻ ԳԱՒԱԶԱՆԸ.

Քառասնամեայ աստանդական կեանքին դատապարտուելուց յետոյ՝ Իսրայէլացոց մէջ նոր խռովութիւն ծագեցաւ: Ղեւիի ցեղի գլխաւորներից մինը՝ Կորխ անունով, նախանձելով, որ քահանայապետութեան իրաւունքը միմիայն Ահարոնին եւ նրա ցեղին է յատկացած, ապստամբեցաւ Մովսէսի եւ Ահարոնի դէմ: Նրա հետ միացան 250 հոգի նշանաւոր անձերից: Ապստամբներն ասացին Մովսէսին եւ Ահարոնին. «Բոլոր ժողովուրդը սուրբ է եւ ընտրեալ եւ Աստուած նրանց մէջ է: Ինչի՞ էք դուք Աստուծոյ ժողովրդից բարձր դասում ձեզ»: Պատասխան տուեց Մովսէսը եւ ասաց.

«Աստուած ճանաչում է եւ ընտրում է իր պաշտօնեաներին: Նա գիտէ, թէ ո՛վ է սուրբ եւ ո՛վ անսուրբ: Բայց եթէ կամենում էք նորից իմանալ Աստուծոյ կամքը, վեր առէք ամենքդ ձեր բուրվառները, կրակ ու խունկ ածեցէք նրանց մէջ Աստուծոյ (այսինքն խորանի) առաջ. ում որ կ՚ընտրէ Աստուած, նա կըլինի սուրբ»: Խռովարարներից երկուսը՝ Դաթան եւ Աբիրոն, Ռուբէնի ցեղի գլխաւորները, մերժեցին այդ հրաւէրը: Նրանք ապսպրեցին Մովսէսին. «Մի՞թէ բաւական չէ որ դուրս բերիր մեզ այնպիսի առատ երկրից, դեռ կամենում էլ ես իշխել մեզ վրայ. բերի՞ր մեզ արդեօք այն երկիրը, ուր բղխում է մեղր եւ կաթ եւ տէր դարձրի՞ր մեզ դաշտերի եւ այգիների: Դու կամենում ես բրել մեր աչքերը. չենք գալ»: Այսպիսով Դաթանը եւ Աբիրոնը մեղադրում էին Մովսէսին, որպէս իրաւունքների բռնաբարող: «Տէր Աստուած, բացականչեց նա, ես նրանցից ո՛չ մէկից բան չեմ խլել եւ ո՛չ ոքի չարիք չեմ արել»:

Միւս օրը Կորխը եւ 250 գլխաւորներն եկան իրանց բուրվառներով եւ կանգնեցան վկայութեան խորանի առաջը: Մովսէսը հրամայեց ժողովրդին հեռանալ Կորխի, Նաթանի եւ Աբիրոնի վրաններից, եւ ասաց. «Այժմ դուք կ՚իմանաք, որ Աստուած է ինձ ուղարկել եւ ես ինքնակամ չեմ գործում: Եթէ այս մարդիկը մեռնեն սովորական մահով, կամ եթէ նրանք այնպիսի պատիժ ստանան, ինչպիսին ստանում են ամեն մարդիկ, ապա իմացէք, որ Աստուած չէ ուղարկել ինձ: Իսկ եթէ կըպատառուի երկիրը եւ կուլ կըտայ ապստամբների վրանները, իրանց մէջ եղած բոլոր բաներով, եւ նրանք կենդանի անդունդը կըգլորուին, ապա գիտացէք, որ նրանք Աստուծուն բարկացրին»: Հէնց որ Մովսէսն արտասանեց այս խօսքերը, երկիրը բացուեցաւ եւ կլանեց Դաթանին եւ Աբիրոնին իրանց բոլոր հարստութիւններով: Նոյն վիճակին հանդիպեցան եւ Կորխի վրանները: Միեւնոյն ժամանակ հուր

ելաւ խորանից եւ այրեց Կորխին ու նրա հետ եղած աւագներին: Ժողովուրդը սարսափեցաւ. նա սկսեց մեղադրել Մովսէսին եւ Ահարոնին, որպէս թէ նրանք եղան իրանց գլխաւորների կորստեան պատճառը: Խռովութիւնը սաստկացաւ: Մովսէսը եւ Ահարոնը փախան դէպի խորանը եւ յանկարծ ահաւոր ձայն լսեցին. «Զատուեցէք այդ ամբոխից, Ես նրան մի անգամից կըկործանեմ»: Այդ միջոցին զարհուրելի ողբ բարձրացաւ բանակից: Մովսէսն ասաց Ահարոնին. «Վեր առ բուրվառդ, շտապի'ր բանակը եւ միջնորդ եղի'ր ժողովրդեան համար. Աստուծոյ բարկութիւնն իջաւ եւ ահա կոտորւում են մարդիկ»: Ահարոնը բուրվառը ձեռին, վազեց բանակի միջով: Աստուած լսեց քահանայապետի աղօթքը: Կոտորածը դադարեցաւ: Այդ օրը կործանուել էին 14,700 մարդ, բացի Կորխի հետ մեռածներից:

Որպէսզի ապագայում քահանայապետական իրաւունքի համար վէճ չ'պատահի, Աստուած ասաց Մովսէսին. «Վե'ր առ Իսրայէլի տասն երկու ցեղապետներից մէկ մէկ գաւազան եւ ամէն մինի անունը գրի'ր իր գաւազանի վրայ, իսկ Ահարոնի անունը գրի'ր Ղեւիի ցեղի գաւազանի վրայ եւ այդ բոլոր գաւազանները դի'ր խորանի մէջ, Տապանակի առաջ: Որին որ Ես քահանայապետ կ'ընտրեմ, նրա գաւազանը կըծլէ եւ կըծաղկէ ու պտուղ կ'արձակէ»: Մովսէսը կատարեց, ինչպէս հրամայել էր Աստուած: Միւս օրը նա խորանից հանեց գաւազանները: Ահարոնի գաւազանը ծլել էր, ծաղկել եւ պտուղ տուել: Աստուծոյ հրամանով այս գաւազանը պահուեցաւ Տապանակի մէջ:

---

41. ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ԱՀԱՐՈՆԻ ՎՐԱՅ. ՊՂՆՁԷ ՕՁԸ. ԱՄՈՐՀԱՑԵՑՈՑ ԵՒ ԲԱՍԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՒԱՃՈՒՄՆ.

Երեսուն եւ ինը տարի թափառում էին Իսրայէլացիք Կարմիր ծովի մօտ եղած անապատում: Երբոր քառասներորդ տարին սկսուեցաւ, նրանք ուղեւորուեցան դէպի Քանանացոց երկիրը եւ իջեւանեցին Կադէսում: Այստեղ մեռաւ Մարիամը՝ Մովսէսի եւ Ահարոնի քոյրը: Ջրի պակասութեան պատճառով ժողովրդի մէջ տրտունջ սկսուեցաւ: Մովսէսն ու Ահարոնը աղօթքով դիմեցին դէպի Աստուած: Տէրն ասաց Մովսէսին. «Վե'ր առ գաւազանդ եւ Ահարոնի հետ հաւաքեցէք ժողովուրդը եւ նրանց առաջ ասացէ՛ք այդ ժայռին, որ ջուր տայ ձեզ, եւ նա կըտայ»: Ժողովուրդը հաւաքուեցաւ: Մովսէսը մօտեցաւ ժայռին եւ ասաց. «Լսեցէք, անհնազանդներ, միթէ այս ժայռից պէտք է ջուր հանեմ ձեզ համար»: Այս որ ասաց, երկիցս խփեց ժայռին, ժայռից իսկոյն առատ ջուր բղխեց: Բայց որովհետեւ Մովսէսն ու Ահարոնը ճշտութեամբ չ'կատարեցին Աստուծոյ հրամանը եւ երկմտեցան, Աստուած ասաց նրանց. «Որովհետեւ դուք ժողովրդի հետ երկմտութեամբ խօսեցաք եւ Իմ հզօր կարողութիւնս չ'ցոյց տուիք նրանց, ուստի չէք արժանանալ անձամբ մտցնել նրանց այն երկիրը, որ Ես խոստացայ»:

Կադէսից Մովսէսը դեսպաններ ուղարկեց Եդովմացոց թագաւորի մօտ եւ խնդրեց, որ իրանց թոյլ տայ իր երկրի միջով անցնել դէպի Քանանացոց երկիրը: Նա խոստացաւ, որ ոչինչ վնաս չի տալ նրա հպատակներին, արտերին ու այգիներին, եւ երկրի ջրհորներից էլ ջուր չի խմել առանց վարձի: Բայց Եդովմի թագաւորը մերժեց Մովսէսի խնդիրը: Այն ժամանակ Իսրայէլացիք դիմեցին դէպի Հովր:

Հօր լեռան մօտ Մովսէսը Աստուծոյ հրամանով վեր առաւ Ահարոնին եւ նրա որդուն եւ բարձրացաւ սարը. այնտեղ ժողովրդի հանդէպ հօր պատմուճանը հանեց եւ որդուն հագցրեց։ Ահարոնը նոյն տեղը վախճանուեցաւ 123 տարեկան հասակում։ Հօր սարից նրանք դիմեցին դէպի Կարմիր ծովը, որպէսզի պտոյտ կազմեն Եդովմի երկրի մօտով։ Այդ պտոյտի ժամանակ ժողովուրդը դարձեալ սկսեց

գանգատուել, որ իրանց Եգիպտոսից հանել են այս անապատներում սպանելու նպատակով. «Այստեղ ոչ հաց կայ, ոչ ջուր, իսկ այս անպէտք կերակուրը զզուեցրել է մեզ արդէն»։ Դրանց պատժելու համար Աստուած ուղարկեց թունաւոր օձեր, որոնց խածուածքից շատերը մեռնում էին։ Իսրայէլացիք զղջացին եւ խնդրեցին Մովսէսին, որ իրանց համար աղօթէ։ Մովսէսը կատարեց ժողովրդի խնդիրը։ Աս-

տուած ասաց Մովսէսին. «Շինիր մէկ պղնձէ օձ եւ բարձրացրու նրան նշանակի վրայ. ում որ օձը կխածնէ, նա կնայէ այդ պղնձէ օձին եւ կ'ապրի»։ Մովսէսը կատարեց Աստուծոյ հրամանը։ Ժողովուրդն ազատուեցաւ սոսկալի պատժից *)։

Այդ տեղից չուելով՝ Եբրայեցիք մօտեցան Աւետեաց երկրի արեւելեան սահմաններին։ Բայց խոստացեալ երկիրը մտնելու համար նրանք պիտի անցնէին Ամորհայեցոց (Առնով ձորից մինչեւ Յաբոկ) եւ Բասանու երկիրներով (Յաբոկ ձորից մինչեւ Լերմոն սարը)։ Բայց այս երկրի թագաւորները թոյլ չ'տուին նրանց ազատ անցնել իրանց երկիրներով եւ մեծ զօրք ժողովեցին ու դուրս եկան Իսրայէլի դէմ։ Եբրայեցիք տիրեցին նրանց երկիրներին եւ բանակ դրին Յորդանանու եզերքում, Երիքովի հանդէպ։

Այդ նոր նուաճեալ երկիրներն անչափ յարմար էին անասնապահութեան համար։ Մովսէսը բաժին տուեց դրանից Ռուբէնի եւ Գադի ցեղերին եւ Մանասէի ցեղի կիսին, միայն այն պայմանով՝ որ նրանք օգնեն միւս ցեղերին տիրել Քանանացոց երկրին եւ չ'վերադառնան իրանց բաժին ընկած տեղերը, մինչեւ որ Իսրայէլի զաւակներից իւրաքանչիւրն իր մասը չի ստանայ նուաճեալ երկրի մէջ։

Իսրայէլացիք վնաս չ'տուին Մովաբացոց, որովհետեւ դրանք Ղովտի ցեղից էին (Առնոյն ձորից դէպի հարաւ), բայց նրանց թագաւորը՝ Բաղակը, վախեցաւ եւ կամենում

*) Պղնձէ օձը նշանակի վրայ բարձրացած՝ օրինակ էր Քրիստոսի խաչելութեան։ Եւ ինչպէս որ օձից կծածները նայելով այդ նշանակի վրայ դրած օձին, ազատվում էին թունաւոր սողունի խայթուածքից, նոյնպէս և մեղաւոր մարդիկ նայելով խաչի վրայ բարձրացրած Քրիստոսին, ազատվում են մեղքից և սատանայի օձի գերութիւնից։

էր մի կերպով ազատուիլ նրանցից։ Այդ ժամանակ Եփրատի միւս կողմը ապրում էր Բաղաամ անունով մի մարգարէ։ Թագաւորը կանչեց նրան եւ մեծամեծ ընծաներ խոստացաւ, միայն թէ անիծէ Իսրայէլացոց։ Մարգարէն հարցրեց Աստուծոյ կամքը։ Աստուած ասաց. «Այս ժողովուրդը օրհնուած է. բայց դու գնա Բաղակի մօտ եւ արա ինչ-որ կասեմ քեզ»։ Բաղակն ուրախ սրտով մարգարէի առաջը դուրս եկաւ, կարծելով թէ նա պէտք է անիծէ Իսրայէլին։ Մարգարէն էլ շատ էր ցանկանում կատարել Թագաւորի կամքը, որպէսզի կարողանայ ստանալ խոստացած ընծաները։ Երբոր նա հանդիպեցաւ Թագաւորին, ասաց. «Ահա ես եկայ քեզ մօտ, բայց կարող եմ ինձանից որեւիցէ խօսք ասել. ինչ-որ Աստուած կըներշնչէ, այն կ'ասեմ»։ Բարձր բլուրների վրայ զոհի սեղաններ դրեցին։ Բաղաամը հարցրեց Աստուծոյ կամքը եւ երեք անգամ օրհնեց Իսրայէլի ազգը։ Նա նախագուշակեց, որ այդ ազգից կըծնուի Մեսիան։

«Ցուցից նմա եւ ոչ այժմ. Երանից եւ ո՛չ ի մօտոյ։ Ծագեսցի Աստղն ի Յակովբայ եւ յարիցէ Այր յԻսրայէլէ եւ հարցէ ցիշխանս Մովաբայ»։

Բաղաամը գնաց տուն, բայց Մովաբացոց էլ խորհուրդ տուեց գրաւել նրանց դէպի կռապաշտութիւն։ Մովաբացիք մարգարէի խորհրդի համաձայն վարուեցան։ Նրանք միացան Մադիամացոց հետ եւ Իսրայէլացոց այլ եւ այլ հնարներով մոլորութեան մէջ գցեցին։ Աստուած բարկացաւ Իսրայէլացոց թուլութեան վրայ եւ մահով պատժեց 24,000 հոգի։ Այդ բանից յետոյ Եղիազար քահանայապետի որդի Փենեհէսը տասներկու հազար մարդով դիմեց Մադիամացոց վրայ եւ մեծ կոտորած տուեց նրանց։ Բաղաամ մարգարէն եւս մեռաւ այդ կոտորածքի ժամանակ։

Այդ միջոցում Աստուծոյ հրամանով Մովսէսը թուեց ժողովուրդը եւ ստուգեց, որ բոլոր չափահաս հրէաներից,

որոնք դուրս էին եկել Եգիպտոսից, կենդանի էին մնացել միայն Քաղէբը եւ Յեսու Նաւեան։ Եբրայեցիք այժմ մըտնում էին Աւետեաց երկիրը. նրանց չարչարանքները եւ անբախտութիւնները վերջանում էին։ Այս առիթով Մովսէսը սահմանեց տաղաւարահարաց տօնը, ի յիշատակ քառասնամեայ ճանապարհորդութեան անապատի մէջ *)։

42. ՄՈՎՍԷՍԻ ՎԵՐՋԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՀԸ.

Աստուած Մովսէսի վախճանը Աւետեաց երկրից դուրս էր սահմանել։ Քանանացոց երկրի սահմաններին հասնելով, նա զգաց, որ մահը մօտեցել է իրան եւ սկսեց նախապատրաստուել մեռնելու։ Աստուծոյ կամքով Յեսու Նաւեային իրան յաջորդ կարգեց եւ յայտնեց Իսրայէլացոց Տիրոջ հրամանը, որ երբ ներս մտնեն Քանանացոց երկիրը, պէտք է հալածեն բոլոր բնակիչներին, կուռքերն ու կռատունները կործանեն, վիճակով երկիրը բաժանեն իրանց ցեղերի վրայ եւ բնակուին նրա մէջ. բնիկների հետ ամուսնական կապեր չ'հաստատեն եւ հաշտութեան պայմաններ չ'կնքեն։ Յետոյ նա յիշեցրեց նրանց այն ամեն օրէնքները, որ Աստուած սահ-

---

*) Տաղաւարահարաց տօնն սկսվում էր աշնանային առաջին լուսնական ամսի կիսին և շարունակվում էր ութ օր։ Եբրայեցիք այդ ժամանակ ծառի կանաչ ոստերից վրաններ էին շինում իրանց բակերում, կտուրների վրայ, փողոցներում և հրապարակների մէջ և նրանց տակ ընտանեկան զուարճութիւններ էին անում։ Տօնի ութերորդ օրը կարդում էին աղօթքներ և մաղթում էին, որ Աստուած առատ անձրև ուղարկէ, որովհետև այդ ժամանակներն ըսկըսվում էին այն երկիրներում երաշտ միջոցները։ Տօնի եօթներորդ օրուայ երեկոյին խորանի մէջ ուռ էին դնում և զոհաբերութեան սեղանի վրայ ջուր ցանում։

մանել էր, եւ այն ամեն բարիքներն ու օգնութիւնները, որ ցոյց էր տուել նրանց։ Այս ամենից յետոյ Մովսէսը մարգարէաբար նախազգուշակեց, որ Աստուած կ՚առատացնէ նրանց երկիրը, մեծամեծ բարիքների կ՚արժանացնէ եւ տէր կըդարձնէ շատ ազգերի, եթէ միայն նրանք կըկատարեն Նրա հրամանները եւ ճիշդ կըհետեւին տուած օրէնքներին։ Բայց եթէ այդ օրէնքները կըխաղտեն եւ կըշեղուին աստուածպաշտական ճշմարիտ ճանապարհից, այն ժամանակ սարսափելի թշուառութիւններ կըկրեն թէ ներքին եւ թէ արտաքին բռնաւորների ձեռքից. ցաւերի, հիւանդութիւնների, կոտորածքի ու գերութեան կըմատնուին։ Իր բոլոր պատուէրները եւ օրէնքի համառօտ կրկնութիւնը նա գրեց մի առանձին գրքի մէջ եւ տուեց քահանայապետին՝ խորանի մէջ պահելու։

Այս ամենից յետոյ Մովսէսը բարձրացաւ Նաւաբ սարի գլուխը. այնտեղից նայեց Աւետեաց երկրին եւ վախճանեցաւ։ Աստուած Նրա գերեզմանի տեղը ծածկեց Իսրայէլացիներից, որպէսզի ռամիկ ամբոխը նրան չ՚աստուածացնէ։

Մովսէսը հինգ գիրք գրեց. ա. Գիրք Ծննդոց, որի մէջ նկարագրուած է աշխարհի ստեղծագործութիւնը և մարդկային ազգի պատմութիւնը Ադամից մինչև Յովսէփի մահը. բ. Ելից, որի մէջ խօսվում է Եբրայեցոց Եգիպտոսից դուրս գալու և Սինայի վրայ Աստուծուց աւանդած օրէնքների մասին. գ. Ղեւտացւոց, որի մէջ Ղևտացոց վերաբերեալ բոլոր օրէնքներն է ամփոփած. դ. Թուոց, որը բովանդակում է բոլոր Եբրայեցոց Թուահամարը. ե. Երկրորդ օրինաց, որի մէջ կրկնուած է բոլոր օրէնքները, որ տուած էր Եբրայեցոց։ Այս բոլոր գրքերը միասին կոչվում են Հնգամատեան կամ Մովսիսական օրէնքներ։ Եւ որովհետև դրանք գրուած են Աստուծոյ ներշնչմամբ և մարդկային ճարտարութեան ու արուեստի արտադրութիւններ չեն, այդ պատճառով կոչվում են Աստուածաշունչ մատեաններ։

---

43. ԻՍՐԱՅԷԼԱՑՈՑ ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿԻՐ ՄՏՆԵԼԸ.

Մովսէսի մահից յետոյ Յեսու Նաւեան Աստուծուց հրաման ստացաւ, որ անցկացնէ ժողովուրդը Յորդանանու միւս կողմը՝ Աւետեաց երկիրը։ Սկզբում նա ուղարկեց երկու լրտես՝ երկիրը եւ Երիքով քաղաքը լրտեսելու։ Լրտեսները մտան Երիքով եւ գիշերեցին մի կնոջ մօտ, որի անունը Ռահաբ էր։ Երիքովի թագաւորն իմացաւ նրանց գալուստը եւ պահանջեց, որ Ռահաբը իր ձեռքը մատնէ նրանց։ Բայց կինը թագցրեց եւ ապսպրեց թագաւորին. «Ճշմարիտ է, որ ինձ մօտ եկել էին մի քանի անծանօթ մարդիկ, բայց չ՚գիտեմ որտեղից էին եւ գիշերով ուր գնացին»։ Թագաւորը յետամուտներ ուղարկեց նրանց յետեւից։ Այդ միջոցին Ռահաբը թոկերով ցած թողեց նրանց լուսամուտից՝ դէպի պարսպի միւս կողմը (Նրա տունը քաղաքի պարսպի վրայ էր շինած) եւ ասաց նրանց. «Ես գիտեմ, որ Աստուած այս երկիրը ձեր ձեռքն է մատնելու, որովհետեւ լսել ենք ինչպէս Նա ցամաքեցրեց ձեր առաջ Կարմիր ծովի ջրերը եւ ինչպէս նուաճեցիք դուք Ամորհայեցոց եւ Բասանի թագաւորներին։ Ուրեմն երդուեցէք ձեր Տիրոջ անունով, որ ինչպէս ես ձեզ բարի արի, այնպէս էլ դուք կըխնայէք իմ հօր տունը. տուեցէք ինձ մի ճիշդ նշան, որ դուք չէք կործանիլ իմ տունը միւս տների հետ»։ Լրտեսները երդուեցան եւ ասացին Ռահաբին. «Երբոր մենք կըմօտենանք քաղաքին, դու մի կարմիր պարան կըկապես քո լուսամուտին եւ քեզ մօտ կըհաւաքես բոլոր ազգականներիդ»։

Լրտեսները վերադարձան իրանց բանակը եւ ասացին. «Տէրն այս երկիրը մեր ձեռքն է մատնել եւ բոլոր նրա բնակիչները երկիւղի մէջ են»։ Այն ժամանակ Յեսուն առաջ գնաց դէպի Յորդանանի եզերքը։ Այստեղ նա ասաց ժողո-

վրդէին. «Լսեցէք ձեր Տէր Աստուծոյ խօսքերը. ահա Ուխտի Տապանակը ձեր առաջից կ'անցնի Յորդանանի միջով եւ հէնց որ նրան կրող քահանաները ոտքը ջրի մէջ կդնեն, ջուրը կըցամաքի, իսկ վերեւից հոսող մասը կ'արձանանայ սարի պէս»: Ինչպէս ասաց, այնպէս էլ կատարուեցաւ: Ժողովուրդն անցաւ գետը ցամաք յատակի վրայով: Երբոր ամենքն էլ անցած էին, Յեսուն իւրաքանչիւր ցեղից մի մարդ կանչեց եւ հրամայեց նրանց Յորդանանի յատակից վեր առնել մի մի մեծ քար եւ դնել եզերքի մօտ, իրանց անցկացած կողմը. ուրիշ տասներկու քար էլ հրամայեց դնել այնտեղ, ուր կանգնած էին քահանաները Տապանակի հետ: Երբոր նրա հրամանները կատարեցին՝ նա ասաց ժողովրդին. «Այս քարերը կըլինին ձեզ համար որպէս յաւիտենական արձաններ, որ յիշեցնեն ձեզ եւ ձեր սերունդներին, թէ Յորդանանու ջրերը երկու մաս բաժանուեցան Տապանակի առաջ, երբ նրան գետից անց էին կացնում»: Այս որ ասաց, քահանայքն էլ դուրս եկան Յորդանանից եւ ջուրն սկսեց ըստ առաջնոյն ընթանալ: Իսրայէլացոց հրաշալի անցնելը սարսափ ձգեց Քանանացոց երկրի բոլոր բնակիչների վրայ: Յորդանանի միւս կողմը Իսրայէլացիք կատարեցին Զատկական տօնը: Միւս օրը նրանք կերան Աւետեաց երկրի ալիւրից առաջին անգամ թըխած բաղարջ հացը եւ աղանձ (Նորի) արեցին տեղական ցորենից: Այդ օրից դադարեց մանանան:

44. ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿՐԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

Յորդանանն անցնելուց յետոյ առաջին քաղաքը, որ պիտի նուաճէին Իսրայէլացիք, Երիքովն էր: Յեսուն ինքն անձամբ գնաց նրան դիտելու: Քաղաքի պարսպի մօտ նա մի երիտասարդ տեսաւ, մերկ սուրը ձեռին եւ հարցրեց. «Ո՞վ

ես դու, մերոնցից ես, թէ թշնամիներից»:—«Ես Տիրոջ զօրքի զօրավարն եմ»: Յեսուն երկրպագեց եւ հանեց կօշիկները, որովհետեւ այդտեղը, ուր ինքը կանգնած էր, սուրբ էր: Այն ժամանակ Տիրոջ հրեշտակը հրամայեց նրան վեց օր շարունակ շրջել Երիքովի շուրջը Տապանակի հետ՝ փող հարկանելով: Իսկ եօթներորդ օրը պտըտել նրան եօթն անգամ: Յեսուն կատարեց, ինչպէս հրամայուած էր: Երբոր Իսրայէլացիք վերջին անգամ պտըտում էին քաղաքի շուրջը, նրա պարիսպներն իրանք իրանց կործանուեցան: Երբայեցիք մտան քաղաքը, հրդեհեցին նրան եւ բոլոր բնակիչներին կոտորեցին, բացի Ռահաբից եւ նրա տանը պատսպարուածներից: Բնակիչների կայքից ոչինչ չ'խնայեցին, բացի մետաղեղէն իրերը, արծաթ, ոսկի եւ այլն, որ եւ նուիրեցին խորանի գանձարանին: Յեսուն խստիւ պատուիրեց, որ ոչ ոքի չըխընայեն: Նա ասաց. «Անիծած է այն մարդը, ով որ կըվերանորոգէ եւ կըշինէ Երիքովը»:

Երիքովից յետոյ Իսրայէլացիք Գայ քաղաքը պիտի նուաճէին: Տեղեկանալով որ քաղաքը թոյլ է, Յեսուն մի քանի հազար զօրք ուղարկեց՝ նրան տիրելու, բայց քաղաքի բնակիչները յետ մղեցին նրանց: Այս բանը խռովեց Հրէաներին: Այն ժամանակ Աստուած յայտնեց Յեսուին, թէ Իսրայէլացիք այն պատճառով պատժուեցան, որ իրանց երդումը դրժեցին եւ Երիքովից ծածուկ աւար վեր առան: Վիճակով սկսան որոնել յանցաւորին: Յայտնուեցաւ մի Աքար անունով մարդ իր բոլոր գերդաստանով: Տիրոջ հրամանով՝ նրան իր զաւակների հետ քարկոծ արին, նրանց դիակները, վրանները եւ մէջը եղած-չեղածն այրեցին եւ աճիւնի վրայ մեծամեծ քարեր կուտեցին: Յանցաւորներին պատժելուց յետոյ՝ Աստուած Գայի քաղաքն էլ նրանց ձեռքը մատնեց:

Իսրայէլացիք մտան Սիւքեմին: Այդտեղ թաղեցին Յովսէփի ոսկորներն այն հողի մէջ, որ գնել էր Յակոբը եւ

կտակել էր Յովսէփին: Յետոյ Մովսէսի կտակի համեմատ Իսրայէլի ցեղերից վեցը բարձրացան Գարեզին անունով կանաչապատ սարը եւ օրհնութիւն կարդացին նրանց, որոնք կկատարեն Աստուծոյ օրէնքները. իսկ ուրիշ վեց ցեղ բարձրացան մերկ ու ժայռոտ Գեբաղ սարը եւ անէծք կարդացին նրանց, որոնք չեն պահիլ Աստուծոյ օրէնքներն ու պատուիրանները:

Քանանացի թագաւորները դաշն կապեցին իրար հետ, որպէսզի ընդհանուր ուժով դիմադրեն եւ հալածեն Հրէաներին: Գաբաւոն քաղաքի եւ նրա հարեւան երեք քաղաքների թագաւորները չ՚մասնակցեցան այս դաշնադրութեան եւ խորամանկութիւն գործ դրին, որ փրկուին: Նրանք մաշուած շորերով եւ քրքրուած կօշիկներով մարդիկ ուղարկեցին Իսրայէլացոց բանակը եւ հաւատացրին, որ լսելով Եհովայի անունը եւ Նրա արած սքանչելիքների պատմութիւնը, գալիս են հեռու երկրից եւ կամենում են Նրա ժողովրդի հետ բարեկամական դաշն կապել: Յեսուն կատարեց նրանց խնդիրը եւ խոստացաւ վնաս չտալ նրանց քաղաքներին եւ կալուածներին, եւ թէեւ շատ շուտով իմացաւ Գաբաւոնացոց խորամանկութիւնը, բայց չէր կարող եղծել իր երդումը: Նա նրանց ընդունեց իր բանակի մէջ եւ ժողովրդի ու խորանի համար ջրկիրներ ու փայտահատներ նշանակեց:

Երուսաղէմի թագաւորն ուրիշ չորս թագաւորների հետ միացած՝ Գաբաւոնի մօտ պատերազմ տուեց Իսրայէլացոց դէմ: Ամբողջ օրը կռւում էին: Եբրայեցիք յաղթեցին եւ ի փախուստ դարձրին Քանանացոց: Այդ միջոցին քարէ կարկուտ տեղաց երկնքից եւ կոտորեց փախչողներին: Արեգակն արդէն մայր մտնելու մօտ էր: Յեսուն կամեցաւ այդ օրն իսկ բոլորովին վերջացնել պատերազմը. նա բացականչեց. «Կանգնիր, արեւ»: Արեւն իսկոյն կանգնեցաւ եւ երեւում էր երկնքում, մինչեւ որ Իսրայէլացիք բոլորովին ջնջեցին

թշնամիներին: Այս յաջողակ ճակատամարտից յետոյ՝ Յեսուն Քանանացոց երկրի բոլոր հարաւային մասը ձեռքի տակ գցեց ու բնակիչներին կոտորեց: Հիւսիսային մասի բնակիչներն եւս կամենում էին դաշնակցել Նրա դէմ, բայց Մերոմ լճի մօտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ բոլորովին կործանուեցան: Վեց տարուայ ընթացքում Յեսուն երկրի մեծ մասը մաքրեց Քանանացիներից. միայն ծովեզերեայ քաղաքները եւ երկրի խորքերում եղած մի քանի ամրութիւններ մնացին նրանց ձեռքին: Նուաճած երկիրները Յեսուն բաժանեց Իսրայէլի ինն եւ կէս ցեղերի վրայ, որովհետեւ Ռուբէնի ու Գադի ցեղը եւ Մանասէի ցեղի կէսը յետ գնացին իրանց վիճակուած երկիրը՝ Յորդանանի միւս կողմը: Ղեւիի տոհմը հող չ՚ստացաւ. նրանց բնակութեան համար որոշուեցան 48 քաղաքներ, իրանց շրջակայքով, իսկ քահանաների եւ ղեւտացիների ապրուստի համար բոլոր տոհմերն իրանց ամեն տեսակ եկամուտից տասանորդ պիտի տային: Բացի սրանից վեց քաղաք էլ որոնք անուանուեցան՝ ապաստարանի քաղաքներ: Ակամայից յանցանք կամ մարդասպանութիւն գործողները կարող էին փախչել եւ այդ քաղաքներից մինի մէջ պատսպարուելով՝ ազատուել սպանուածի ազգականների վրէժխնդրութիւնից: Եփրեմի ցեղը բռնեց երկրի կենդրոնական մասը: Այդտեղ, Սէլովմ քաղաքում, դրուեցաւ Ուխտի Տապանակը, եւ այդ քաղաքը ծերակոյտի ու դատաւորների ժողովատեղի դարձաւ:

Զգալով, որ իր վախճանը մօտենում է, Յեսուն հաւաքեց իր շուրջը բոլոր ժողովուրդը եւ սկսեց յորդորել նրանց, որ ճշտութեամբ կատարեն Աստուծոյ պատուիրանները եւ հաղորդակցութիւն չունենան Քանանացոց հետ: Ժողովուրդը պատասխանեց. «Մենք չենք ուրանալ մեր Աստուծուն եւ ուրիշ աստուածներ չենք պաշտիլ»: Յեսուն ժողովրդի խոստումը գրեց Աստուածային օրէնսգրքի մէջ

Յետոյ նա վերցրեց մի մ ծ վէմ, դրեց նրան Կաղնի ծառի տակը եւ ասաց. «Թող այս վէմը վկայ լինի ձեզ, որ դուք սուտ չ՚դուրս գաք ձեր Աստուծոյ առաջ»: Յեսու Նաւեայի ժամանակ կատարուած բոլոր անցքերը գրուած են Ս. Գրքում: (Գիրք Յեսուայ՝ որդւոյ Նաւեայ):

45. Ի. ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ. ԵԲՐԱՅԵՑՈՑ ՎԻՃԱԿԸ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ.

Յեսու Նաւեայի մահից յետոյ ծերակոյտն էր կառավարում ազգը: Եթէ դատը վերաբերում էր բոլոր ցեղերին, այդ ցեղերի ծերերը հաւաքւում էի միասին եւ հարցը վճռում էին ընդհանուր ձայնով. իսկ եթէ ծերակոյտը չէր կարողանում վճիռ տալ գործին, կամ չէր հասկանում օրէնքը, ապա գալիս էին Սէլովմ, ուր գտնվում էր Ուխտի Տապանակը եւ քահանայապետը վճռում էր գործը կամ բացատրում էր օրէնքը:

Եթէ Իսրայէլացիք ճշտութեամբ կատարէին աստուածատուր օրէնքները եւ իրար հետ հաշտ ու միաբան ապրէին, նրանք նոյնքան ուժեղ կլինէին, որքան Մովսէսի եւ Յեսուի ժամանակները, բայց, տարաբախտաբար, Յեսուի մահից յետոյ, նրանց մէջ երկպառակութիւններ եւ ներքին կռիւներ ընկան: Իւրաքանչիւր ցեղ, փոխանակ ընդհանուր՝ ազգային շահերի վրայ հոգալու, իրանց նեղ, տոհմային օգուտների վրայ էին մտածում: Այդ եսական ձգտումներն այնքան զարգացան, որ իւրաքանչիւր Իսրայէլացի կատարում էր այն, ինչ-որ ինքն արդար էր համարում: Բացի սրանից նրանք մոռացան իրանց խոստումը եւ ճշտութեամբ չ՚կատարեցին Մովսէսի եւ Յեսուի պատուէրները. Նախ թոյլ տուին Քանանացոց բնակուել Աւետեաց երկրի սահմաններում, յետոյ

փոքր առ փոքր նրանց հետ յարաբերութիւններ հաստատեցին եւ վերջապէս սկսան նրանց կուռքերին անգամ երկրպագութիւն տալ: Այդ ամենից յետոյ Աստուած պատժում էր նրանց. հարեւան ազգերը օգուտ քաղելով նրանց ներքին երկպառակութիւններից, յարձակվում էին նրանց վրայ եւ նուաճում մէկ կամ միւս ցեղը:

Ամբախտութեան եւ ձախորդութիւնների հանդիպելուց յետոյ՝ Իսրայէլացիք զղջում էին իրանց յանցանքները եւ դառնում էին դէպի Աստուած: Ողորմած Տէրը նրանց համար ազատիչներ էր ուղարկում, այսինքն այնպիսի մարդիկ, որոնք կռապաշտութեան մէջ չէին խմորվում եւ յոյսերը ճշմարիտ Աստուծոյ օգնութեան վրայ էին դնում: Այդպիսի անձինք հաւաքում էին հրէաներին, առաջնորդում էին նրանց, մաքրում էին երկիրը կուռքերից, Աստուծոյ օգնութեամբ ազատում էին ժողովուրդը թշնամիների լծից եւ պատերազմի ժամանակ դատում եւ վճռում էին ժողովրդի վէճերը: Այդ ընտրեալ անձինքը դատաւորներ էին կոչվում: Այն ժամանակամիջոցը՝ երբ Իսրայէլացիք կառավարվում էին այդպիսի դատաւորների ձեռքով, կոչուեցաւ Դատաւորների ժամանակներ *): Բոլոր դատաւորները թուով տասն եւ հինգ են եղած:

---

*) Այդ ժամանակների անցքերը գրուած են Աստուածաշընչում առանձին գրքի մէջ, որ կոչվում է Գիրք Դատաւորաց, և մասամբ էլ Գիրք Առաջին Թագաւորաց անունով գրքի մէջ.

46. ԴԵԲՈՎՐԱ ԵՒ ԲԱՐԱԿ.

Երբոր Իսրայէլացիք մոռացան Մովսէսի եւ Յեսու Նաւեայի պատուիրանները եւ ընկան կռապաշտութեան մէջ, Տէրը Քանանացոց թագաւոր Յաբենի ձեռքը մատնեց նրանց, որ եւ քսան տարի շարունակ խստիւ ճնշում էր։ Յաբենի Սիսարա անունով զօրավարը Իսրայէլացոց երկրի մէջ իր ձեռքի տակը 900 պատերազմական կառքեր ունէր։

Երկար ժամանակ տառապելով Իսրայէլացիք վերջապէս դարձան դէպի Աստուած եւ Նրա օգնութիւնը հայցեցին։ Այդ ժամանակ ապրում էր մի կին՝ Դեբովրա անունով։ Նրան բոլոր Իսրայէլացիք յարգում էին եւ վէճ ունեցած ժամանակ նրա դատաստանին էին դիմում։ Աստուծոյ հրամանով Դեբովրան մարդ ուղարկեց Բարակ անունով Իսրայէլացու մօտ եւ պատուիրեց ժողովել 10,000 մարդ եւ նրանցով գնալ Սիսարայի դէմ։ Բարակը համաձայնեցաւ, միայն այն պայմանով, որ Դեբովրան ինքն էլ նրա հետ գնայ։ Մարգարէ կինը պատասխանեց. «Կըգամ քեզ հետ, բայց իմանաս, որ այն ժամանակ փառքը քոնը չի լինիլ։ Աստուած Սիսարային կնոջ ձեռքը կըմատնէ»։ Բարակը զօրք ժողովեց, եւ Թաւոր սարը գրաւեց, Դեբովրան էլ հետն էր։ Սիսարան դուրս եկաւ Բարակի դէմ, բայց յաղթուեցաւ նրանից եւ փախաւ թագ կացաւ մի կնոջ վրանի տակ։ Քնած ժամանակ՝ կինը սպանեց նրան։ Իսրայէլացիք ազատուեցան Յաբենի անտանելի լծից եւ այնուհետեւ 40 տարի հանգիստ էին։

47. ԳԵԴԷՕՆ.

Իսրայէլացիք դարձեալ մոռացան Աստուծուն եւ սկսեցին Բահաղ անունով մի կուռք պաշտել։ Այդ յանցանքի համար Աստուած մատնեց նրանց Մադիամացոց եւ Ամաղեկացոց ձեռքը։ Այս երկու թափառական ցեղերը երկու տարի շարունակ քանդում կողոպտում էին Հրէից երկիրը։ Աստուած լսեց իր ժողովրդի աղաչանքը եւ նրանց ազատելու համար մի զօրաւոր մարդ ընտրեց՝ Գեդէօն անունով։

Մի անգամ Գեդէօնը ցորեն էր ծեծում կալի մէջ, որ փոքր ինչ ճանապարհի պաշար պատրաստէ եւ փախչի ասպատակիչների երեսից։ Յանկարծ նա իր առաջը մի մարդ տեսաւ՝ գաւազանը ձեռին։ Անծանօթն ասաց. «Տէրը քեզ հետ, այր հզօր»։— «Եթէ մեզ հետ է Տէրը, պատասխանեց Գեդէօնը, ապա ինչո՞ւ են հասնում մեզ այսքան թշուառութիւններ. Աստուած բարձի թող է արել մեզ»։ Անծանօթն ասաց. «Գնա՛ քո զօրութիւնով եւ ազատիր քո ազգը Մադիամացիների ձեռքից։ Ես եմ ուղարկում քեզ եւ դու կըկործանես նրանց, ինչպէս մի մարդ»։ Գեդէօնը հասկացաւ, որ Աստուծոյ հրեշտակն էր խօսում իրան հետ եւ ասաց. «Եթէ ես շնորհ գտայ քո առաջ, ապա մի նշան տուր ինձ, եթէ դու ես ինձ հետ խօսողը։ Մի՛ հեռանար այստեղից, մինչեւ ես գնամ եւ զոհ բերեմ քեզ համար»։ Գեդէօնը գնաց եւ բերեց ուլի միս, բաղարջ եւ արգանակ։ Անծանօթն ասաց. «Միսը եւ բաղարջը դիր այս քարի վրայ, իսկ արգանակը նրանց վրայ ածա»։ Գեդէօնն այնպէս էլ արեց։ Հրեշտակը գաւազանը մեկնեց եւ ծայրը մսին դիպցրեց։ Իսկոյն ժայռի միջից կրակ դուրս եկաւ եւ այրեց բոլորը։ Անծանօթն անյայտացաւ։ Գեդէօնը վախեցաւ եւ բացականչեց. «Ա՜հ, Աստուած, ես տեսայ Տիրոջ հրեշտակը երես առ երես»։

Այդ ժամանակ նա լսեց Աստուծոյ ձայնը. «Խաղաղութիւն քեզ, մի՛ երկնչիր, չես մեռնիլ»։

Աստուծոյ հրամանով Գեդէոնը գիշերով գնաց եւ Բահաղի սեղանը կործանեց, որ նրա հօր տանից շատ հեռու չէր։ Նա կտրատեց այն սրբազան ծառերը, որոնք տնկած էին կուռքի մեհեանի մօտ, ճշմարիտ Աստուծուն սեղան կանգնեց եւ այդ փայտերով ողջակէզն այրեց։ Առաւօտը քաղաքի բնակիչները հաւաքուեցան նրա հօր մօտ եւ պահանջեցին, որ Գեդէոնին իրանց ձեռքը մատնէ։ Հայրը պատասխանեց. «Եթէ նա աստուած է, թող ինքը պատժէ նրան, որ կործանել է իր սեղանը»։ Այդ միջոցին Մադիամացիք եւ Ամաղեկացիք անցել էին Յորդանան գետը եւ բանակ էին դրել Յեզրայէլի հովտումը։ Գեդէոնը շատ զօրք ժողովեց եւ խնդրեց Աստուծուն, որ իրան նշան ցոյց տայ, թէ ինքը պիտի փրկէ Իսրայէլին։ «Ահա ոչխարի գեղմը կալի մէջ կը դնեմ, եթէ գիշերս գեղմի վրայ անձրեւ գայ եւ մնացած տեղերը ցամաք մնայ, կ՚իմանամ, որ Դու իմ ձեռքով պիտի ազատես ժողովուրդը»։ Գեդէոնի աղօթքը լսելի եղաւ։ Միւս օրը նա մզեց գեղմը եւ մի կոնք ջուր դուրս եկաւ նրանից։ Գեդէոնը նորէն դարձաւ առ Աստուած. «Թող այս գիշեր ցամաք մնայ միայն գեղմը, իսկ բոլոր երկիրը ծածկուած լինի ցօղով»։ Աստուած այս նշանն էլ շնորհեց Գեդէոնին։ Աստուծոյ օգնութեանը վստահացած, Գեդէոնը Տիրոջ հրամանով իր շուրջը հաւաքուած 32,000 մարդկանցից ընտրեց միմիայն 300 հոգի՝ քաջակազմ, համբերատար անձինք եւ գիշերային մութին երեք կողմից յարձակուեց թշնամու բանակի վրայ։ Գեդէոնի զինուորներից իւրաքանչիւրը ձեռքին ջահ ունէր բռնած սափորների մէջ եւ եղջերեայ փողեր։ Յարձակման րոպէին նրանք բաց արին իրանց ջահերը եւ փողերը հնչեցին. թշնամու մեծաքանակ գունդը շփոթուեցաւ եւ կարծելով թէ իւրաքանչիւր ջահի եւ փողի ետեւից

ամբողջ գունդ է գալիս, իրարանցով ընկան, սկսեցին մէկմէկու կոտորել եւ փախչիլ։ Գեդէոնը հալածեց նրանց մինչեւ Յորդանան գետը։ Այս յաղթութիւնից յետոյ Իսրայէլացիք առաջարկեցին նրան եւ նրա սերունդին արքայական իշխանութիւն, բայց Գեդէոնը մերժեց եւ ասաց. «Ո՛չ ես կ՚իշխեմ ձեզ վրայ եւ ո՛չ իմ որդին։ Աստուած է ձեր Տէրը եւ իշխողը»։ Գեդէոնը քառասուն տարի կառավարեց Իսրայէլացոց։

48. ՀԵՓԹԱՅԷ.

Իսրայէլացիք նորից կռապաշտութեան մէջ ընկնելով՝ Աստուած նրանց թշնամիների ձեռքը մատնեց։ Ամմոնացիք արեւելեան կողմից էին ճնշում նրանց, իսկ Փղշտացիք հարաւ-արեւմուտքից։ Տասնեւութը տարի շարունակ Ամմոնացիք տիրում էին Յորդանանի միւս կողմը եղած երկիրներին։ Վերջապէս նրանք անցան Յորդանան եւ սպառնում էին բոլոր Հրէաստանին։ Այդ ժամանակ Իսրայէլացիք դիմեցին դէպի Աստուած եւ Նրա օգնութեանը վստահանալով՝ վճռեցին հալածել Ամմոնացոց։ Բայց առաջնորդ չունէին։ Այդ միջոցին դրանց երկրի սահմաններում ապրում էր մի մարդ, Հեփթայէ անունով, որին եղբայրները հալածել էին հայրենական տնից։ Մի քանի իրան նման անտուն ու զրկուած մարդիկ շուրջը ժողոված, Հեփթայէն յարձակումներ էր անում հարեւան երկիրների վրայ եւ նրանցից կողոպտածով ապրում էր իր մարդիկների հետ։ Իսրայէլացիք նրա մօտ դեսպաններ ուղարկեցին եւ առաջարկեցին, որ իրանց զօրքին առաջնորդէ։ Հեփթայէն համաձայնեցաւ։ Պատերազմն սկսելուց առաջ՝ նա դեսպաններ ուղարկեց Ամմոնացոց թագաւորի մօտ եւ հարցրեց, թէ ինչի՞ է զօրքով գալիս իր հայրենիքի վրայ։ Թագաւորը պատասխանեց. «Որովհետեւ

Իսրայէլը զօրով վերցրեց մեր երկիրը, երբոր դուրս եկաւ Եգիպտոսից. վերադարձրու ինձ իմ երկիրը եւ ես կամովին յետ կըքաշուիմ»: Հեփթայէն նորից մարդ ուղարկեց նրա մօտ, յայտնելով՝ թէ յայսկոյս Յորդանանու երկիրները Ամմոնացոց չէին պատկանում, այլ Ամորհայեցոց եւ որ Իսրայէլացիք ահա երեք հարիւր տարի է տիրում են նրանց: Բայց Ամմոնացիք յետ չքաշուեցան: Հեփթայէն պատերազմ մղեց նրանց դէմ, կործանեց եւ 20 քաղաք էլ խլեց նրանց ձեռքից: Բայց դեռ պատերազմը չ՚սկսած, բարեպաշտ զօրավարը ծանր ուխտ արեց Աստուծուն, որ եթէ յաղթէ թշնամուն, վերադարձին՝ առաջինը, որ կըհանդիպի նրան իր տանից, կըզոհի Աստուծուն: Երբոր յաղթութիւնից փառքով քաղաք էր մտնում, նրա միակ դուստրը կամենալով ուրախակից լինել իր հօրը, դուրս վազեց նրա հանդէպ: Դառն էր Հեփթայէին կատարել իր խոստումը՝ զրկուիլ իր մինուճար աղջկանից, բայց նա ճնշեց հայրական գորովը եւ իր դուստրը Վկայութեան խորանին ծառայութեան տուեց:

49. ՍԱՄՍՈՆ.

Դրացի ազգերից Իսրայէլացոց ամենից շատ Փղշտացիք էին նեղութիւն պատճառում: Քառասուն տարի ճնշւում էին Իսրայէլացիք նրանց լծի տակ: Վերջապէս Աստուած խղճաց իր ժողովրդին եւ մի արժանաւոր պաշտպան ուղարկեց նրանց համար: Դա Սամսոնն էր: Սամսոնը ՚ի ծնէ Աստուծուն էր նուիրուած. նա ոչ գինի էր խմում եւ ոչ օղի. գլխի մազերն էլ չէր խուզում (Նազովրեցի ուխտաւորները գլխների մազերը չ՚պիտի խուզէին եւ խմիչք չ՚պիտի գործածէին): Աստուած նրան արտաքոյ կարգի ույժ էր շնորհել: Նա Փղշտացոց սահմանի մօտ էր բնակվում, ուստի եւ նրանց հետ

յաճախ հաղորդակցութիւն ունենալով, եթէ իրան խաբում կամ անարգում էին, սաստիկ վրէժխնդիր էր լինում: Մի անգամ Փղշտացիք պահանջեցին Իսրայէլացիներից որ Սամսոնին կապեն եւ իրանց ձեռքը մատնեն: Սամսոնը թոյլ տուեց, որ ձեռները կապեն, բայց հէնց Փղշտացոց մէջ մտաւ թէ չէ, կապանքները կտրատեց, մի սատկած էշի ծնօտ ձեռք գցեց եւ նրանով հազար հոգի սպանեց թշնամիներից:

Մի ուրիշ անգամ նա գտնվում էր Փղշտացոց Գազայ քաղաքում: Բնակիչներն իմացան եւ քաղաքի երկաթէ դռները փակեցին, որպէսզի բռնեն նրան եւ սպանեն: Բայց նա գիշերով քաղաքի դռները կրնկահան արաւ, ուսին դրեց եւ տարաւ մօտակայ սարի գլուխը: Տարաբախտաբար այս քաջ եւ անպարտելի մարդը վատ յարաբերութիւն հաստատեց մի Փղշտացի կնոջ հետ եւ մեղանչելով Աստուծոյ դէմ, իրան էլ կորստեան պատճառ եղաւ: Աստուած ուժից զրկեց նրան եւ թշնամիների ձեռքը մատնեց: Փղշտացիք նրա աչքերը հանեցին, շղթայեցին եւ ձգեցին մի ջրաղացի մէջ, որ ցորեն աղայ: Մի անգամ Փղշտացիք հաւաքուել էին իրանց աստուծոյ տօնը կատարելու եւ նրան զոհ մատուցանելու: Սամսոնին ջրաղացից հանեցին եւ բերին ամբոխի մէջ, որ նրան ծաղրեն: Սամսոնը համբերութեամբ տանում է բոլոր անարգանքները, միայն խնդրում է իր առաջնորդից, որ ներս մտցնէ տաճարը: Այնտեղ էին Փղշտացոց բոլոր մեծամեծները եւ 3000-ի չափ էլ ժողովուրդ հանդէս էին կատարում ներսը եւ կտուրի վրայ: Երբոր Սամսոնին ներս տարան, ամենքն էլ սկսեցին ծաղրել նրան: Նա շօշափելով գտաւ տաճարի սիւները եւ այնպէս ուժգին շարժեց նրանց, որ շինութիւնը կործանուեցաւ եւ բոլոր մարդիկ, որոնք նրա մէջն էին ու վրան, կոտորուեցան: Ինքը Սամսոնն էլ մեռաւ նրանց հետ:

50. ՀԵՂԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ ՄԱՐԳԱՐԷՆ.

Սամսոնի մահից յետոյ դատաւորական իշխանութիւնն անցաւ Հեղիի ձեռքը, որ մինչեւ նոյն ժամանակ քահանայապետ էր։ Հեղին շատ բարեպաշտ եւ առաքինի մարդ էր։ Նա ունէր երկու որդի՝ Ոփնի եւ Փենեհէս, երկուսն էլ քահանայ։ Սրանք իրանց անկարգ ու մոլի վարք ու բարքով անչափ դառնացնում էին Հօր սիրտը, իսկ ժողովրդին վատ օրինակ էին լինում։ Հեղին բարեսիրտ եւ թոյլ բնաւորութիւն ունէր, նա՝ որպէս դատաւոր, չէր պատժում իր անարգ զաւակներին. այլ բաւականանում էր միայն թեթեւ յանդիմանութիւններով։ Իսրայէլացիք, որ առանց այն էլ մեծ հակումն ունէին դէպի կռապաշտութիւն, Հեղիի թոյլ կառավարութեան ներքոյ եւ նրա անարգ որդիների վատ արարքներից գայթակղուած, կռապաշտութեան մէջ ընկան։ Աստուած պատժեց նրանց՝ Փղշտացոց ձեռքը մատնելով։ Բայց ինչպէս միշտ, նոյնպէս եւ այս անգամ, Տէրը բոլորովին չ'ուրացաւ նրանց, այլ նոր մարգարէ վերկացրեց, որ պէտք է դարձնէր նրանց դէպի ճշմարտութեան ճանապարհը։ Այս մարգարէն Սամուէլն էր։

Սամուէլի մայրը մի առաքինի կին էր, Աննա անունով։ Աննան երկար ժամանակ որդի չ'ունէր եւ այդ պատճառով սաստիկ վշտանում էր, մանաւանդ, որ Հրէից մէջ զաւակ չունենալը մեծ անպատւութիւն էր համարվում։ Անզաւակների մասին ասում էին, որ երեւի նրանք անչափ մեղաւոր են, որ Տէրը նրանց սերունդներին զրկում է խոստացեալ Փրկչին տեսնելու շնորհից։ Աննան մի անգամ եկաւ Աստուծոյ տաճարը եւ Տապանակի առաջ ջերմեռանդութեամբ աղօթում էր. այդտեղ նա ուխտեց, որ եթէ Տէրը իրան զաւակ կըշնորհէ, Աստուծոյ սպասաւորութեան կընուիրէ նրան.

Նա գինի չի խմիլ եւ ածելի չի դիպչիլ նրա գլխին։ Աննայի աղօթքը լսելի եղաւ. նա մի արու զաւակ ունեցաւ։ Աննան նրա անունը Սամուէլ (հայցեալ) դրեց։ Երբոր Սամուէլը մեծացաւ, մայրը նրան բերեց տաճար եւ յանձնեց Հեղի քահանայապետին։ Այնուհետեւ Սամուէլն ապրում էր Աստուծոյ տանը եւ կրթվում էր Հեղիի վերահսկողութեան տակ։ Նա առաքինի էր եւ բարեպաշտ, թէեւ չորս կողմը վատ օրինակներ էր տեսնում։

Սամուէլը միշտ տաճարի մէջն էր քնում, իսկ Հեղին փոքր ինչ հեռու առանձին սենեակում։ Մի անգամ քնած ժամանակ Սամուէլը լսեց, որ իրան կանչում են։ Նա վազեց Հեղիի մօտ եւ ասաց. «Ահաւասիկ եմ, ինչի՞ համար կանչեցիր ինձ»։ Հեղին պատասխանեց. «Ես քեզ չեմ կանչել, որդեակ, յետ դա՛ռ եւ քնի՛ր»։ Սամուէլը գնաց պառկեց։ Բայց հազիւ թէ քնել էր, ձայնը նորից կանչեց։ Սամուէլը վազեց Հեղիի մօտ, բայց նա ասաց, որ չէ կանչել։ Միեւնոյնը երրորդ անգամ եւս պատահեցաւ։ Հեղին հասկացաւ, որ Տէրն է կանչում պատանուն, եւ ասաց նրան. «Եթէ ձայնը կրկին կանչէ քեզ, դու պատասխանիր. «Խօսիր, Տէր, ծառադ լսում է Քեզ»։ Սամուէլը պառկեց եւ կրկին անգամ ձայն լսեց, որ իրան կանչում էր։ Նա պատասխանեց, ինչպէս սովորեցրել էր քահանայապետը։ Այն ժամանակ Տէրը յայտնեց Սամուէլին, որ Հեղիի ամբողջ տունը կըկործանուի, որովհետեւ նա տեսնում է իր որդիների ամբարշտութիւնը, եւ չէ զսպում նրանց։ Միւս օրը Սամուէլը պատմեց Հեղիին Տիրոջ պատգամը։ Հեղին խոնարհութեամբ ընդունեց Աստուածային որոշումը։ Այդ ժամանակից Իսրայէլացիք հասկացան, որ Տէրը Սամուէլին է ընտրել Իրան մարգարէ։ Սամուէլի նախագուշակութիւնը շուտով կատարուեցաւ։ Փղշտացիք յարձակուեցան Իսրայէլացոց զօրքի վրայ եւ ջարդեցին նրանց։ Հրէից ծերերն եկան Հեղի քահանայապետի մօտ եւ

խնդրեցին, որ թոյլ տայ իրանց Ոփնի Տապանակը պատերազմի դաշտը տանել. «Եթէ Նա մեր մէջը լինի, մենք անշուշտ կը յաղթենք»: Հեղին համաձայնեցաւ եւ իր երկու որդիներին յանձնեց այդ գործը: Իսրայէլացիք ուրախութեամբ դիմաւորեցին Տապանակին, իսկ Փղշտացիք սարսափեցան. «Վա՜յ մեզ, ասում էին նրանք, Իսրայէլի Աստուածը եկել է նրանց բանակը»: Բայց Տապանակն եւս չ՚օգնեց Եբրայեցոց, նրանք կրկին յաղթուեցան, Հեղիի որդիներն սպանուեցան, իսկ Տապանակը գերի տարուեցաւ: Աստուած ցոյց տուեց Իսրայէլացոց, որ սուրբ բանն անգամ չի օգնիլ նրանց, որոնք չեն յարգում Աստուծոյ պատուէրները: Հեղին աթոռի վրայ նստած էր, երբ լուր բերին, թէ Տապանակը գերի է տարուել, նա սաստիկ ցնցուեցաւ, վայր ընկաւ աթոռից եւ ողնաշարը կոտրուեց—մեռաւ: Հեղին դատաւորութիւն արեց 40 տարի:

Բայց Տապանակը մեծ սրբութիւն էր. Նա էր Իսրայէլի Աստուծոյ փառքը, եւ Տէրը թոյլ չտուեց, որ Իր փառքն անարգուի կռապաշտներից: Փղշտացիք անչափ ուրախացան, երբ գերեցին Տապանակը. Նրանք Տապանակն Աստուած էին համարում եւ կարծում էին թէ Իսրայէլի Աստուծուն են գերի արել: Տապանակը տարան նրանք եւ դրեցին Ազովտոս քաղաքի Դագօն անունով կուռքի տաճարի մէջ: Երկրորդ օրը երբ քուրմերը տաճարը մտան, տեսան, որ Դագօնը երեսի վրայ ընկած է Տապանակի առաջ: Նրանք կանգնեցրին կուռքը: Բայց երրորդ օրը նրան աւելի անվայել դրութեան մէջ գտան: Դագօնի բունն ընկած էր Տապանակի առաջ, իսկ գլուխը, ձեռներն ու ոտները դռան մօտ: Բացի սրանից Ազովտացոց վրայ ծանրացաւ Աստուծոյ ձեռքը: Բնակիչների մարմինները անտանելի խոցերով ծածկուեցան, իսկ արտերը փչացրին մկն-

ները: Այս պատիժներից սարսափած, Փղշտացիք Տապանակը Ազովտայից Գէթ քաղաքը փոխադրեցին: Այնտեղ եւս նոյն պատուհասները կրկնուեցան: Յետոյ Տապանակն ուղարկեցին մի ուրիշ քաղաք (Ասկաղօն): Նոյնը պատահեցաւ եւ այդտեղ: Այն ժամանակ նրանք վճռեցին արձակել Տապանակը: Իրանց քուրմերի խորհրդով՝ նրանք մի նոր սայլ շինեցին: Տապանակը նրա վրայ դրին, երկու անդրանկածին երինջներ լծեցին: Դրեցին սայլի մէջ ոսկէ ընծաներ եւ առանց կառավարի արձակեցին սայլը: Երինջներն առանց առաջնորդի Տապանակն ուղղակի Իսրայէլացոց երկրի սահմանը հասցրին եւ կանգնեցան Յեսու անունով Հրէայի ագարակում, Բեթսամիւս քաղաքի մօտ: Այս քաղաքում ապրում էին Ղեւտացիք: Նըրանք սայլի վրայից վեր առան Տապանակը, սայլը ջարդեցին, եւ երինջները նոյն փայտերի վրայ ողջակէզ արին: Բայց քաղաքի բնակիչները չ՚ուրախացան, երբ տեսան Տապանակը. նրանցից շատերը հետաքրքրութեամբ ներս նայեցան նրա մէջ, եւ այդ յանդուգն հետաքրքրութեան համար Աստուած 50,070 հոգի սպանեց նրանցից: Այս հարուածից սարսափած, քաղաքացիք Տապանակը Կարիաթարիմ ուղարկեցին:

Տապանակը վերադառնալուց յետոյ անցել էր քսան տարի: Իսրայէլացիք դեռ եւս շարունակում էին իրանց կռապաշտութիւնը, եւ դրա համար էլ շարունակ ճնշվում էին Փղշտացոց ձեռքի տակ: Վերջապէս թշուառութիւնը գնալով գնալով ծանրացաւ եւ զգաստացրեց նրանց. Նրանք զղջմամբ դարձան դէպի Աստուած եւ Նրա օգնութիւնը խնդրեցին: Տէրը խղճաց եւ Սամուէլին դատաւոր կարգեց նրանց վրայ: Սամուէլը կործանեց կուռքերը, մաքրեց երկիրը Փղշտացիների ասպատակութիւններից եւ երկար ժամանակ խաղաղութեամբ եւ արդարադատութեամբ կառավարում էր ժողովուրդը:

---

51. ՀՌՈՒԹ.

Դատաւորների ժամանակները դրացի ազգերը Իսրայէլացոց մշտական թշնամիներն էին: Նրանք շարունակ դէպի կռապաշտութիւն էին հրապուրում այս միակ աստուածապաշտ ժողովրդից շատերին, բայց պատահում էր երբեմն, որ այդ կռապաշտներից ոմանք հաւատում էին ճշմարիտ Աստուծուն: Այդ դիպուածներում Իսրայէլացիք նրանց իրանց ցեղակից եւ հաւատակից էին համարում: Այդպիսի հաւատացեալներից մինն էր եւ Մովաբացի Հռութ անունով կինը, որի պատմութիւնը գրուած է Սուրբ գրքում, Հռութի գրքի մէջ:

Բեթղեհէմի բնակիչներից մինը՝ Եղիմելէք անունով, սովի ժամանակ գաղթեց Մովաբացոց երկիրը իր Նոյեմի կնոջ եւ երկու որդիների հետ: Այդ երկրում նրա տղայքն ամուսնացան Մովաբացի աղջիկների վրայ: Եղիմելէքը եւ իր երկու տղան մեռան այդ երկրում: Նոյեմին մենակ մնալով որոշեց վերադառնալ իր հայրենիքը: Նրա հարսները չէին կամենում մենակ թողնել նրան եւ ուզում էին հետը գնալ: Բայց ճանապարհին Նոյեմին յորդորում էր նրանց վերադառնալ իրանց հայրենի տները, որովհետեւ օտար երկրի մէջ նրանց համար շատ դժուար կըլինի չքաւորութեան մէջ կեանք վարել: «Թող Աստուած ողորմի ձեզ, որ այդպէս լաւ վարուեցաք ձեր ամուսինների եւ ինձ հետ»: Հարսներից մինը լսեց նրան եւ վերադարձաւ, իսկ միւսը, Հռութը, պատասխանեց, թէ «ուր դու կըլինիս, այնտեղ էլ ես. քո ժողովուրդը կըլինի իմ ժողովուրդը, իսկ քո Աստուածը—իմ Աստուածը»: Նոյեմին եւ Հռութը բնակուեցան Բեթղեհէմում: Ամեն օր Հռութը դուրս էր գալիս արտերը եւ մնացած հասկերը քաղելով (հասկաքաղ անելով) տուն էր բերում: Այդ հասկերը տրո-

րում էին նրանք եւ իրանց համար հաց պատրաստում *): Տէրը վարձատրեց Հռութին այն հաւատարմութեան եւ յարգանքի համար, որ նա ունէր դէպի իր չքաւոր սկեսուրը: Իսրայէլացոց մէջ մի տեսակ օրէնք կար, որ եթէ մէկը մեռնէր եւ զաւակ չ՚թողնէր, ապա նրա մերձաւոր բարեկամներից մինը պիտի ամուսնանար հանգուցեալի այրիի հետ եւ այս ամուսնութիւնից առաջացած զաւակները հանգուցեալի որդիքը պիտի համարուէին: Այդ միջոցին Բեթղեհէմում ապրում էր մի հարուստ հրեայ՝ Բոոս անունով, որ Հռութի մարդու ազգականն էր: Սա շատ հաւանեց Հռութի պարկեշտութիւնն ու ջանասիրութիւնը եւ՝ վերոյիշեալ օրէնքի համեմատ, ամուսնացաւ Հռութի հետ: Հռութն ունեցաւ մի արու զաւակ՝ Ովբէթ անունով, որի թոռն էր Դաւիթ մարգարէն, որ յետոյ Իսրայէլացոց թագաւոր դարձաւ:

52. ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ. ՍԱՒՈՒՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ ՕԾՈՒԻԼԸ.

Սամուէլը ծերացաւ. նա այլեւս մենակ չէր կարողանում կառավարել Իսրայէլի երկիրը, ուստի իր դատաւորական գործերը թեթեւացնելու նպատակով՝ իր երկու որդիներին հարաւային երկիրների վրայ դատաւոր կարգեց: Բայց Սամուէլի որդիքն իրանց հօր օրինակին չ՚հետեւեցին. ընծաներ եւ կաշառքներ առնելով նրանք յանցաւորներին արդարա-

---

*) Հրէից մէջ օրէնք կար՝ որ պատուիրում էր արտը հնձելու ժամանակ՝ բոլորովին հասկաքաղ չ՚անել նրան և թափուած հասկերը չ՚հաւաքել: «Եւ 'ի հնձել հնձողաց ձերոց զհունձս երկրին ձերոյ՝ մի՛ սպառիցէք զհունձս անդոց ձերոց մօտ հնձելով. և զանկեալն ի հնձոց քոց մի՛ ժողովեսցես»: (Ղեւտ. ժթ. 9.):

ցնում էին եւ չքաւորներին ու տկարներին վշտացնում: Ժողովուրդն անբաւական էր: Մի անգամ ծերերը հաւաքուեցան Սամուէլի մօտ եւ ասացին նրան. «Դու արդէն ծերացել ես, իսկ որդիքդ քո ճանապարհով չեն ընթանում, ուրեմն ընտրիր մեզ համար մի թագաւոր, ինչպէս ուրիշ ազգերն ունին, որ կառավարէ եւ դատէ մեզ արդարութեամբ»: Սամուէլն աղօթքով դիմեց Աստուծուն եւ հրաման ստացաւ կատարել ժողովրդի ցանկութիւնը:

Բենիամինի ցեղի մէջ այդ միջոցին ապրում էր մի նշանաւոր մարդ՝ Կիս անունով: Նա մի որդի ունէր, անունը Սաւուղ: Իսրայէլացոց մէջ նրանից գեղեցկակազմ մարդ չ'կար:

Մի օր Կիսի եզները կորել էին: Նա ուղարկեց իր որդուն նրանց որոնելու: Երկար որոնելուց յետոյ՝ Սաւուղը քաղաք մտաւ, որ մարգարէին (Սամուէլին) հարցնէ, թէ արդեօք կարող է գտնել նրանց թէ ոչ: Այդ միջոցին Սամուէլն Աստուծուն զոհ մատուցանելու էր գնում: Ճանապարհին պատահեցաւ Սաւուղին եւ Աստուծուց հրաման ստացաւ թագաւոր օծել նրան Իսրայէլացոց վրայ: Նա տարաւ նրան այնտեղ, ուր զոհ պիտի մատուցանէին, եւ նստեցրեց առաջին տեղը եւ զոհի ընտիր մասը՝ ընծայ նրան տուեց: Ոչ ոք չ'գիտէր թէ մարգարէն ինչի է այդպիսի յարգանք մատուցանում երիտասարդին: Միւս օրը Սամուէլը տարաւ նրան քաղաքից դուրս եւ առանձին, առանց ումն եւ է ներկայութեան, նրա գլխին պատուական իւղ թափեց եւ ասաց. «Տէրն օծում է քեզ կառավարիչ Իսրայէլի, եւ այս քեզ նշան, որ երբ տուն գնալիս կը լինիս, ճանապարհին քեզ երկու մարդ կը պատահին եւ կ'ասեն, որ կորած եզներդ գտնուել են. յետոյ կը պատահեն երեք մարդ, որոնք քեզ երկու հաց կը տան, իսկ յետոյ կը հանդիպիս մարգարէների, որոնց հետ մարգարէութիւններ կ'անես»: Բոլորը կատարուեցաւ, ինչ-որ Սամուէլը գուշակեց:

Մի քանի ժամանակից յետոյ Սամուէլը հաւաքեց ժողովուրդը եւ ամենի առաջ վիճակ ձգեց, թէ ով կը լինի նրանց թագաւորը: Վիճակը Սաւուղին ընկաւ: Ժողովրդից շատերը նրա բարձր եւ գեղեցիկ կազմուածքից գրաւուած, ուրախութեամբ ընդունեցին նրան: Ապա Սամուէլը յայտնեց ժողովրդին թագաւորի իրաւունքները, գրեց գրքի մէջ եւ դրեց Աստուծոյ առաջ: Բայց այս ընտրութիւնից բոլոր ժողովուրդը գոհ չէր: Ոմանք ասում էին՝ թէ սա ինչպէս կարող է ազատել իրանց եւ կառավարել, որովհետեւ մինչեւ այդ ժամանակ ոչ ոք նրան չէր ճանաչում եւ առաջնակարգ ցեղերից չէր: Այսպիսով ժողովրդականները ցրուեցան իրանց տները: Սաւուղն էլ վերադարձաւ իր հօր տուն եւ երկրագործութեամբ էր պարապում: Նա սպասում էր, որ տեսնէ թէ ինչով կը վերջանայ ժողովրդի անհամաձայնութիւնը:

Շատ ժամանակ չ'անցած՝ Յաբիս քաղաքից դեսպաններ եկան եւ յայտնեցին նրան, որ Ամմոնացիք պաշարել են իրանց քաղաքը եւ իրանք այնքան ուժ չ'ունին, որ նրանց դիմադրեն: Սաւուղն իսկոյն պատառ պատառ կտրատեց իր եզները, որոնցով վար էր անում, այս պատառներն ուղարկեց իր երկրի բոլոր կողմերը եւ սպառնաց թէ՝ այսպէս կտոր կտոր կ'անէ այն մարդկանց եզները, որոնք չեն գալ պատերազմելու հայրենիքի թշնամու դէմ: Թագաւորի հրաւէրն արձագանք գտաւ. Նրա մօտ հաւաքուեցան 670,000 զինուորուած Իսրայէլացիք: Ամմոնացիք ջարդուեցան: Յաղթութիւնից յետոյ բոլոր ժողովուրդը հաւաքուեցաւ Գաղգաղայում եւ հանդիսաւոր կերպով Սաւուղին թագաւոր ճանաչեց: Այդ ժամանակ Սամուէլն ասաց հանդիսականներին. «Մի՛ հեռանաք ձեր Տէր Աստուծուց, բոլոր սրտով ծառայեցէք նրան եւ Աստուած էլ ձեզ չի ուրանալ, իսկ ես կ'աղօթեմ ձեզ համար եւ կ'առաջնորդեմ ձեզ դէպի բարին եւ ուղիղ ճա-

նապարհը. իսկ եթէ կըմեղանչէք եւ չար ինչ կ'անէք Աստուծոյ առաջ, կըկործանուիք թէ դուք եւ թէ ձեր թագաւորը»։

53. ԱՍՏՈՒԾՈՅ ՑԱՍՈՒՄԸ ՍԱՒՈՒՂԻ ՎՐԱՅ.

Սաւուղն իրան համար մշտական զօրք կազմեց, հարեւան ազգերի հետ յաջողակ պատերազմներ վարեց եւ Փղշտացոց հարկադրեց դադարեցնել իրանց հանապազօրեայ յարձակումները եւ իրանց սահմաններից դուրս ոտք չդնել։ Այսպիսով դեռ իր թագաւորութեան առաջին տարիներում, նա մեծ ժողովրդականութիւն ստացաւ եւ դրացի ազգերն էլ սկսան ակնածել նրանից։ Բայց յաջողութիւնը մոլորութեան մէջ ձգեց երիտասարդ թագաւորին. նա սկսեց արհամարհել Աստուծոյ պատուէրները եւ իր դէմ շարժեց Տիրոջ բարկութիւնը։ Արտաքին ծիսակատարութեամբ, պահով, աղօթքով, զոհաբերութիւններով նա, ճշմարիտ է, կամենում էր հաճոյանալ Աստուծուն, բայց իր ներքինն այնքան մաքուր ու վայելուչ չէր պահում։ Իսրայէլացիք սովորութիւն ունէին, որ պատերազմ գնալուց առաջ զոհ էին մատուցանում Աստուծուն։ Երբոր Սաւուղը կամենում էր պատերազմ մղել Փղշտացոց դէմ, Սամուէլն ասաց նրան, որ ինքը կըգայ եւ զոհ կըմատուցանէ։ Բայց Սաւուղը չսպասեց մարգարէի գալըստեանը եւ առանց քահանայի իր ձեռքով զոհեց։ Թագաւորներն այդ իրաւունքը չունէին. Աստուծուն զոհ մատուցանում էին միայն քահանայապետները, քահանաները եւ մարգարէները։ Սաւուղը օրէնքի ձեւական կողմը ներքին խորհրդից բարձր դասեց։ Սամուէլն եկաւ եւ ասաց նրան. «Դու վատ վարուեցար եւ արհամարհեցիր Աստուծոյ պատուէրը. այժմ քո թագաւորութիւնն էլ հաստատ չի մնալ»։

Միքանի ժամանակից յետոյ Աստուած հրամայեց Սա-

ւուղին պատերազմել եւ կոտորել Ամաղեկացոց, առանց խնայելու մարդկանց ու կենդանիներին, Սաւուղը մասամբ միայն կատարեց Աստուծու հրամանը։ Նա Ամաղեկացոց Ագագ թագաւորին խնայեց եւ կենդանիներից էլ ընտիրները պահպանեց, պատրուակելով, իբր թէ Աստուծուն զոհելու համար է պահում։

Սամուէլն եկաւ նրա մօտ եւ ասաց. «Հնազանդութիւնը զոհից բարձր է, իսկ անհնազանդութիւնն այնպիսի յանցանք է, ինչպէս կախարդութիւնը, իսկ Աստուծոյ կամքին հակառակիլը նոյն է թէ կռապաշտութիւն։ Եւ որովհետեւ դու մերժեցիր Աստուծոյ խօսքը, ապա եւ Աստուած մերժում է քեզ»։ Այս խօսքերից յետոյ նա կամենում էր հեռանալ, բայց Սաւուղն այնպէս պինդ բռնեց նրա փեշից, որ փեշը պատռուեցաւ։ Սամուէլն ասաց. «Այսպէս պատռում է Տէրը եւ քո թագաւորութիւնը, որ տայ քո մերձաւորին, որը քեզանից լաւ է»։ Սաւուղը խնդրեց. «Ես մեղանչեցի, բայց խնդրում եմ ինձ մի՛ անպատուիր ծերերի եւ ժողովրդի առաջ. վերադարձի՛ր ինձ հետ, ես կ'երկրպագեմ Աստուծուն եւ կըհայցեմ Նրա գթութիւնը»։ Սամուէլը վերադարձաւ եւ Սաւուղը կատարեց երկրպագութեան ծէսն։ Յետոյ մարգարէն իր ձեռքով սպանեց Ագագ թագաւորին այն բոլոր արիւնհեղութիւնների համար, որ նա կատարել էր, եւ գնաց։ Այս ժամանակից յետոյ նա էլ չտեսնուեցաւ Սաւուղի հետ, թէեւ էլի առանձին աղօթում էր նրա համար։

54. ԴԱՒԹԻ ՕԾՈՒՄԸ ԵՒ ՓԱՌԱՒՈՐՈՒԻԼԸ.

Սամուէլ մարգարէն Աստուծոյ հրամանով գնաց Բեթղեհէմ քաղաքը եւ այնտեղ հանդիսաւոր կերպով զոհ մատուց Աստուծուն։ Ապա մտաւ Յեսէի տուն եւ Նրա կըրտ-

սեր որդուն՝ Դաւթին, իւղով օծեց (Դաւիթը Բոոսի եւ Հռութի թոռն էր) հօր եւ միւս եղբայրների ներկայութեամբ։ Մարգարէն ոչ ոքի չ'ասաց, թէ Աստուած նրան է ընտրում Իսրայէլի թագաւոր։ Այդ օրից Աստուծոյ հոգին իջաւ Դաւթի վրայ, իսկ Սաւուղից հեռացաւ։ Չար ոգին սկսեց տանջել Սաւուղին։ Վիշտը ճնշում էր նրան։ Թագաւորի մերձաւորներից մինը խորհուրդ տուեց նրան, որ քնարերգուներ հրաւիրէ, որոնց ներդաշնակութեան ներքոյ նա կարող է հոգեկան հանգստութիւն գտնել։ Սաւուղը հրամայեց լաւ ածող ճարել։ Նրա ծառաներից մինն ասաց. «Յեսէին մի Դաւիթ անունով որդի ունի, նա լաւ քնարերգու, քաջ, բարետեսիլ, վայելչախօս եւ Աստուածասէր մարդ է»։ Սաւուղը կանչել տուեց նրան եւ իրան զինակիր նշանակեց։ Դաւիթը բնակուեցաւ թագաւորական պալատում։ Երբոր վիշտն սկսում էր ճնշել թագաւորին, Դաւիթը քնար էր ածում եւ նրա հետ երգում էր իր սաղմոսները։ Սաւուղն սփոփւում էր, չար ոգին հեռանում էր նրանից։ Սաւուղը Դաւթին շատ էր սիրում։

Այդ միջոցում մի անցք պատահեցաւ, որ Դաւթին թագաւորութեան առաջին մարդը դարձրեց։ Սաւուղը Փղշտացոց դէմ պատերազմելու գնաց։ Դաւիթը վերադարձաւ իր հօր տունը։ Երբոր երկու կողմերի զօրքերը հանդիպեցան իրար, Փղշտացոց բանակից դուրս եկաւ մի հսկայ, Գողեաթ անունով։ Նրա հասակի բարձրութիւնը վեց կանգուն ու մի թիզ էր, իսկ զրահների ծանրութիւնը չորս փութ, 37 գրուանքայ, նրա տէգը 24 գրուանքայ ծանրութիւն ունէր։ Բոլոր մարմինը երկաթէ զրահներով էր ծածկած։ Գողեաթը յառաջ եկաւ եւ ասաց Հրէաներին. «Ինչի՞ էք դուք բոլորդ պատերազմելու դուրս գալիս. ահա ես մի Փղշտացի եմ, իսկ դուք Սաւուղի ծառաներն էք. ընտրեցէք ձեր միջից մի մարդ, որ ինձ հետ մենամարտէ, եւ ով որ մեզանից յաղ-

թուի, նրա կողմը թող յաղթողին գերի լինի։ Հրէաները սարսափեցան։ Թագաւորը մեծ դժուարութեան մէջ էր. չ'նայելով, որ նա մեծամեծ պարգեւներ խոստացաւ Գողեաթի հետ պատերազմել ցանկացողին, եւ յայտնեց թէ իր դուստրը նրան կնութեան կտայ եւ նրա հօր տունը հարկերից կ'ազատէ, բայց ցանկութիւն յայտնող չեղաւ։ Գողեաթն ամեն օր դուրս էր գալիս Իսրայէլացոց բանակի առաջը եւ ծաղրում էր նրանց։

Այդ միջոցին Յեսէն իր Դաւիթ որդուն ուղարկեց բանակը, որ լուր բերէ իր աւագ եղբայրներից։ Նա որդիների համար տասը հաց ուղարկեց. իսկ բանակի հազարապետի համար տասը գլուխ նոր պանիր։ Դաւիթը հասաւ բանակը եւ լսեց թէ ինչպէս Գողեաթը ծաղրում է Իսրայէլացոց։ Նա սաստիկ վշտացաւ եւ վճռեց դուրս գալ նրա դէմ մենամարտելու։ Պատանին իր յոյսը Աստուծոյ վրայ դրած լինելով, մերժեց բոլոր զրահները, որ առաջարկեցին իրան, եւ առանց զէնքի դուրս եկաւ ամբարտաւան Փղշտացու դէմ։ Նա վերցրել էր միայն իր հովուական պարսուտը։ Գողեաթը ժպտաց, երբ տեսաւ պատանուն, բայց Դաւիթը երկար մտածելու ժամանակ չ'տուեց հսկային եւ իր պարսաքարը ճիշդ նրա ճակատին ուղղեց։ Յաջողակ հարուածից վայր ընկաւ հսկան։ Դաւիթը վրայ վազեց եւ հանելով հսկայի թուրը, կտրեց նրա գլուխը։ Փղշտացիք սարսափած յետ փախան. իսկ Իսրայէլացիք հալածեցին նրանց։ Դաւթի անունը հռչակուեցաւ բոլոր ցեղերի մէջ. պատերազմից յետ դառնալու ժամանակ ժողովուրդը մեծ հանդէսով նրանց առաջն էր դուրս գալիս եւ Իսրայէլի աղջիկները գովասանական երգեր էին երգում Սաւուղի եւ մանաւանդ Դաւթի համար։

55. ՍԱՒՈՒՂԻ ՀԱԼԱԾԱՆՔԸ ԴԱՒԹԻ ԴԷՄ.

Սաւուղը, իր խոստման համաձայն, իր դուստրը Դաւթին կնութեան տուեց, բայց տեսնելով, որ նրա պատիւն օրէ ցօր աւելանում է ժողովրդի մէջ, սկսեց նախանձիլ, կասկածանքով նայել նրան եւ մինչեւ անգամ յայտնապէս թշնամանել: Նախանձն այն աստիճանի կուրացրեց թագաւորին, որ մինչեւ անգամ փորձ փորձեց սպանել նրան: Մի անգամ Դաւիթը քնար էր ածում թագաւորի համար, Սաւուղը վեր առաւ տէգը եւ գցեց նրա վրայ: Դաւիթը ծռուելով ազատուեցաւ հարուածից: Այս փորձը Սաւուղն երկրորդ անգամ կրկնեց, բայց դարձեալ անյաջող անցաւ: Թագաւորը դժուարին յանձնարարութիւն արեց նրան, այն է ուղարկեց Փղշտացոց դէմ: Բայց Դաւիթն այդտեղ էլ յաղթող գտնուեցաւ: Աստուած միշտ պաշտպանում էր իր ծառային: Սկզբումը Դաւիթը կարծում էր, թէ թագաւորն ակամայ է այդպէս վարւում, թէ հիւանդութիւնից դրդուած, նա անգիտակցաբար թշնամութիւն է անում իրան: Բայց վերջը համոզուեցաւ, որ թագաւորը մտքումը դրել է անպատճառ սպանել իրան: Մի անգամ Սաւուղն աշկարայ ասաց իր որդի Յովնաթանին. «Քանի որ Յեսէի որդին կենդանի է, դու եւ քո թագաւորութիւնդ հաստատ չէք կարող համարուիլ»: Այս ասելուց յետոյ թագաւորը հրամայեց իր թիկնապահներին, որ սպանեն նրան: Յովնաթանը, որ Դաւթի մտերիմ բարեկամն էր, սկսեց պաշտպանել նրան: Հայրը զայրացաւ եւ իր նետը գցեց նրա վրայ, բայց չդիպաւ: Յովնաթանը համոզուեցաւ, որ հայրն ատում է Դաւթին եւ վաղ թէ ուշ պիտի սպանել տայ նրան: Նա այս բոլորը պատմեց իր բարեկամին: Դաւիթը փախաւ: Ճանապարհին նա քահանայապետից ստացաւ առաջաւորաց հացերն (որովհետեւ հաց

չ'ունէր) ու Գողեաթի սուրը, եւ գնաց թաքկացաւ սարերում: Նրա մօտ ժողովուեցան չորս հարիւրի չափ վշտացած, ճնշուած եւ պարտքերից փախած մարդիկ: Թագաւորը զօրք վեր առաւ եւ գնաց նրան բռնելու, բայց քիչ մնաց ինքը նրա ձեռքն ընկնէր: Դաւիթը երկու անգամ առիթ ունեցաւ նրան սպանելու, բայց չ'կամեցաւ ձեռք բարձրացնել նրա դէմ: Մի անգամ Սաւուղն անգիտութեամբ ներս մտաւ այն այրը, ուր պատսպարուած էր Դաւիթը: Այրը մութն էր: Դաւիթը կամացուկ կտրեց նրա զգեստի փէշը, եւ երբոր Սաւուղը դուրս եկաւ այրից եւ փոքր ինչ հեռացաւ, գոչեց յետեւից. «Տէր իմ թագաւոր, ինչի՞ ես լսում այն մարդիկներին, որոնք հաւատացնում են, թէ Դաւիթը քո վատն է կամենում: Նայիր, հա՛յր, ահա իմ ձեռքիս է քո զգեստիդ փէշը. ես կտրեցի նրան, իսկ քեզ չ'սպանեցի: Ես մտածեցի՝ ձեռք չեմ բարձրացնիլ իմ տիրոջ դէմ, որովհետեւ նա Աստուծոյ օծեալն է»: Սաւուղն զգաց, որ իր կասկածները զուր են: «Դու ճշմարիտ ես քան թէ ես, ասաց նա: Թող Աստուած արդարութեամբ վարձատրէ քեզ այն բանի համար. ինչ-որ ինձ արեցիր: Այժմ ես համոզուեցայ, որ դու անշուշտ պիտի թագաւորես: Երդուիր, որ չես ջնջիլ իմ սերունդը»: Դաւիթը երդուեց: Սաւուղը վերադարձաւ տուն:

Սաւուղի հանդարտութիւնը շատ չ'տեւեց. Նա մոռացաւ իր զղջումը, նորից զօրք վեր առաւ եւ գնաց Դաւթի դէմ:
Սաւուղը բանակ դրեց սարերի մէջ: Գիշեր ժամանակ Դա-
ւիթը ծածուկ մօտեցաւ թագաւորական վրանին, ներս մտաւ
եւ վերցրեց նրա տէգը եւ ջրով լիքը ամանն ու դուրս գը-
նաց: Բարձրանալով դիմացի բլուրը, Դաւիթը բացականչեց.
«Է՛յ Սաւուղի զինուորներ, դուք մահի արժանի էք, որով-
հետեւ լաւ չէք պաշտպանում ձեր օծեալ տիրոջը: Տեսէ՛ք,
թէ ո՞ւր է թագաւորի տէգը եւ ջրի ամանը, որ նրա գլխա-

վերեւն էր գրած»։ Այս ձայնի վրայ Սաւուղն արթնացաւ, ճանաչեց, որ Դաւիթն է խօսողը, տեսաւ իր տէգը նրա ձեռքին եւ զղջաց, որ ինքն այդպէս անիրաւ էր վարվում։ Թագաւորը որդի անուանեց նրան, խնդրեց, որ իր մօտ գայ եւ խոստացաւ, որ ոչինչ վնաս չի հասցնիլ նրան։ Բայց Դաւիթն ասաց. «Թող Աստուած ամէն մէկին մեր ճշմարտութեան համեմատ վարձատրէ։ Ինչպէս որ այսօր թանգ էր քո կեանքը իմ աչքի առաջ, այնպէս թող գին ունենայ եւ իմ կեանքը Աստուծոյ առաջ, եւ թող Նա ազատէ ինձ ամէն փորձութիւնից»։ Նրանք բաժանուեցան։ Սաւուղը վերադարձաւ տուն, իսկ Դաւիթը գնաց Փղշտացոց թագաւորի մօտ։ Թագաւորը սիրով ընդունեց նրան եւ նրա բնակութեան համար յատկացրեց Սեկելակ քաղաքը։

56. ՍԱՒՈՒՂԻ ՄԱՀԸ.

Փղշտացիք մեծ զօրք ժողովեցին եւ գնացին Իսրայէլացոց դէմ։ Սաւուղն էլ նրանց հանդէպ դուրս եկաւ. Թըշնամի բանակները Գեղգեղայ սարերի վրայ մօտեցան իրար։ Սարսափելի վիշտը ճնշում էր Սաւուղի սիրտը։ Աստուծոյ ձեռքը ծանրացել էր նրա վրայ։ Նա մեծ անբախտութիւն էր նախազգում եւ ցանկանում էր որպէս եւ իցէ իմանալ ապագան։ Այդ միջոցին Այինդովր քաղաքում մի վհուկ կին էր ապրում։ Իր վհկութեամբ նա խաբում էր պարզամիտ ժողովրդին եւ թերահաւատ մարդիկ հաւատում էին նրան։ Նա պնդում էր, թէ կարող է մեռած մարդկանց ուրուականները դուրս կանչել։ Սաւուղը գնաց այդ կնոջ մօտ եւ խնդրեց դուրս կանչել Սամուէլին, որ այդ մօտիկ ժամանակներում վախճանուել էր։ Վհուկը համաձայնեցաւ եւ սկսեց հմայել։ Նա գիտէր, որ ինքը խաբում է դիւրահաւատ մարդ-

կանց եւ համոզուած էր, որ ոչ ոք չի երեւալ։ Բայց որքան զարմացաւ նա, երբ տեսաւ, որ մէկը դուրս է ելնում երկրի խորքից. երկիւղից աղաղակ բարձրացրեց նա։ Թագաւորը հարցրեց. «Ի՞նչ ես տեսնում, ասա»։ —Կ՚ասես թէ նոյն իսկ Աստուածուն եմ տեսնում, որ ելնում է երկրի միջից, պատասխանեց կինը։ Սաւուղը նորից հարցրեց։ «Ո՞րպիսի կերպարանք ունի»։ Կինը պատասխանեց. «Դուրս է գալիս երկրից մի պատկառելի ծերունի, երկար զգեստը հագին»։ Սաւուղը ճանաչեց, որ դա Սամուէլն է եւ երկրպագեց նրան մինչեւ գետին։ Այն ժամանակ ուրուականը հարցրեց Սաւուղին. «Ինչ բանի համար ես ինձ անհանգիստ անում»։ Սաւուղը պատասխանեց. «Ծանր է իմ դրութիւնը, Փղշտացիք պատերազմում են իմ դէմ, իսկ Աստուած թողել է ինձ եւ պատասխան չէ տալիս ոչ մարգարէների միջնորդութեամբ եւ ոչ երազիս մէջ։ Դրա համար էլ կանչեցի քեզ, որ հասկացնես թէ ինչ պիտի անեմ»։ —Ինչի՞ ես ինձ հարցնում, երբ գիտես, թէ Աստուած թողել է քեզ. Նա կըխլէ քո թագաւորութիւնը եւ Դաւթին կըտայ։ Վաղը դու եւ քո որդիքդ ինձ հետ կըլինիք, իսկ Իսրայէլացոց բանակը Փղշտացոց ձեռքը կըմատնուի։ Այս խօսքերը սարսափեցրին Սաւուղին, նա ուշաթափ ընկաւ գետին։ Միւս օրը ճակատամարտը տեղի ունեցաւ, որի ելքը շատ անյաջող եղաւ Իսրայէլացոց համար։ Սաւուղի երեք որդիքը կռուի մէջ վախճանուեցան, իսկ ինքը սաստիկ վիրաւորուած չ՚կամեցաւ կենդանոյն թըշնամու ձեռքը ընկնել եւ ինքն իրան սպանեց։

Մի Ամաղեկացի Սաւուղի թագը տարաւ Դաւթին եւ ասաց, թէ թագաւորի խնդրանքով ինքն սպանեց նրան։ Դաւիթը սաստիկ վշտացաւ եւ հրամայեց գլխատել գուժաբերին, որպէս արքայասպանի։ Նա դառնապէս արտասուեցաւ Սաւուղի, մանաւանդ իր մտերիմ բարեկամ Յովնաթանի վրայ։

57. ԴԱՒԹԻ ԹԱԳԱՒՈՐԻԼԸ.

Սաւուղի մահուան լուրն առնելուց յետոյ՝ Դաւիթն Աստուծոյ հրամանով վերադարձաւ Յուդայի Քեբրոն քաղաքը։ Յուդայի ցեղն իսկոյն նրան թագաւոր ճանաչեց իր վրայ. իսկ մնացած ցեղերի վրայ թագաւորեց Սաւուղի հիւանդոտ եւ թուլասիրտ որդին՝ Յեբուսթէ անունով։ Այսպիսով Հրէից թագաւորութիւնը երկուսի բաժանուեցաւ։ Բայց այս բաժանումը երկար չ'տեւեց, եօթը տարուց յետոյ Յեբուսթէն սպանուեցաւ եւ բոլոր ցեղերը Դաւթին թագաւոր ընդունեցին։ Աստուած յայտնապէս օգնում էր նրան իր բոլոր ձեռնարկութիւնների մէջ։ Դաւիթը նուաճեց համարեա բոլոր դրացի ազգերին։ Նա իր ձեռքի տակը գցեց՝ Մովաբացոց, Եդովմացոց, Ասորոց, Ասորեստանցոց, Ամմոնացոց, եւ խլեց միքանի քաղաքներ Փղշտացիներից։ Այսպիսով Դաւթի օրերով Եբրայեցոց թագաւորութիւնը ընդարձակ էր եւ ուժեղ։ Նա տարածւում էր Միջերկրական ծովից մինչեւ Եփրատ գետը, Դամասկոսից մինչեւ Եգիպտոս։

Հրէից ամեն մի ցեղը ցանկանում էր, որ թագաւորն իր քաղաքում ապրի, այդ պատճառով Դաւիթն այնպիսի քաղաք ընտրեց, որ ոչ մի ցեղի չէր պատկանում։ Բենիամինի եւ Յուդայի ցեղերի մէջ բնակւում էր, մինչեւ Դաւթի օրերը, մի Քանանացի ցեղ, Յեբուսացիք, որոնք ամրանալով դժուարամերձ Սիոն սարի վրայ, կարողացել էին իրանց անկախութիւնը պահպանել մինչեւ այդ օրերը։ Այդ սարի վրայ շինած էր նրանց ամուր բերդաքաղաքը՝ Երուսաղէմ։ Դաւիթն առաջինն էր, որ նուաճեց այդ քաղաքը, աւելի եւս ամրացրեց Սիոն լեառը, հոյակապ պալատ կանգնեց նրա վրայ, շինեց հարուստ խորան, Ուխտի Տապանակը փոխադրեց այնտեղ (Կարիաթարիմ քաղաքից) եւ դրան իւր արքայանիստ քաղաք անուանեց։

Երեսուն հազար ընտիր զօրք վեր առաւ Դաւիթը եւ ուղեւորուեցաւ Կարիաթարիմ։ Այնտեղից Տապանակը նոր սայլի վրայ դրած բերում էին Երուսաղէմ։ Իսրայէլացիք Դաւթի առաջնորդութեամբ հանդէսով ընթանում էին Տապանակի առաջից. պարելով, երգելով եւ թմբկահարութեամբ։ Տապանակի մօտից գնում էր Ոզայ անունով մի Իսրայէլացի։ Ճանապարհին մի կալի մօտից անցնելիս, եզները սայլը ծռեցին. Ոզանը վստահացաւ բռնել, բայց հէնց ձեռքը դիպցրեց թէ չէ, վայր ընկաւ մահացած։ Այս պատահարը Դաւթին սաստիկ վախեցրեց։ «Ի՛նչպէս Տապանակն իմ քաղաքը մտցնեմ», մտածում էր նա։ Թագաւորն առ ժամանակ թողեց Տապանակը ճանապարհին մի տան մէջ։ Միքանի ժամանակից յետոյ Դաւիթը կանչեց քահանայապետին եւ քահանաներին ու ասաց նրանց. «Ո՛չ ոք չէ կարող բերել Տապանակը, բացի Ղեւտացիներից։ Դուք պէտք է գնաք եւ բերէք նրան այնտեղ, ուր ես պատրաստել եմ»։ Նորից գնացին Տապանակը բերելու։ Այս անգամ քահանաներն ուսների վրայ դրին նրան, ինչպէս պատուիրած էր օրէնքի մէջ։ Մնացած Ղեւտացիք գնում էին նրա առաջ սաղմոսերգութեամբ եւ զանազան նուագների վրայ ածելով։ Ինքը թագաւորն էլ՝ բեհեզեայ զգեստը հագած, պարելով եւ ուրախ ուրախ գնում էր նրա առաջից։ Տապանակի առաջ զոհեր էին մատուցանում թէ ճանապարհին եւ թէ խորանի մէջ դնելու ժամանակ։ Դաւթի Մելքոլայ անունով կինը, որ Սաւուղի դուստրն էր, լուսամուտից նայում էր այդ հանդէսին եւ տեսնելով, որ թագաւորը պարում է որպէս մի հասարակ մարդ, իր սրտում արհամարհում էր նրան։ Երբոր Դաւիթը տուն դարձաւ, Մելքողան յայտնեց նրան իր քամահարանքը։ Դաւիթը պատասխանեց. «Աստուծոյ առաջ, որ ինձ այս ժողովրդի առաջնորդ կարգեց, կխաղամ, կպարեմ եւ աւելի եւս կընուաստանամ ու կ'ստորանամ»։ Աստուած այս յան-

դիմանութեան համար պատժեց Մելքողային եւ նա զաւակ չունեցաւ:

Դաւիթ Թագաւորը՝ իր բոլոր փառքի եւ բախտաւորութեան մէջ եւս սաստիկ անհանգիստ էր լինում, որ Աստուծոյ Տապանակը վայելուչ խորանի մէջ չէ դրած: Նա կամենում էր փառահեղ տաճար կառուցանել դրա համար: Իր մտադրութիւնը յայտնեց Նաթան մարգարէին: Մարգարէն առաջին անգամ պատասխանեց, թէ արա, ինչ-որ սիրտդ ուզում է, բայց նոյն գիշերն Աստուծուց հրաման ստացաւ, թէ. «Գնա, ասա իմ Դաւիթ ծառայիս, որ նա չ'պէտք է շինէ Ինձ համար տաճար, որովհետեւ շատ արիւն է թափել եւ շատ պատերազմներ մղել: Ահա նա կ'ունենայ որդի, որ խաղաղ մարդ կըլինի. Ես նրան անդորրութիւն կըտամ իր բոլոր թշնամիներից: Նա կըշինէ տաճար Ինձ համար եւ Ես կըհաստատեմ նրա թագաւորութեան աթոռը Իսրայէլի վրայ յաւիտեան: Ես նրան Հայր կըլինիմ, իսկ նա Ինձ որդի եւ Իմ ողորմութիւնն անպակաս կըլինի նրանից»:

58. ԴԱՒԹԻ ՄԵՂԱՆՉՈՒՄՆ.

Ամմոնացոց հետ պատերազմ ունեցած ժամանակ՝ Դաւիթը մնաց Երուսաղէմումը: Մի անգամ նա զբօսնում էր իր տան տանիքի վրայ, դիմացի տան բակումը նա տեսաւ մի գեղեցիկ կին, որի անունը Բերսաբէ էր: Թագաւորը կամեցաւ կին առնել նրան: Բերսաբէն արդէն ամուսնացած էր մի Ուրիա անունով հրէայի հետ, որ ծառայում էր Ամմոնացոց դէմ ուղարկած զօրաբաժնի մէջ: Թագաւորը մի չար միտք յղացաւ. նա կամեցաւ մեռցնել Ուրիային, որպէսզի կարողանայ նրա կնոջ վրայ ամուսնանալ: Դաւիթը չ'կարողացաւ խեղդել այս անտեղի եւ դատապարտելի ձգտումը եւ

իր զօրավարին հրաման գրեց, որ Ուրիային ամենադժուարին յանձնարարութիւններ անէ պատերազմի ժամանակ, որպէսզի նա մեռնի: Թագաւորի ցանկութիւնը կատարուեցաւ: Բերսաբէն այրիացաւ եւ Թագաւորը կին առաւ նրան:

Դաւիթը մեծ յանցանք գործեց, թէեւ ինքը չէր զգում այդ: Այդ ժամանակ Աստուծոյ հրամանով նրա մօտ եկաւ Նաթան մարգարէն եւ այսպէս սկսեց խօսել. «Երկու մարդ բնակւում էին մի քաղաքում՝ մինը հարուստ էր, միւսն աղքատ: Հարուստը շատ տաւար եւ ոչխար ունէր, իսկ աղքատն ունէր մի հատիկ որոջ, որը փոքրուց գնել եւ մեծ խնամքով մեծացրել էր իր զաւակների հետ. նա ուտում, խմում եւ ննջում էր իր տիրոջ հետ եւ զաւակի պէս էր նրա համար: Բայց մի օր հարուստի մօտ մի ուղեւոր եկաւ: Նրան հիւրասիրելու համար մեծատունը խնայեց իր բազմաթիւ ոչխարները, վեր առաւ խեղճ աղքատի միակ որոջը եւ մորթեց իր հիւրերի համար»: Թագաւորը զայրացած բացականչեց. «Կենդանի է Աստուած, որ այդ մարդը մահու արժանի է. իսկ մորթած ոչխարի փոխանակ կըտուժէ եօթնապատիկ»: Այն ժամանակ մարգարէն ասաց.—Այդ մարդը դու ես, թագաւոր: Այսպէս է ասում Աստուած. «Ես քեզ Իսրայէլի թագաւոր օծեցի. ուրեմն ինչո՞ւ ես արհամարհում քո Տիրոջ խօսքը. Ուրիային անողորմաբար սպանել տուիր եւ ապօրինի կերպով վեր առար նրա կինը, այդ պատճառով սուրը չի վերանալ քո տան վրայից, եւ Ես քո գերդաստանի միջից կըյարուցանեմ քեզ չարչարողներ եւ անհանգիստ անողներ»: Դաւիթը խոստովանուեցաւ, որ ինքը անչափ յանցաւոր է եւ դառն արտասուքով թողութիւն խնդրեց Աստուծուց: Նրա զղջման յիշատակն է այն սաղմոսերգութիւնը, որ սկսւում է այս խօսքերով. «Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում. . . . : (50-րդ)

59. ԴԱՒԹԻ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԵՒ ՄԱՀԸ.

Աստուծու սպառնալիքները կատարուեցան. իբրեւ հետեւանք իր մեղքերի, Նրա ընտանեկան խաղաղութիւնը խանգարուեցաւ այլ եւ այլ ներքին խռովութիւններով: Բերսաբէից ծնուած երկրորդ որդին, Աբիսողոմը, կռուեց իր աւագ եղբօր հետ եւ սպանեց նրան, իսկ ինքը փախաւ Գեսուրի թագաւորի մօտ ապաստան գտնելու եւ երեք տարի մնաց այնտեղ: Վերջապէս Դաւիթը հայրաբար ներեց նրան եւ թոյլ տուեց վերադառնալ տուն: Բայց Աբիսողոմը փոխանակ զղջալու իր դատապարտելի յանցանքը, աւելի յանդուգն մտադրութիւններ յղացաւ իր մէջ. Նա մտածեց գահընկէց անել իր հօրը եւ ժառանգել նրա թագաւորութիւնը: Իր չար մտադրութիւնը յաջողակ կերպով գլուխ բերելու համար նա ամեն կերպ աշխատում էր ժողովրդի սիրտը գրաւել: Ամեն առաւօտ նա գնում կանգնում էր քաղաքի դրան առաջ եւ ամեն ներս ու դուրս անողներին գրկում, համբուրում էր, երբոր ողջունում էին իրան: Եթէ հանդիպում էին նրանց մէջ այնպիսիները, որոնք որեւէ գանգատ ունէին թագաւորի մօտ, կարեկցաբար հարց ու փորձ էր անում նրանց դատի մասին եւ յետոյ աւելացնում էր. «Տեսնում եմ, որ պահանջդ արդար է, բայց թագաւորն արժանաւոր մարդիկ չ'ունի, որ կարողանան իրաւացի դատաստան անել: Ա՜խ, եթէ ինձ դատաւոր կարգէին այս երկրի վրայ, ես անձամբ կ'ընդունէի ամեն մինին եւ արդար դատաստանով կըդատէի ամենքին. ոչինչ դժգոհութեան տեղիք չէին տալ»: Այսպիսի միջոցներով Աբիսողոմն այնքան գրաւեց դիւրահաւան ժողովրդին, որ հասաւ իր մտադրութեանը: Նրա բարութեան եւ արդարադատութեան համբաւը բոլոր թագաւորութեան մէջ տարածուեցաւ եւ շատերը ցանկացան գահը

բարձրացնել նրան: Աբիսողոմը երբ վստահացաւ թէ բազմութիւնը իր կողմն է, թոյլտւութիւն խնդրեց հօրից, որ գնայ Քեբրոն քաղաք, ասելով, թէ մտադիր է զոհ մատուցանել Աստուծուն: Նրա համակրողներն էլ այնտեղ հաւաքուեցան: Այնտեղ Աբիսողոմը Իսրայէլի թագաւոր հրատարակուեցաւ: Իր համախոհներին հաւաքած՝ Աբիսողոմը դիմեց հօր դէմ: Դաւիթն ուշ իմացաւ, որ իր որդին ապստամբել է, եւ որովհետեւ պատրաստ զօրք չ'ունէր պաշտպանուելու, ստիպուեցաւ իր ընտանիքի հետ փախչիլ Երուսաղէմից, վեց հարիւր Փղշտացի զինուորներ միայն ունենալով հետը, որոնք նոր էին նրա մօտ ծառայութեան մտել: Ժողովուրդը արտասուալից աչքերով ճանապարհ գցեց իր թագաւորին: Երբոր Դաւիթը Կեդրոնի հեղեղատն անցաւ, նրա հետ ընկերացաւ քահանայապետը, որ Ուխտի Տապանակն էլ վերցրել էր հետը: Դաւիթը աղօթեց Տապանակի առաջ եւ հրամայեց քահանայապետին, որ վերադառնայ քաղաք: Այնուհետեւ բոբիկ ոտով եւ գլուխը ծածկած բարձրացաւ Ելէօն սարը եւ սաստիկ արտասուեցաւ: Այստեղ յայտնեցին նրան, որ Աքիթոփէլն էլ անցել է Աբիսողոմի կողմը: Սա մեծ տարաբախտութիւն էր թագաւորի համար, որովհետեւ Աքիթոփէլն այնքան խելացի եւ հեռատես մարդ էր, որ նրա համար ասում էին, թէ Աքիթոփէլի խորհուրդները Աստուծոյ պատգամներ են, այսինքն ժողովուրդը կարծում էր, որ ամենադժուարին հարցերում Աքիթոփէլին խորհուրդ հարցրած թէ Աստուծուն, այդ միեւնոյն է: Դաւիթը երբոր լսեց, թէ իր առաջին խորհրդատուն եւս դաւաճանել է, բացականչեց. «Տէր, ջնջիր եւ ոչնչացրու Աքիթոփէլի խորհուրդները», եւ իսկոյն իր Քուսի անունով բարեկամին ուղարկեց, որ գնայ միանայ Աբիսողոմի հետ եւ աշխատէ ցրել եւ խանգարել Աքիթոփէլի խորհուրդների կատարումը: Բենիամինի ցեղի երկիրներին որ հասաւ, Դաւիթին պատահեց Սաւուղի ազգականներից մինը Սիմէի

անունով եւ սկսեց նախատել եւ քարեր արձակել նրա վրայ։ Թագաւորի զօրապետը կամեցաւ սպանել նրան, բայց Դաւիթն արգելեց. «Թո՛յլ տուր դրան, թո՛ղ չարաբանէ, որքան կամենում է. եթէ իմ հարազատ որդիս մահ է պատրաստում ինձ, օտար մարդուն ինչի՞ արգելենք։ Կարելի է Աստուած դրա չարաբանութեան փոխարէն ինձ բարութիւն անէ»։

Այդ միջոցին Աբիսողոմը հանդիսաւոր կերպով մտաւ Երուսաղէմ։ Քուսին դուրս եկաւ նրա առաջ եւ ասաց, թէ կամենում է ծառայել նոր թագաւորին, ինչպէս ծառայել է նրա հօրը. Աբիսողոմն ընդունեց եւ պատերազմական մեծ խորհուրդ կազմեց, որը պիտի որոշէր, թէ ինչպէս առաջ տանեն գործը։ Աքիթոփէլն առաջարկեց անյապաղ յետամուտ լինել թագաւորին եւ սպանել նրան։ Քուսին հերքում էր այդ խորհուրդը եւ առաջարկում էր հաւաքել բոլոր ժողովուրդը, մեծ զօրք կազմել եւ ապա գնալ Դաւթի դէմ, որովհետեւ նա որպէս քաջ պատերազմող եւ միեւնոյն ժամանակ զայրացած մարդ՝ կարող է ամեն ճիգ թափել եւ մինչեւ անգամ յաղթել իրանց, եթէ սակաւ մարդ զօրագունդ ուղարկուի նրա դէմ։ Քուսիի խորհուրդն ընդունուեցաւ։ Աքիթոփէլը սաստիկ վշտացաւ եւ հեռացաւ Աբիսողոմի բանակից։

Մինչ այս, մինչ այն, Դաւիթն անցկացաւ Յորդանան գետը եւ այնտեղ իրան շատ համակրող գտաւ։ Նա արդէն իր զօրագունդը բաւական ստուարացրել էր, երբ Աբիսողոմը մեծ զօրք առած անցաւ Յորդանանը եւ իր հօր վրայ դիմեց։ Սաստիկ ճակատամարտ տեղի ունեցաւ։ Աբիսողոմի զօրքը յաղթուեցաւ, իսկ ինքը ջորի հեծած սկսեց փախչել։ Փախչելու ժամանակ նրա մազերը խճճուեցան ծառերի ճիւղերի մէջ, ջորին տակից դուրս փախաւ, իսկ ինքը կախուած մնաց ծառից։ Վրայ հասան Դաւթի զինուորները եւ նրան սպանեցին։ Գորովագութ հայրն ամենեւին չ'ուրախացաւ, երբ որդու մահուան լուրը բերին իրան. նա սկսեց արտասուել

եւ սուգ անել դառնապէս։ Աբիսողոմի մահից յետոյ ապստամբութիւնը շուտով դադարեցաւ։

Բայց սրանով չ'վերջացան Դաւթի տառապանքները։ Մի անգամ նա հակառակ օրէնքի հրամայեց իր Յովաբ զօրավարին, որ աշխարհագիր անէ բոլոր ժողովուրդը (ընդհանուր ժողովրդագրութիւն). բայց այդ իրաւունքը, Մովսիսական օրէնքով, միայն Ղեւտացոց էր պատկանում։ (Թուոց էջ 4)։ Յովաբը խորհուրդ տուեց թագաւորին, որ այդ բանը չ'անէ. թագաւորը ուշադրութիւն չ'դարձրեց։ Ինն ամսից յետոյ ժողովրդագրութեան ցուցակը թագաւորին տուեցին։ Այդ ցուցակից երեւեցաւ, որ բոլոր Հրէաները, որոնք ընդունակ էին զէնք կրելու, թուով 1,300,000 են։ Այս հաշուի մէջ չէին մտել դեռեւս Բենեամինի եւ Ղեւիի ցեղերը։ Այն րոպէին թնդաց թագաւորի սիրտը, երբ հաշուեց ժողովուրդը, եւ մի ներքին ձայն ասաց նրան, թէ օրինազանց է գտնուած*)։ Միւս օրը եկաւ նրա մօտ մարգարէն եւ Աստուծոյ անունից յայտնեց. «Երեք պատիժ եմ առաջարկում քեզ. ընտրիր որը կամենաս—եօթնամեայ սով, երեքամսեայ շարունակ հալածանք թշնամիներից եւ երեքօրեայ ժանտախտ»։ Դաւիթը պատասխանեց. «Ինձ համար շատ ծանր է ընտրելը, բայց թէ լաւ եմ համարում Աստուծոյ ձեռքը մտնուել, որովհետեւ մեծ է Նրա գթութիւնը, միայն թէ մարդկանց ձեռքը չ'մտնուիմ»։ Դաւիթն ընտրեց ժանտախտը։ Նոյն առաւօտն սկսուեցաւ ժանտախտը եւ մինչեւ կէսօր 70,000 մարդ կոտորուեց։ Կէսօրին Դաւիթը տեսաւ Աստուծոյ հրեշ-

*) Նրա ժողովուրդն էլ, այս ապօրինի ժողովրդագրութեան ժամանակ, չ'կատարեց օրէնքի այն կէտը, որ հրամայում էր. «Եթէ առնիցես զհամար որդոցն Իսրայէլի ի հանդէսի իւրեանց, և տացեն իւրաքանչիւր փրկանս ընդ անձին իւրոյ Տեառն, ըստ հանդիսին իւրեանց, մի՛ լինիցի մահ ի հանդիսի անդ իւրեանց. (Ելից. Լ. 12)

տակը, որ սուրը ձեռին կտորում էր ժողովրդին. այդ միջոցին Նա կանգնել էր Յեբուսացի Ոռնայի կալի վրայ եւ սրի բերանը դարձրել էր դէպի Երուսաղէմ: Դաւիթը ջերմագին աղօթքով դարձաւ դէպի Աստուած. «Տէր, ես հովիւս յանցանք գործեցի, ի՞նչ են արել այդ անմեղ ոչխարները: Դարձրու Քո ձեռը դէպի ինձ եւ դէպի իմ հօր տունը, բայց այդ անմեղներին խնայիր»: Աստուած լսեց Նրա աղօթքը. ժանտախտը դադարեցաւ: Գադ մարգարէի խորհրդով Դաւիթը գնեց Ոռնայի կալը, սեղան կանգնեցրեց եւ ողջակէզ արաւ Աստուծուն:

Դաւիթ թագաւորն ապրեց մինչեւ խորին ծերութիւն: Դեռ իր կենդանութեան ժամանակ նա իր որդի Սողոմոնին թագաւորեցրեց եւ կտակ աւանդեց նրան ամենափառաւոր տաճար կանգնեցնել Աստուծոյ անուանը, որի համար ինքը հաւաքել էր շատ ոսկի, արծաթ, պղինձ, փայտ եւ պատրաստել էր տուել բոլոր նկարները: Այնուհետեւ ծերունի հայրը խրատեց իր որդուն եւ յորդորեց գնալ առաքինութեան եւ ճշմարտութեան ճանապարհով եւ պինդ պահպանել Տիրոջ պատուիրանները: Դաւիթը մեռաւ քառասուն տարի թագաւորելուց յետոյ: Դաւիթը միայն թագաւոր չէր, Աստուած նրան մարգարէական ձիրք էլ էր տուել: Նա թողեց բազմաթիւ սաղմոսերգութիւններ, որոնցից շատերի մէջ բացատրում էր իր հաւատը դէպի Աստուած եւ որոշ ակնարկութիւններ էր անում Փրկչի ծննդեան եւ մարդկային ազգի փրկութեան վերաբերմամբ:

60. ՍՈՂՈՄՈՆԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

Դաւթից յետոյ թագաւորեց Նրա որդի Սողոմոնը: Թագաւորելուն պէս նա պարտք համարեց դիմել Աստուծոյ օգնութեանը: Հօր մահից յետոյ իսկոյն գնաց Գաբաւոն, ուր գտնվում էր Մովսէսի ձեռքով շինած Վկայութեան խորանը եւ այնտեղ աղօթեց: «Տէր Աստուած իմ, ասաց Նա. Դու ինձ բազմաթիւ ազգի թագաւոր կարգեցիր, շնորհիր Քո ծառային խելացի միտք եւ իմաստութիւն, որ կարողանամ արդարութեամբ դատել Քո ժողովուրդը եւ ճանաչել չարն ու բարին»: Տէրը տեսիլքի մէջ այսպէս պատասխանեց Սողոմոնի խնդրանքին. «Որովհետեւ դու չ'խնդրեցիր քեզ համար ոչ երկար կեանք, ոչ հարստութիւն եւ ոչ թշնամիներիդ կորուստը, այլ միայն իմաստութիւն խնդրեցիր, որպէսզի կարողանաս արդարութեամբ դատել եւ կառավարել իմ ժողովուրդը, Ես ահա տալիս եմ քեզ ոչ միայն խելացի միտք և իմաստութիւն, այլ եւ փառք ու հարստութիւն, այնպէս որ բոլոր թագաւորութեանդ միջոցին չի լինիլ նմանը միւս թագաւորների մէջ: Եւ եթէ դու այնպէս կը պահպանես Իմ հրամանները, ինչպէս կատարում էր քո հայրը, ապա Ես կ'երկարացնեմ եւ քո կեանքի օրերը»:

Շուտով մի դիպուած եղաւ, որ առաջին անգամ ցոյց տուեց երիտասարդ թագաւորի իմաստութիւնը: Նրա մօտ բերեցին երկու կին: Կանանցից մինը գրկումը մի մանուկ ունէր. միւսը գանգատվում եւ ասում էր. «Տէր արքայ, ես եւ այս կինը ապրում էինք մի տան մէջ. Նոյն տանը բացի մեզանից ուրիշ ոչ ոք չ'կար: Միեւնոյն ժամանակում մենք երկուսս էլ մի մի մանուկ ունեցանք: Անցեալ գիշեր, քնած ժամանակ, սա տակովն էր արել իր զաւակը եւ սպանել, ես էլ քնած լինելով, դրել էր իր դիակացած մանուկը

իմ անկողնում, իսկ իմ կենդանի զաւակս վերցրել: Առաւօտն ես վերկացայ, որ կերակրեմ որդուս եւ տեսայ, որ մեռած է, բայց երբոր լաւ նայեցի, ճանաչեցի, որ նա իմս չէ»: Իսկ միւս կինը, որ կենդանի որդին գրկումն ունէր, ասում էր. «Ո՛չ, այս կենդանին իմ որդին է, մեռածն է քոնը»: Շատ դժուար էր ճշմարտութիւնը գտնել: Բայց Սողոմոնը գիտէր, որ մայրն աւելի կըցաւի իր որդու վրայ քան օտարը, եւ այս պատճառով հրամայեց դահճապետին. «Մէջից ճեղքիր այդ կենդանի մանուկը եւ ամեն մինին տուր դրա կէսը»: Այս հրամանը տալուն պէս դահիճը մերկացրեց սուրը եւ կամենում էր երկճեղքել մանուկը: Այդ րոպէին գանգատուող կինը բացականչեց. «Տուէք նրան այդ մանուկը կենդանոյն, թող նրանը լինի, միայն թէ չսպանուի իմ զաւակս»: Իսկ միւս կինն ասում էր. «Ո՛չ, թող կիսեն, որպէսզի ոչ ինձ մնայ, ոչ քեզ»: Սողոմոնն իսկոյն ճանաչեց, թէ ո՛րն է ճշմարիտ մայրը եւ հրամայեց, որ նրան տան մանուկը: Սողոմոնի իմաստութիւնն ապշեցրեց ամենքին:

61. ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕԾՈՒՄԸ.

Սողոմոնը կատարեց այն գործը, որ աւանդել էր իր հայրը: Նա շինեց փառաւոր տաճար Աստուծոյ՝ Երուսաղէմի մէջ, Սիօն սարի արեւելեան կողմում, Ոռնիայ Եբուսացու կալի տեղը: Սողոմոնեան տաճարը շինուեցաւ նոյն ձեւով, ինչպէս էր Մովսէսի վկայութեան խորանը, միայն այն զանազանութեամբ, որ սա չափազանց ընդարձակ էր եւ ճոխ: Թէ որքան փառաւոր էր այդ սաճարը՝ երեւում է նրանից, որ նրա բոլոր պատերը ներսի կողմից, բոլոր զոհարանները, սեղանները, քերոբէները մաքուր ոսկէ թիթեղով էին պատած, իսկ զուտ ոսկուց շինած էին ջահերը, բուրվառները, ունելիները եւ բոլոր գաւաթներն ու անօթները:

Նրա շինութեան վրայ բանում էին 180,000 մարդ, մշակութեան վրայ հսկում էին 3,300 մարդ: Երբոր տաճարի շինութիւնը վերջացաւ եւ Ուխտի Տապանակը ներս բերին նրա մէջ, Աստուծոյ փառքը ամպի ձեւով լցրեց տաճարը: Սողոմոնը չոքեց զոհարանի առաջ, ձեռքերը դէպի երկինք բարձրացրեց եւ աղօթեց, որ Աստուած այս տաճարի մէջ ո՛չ միայն Իսրայէլացոց աղօթքն ընդունէ, այլ եւ այն կռապաշտների, որոնք լսելով նրա փառքի համբաւը, կըգան աղօթելու նրա մէջ: Երբոր Սողոմոնը վերջացրեց իր աղօթքը, երկնքից կրակ իջաւ եւ կիզեց բոլոր զոհերը: Հետեւեալ գիշերն Աստուած երեւեցաւ Սողոմոնին եւ ասաց, որ նա այդ տաճարի մէջ կ՚ընդունէ ժողովրդի աղօթքը, եթէ ժողովուրդն էլ կըկատարէ բոլոր նրա պատուիրանները: «Իսկ եթէ, ասաց Տէրը, դու եւ քո զաւակները չէք կատարիլ իմ պատուիրանները եւ կըպաշտէք կամ երկրպագութիւն կըտաք ուրիշ աստուածների, ապա Ես կ՚արտաքսեմ Իսրայէլացոց այն երկրից, որ տուեցի նրանց, եւ այս տաճարն էլ կ՚արհամարհեմ եւ կըկործանեմ»:

62. ՍՈՂՈՄՈՆԻ ՓԱՌՔԸ ԵՒ ՆՐԱ ԱՆԿՈՒՄԸ.

Սողոմոնը գիտութեան, իմաստութեան եւ հարստութեան կողմից բոլոր թագաւորներից փառաւորն ու երջանիկն էր: Երուսաղէմում նա իրան համար ամենաշքեղ պալատ կանգնեցրեց, բացի դրանից շինեց միքանի քաղաքներ, որոնց մէջ նշանաւոր էր Թադմոր քաղաքը անապատի մէջ: Ներքին եւ արտաքին վաճառականութիւնը ծաղկեցրեց: Նրա կառավարութեան ներքոյ ժողովուրդը երջանիկ օրեր էր անց-

կացնում, ամեն մի Իսրայէլացի հանգիստ եւ ապահով ապրում էր իր խաղողենու եւ թզենու տակ։

Սողոմոնի իմաստութեան եւ հարստութեան համբաւը տարածուեցաւ բոլոր շրջակայ երկրներում։ Աշխարհի մեծամեծներից շատերը հեռուից գալիս էին Նրա իմաստուն խօսակցութիւնը լսելու։ Այսպէս՝ Երուսաղէմ եկաւ Արաբիայի թագուհին։ Սողոմոնի իմաստութիւնը փորձելու համար, Նա շատ հարցեր առաջարկեց եւ ամեն մի հարցին իմաստալի պատասխան ստացաւ։ Նա շրջեց եւ դիտեց արքունի պալատները եւ ամբողջ քաղաքը։ Հրաժարուելիս՝ Նա ասաց Սողոմոնին. «Ես չէի հաւատում, ինչ-որ ասում էին ինձ քո գործողութիւնների եւ իմաստութիւնների մասին, մինչեւ որ բոլորը տեսայ իմ աչքով։ Խոստովանվում եմ, որ կէսն էլ չէր ասած ինձ այն ամենի, ինչ-որ ինքս տեսայ. դու առաւել իմաստուն եւ առաւել հարուստ ես, քան թէ լսած էի։ Երջանիկ է այն ժողովուրդը, որ քո ձեռքի տակն է. երեւում է, որ Աստուած սիրում է Իսրայէլին, երբոր քեզ պէս թագաւոր է պարգեւել նրան»։ Այս ամենից յետոյ հարաւի թագուհին տուեց Նրան մեծամեծ ընծաներ (355 փութ ոսկի, անուշահոտ իւղեր եւ թանկագին քարեր)։ Սողոմոնն էլ իր կողմից առատ պարգեւներով ճանապարհ ձգեց Նրան։

Բայց ծայրահեղ եւ երկարատեւ երջանկութիւնը փչացրին Սողոմոնի մաքուր բնաւորութիւնը. այս ամեն բարիքների համար փոխանակ շնորհակալ լինելու Աստուծուց, նա ընկաւ փառամոլութեան եւ կորստաբեր գեխութեան մէջ, վատնեց իր բոլոր հարստութիւնը եւ ծանր հարկերով սկսեց ճնշել ժողովուրդը։ Բացի սրանից, արհամարհելով այն օրէնքները, որ ամեն մի Իսրայէլացու արգելում էր պսակուել կռապաշտ կանանց հետ, նա կին առաւ բազմաթիւ օտարուհիներ, թոյլ տուեց նրանց Երուսաղէմի մօտերքում իրանց աստուածների համար կռատուններ շինել եւ փոքր առ փոքր ինքն էլ սկսեց

ծառայել եւ երկրպագել կուռքերին։ Այն ժամանակ Աստուած ասաց Սողոմոնին. «Որովհետեւ դու իմ պատուիրանները չպահեցիր, Ես կխլեմ քո թագաւորութիւնը եւ քո ծառայիդ կտամ, բայց քո հայր Դաւթի համար այդ բանը քո կենդանութեան ժամանակ չեմ անիլ. քո զաւակի ձեռքից կըկորզեմ Ես նրան եւ միայն մի փոքրագոյն մասը իրան կըթողնեմ»։ Այս կանխասացութիւնից յետոյ Սողոմոնը կորցրեց իր երջանկութիւնը։ Մի կողմից հարեւան ազգերն սկսան յարձակումներ անել Նրա երկրի վրայ, իսկ միւս կողմից տէրութեան մէջ ներքին անբաւականութիւնները եւ խռովութիւններն օրէ ցօր աւելանում էին։ Հարկերի ծանրութեան պատճառով ժողովուրդը բողոքում եւ ապստամբում էր Նրա դէմ։ Դժգոհների պարագլուխն ու առաջնորդը Յերոբովամն էր, որին Սողոմոնը վերակացու էր կարգել Երուսաղէմի բազմաթիւ մշակների վրայ, եւ ապա կառավարիչ Եփրեմի եւ Մանասէի ցեղերի։ Երբոր Սողոմոնն իմացաւ, որ Յերոբովամն է առաջնորդում անբաւականներին, հրամայեց սպանել նրան, բայց Նա փախաւ Եգիպտոս։

Այս ամեն ձախորդութիւններն ուշքի բերին Սողոմոնին։ Նա խոստովանուեցաւ, որ փառքի եւ մեծութեան մէջ չէ մարդուս երջանկութիւնը, այլ խղճմտանքի մաքրութեան մէջ։ Իր անկեղծ զղջումը նա արտայայտեց այն գրքի մէջ, որ կոչվում է Էկկլեզիաստէս, որ կընշանակէ Ժողովող կամ Քարոզող։ Իր իմաստութիւնը Սողոմոնն արտայայտեց այն փոքրիկ բարոյական ասացուածների մէջ, որոնք կոչվում են Առակք Սողոմոնի։ Նա գրեց դարձեալ Երգ Երգոց Սողոմոնի անունով գիրքը, որի մէջ արտայայտում է Աստուծոյ սէրը դէպի մարդիկ։

---

63. ԵԲՐԱՅԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

Սողոմոնի մահից յետոյ նրա որդի Ռոբովամը ուղեւորուեցաւ Սիւքէմ քաղաք, ուր հաւաքուել էր բոլոր ժողովուրդը, որ ըստ սովորութեան հաւատարմութեան երդում տայ։ Այդտեղ էին հաւաքուած նաեւ բոլոր դժգոհները, Յերոբովամի առաջնորդութեամբ։ Յերոբովամը ժողովրդի կողմից եկաւ Ռոբովամի մօտ եւ ասաց նրան. «Քո հայրը ծանր լուծ դրեց մեր պարանոցի վրայ, հարկերն օրէցօր աւելացնելով եւ կեղեքելով մեզ, եթէ դու կըթեթեւացնես այդ լուծը, մենք հաւատարմութեամբ կըծառայենք քեզ»։ Ռոբովամը փոխանակ ժողովրդի իրաւացի տրտունջին ունկընդիր լինելու, իր թեթեւամիտ բարեկամների խորհրդով պատասխանեց. «Իմ հայրս ծանր լուծ դրեց ձեր պարանոցի վրայ, ես այդ լուծն աւելի եւս պիտի ծանրացնեմ։ Իմ հայրս գաւազանով էր պատժում ձեզ, իսկ ես պիտի պատժեմ քքերով (երկաթեայ ասեղնաւոր գաւազան)»։ Իսրայէլացիք լսելով Ռոբովամի պատասխանը, ասացին. «Ոչինչ բարի բան չէ կարելի սպասել սրանից. լաւն այն է՝ ամենքս մեր տները գնանք»։ Ժողովուրդը ցրուեցաւ։ Միայն Յուդայի եւ Բենիամինի ցեղը թագաւոր ճանաչեցին նրան։ Մնացած տասն ցեղերը թագաւոր ընտրեցին Յերոբովամին։ Այսպիսով Եբրայական թագաւորութիւնը երկուսի բաժանուեցաւ։ Դաւթի տոհմին հաւատարիմ մնացողները կոչուեցան Յուդայի Թագաւորութիւն. նրանց մայրաքաղաքը Երուսաղէմն էր։ Միւս տասն ցեղերից կազմուած թագաւորութիւնը կոչուեցաւ Իսրայէլի Թագաւորութիւն, եւ իրան մայրաքաղաք ընտրեց նախ Սիւքէմ, իսկ յետոյ Սամարիա։

---

64. ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ. ՅԵՐՈԲՈՎԱՄԸ ԵՒ ՆՐԱ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ. ՄԱՐԳԱՐԷՔ.

Յուդայի եւ Իսրայէլի թագաւորութիւնների հպատակները, չնայելով իրանց քաղաքական բաժանմանը, շատ յատկութիւններ ունէին, որոնք երկուսի համար եւս ընդհանուր էին։ Նրանք խօսում էին մի լեզուով եւ պաշտում էին միեւնոյն Աստուծուն, ունէին մի ընդհանուր օրէնք եւ մի հատ տաճար միայն, ուր կարող էին զոհ մատուցանել Աստուծուն։ Այս պատճառով էլ թագաւորութիւնը բաժանուելուց յետոյ ժողովրդի երկու մասերը միմեանց մէջ սերտ յարաբերութիւն ու հաղորդակցութիւն էին պահպանում։ Այս հաղորդակցութիւնը նորոգում էին աւելի Իսրայէլի թագաւորութեան հպատակները, երբ ամեն տարի մեծ բազմութեամբ գնում էին Երուսաղէմ, ճշմարիտ Աստուծուն զոհ մատուցանելու։ Այս բանը դուր չէր գալիս Իսրայէլի թագաւորին, Յերոբովամին։ Նա մտածում էր, որ եթէ իր հպատակներն այդպէս յաճախ Երուսաղէմ գնան, կարող են սրտները փոխել եւ յարել Յուդայի թագաւորութեանը, իսկ իրանից սառնանալ։ Այս պատճառով ահա, ժողովրդին այդ ազգային սովորութիւնից յետ պահելու համար՝ նա երկու ոսկեայ հորթեր ձուլել տուեց, սեղանների վրայ դրեց նրանց եւ ասաց. «Իսրայէլի՛ ժողովուրդ, ահաւասիկ քո աստուածները, սրանք են ազատել քեզ Եգիպտական գերութիւնից»։ Բացի այս երկու ոսկեղէն հորթերից՝ նա իր երկրի բարձրութիւնների վրայ սեղաններ շինեց եւ ամեն ցանկացողի թոյլատրում էր քահանայի պաշտօն կատարել եւ զոհ մատուցանել։ Բայց Աստուած խիստ կշտամբեց նրա ամբարշտութիւնը։ Մի անգամ թագաւորը Բեթէլի կուռքին զոհ

էր մատուցանում։ Ժողովրդի միջից մի ձայն լսուեցաւ, որ ասում էր. «Սեղան, լսիր ինչ է ասում Աստուած. ահա կըծնի Դաւթի տանից մի զաւակ, Ովսեայ անունով, որ քեզ վրայ կըզոհէ քո քուրմերը, եւ իբրեւ նշան, որ այս խօսքերը Աստուած է ասել, ահա կըկործանուի այդ սեղանը եւ նրա վրայ եղած մոխիրը կըցրուի»։ Այս խօսքերն ասում էր մի մարգարէ, որ եկել էր Յուդայի թագաւորութիւնից։ Յերոբովամը ձեռքը մեկնեց եւ հրամայեց. «Բռնեցէք դրան»։ Բայց նոյն րոպէին թագաւորի ձեռքը փէտացաւ ու սեղանը կործանուեցաւ։

Այն ժամանակ Յերոբովամը խնդրեց մարգարէին, որ աղօթէ Աստուծուն եւ առողջացնէ իր ձեռքը։ Մարգարէն աղօթեց եւ թագաւորի ձեռքն առողջացաւ։ Յերոբովամը մարգարէին իր տուն հրաւիրեց եւ ընծաներ խոստացաւ, բայց մարգարէն պատասխանեց. «Եթէ քո տան կէսն էլ ինձ տաս, էլի քեզ մօտ չեմ գալ, որովհետեւ Աստուած հրամայել է ինձ, որ այս երկրի հացը չ'ուտեմ, ձեր ջուրը չ'խմեմ եւ նոյն ճանապարհով վերադառնամ, որով եկել եմ»։ Այս խօսքերն ասելուց յետոյ մարգարէն հեռացաւ Բեթէլից։ Այդ միջոցին Բեթէլում մի ուրիշ ծերունի մարգարէ էր ապրում։ Սա վազեց հասաւ հեռացող մարգարէին եւ խնդրեց, որ իր տուն գայ. բայց Յուդայի մարգարէն հրաժարվում էր։ Այն ժամանակ ծերունին ասաց նրան. «Ես քեզ նման մարգարէ եմ. հրեշտակը հրամայեց ինձ Աստուծոյ կողմից, որ յետ դարձնեմ քեզ, ուտացնեմ, խմացնեմ եւ ապա ճանապարհ գցեմ»։ Յուդայի մարգարէն հաւատաց եւ գնաց նրա տուն։ Ճաշի ժամանակ ծերունին իսկապէս հրամանն ստացաւ Աստուծուց եւ յայտնեց Յուդայի մարգարէին. «Այսպէս է ասում Տէրը, որովհետեւ դու ճշմարտութեամբ չ'կատարեցիր իմ պատուէրը, ապա քո դիակը չի թաղուիլ քո հայրենի գերեզմանատան մէջ»։ Ծերունու գուշակութիւնը

կատարուեցաւ, ճանապարհին առիւծն սպանեց նրան՝ առանց նրա ջորուն ձեռք տալու, եւ պահապան կանգնեց վրան, մինչեւ որ ծերունի մարգարէն իմացաւ նրա մահը եւ եկաւ տարաւ նրա մարմինը եւ ամփոփեց իր գերեզմանատան մէջ։

Մարգարէի խօսքերը խելքի չ'բերին Յերոբովամին։ Այն ժամանակ մի ուրիշ մարգարէ, Աքիայ անունով, եկաւ եւ ասաց նրան. «Ես կըկործանեմ Յերոբովամի տունը, ասում է Աստուած, եւ նրա սերունդը կըջնջեմ. Ես կըկոտորեմ Իսրայէլացոց եւ նրանք կըլինին որպէս եղեգն ջրի մէջ։ Աստուած կըխլէ նրանց այս բարի երկրից եւ կըցրուէ գետի (Եփրատի) միւս կողմը, որովհետեւ նրանք կուռքեր շինեցին իրանց համար»։ Յերոբովամը այս նախագուշակութիւնից եւս չ'զգաստացաւ։ Մարգարէի խօսքերը կատարուեցան եւ նրա բոլոր տունը բնաջինջ եղաւ նրա որդու ժամանակ։

Յերոբովամի տան կործանումը նրա յաջորդներին չըզգաստացրեց. նրանք նոյն գործողութիւնները շարունակեցին, ինչ-որ Յերոբովամն էր անում։ Նրանցից շատերը մինչեւ անգամ գերազանցեցին նրան։ Բացի ոսկեղէն հորթերից, նրանք սկսան պաշտել հարեւան ազգերի աստուածներին, զոհ մատուցանել Փիւնիկեցոց, Փղշտացոց եւ Ասորոց կուռքերին։ Այս դեռ բոլորը չէր. նրանք աշկարայ օգնում եւ խրախուսում էին կռապաշտներին, իսկ ճշմարիտ Աստուծոյ երկրպագուներին հալածում, ճնշում եւ մինչեւ իսկ սպանում էին։ Այսպիսով Իսրայէլի թագաւորների հպատակները սաստիկ անբախտ կացութեան մէջ էին։ Նրանց մեծագոյն մասը մոռացած ճշմարիտ Աստուծուն, չէր իմանում, թէ ինչ բանի հաւատայ։ Մոլորեալ ոչխարների նման, առանց հովուի, առանց առաջնորդի, Իսրայէլացիք մէկ աստուծուց դէպի միւսն էին դիմում, բայց ոչ մի տեղ հանգիստ եւ օգնութիւն չէին գտնում։ Աստուածների պատճառով առաջացած վէ-

ճերը եւ ճշմարիտ աստուածապաշտների դէմ յարուցած հալածանքները ներքուստ էին կործանում Իսրայէլի թագաւորութեան խաղաղութիւնը, հարեւան ազգերի, առաւելապէս Ասորոց յարձակումներն էլ արտաքուստ էին կեղեքում նրանց: Տէրութիւնը կործանվում էր աստիճանաբար:

65. ԱՔԱԱԲ ԵՒ ՈՔՈԶԻԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ. ԵՂԻԱՅ ՄԱՐԳԱՐԷՆ.

Միքանի ամբարիշտ թագաւորներից յետոյ՝ Իսրայէլացոց վրայ իշխում է Աքաաբը, որը գերազանցում է իր նախորդներին: Աքաաբն ամուսնանում է Սիդոնացոց թագաւորի դուստր Հիզաբէլի հետ եւ նրա խորհրդով Սամարիայում մի մեհեան է շինում, Սիդոնացոց Բահաղ անունով կուռքը բազմեցնում է նրա մէջ եւ հարկադրում է ժողովրդին, որ երկրպագէ նրան: Ով որ իր կանգնեցրած կուռքին չէր երկրպագում, Աքաաբը անխնայ սպանել էր տալիս: Դրա ժամանակ ամբարշտութիւնն այն աստիճան առաւելացաւ, որ ժողովուրդն սկսեց Աստուծոյ առաքեալներին անգամ արհամարհել եւ նրանց սպառնալիքներն ոչնչի տեղ դնել:

Այս բոլոր ամբարշտութիւնից զայրացած՝ երեւեցաւ Եղիայ մարգարէն: Նա ապրում էր անապատում, հագնում էր մազէ քուրձ եւ գօտիվում էր կաշուէ գօտիով: Երբոր ամբարշտութիւնը վերջին աստիճանին հասաւ, Եղիայ մարգարէն եկաւ Աքաաբի մօտ եւ Աստուծոյ կողմից ասաց նրան. «Կենդանի է Իսրայէլի Աստուածը, որ այս երկրի վրայ հետեւեալ տարիների ընթացքում, ոչ ցող կ՚իջնէ եւ ոչ անձրեւ, մինչեւ որ ես չ՚ասեմ»: Այս ասելուց յետոյ, Նա հեռացաւ եւ ապա պահուեցաւ անապատում: Եղիայի մարգարէութիւնը կատարուեցաւ: Երեք տարի եւ վեց ամիս բոլոր Իսրայէլի երկրի մէջ ոչ ցող իջաւ եւ ոչ անձրեւ: Երաշտութիւնից սարսափելի սով ընկաւ: Թագաւորը որոնում էր Եղիային, բայց չէր գտնում:

Այդ ժամանակ մարգարէն թագնուած էր Յորդանանի հանդէպ մի հեղեղատի մօտ, ուր ագռաւները Աստուծոյ հրամանով հաց եւ միս էին բերում նրա համար: Երբոր երաշտի սաստկութիւնից հեղեղատն էլ ցամաքեցաւ, Եղիան Աստուծոյ հրամանով՝ գնաց Սարեփթայ քաղաք Սիդոնի մօտ: Այստեղ եւս սարսափելի սով էր տիրում: Քաղաքի դռան մօտ նրան մի այրի կին պատահեցաւ, որ խուշուր էր հաւաքում: Եղիան ասաց պառաւին. «Փոքր ինչ խմելու ջուր բեր ինձ եւ մի պատառ էլ հաց»: Կենդանի է քո Տէր Աստուածը, որ ես միայն մի բուռն ալիւր ունիմ եւ սակաւիկ իւղ. ահա փայտ եմ հաւաքում, որ մի բան պատրաստեմ իմ ու որդւոս համար, որ ուտենք եւ այնուհետեւ մեռնինք քաղցածութիւնից: «Մի՛ վախենար, ասաց նրան մարգարէն, այդ ալիւրից մի փոքրիկ նկանակ թխի՛ր եւ բեր ինձ, իսկ քո եւ որդւոդ համար յետոյ էլ կը թխես: Իսրայէլի Աստուածն ասում է, որ ալիւրը սափորի մէջ չ՚պակասի եւ իւղը շիշի մէջ չ՚հատնի, մինչեւ այն օրը, երբ Աստուած անձրեւ կ՚ուղարկէ երկրին»: Բարի եւ առաքինի կինը հաւատաց եւ իրան ունեցածից բաժին հանեց Աստուծոյ մարգարէին: Մարգարէի խօսքերը կատարուեցան: Նրա ալիւրն ու իւղը չ՚պակասեցան, որքան ժամանակ տիրում էր սովը: Եղիան բնակուեցաւ այրի կնոջ մօտ: Շուտով պառաւն աւելի որոշ տեսաւ Աստուծոյ փառքը. երբոր նրա միակ որդին մեռաւ, Եղիան աղօթք արաւ եւ պատանին կենդանացաւ: Այն ժամանակ այրին ասաց. «Այժմ ահա ես ճանաչեցի քեզ եւ տեսնում եմ, որ դու Աստուծոյ մարդ ես եւ քո բերանից դուրս եկած խօսքերը ճշմարտապէս Աստուծոյ խօսքեր են»:

Սովի սաստկութիւնն ուշքի բերեց Իսրայէլացոց. նրանք զղջացին։ Եղիան Աստուծոյ հրամանով եկաւ Աքաաբի մօտ։ Թագաւորը երբ տեսաւ նրան, բացականչեց. «Այստե՞ղ ես, խանգարիչդ Իսրայէլի»։ Եղիան պատասխանեց. «Իսրայէլի խանգարիչը ես չեմ, այլ դու եւ հօրդ տունը։ Դուք թողեցիք Աստուծոյ պատուիրանները եւ գնում էք Բահաղի եւ նրա նմանների յետեւից»։ Յետոյ մարգարէն առաջարկեց թագաւորին ժողովել բոլոր Իսրայէլացոց եւ Բահաղի քուրմերին Կարմիլոս սարի գլուխը, որպէսզի այնտեղ վճռեն, թէ որն է ճշմարիտ Աստուածը։ Երբոր Աքաաբը հաւաքեց ժողովրդին, Եղիան ասաց. «Ո՛վ Իսրայէլացիք, մինչեւ երբ պէտք է կաղի տաք երկու հետքով։ Եթէ Տէրն է Աստուած, գնացէք Նրա յետեւից, իսկ եթէ Բահաղը՝ հետեւեցէք նրան։ Եհովայի մարգարէներից միայն ես եմ մնացել, իսկ Բահաղն ահա ունի 450 հոգի։ Թող տան մեզ երկու զուարակ. զուարակներից մինը նրանք վեր առնեն, կտոր-կտոր անեն, դնեն փայտակոյտի վրայ, բայց փայտերի տակը կրակ չ՚դնեն, միւս զուարակը ես վերցնեմ, փայտակոյտի վրայ դնեմ, մաս-մաս արած եւ նոյնպէս կրակ չ՚դնեմ տակը։ Այնուհետեւ ձեր քուրմերը թող իրանց աստուածները կանչեն, իսկ ես կը կանչեմ իմ Աստուծուն, եւ որի Աստուածը կրակ կ՚իջուցանէ երկնքից եւ ողջակէզ կանէ զոհը, թող Նա լինի ճշմարիտ Աստուածը»։ Ժողովուրդը պատասխանեց. «Այդպէս թող լինի»։ Բահաղի մարգարէներն ստիպուած ընդունեցին այս պայմանը։ Նրանք զուարակը դրին փայտերի վրայ եւ սկսան աղաղակել. «Բահաղ, լսի՛ր մեզ, Բահա՛ղ, լսի՛ր մեզ»։ Շատ գոռացին նրանք, բայց պատասխան չ՚ստացան։ Բահաղի գութը շարժելու համար քուրմերն սկսան պար բոլորել սեղանի շուրջը, դանակներով խոցոտել եւ տէգերով ծակծկել իրանց մարմինը, այնպէս որ արիւնն առատապէս թափվում էր նրանցից, բայց երկնքից կրակ չէր իջնում։ Քուրմերը

մինչեւ երեկոյ ունայն աղաղակեցին։ Երեկոյին Եղիան ասաց ժողովրդին. «Մօտ եկէք, Իսրայէլի զաւակներ»։ Ժողովուրդը հաւաքուեցաւ։ Եղիան վերցրեց տասներկու քար՝ Իսրայէլացոց տասներկու ցեղերի թուի համեմատ, նրանցից սեղան շինեց եւ նրա շուրջը փոս փորեց, փայտեր դրեց սեղանի վրայ, փայտերի վրայ էլ զուարակը, եւ հրամայեց որ տասներկու սափոր ջուր ածեն զոհի եւ փայտերի վրայ, որպէսզի չ՚կարծեն, թէ ծածուկ կրակ է դրել փայտերի տակը, եւ ապա սկսեց բարձրաձայն աղօթել. «Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուած, թող այսօր ճանաչի այս ժողովուրդը, թէ Դու Իսրայէլի Աստուածն ես, իսկ ես Քո ծառան եմ եւ այս բոլորը Քո հրամանովդ եմ կատարում։ Լսի՛ր ինձ, Տէ՛ր, երկնային հրով լսիր ինձ»։ Այս խօսքերն ասելուն պէս, երկնքից հուր իջաւ, ողջակիզեց զոհն ու փայտը եւ ցամաքեցրեց այն ջուրը, որ լցրած էր սեղանի շուրջն եղած խրամատի մէջը։ Այս հրաշքը տեսնելուց յետոյ՝ ժողովուրդը գետին տարածուեցաւ երեսի վրայ եւ աղաղակեց. «Եհովան է ճշմարիտ Աստուածը»։ Եղիան իսկոյն հրամայեց, որ բռնեն Բահաղի խաբեբայ մարգարէներին եւ որպէս մոլորեցուցիչներ ու խռովարարներ, մահով մեռցնեն նրանց։ Ամբոխը կատարեց Եղիայի առաջարկութիւնը։ Երեկոյեան յորդ անձրեւ թափուեցաւ երկնքից եւ ոռոգեց այրուած ու տոչորուած երկիրը։

Հիզաբէլը երբ լսեց, որ Բահաղի մարգարէները կոտորուել են, սաստիկ զայրացաւ եւ երդուեց սպանել տալ Եղիային։ Մարգարէն փախուստ տուեց դէպի Քորէբ սարը եւ թագկացաւ մի այրի մէջ։ Նա կարծում էր, թէ բոլոր Իսրայէլացիք ուրացել են Աստուծուն եւ երկրպագում են կուռքերին, ուստի եւ մտածում էր, թէ Տէրը շուտով կը կործանէ Իսրայէլի թագաւորութիւնը։ Յանկարծ սարսափելի մրրիկ բարձրացաւ եւ երկիրը շարժեցաւ։ Մարգարէն ողջ

մարմնով դողաց։ Բայց մրրիկի եւ երկրաշարժի միջից նա չ՚լսեց Տիրոջ ձայնը։ Մրրիկը դադարեց, մեղմ հողմ սկսեց փչել, եւ այդ ժամանակ հողմի միջից գթասիրտ Աստուածը յայտնեց Եղիային, որ Իսրայէլացիներից դեռ եւս 7000 հոգի երկրպագած չեն կուռքերին, ուստի եւ հրամայեց չ՚յուսահատուիլ իր ժողովրդի ապագայի մասին, այլ վերադառնալ տուն։

Շուտով Աքաաբը նոր յանցանք գործեց։ Նրա պալատի մօտ գտնվում էր մի Նաբովթ անունով Իսրայէլացու այգի։ Թագաւորը կամենում էր գնել այդ այգին կամ նրա փոխարէն ուրիշը տալ, իսկ այդ իրան առնել։ Բայց Նաբովթն էլ չէր կամենում իր նախնական ժառանգութիւնից ձեռք վերցնել։ Աքաաբը սաստիկ վշտացաւ։ Այդ միջոցին Թագուհին նրա անունից հրաման գրեց, որ սուտ վկաներ գտնեն Նաբովթին ամբաստանելու, որպէս հայհոյիչ աստուածների եւ արհամարհող Թագաւորին։ Թագաւորի հրամանը կատարուեցաւ եւ Նաբովթը, որպէս յանցաւոր, քարկոծուեցաւ, իսկ նրա այգին արքունական դարձաւ։ Աքաաբը գնաց այգի, որ նայէ եւ զուարճանայ։ Այդտեղ նրա հանդէպ դուրս եկաւ Եղիան եւ ասաց.—Այսպէս է ասում Աստուած. «Այստեղ ուր շները լիզեցին անմեղ Նաբովթի արիւնը, քո արիւնը եւս կըլիզեն։ Ես կըջնջեմ քո բոլոր տունը, ասում է Տէրը. Հիզաբէլին կըլափեն շները, իսկ քո տներցիներից ոմանք քաղաքի մէջ կըմեռնին, եւ նոյնպէս շների կերակուր կըլինին, իսկ ոմանք դաշտերի մէջ կըկոտորուին եւ թռչունները կըկտցահարեն նրանց մարմինները»։ Այս խօսքերից սարսափած, Թագաւորը պատառոտեց իր շորերը։

Երեք տարուց յետոյ մարգարէի խօսքերը կատարուեցան։ Ասորոց դէմ պատերազմ ունեցած ժամանակ Թագաւորը չարաչար վիրաւորուեցաւ, եւ երբ կառքի մէջ դրած բերում էին, մեռաւ ճանապարհին։ Նրա դիակը Սամարիայ

տարան, եւ երբ արիւնոտ կառքը լուանում էին, շները ժողովուեցան եւ լիզում էին այդ արիւնը։

Աքաաբի մահից յետոյ նրա Օքոզիա որդին թագաւորեց։ Ամբարշտութեան կողմից սա գերազանցեց հօրը։ Շուտով Աստուած պատժեց նրան։ Նա լուսամուտից վայր ընկաւ եւ տկարացաւ։ Փոխանակ Աստուծուն աղօթելու, նա մարդիկ ուղարկեց Ակկարոն քաղաքը Բէհեղզեբուղ աստուծուն հարցնելու, թէ արդեօք իր հիւանդութիւնը կ՚անցնի։ Եղիայ մարգարէն ճանապարհին հանդիպեցաւ այդ մարդկանց եւ ասաց. «Մի՞թէ Իսրայէլի մէջ Աստուած չ՚կար, որ օտար աստուծուն էք դիմում։ Այդ պատճառով ահա ինչ է ասում Տէրը. «Այն անկողնից, որի վրայ պառկած ես, չես վերկենալ, այլ կըմեռնես»։ Ուղարկուածները վերադարձան եւ յայտնեցին Օքոզիային մարգարէի խօսքերը։ Թագաւորը բարկացաւ եւ իր յիսնապետին մի խումբ զինուորներով ուղարկեց, որ կալանաւորեն եւ իր մօտ բերեն Եղիային։ Յիսնապետը գտաւ նրան սարի գլխին եւ ասաց. «Այրդ Աստուծոյ, Թագաւորը հրամայում՝ է, որ ցած գաս»։ Եղիան պատասխանեց. «Եթէ ես այր եմ Աստուծոյ, ապա թող հուր իջնէ երկնքից եւ այրէ քեզ ու քո մարդկանցը»։ Իսկոյն երկնային կրակը լափեց նրանց։ Թագաւորը նոր գունդ ուղարկեց, որ առաջինի վիճակին հանդիպեցաւ։ Թագաւորը երրորդ անգամ յիսուն մարդից բաղկացած մի գունդ ուղարկեց։ Այս խմբի յիսնապետը սարին մօտեցած՝ չոքեց եւ խնդրեց, որ իրան եւ իր մարդկանցը խնայէ եւ չ՚պատուհասէ։ Այն ժամանակ Աստուծոյ հրեշտակը երեւեցաւ Եղիային եւ հրամայեց նրան, որ աներկիւղ գնայ Թագաւորի մօտ։ Մարգարէն եկաւ եւ Թագաւորի առաջը կրկնեց այն խօսքերը, ինչ-որ ասել էր նրա մարդկանցը։ Օքոզիան շուտով մեռաւ եւ գահը իր եղբայր Յովրամին թողեց։ Յովրամը կործանեց Բահաղի կուռքը եւ արգելեց երկրպագել նրան, միայն թոյլ տուեց երկր-

պագել հորթերին, ինչպէս սովորութիւն էր դարձրել իր պապ Յերոբովամը։

Եղիայի երկրաւոր կեանքի վախճանը մօտենում էր. նա հասկացաւ, որ Աստուած կամենում է կենդանոյն վերափոխել նրան այս երկրից, ուստի եւ Տիրոջ հրամանով փոխանորդ ընտրեց իրան այս երկրիս վրայ Եղիսէին եւ օծեց նրան մարգարէ։ Այնուհետեւ Եղիսէն ամենեւին չէր հեռանում նրանից։ Մի անգամ, երբ նրանք անապատի մէջ էին, Յորդանանի միւս կողմը, Եղիան ասաց իր աշակերտին. «Խնդրիր ինձանից ինչ-որ կամենում ես, քանի որ չեմ վերացել քեզանից»։ Եղիսէն խնդրեց. «Քո կրկին Հոգին (այսինքն մարգարէութեան եւ հրաշագործութեան շնորհը) լինի իմ վրաս»։ Եղիան պատասխանեց. «Դժուարին բան խնդրեցիր, բայց եթէ տեսնես ինչպէս եմ վերանում քեզանից, կըկատարուի ցանկութիւնդ, իսկ եթէ չ'տեսնես՝ չի կատարուիլ»։ Այսպէս խօսելով նրանք շարունակեցին իրանց։ Յանկարծ մի հրեղէն կառք, լծած հրեղէն երիվարներով, իրարից բաժանեց նրանց, եւ Եղիան մրրկի մէջ երկինք վերացաւ։ Տեսաւ Եղիսէն եւ աղաղակեց նրա յետեւից. «Հա՛յր, հա՛յր, աՀա կառքդ Իսրայէլի եւ հեծեալք նորին»։ Երբոր մարգարէն աներեւոյթ եղաւ, Եղիսէն տրտմութիւնից պատառոտեց իր շորերը։ Բայց այդ միջոցին որպէս մխիթարութիւն, Եղիայի մաշկեակը (վերարկուն) ընկաւ երկնքից։ Եղիսէն մխիթարուած վեր առաւ իր վարդապետի մաշկեակը եւ յետ դարձաւ։ Երբոր Յորդանանին մօտեցաւ, Եղիայի մաշկեակով զարկեց ջրին. ջուրը բաժանուեցաւ եւ Եղիսէն անցաւ ցամաք յատակի վրայով։ Սա ապացոյց էր, որ Աստուծոյ հոգին Եղիայի վրայից Եղիսէին էր անցել։ Այս նշանից յետոյ մարգարէից որդիքը հաւաքուեցան նրա շուրջը եւ պատւում էին նրան, որպէս Եղիային։ «Հանգեաւ հոգին Եղիայի 'ի վերայ Եղիսէի», ասում էին նրանք։

66. ԵՂԻՍԷ ՄԱՐԳԱՐԷՆ. ՅՈՎՐԱՄ ԵՒ ՅԷՈՒ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ.

Եղիսէն միայն հասարակ մարգարէ չէր. Աստուած նրա ձեռքով իր պատգամները չէր յայտնում, այլ իր ողորմութիւնը եւ մինչեւ անգամ հրաշքներ էր անում։ Այսպէս մի անգամ Երիքով քաղաքի բնակիչները, ուր Յորդանանից անցնելով առաջին անգամ ոտք դրեց նա, գանգատուեցան, թէ իրանց քաղաքի ջուրը վատառողջ է։ Եղիսէն աղ ցանեց ջրերի աղբիւրներում եւ ջուրն առողջարար դարձաւ։ Մի ուրիշ անգամ մարգարէի աշակերտի այրին եկաւ նրա մօտ եւ արտասուելով ասաց. «Իմ այրս վախճանուել է, նրա պարտատէրը եկել է եւ կամենում է իմ երկու որդիքս տանել ու ծառայեցնել»։ Եղիսէն հարցրեց. «Ի՞նչ ունիս տանը»։ Նա պատասխանեց. «Ոչինչ, բայց միայն մի քիչ իւղ»։ Եղիսէն հրամայեց, որ հարեւաններից դատարկ ամաններ ժողովէ որքան կարող է, իր որդիների հետ ներս մտնէ սենեակը, դուները փակէ եւ իր ամանից այդ իւղը դատարկ ամանների մէջ թափէ։ Այրին կատարեց մարգարէի հրամանը եւ իր ամանից իւղը շարունակ թափում էր, մինչեւ որ բոլոր փոխ առած ամանները լցուեցան։ Այրին վաճառեց իւղը, պարտքը վճարեց եւ այնքան էլ փող մնաց, որ կարողացաւ ապահով ապրել իր որդիների հետ։ Մի ուրիշ անգամ մի հարուստ անզաւակ կնոջ (որ բնակւում էր Սունամնայ քաղաքում եւ չափազանց պատւում ու հիւրասիրում էր Եղիսէին) մարգարէն նախագուշակեց, որ ուղիղ մի տարուց յետոյ զաւակ պիտի ունենայ։ Նախագուշակութիւնը կատարուեցաւ։ Բայց երբ մեծացաւ մանուկը, յանկարծակի վախճանուեցաւ։ Եղիսէն աղօթեց Աստուծուն եւ մանուկը յարութիւն առաւ։ Մի անգամ մարգարէի աշակերտները

կերակուր եփեցին եւ անգիտութեամբ նրա մէջը մի տեսակ վայրի խոտ ձգեցին. բայց երբ սկսան ուտել, զգացին որ կերակուրը թունաւորուած է։ Եղիսէն հրամայեց փոքր ինչ ալիւր ածել կաթսայի մէջ, եւ թունաւոր խոտը կորցրեց իր ոյժը։ Սովի ժամանակ մի մարդ քսան հատ գարեղէն հաց եւ փոքր ինչ չորացրած թուզ ընծայ բերեց մարգարէին։ Նրա մօտ հարիւր մարդ կար։ Մարգարէն հրամայեց իր սպասաւորին, որ ժողովրդին բաժանէ այդ։ «Հարիւր մարդկանց ինչպէս բաւականացնեմ այդ փոքր բանով», ասաց սպասաւորը։ Եղիսէն պատասխանեց. «Տուր ուտեն. Տէրն այսպէս է ասում. կ՚ուտեն եւ կ՚աւելանայ»։ Այնպէս էլ եղաւ։ Կերան կշտացան ամէնքը եւ դարձեալ աւելացաւ։

Աստուած Եղիսէի ձեռքով միայն Իսրայէլացոց չէր ցոյց տալիս իր գթութիւնը, այլ եւ կռապաշտներին։ Այսպէս Ասորոց զօրապետներից մինը, Նէեման, բորոտութեամբ ցաւագարուած էր։ Նէեմանի Եբրայեցի աղախինը իր տիրոջը խորհուրդ տուեց, որ դիմէ Սամարիայում բնակուող մարգարէի օգնութեանը։ Նէեմանը իր թագաւորից մի նամակ վերցրեց Իսրայէլի Յովրամ թագաւորի վրայ եւ ուղեւորուեցաւ Սամարիա։ Նամակի մէջ գրած էր. «Ուղարկում եմ քեզ մօտ Նէեմանին, որ բժշկես նրա բորոտութիւնը»։ Յովրամը, նամակը կարդալով, պատառոտեց իր հանդերձը եւ ասաց. «Միթէ ես Աստուած եմ, որ կարողանամ բժշկել սրան։ Երեւի պատճառ են որոնում պատերազմելու ինձ հետ»։ Այն ժամանակ Եղիսէն մարդ ուղարկեց թագաւորի մօտ եւ ասաց. «Թող Նէեմանն ինձ մօտ գայ եւ իմանայ, որ Իսրայէլի մէջ մարգարէ կայ»։ Նէեմանը գնաց Եղիսէի մօտ։ Երբոր մօտեցել էր նրա բնակարանին, մարգարէն ուղարկեց նրա առաջ իր աշակերտներից մինին եւ պատուիրեց, որ գնայ Յորդանան գետում եօթն անգամ լողանայ եւ կըբժշկուի։ Նէեմանը բարկացաւ. «Ես կարծում էի, ասաց նա, որ մարգարէն իմ առաջս դուրս կըգայ, ձեռքը վրաս կըդնէ եւ իր Աստուծուն աղօթելով կըբժշկէ իմ բորոտութիւնը։ Միթէ Դամասկոսի ջրերն աւելի առողջարար չեն Իսրայէլի ջրերից»։

Այսուամենայնիւ նրա ծառաները խորհուրդ տուին կատարել մարգարէի պատուէրը։ Նէեմանը եօթն անգամ լողացաւ Յորդանանի մէջ եւ նրա բորոտութիւնն իսկոյն անյայտացաւ։ Այն ժամանակ նա դարձաւ Եղիսէի մօտ եւ ասաց. «Այժմ իմացայ, որ երկրիս վրայ չ՚կայ այլ Աստուած, բայց Իսրայէլի Աստուածը»։ Զօրապետը հարուստ ընծաներ առաջարկեց մարգարէին, բայց նա հրաժարուեցաւ նրանց ընդունելուց։ Եղիսէի թոյլտուութեամբ նա Եբրայական հողից վեր առաւ իր հետ, որ Դամասկոսում նրա վրայ սեղան շինէ եւ զոհ մատուցանէ Իսրայէլի Աստուծուն։

Բայց Եղիսէն բացի օգնելուց՝ գիտէր եւ խիստ կերպով պատժել զանցառութեան ու խաբէութեան համար։ Նրա Գեէզի անունով ծառան տեսնելով, որ իր վարդապետը չ՚վեր առաւ այն հարուստ ընծաները, սաստիկ ափսոսաց։ Նա վազեց հասաւ Նէեմանի յետեւից եւ Եղիսէի անունով խնդրեց նրանից մի տաղանդ արծաթ եւ երկու զգեստ, ասելով, որ իր վարդապետի մօտ երկու չքաւոր աշակերտներ հիւր կան, նրանց համար է խնդրում այդ բաները։ Նէեմանն ուրախութեամբ տուեց։ Երբոր Գեէզին վերադարձաւ եւ թագցրեց իր ստացած ընծաները, Եղիսէն ասաց նրան. «Նէեմանի պարգեւների հետ ստացիր եւ նրա բորոտութիւնը»։ Գեէզին իսկոյն վարակուեցաւ այդ հիւանդութեամբ։ Մի անգամ երբ Եղիսէն Բեթէլ քաղաք էր մտնում, մի խումբ մանուկներ հանդիպեցան եւ սկսեցին ծաղրել նրան, գոչելով. «Ե՛լ կընտակ, ե՛լ կնտակ»։ Մարգարէն յետ նայեցաւ եւ նրանց արարքը դատապարտեց Աստուծոյ անունով։ Անտառից իսկոյն երկու արջ դուրս եկան եւ նրանցից քառասուն երկուսին պատառոտեցին։

Եղիսէն Իսրայէլացոց թագաւորութեան համար նաեւ պատգամաբեր էր Աստուծոյ կողմից. մի անգամ Իսրայէլի Յովրամ թագաւորը Յուդայի թագաւորի դաշնակցութեամբ գնաց Մովաբացոց դէմ պատերազմելու: Գործի սկզբում դժուարութիւնների հանդիպելով՝ թագաւորները դիմեցին մարգարէին: Եղիսէն նրանց կատարեալ յաջողութիւն գուշակեց. եւ իսկ որ Իսրայէլացիք ջարդեցին Մովաբացոց զօրքը, կործանեցին նրանց քաղաքները, արտերը քարետակ արին, աղբիւրների ակները լցրեցին, ամենալաւ ծառերը կտրատեցին եւ վերջապէս շրջապատեցին նրանց գլխաւոր քաղաքը, ուր պատսպարուել էր թագաւորը: Իր մօտալուտ կորուստը տեսնելով, Մովաբացոց թագաւորը փորձ փորձեց ճեղքել անցնել դաշնակիցների զօրքի միջից, բայց չյաջողուեցաւ: Այն ժամանակ յուսահատուած թագաւորը իր անդրանիկ որդուն՝ թագաժառանգին, քաղաքի պարսպի վրայ ողջակէզ արեց: Այս արարքը սարսափ ձգեց Իսրայէլացոց վրայ եւ նրանք յետ քաշուեցան դէպի իրանց երկիրը: Երբ Իսրայէլացիք պատերազմ ունէին Ասորոց հետ, Եղիսէն Յովրամին հաղորդում էր բոլոր խորամանկ միջոցները, որ մտադրում էին գործել Ասորիք եւ նախազգուշացնում էր թագաւորին: Այսպիսով Ասորոց թագաւորը տեսնելով իր բոլոր ձեռնարկութիւնների անյաջող ելքը, սաստիկ վշտացաւ, խորհրդի հրաւիրեց իր բոլոր ծառաներին եւ հարցրեց, թէ իր մարդիկներից ո՞վ արդեօք հաղորդակցութիւն ունի Իսրայէլի թագաւորի հետ, որովհետեւ իր ձեռնարկութիւններից ոչ մինը ծածուկ չէր մնում: Ծառաներից մինը պատասխանեց. «Ո՛չ ոք, տէր արքայ, Եղիսէ մարգարէն է, որ յայտնում է Իսրայէլի թագաւորին մինչեւ անգամ այն խօսքերը, որ դու ասում ես քո ննջարանում»: Թագաւորը հրաման արձակեց որպէս եւիցէ բռնել Եղիսէին: Մէջ գիշերին Ասորոց մի մեծ զօրաբաժին շրջապատեց Դոթայիմ քաղաքը, ուր այդ ժամանակ

գտնվում էր մարգարէն: Առաւօտը Եղիսէն ինքը դուրս եկաւ նրանց առաջ եւ աղօթելով՝ այնպէս կուրացրեց նրանց աչքերը, որ ոչ իրան ճանաչեցին եւ ո՛չ քաղաքը: Յետոյ մարգարէն ասաց նրանց. «Այս այն քաղաքը չէ եւ ո՛չ այն ճանապարհը. եկէք ես կտանեմ ձեզ այն մարդու մօտ, որին որոնում էք»: Զինուորները համաձայնեցան: Եղիսէն նրանց Սամարիայ տարաւ: Այնտեղ նրանց աչքերը բացուեցան եւ տեսան, որ շրջապատուած են թշնամիներից: Յովրամ թագաւորը հարցրեց. «Հա՛յր իմ, չկոտորե՞նք արդեօք ամենին»: Եղիսէն պատասխանեց. «Ո՛չ. մի՞թէ քո զէնքով գերեցիր: Առաջարկիր դրանց հաց եւ ջուր, թող ուտեն, խմեն եւ ապա վերադառնան իրանց թագաւորի բանակը»:

Յովրամն այդպէս էլ արեց: Այդ անակնկալ շնորհի պատճառով նրանք Սամարիայից դուրս գալով՝ ցրուեցան իրանց տները եւ այլեւս չ'կամեցան մասնակցել Իսրայէլացոց դէմ մղած պատերազմին: Երբ այս լուրը հասաւ Ասորոց թագաւորին, ժողովեց իր բոլոր զօրքերը եւ եկաւ պաշարեց Սամարիան: Երկար ժամանակից յետոյ քաղաքի մէջ այնպէս սարսափելի սով ընկաւ, որ երկու կին մինչեւ անգամ խօսք կապեցին իրանց հարազատ զաւակներին ուտել, եւ արդէն մինին եփել կերել էին: Այս լսելով՝ Յովրամ թագաւորը սրտնեղութիւնից պատառոտեց իր հանդերձը եւ իր գլխաւոր իշխանին ուղարկեց Եղիսէի մօտ ասելու. «Տեսնո՞ւմ ես, թէ որպիսի թշուառութեան մէջ ենք. էլ ի՞նչ կարող ենք սպասել Աստուծուց»: Եղիսէն պատասխանեց. «Վաղն այս ժամին ամենաազնիւ ալիւրի մի գրիւը (20 ֆ.) մէկ սիկղ (86 կ.) կ'արժենայ Սամարիայի դռների մօտ»: Թագաւորից ուղարկուածը կասկածելով ասաց. «Եթէ Աստուած բանայ երկնքի դռները, այն ժամանակ էլ չէ կարող պատահել այդ»: Եղիսէն պատասխանեց. «Աչքովդ կտեսնես, բայց ուտել չես կարող»: Գիշերային մթին, Աստուծոյ հրամանով, Ասորոց

բանակի յետեւը կառքերի ձայներ, ձիերի խրխնջոց, եւ զօրքերի սաստիկ աղաղակ լսուեցաւ: Ասորիք սարսափեցան եւ ձգելով իրանց բանակն ու պաշարեղէնը, փախան խառն ի խուռն: Սամարացիք սկսան կողոպտել նրանց: Մարգարէի խօսքերը կատարուեցան. առաւօտեան ամենալաւ ալիւրի գրիւը ծախւում էր մի սիկղով, մինչդեռ նախընթաց երեկոյին մի իշի գլուխն արժէր 80 սիկղ: Իշխանաւորը, որ չէր հաւատացել մարգարէին, քաղաքի պարսպի մօտ ոտնակոխ եղաւ ամբոխից եւ մեռաւ:

Եղիսէի օրով Աքաբի տան վրայ կատարուեցաւ Աստուծոյ դատաստանը, որի մասին նախագուշակել էր Եղիա մարգարէն: Յովրամը մի անգամ պատերազմելու ելաւ Ասորոց դէմ, վիրաւորուեցաւ եւ անկողին ընկաւ Յեզրայէլ քաղաքում, իսկ զօրքի հրամանատարութիւնը իր Յէու զօրապետին յանձնեց: Այդտեղ եկաւ նրա մօտ Յուդայի թագաւոր Ոքոզիան, որ իրան դաշնակիցն ու ազգականն էր: Այդ միջոցին Եղիսէ մարգարէն իր աշակերտներից մինին ուղարկեց, որ գնայ եւ Իսրայէլի թագաւոր օծէ Յէուին: Աշակերտը գտաւ նրան եւ օծելիս ասաց. «Այսպէս է ասում Տէրը. «Քեզ օծում եմ թագաւոր Իսրայէլի եւ դու պարտաւոր ես ջնջել Աքաբի տունը, որպէս վրէժ Աստուծոյ ծառաների արեան, որոնք կոտորուեցան Հեզաբէլի ձեռքով: Եւ թող կործանուի Աքաբի բոլոր տունը, իսկ Հեզաբէլին ուտեն շները Յեզրայէլի դաշտումը»: Յէուն իսկոյն թագաւոր հրատարակեց իրան եւ ուղեւորուեցաւ դէպի Յեզրայէլ: Յովրամ թագաւորը՝ չնայելով որ հիւանդ էր, Ոքոզիայի հետ անձամբ նրա առաջը դուրս ելաւ եւ հարցրեց. «Խաղաղութիւն ես բերում, Յէու»: Յէուն պատասխանեց. «Ի՞նչ խաղաղութիւն կարող է լինել այն բոլոր ամբարշտութիւններից յետոյ, որ գործում է քո մայրը»: Յովրամը հասկացաւ, որ Յէուն դաւաճանել է եւ կամեցաւ փախչել, բայց Յէուն զարկեց,

սպանեց նրան էլ, Ոքոզիա թագաւորին էլ: Երբոր քաղաք էր մտնում, Յէուն տեսաւ Հեզաբէլին, որ նստած էր լուսամուտի առաջ, եւ հրամայեց վայր ձգել նրան այնտեղից: Վայր ընկնելով՝ նա տրորուեցաւ ձիերի սմբակների տակ, եւ երբոր կամեցան վայելուչ կերպով թաղել նրան, որպէս արքայադուստր, բացի գանգը, դաստակներն ու գարշապարները, ոչինչ չգտան, որովհետեւ շները կերել էին նրա դիակը: Այնուհետեւ Յէուի հրամանով կոտորեցին Աքաբի բոլոր որդիներին եւ ազգականներին, Բահաղի քուրմերին եւ սպասաւորներին, կործանեցին նրա արձանը եւ այն տեղը, ուր նա կանգնեցրած էր, աղբանոց դարձրին: Բայց կործանելով Բահաղի արձանը, Յէուն թողեց Յերոբովամի ոսկէ հորթերը, որոնց Իսրայէլացիք շարունակում էին երկրպագել: Այս զանցառութեան համար Աստուած պատժեց նրան Ասորոց թագաւորի ձեռքով, որ խլեց նրանից Յորդանանի միւս կողմը եղած բոլոր երկիրները:

Յէուի որդին ու թոռը գնում էին նրա շաւղով: Յէուի թոռան Յովասի ժամանակին Եղիսէն հիւանդացաւ, թագաւորը նրան այցելութեան եկաւ եւ անկողնու մօտ նստած վշտահար կերպով խօսում էր այնպէս՝ ինչպէս Եղիսէն Եղիայի վերանալու ժամանակը: Երբոր թագաւորը հեռանում էր նրա մօտից, մարգարէն նախագուշակեց նրան յաղթութիւն ընդդէմ Ասորոց:

Ժողովուրդը դառնապէս ողբաց Եղիսէի մահը: Մինչեւ անգամ մեռնելուց յետոյ Աստուած հրաշքներ էր անում նրա նշխարներով: Օրինակ՝ մի անգամ թաղում էին մի մեռեալ: Այդ միջոցին Մովաբացի մի խումբ աւազակներ վրայ հասան: Դիակակիրները վախեցան, ձգեցին դիակը մերձաւոր այրի մէջ, իսկ իրանք փախան: Սա այն այրն էր, ուր մի տարի առաջ թաղուել էր Եղիսէն: Հէնց որ վախճանուածի դիակը դիպաւ մարգարէի ոսկրներին, իսկոյն կենդանացաւ:

67. ՅՈՎՆԱՆ, ԱՄՈՎՍ ԵՒ ՈՎՍԻԱՅ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ. ՅԵՐՈԲՈՎԱՄ II ԹԱԳԱՒՈՐԸ.

Եղիսէի մահից յետոյ Իսրայէլի թագաւորութեան մէջ Յովնան անունով մի նոր մարգարէ յայտնուեցաւ։ Սկզբում սա եւս Իսրայէլացոց համար Աստուածային ողորմութեան թարգմանն էր։ Նա Յերոբովամ երկրորդ թագաւորին Ասորոց վրայ յաղթութիւն նախագուշակեց։ Եւ արդարեւ Յերոբովամը յետ առաւ նրանց ձեռքից անդր Յորդանանու երկիրները եւ մինչեւ անգամ Դամասկոսը նուաճեց. բայց չընայելով որ Աստուած յայտնի կերպով օգնում էր նրան, նա անտարբեր էր նայում կռապաշտութեան տարածման վրայ եւ թոյլ էր տալիս երկրպագել ոսկէ հորթերին։

Այդ ժամանակներումն էր, որ Աստուած ուղարկեց Յովնան մարգարէին Նինուէ քաղաքը եւ պատուիրեց, որ յայտնէ Նինուէացոց, թէ Աստուած պիտի կործանէ նրանց քաղաքը, եթէ չ'ապաշխարեն։ Յովնանը գիտենալով, որ երբ Նինուէացիք ապաշխարեն, Աստուած Իր ողորմութիւնով չ'պիտի կործանէ Նինուէ քաղաքը եւ ինքը ստախօս պիտի երեւի ժողովրդեան առաջ, նաւ նստեց եւ ուղեւորուեցաւ դէպի ուրիշ երկիր՝ Թարսիս։ Ճանապարհին սաստիկ փոթորիկ բարձրացաւ։ Նաւավարը մի կռապաշտ էր. նա մտածեց, որ երեւի Աստուած բարկացել է նաւորներից մինի վրայ եւ նրա պատճառով վտանգի է ենթարկում բոլորին։ Մեղաւորը գտնելու համար վիճակ գցեցին։ Վիճակը Յովնանին ընկաւ։ Յովնանը խոստովանուեցաւ, որ ինքը յանցաւոր է եւ ասաց, որ եթէ իրան ծովը ձգեն, նա կը հանդարտուի։ «Ես գիտեմ, որ իմ պատճառով է սպառնում ձեզ այս սարսափելի վտանգը»։ Յովնանին ծովը ձգեցին եւ փոթորիկը դադարեց։ Աստուծոյ հրամանով կէտ ձուկն առաջ եկաւ եւ ողջամբ

*կլանեց մարգարէին։ Յովնանը մնաց կէտի փորումը երեք ցերեկ եւ երեք գիշեր *). Նա աղօթում էր դէպի Աստուած եւ խոստովանում էր իր յանցանքը։ Աստուած լսեց Յովնանի աղօթքը եւ հրամայեց կէտին ցամաք դուրս ձգել նրան։ Յամաք դուրս գալով՝ Յովնանը նորից հրաման ստացաւ Նինուէ գնալ։ Մարգարէն ուղեւորուեցաւ Նինուէ եւ ամբողջ օրը շրջում էր փողոցներում եւ բարձրաձայն կանչում. «Ով Նինուէացիք, երեք օրից յետոյ պիտի կործանուի ձեր քաղաքը, եթէ չ'ապաշխարէք եւ չ'դառնաք ձեր մոլար ճանապարհից»։ Նինուէն Ասորեստանի մայրաքաղաքն էր։ Նա այնքան մեծ էր, որ մարգարէն ամբողջ օրը հազիւ կարողացաւ անցնել նրա մի ծայրից մինչեւ միւս ծայրը։ Նինուէացիք հաւատացին մարգարէի քարոզին եւ ամենքն էլ, թագաւորից սկսած մինչեւ յետին ռամիկը, յետ դարձան իրանց մոլար ճանապարհից եւ սաստիկ ջերմեռանդութեամբ աղօթեցին առ Աստուած, խնդրելով նրա գթութիւնը։ Աստուած տեսաւ, որ նրանց ապաշխարութիւնն անկեղծ է, եւ խնայեց քաղաքը։ Յովնանին դուր չ'եկաւ այդ։ Նա նստեց քաղաքի հանդէպ եւ աղօթում էր. «Ա՛ռ իմ հոգիս, Տէր, այսուհետեւ լաւ է ինձ մեռնել, քան ապրել»։ Այդ միջոցին նրա գլխավերեւը մի դդմենի բուսաւ եւ իր լայն տերեւներով պահպանում էր նրան արեգակի այրող ճառագայթներից։ Յովնանն ուրախացաւ եւ գոհացաւ Աստուծուց եւ դդմենու հովանիի տակ նստած սպասում էր, որ տեսնէ, թէ ինչ կըպատահէ քաղաքին։ Միւս օրը, լուսաբացին, դդմենին թառամեցաւ։ Աստուծոյ հրամանով որդը կարել էր նրա արմատը։*

---

*) Այսպիսով Յովնանը երեք օր և երեք գիշեր իրան մեռած էր համարում և երեք օրեայ մահից յետոյ յարութիւն առաւ, որ իր քարոզութիւններով քաղաքը կորուստից փրկէ։ Սա օրինակ էր Քրիստոսի երեք օրեայ թաղման և յարութեան։

Այս փոքրիկ զրկանքի համար սաստիկ վշտացաւ Յովնանը եւ դառնապէս գանգատուելով՝ խնդրեց Աստուծուց, որ մահ տայ իրան: Աստուած ասաց. «Դու ափսոսում ես այն բոյսի համար, որ ոչ տնկել ես, ոչ աճեցրել. ես ինչպէս չափսոսամ եւ չխնայեմ մի ահագին քաղաք, որի մէջ աւելի քան 13,000 մանուկներ կան, որոնք աջ ձեռքը ձախից զանազանել չեն կարող»:

Յովնան մարգարէին պատահած բոլոր անցքերը գրուած է Սուրբ Գրքի մէջ և կոչվում է Գիրք Յովնանու մարգարէին:

Երբոր Յովնանը քարոզում էր Նինուէում, այդ միջոցին երկու մարգարէներ՝ Ամոս եւ Ովսիա, նախատում եւ խստիւ կշտամբում էին Իսրայէլացոց՝ նրանց բազմաթիւ մոլութիւնների, խարդախութիւնների, չարամտութիւնների եւ կուռքերին երկրպագելու համար: Մարգարէները նախազգուշակում էին, որ նրանք սարսափելի եւ երկարատեւ գերութեան կմատնուին, երկար միջոց կմնան առանց թագաւորի, առանց իշխանի եւ առանց զոհելու իրաւունքի, այդ ամեն տառապանքներից յետոյ կ՛ապաշխարեն եւ դարձ կըգան դէպի Աստուած: Այս բոլոր գուշակութիւններն էլ գրուած են Ամոս եւ Ովսիայ մարգարէների գրքերում: Ամոսը Յուդայի երկրից էր Բեթէլ եկել եւ այդտեղ էր իր յայտնութիւններն անում: Բեթէլի քուրմը, Ամասիան, ամբաստանեց նրան Յերոբովամ թագաւորի առաջ, ասելով թէ նա իրան՝ թագաւորին անբնական մահ է գուշակում, գրգռում է ժողովրդը նրան տարագրութիւն եւ գաղթականութիւն գուշակելով: Թագաւորը հրամայեց, որ մարգարէին Յուդայի երկիրը հալածեն:

Երբոր Ամասիան թագաւորի հրամանն Ամոսին յայտնեց, մարգարէն ասաց, որ եւ նրա ոսկրները կընկնին գերութեան մէջ:

68. ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.

Մարգարէների գուշակութիւնները կատարուեցան: Ասորոց Սալմանասար թագաւորը կործանեց Իսրայէլի թագաւորութիւնը եւ բնակիչների մեծ մասը գերի տարաւ եւ բնակեցրեց Եփրատի միւս կողմը գտնուած երկիրներում: Ամենքը յիշեցին Աքիա մարգարէի ասածները Յերոբովամ Ա. թագաւորին: Իր գոյութեան ընթացքում Իսրայէլի թագաւորութիւնը շարունակ յարձակմունքների էր ենթակայ հարեւան ազգերից, եւ իսկապէս տատանվում էր եղեգի նման: Նա 257 տարի գոյութիւն ունեցաւ: Այդ ժամանակամիջոցում տասն եւ ինն թագաւոր փոխուեց, որոնք ինն այլեւայլ տոհմերի էին պատկանում, եւ արքայական գահը շարունակ խլում էին միմեանց ձեռքից: Երկիրը թափուր չթողնելու համար Սալմանասարը Բաբելոնի եւ Ասորիքի բնակիչներից շատերին տեղաւորեց գերի տարած Իսրայէլացիների տեղերում: Սրանք խառնուեցան մնացած Իսրայէլացիների հետ եւ կազմեցին մի առանձին ցեղ ու կոչուեցան Սամարացիք: Իսրայէլացոց երկրի նոր բնակիչները կարծում էին, թէ ամեն երկիր իր առանձին Աստուածն ունի եւ՝ կամենալով վաստակել իրանց նոր հայրենիքի Աստուծոյ գթութիւնը, ընդունեցին Մովսիսական օրէնքը եւ սկսան ճշմարիտ Աստուծուն երկրպագել, բայց միեւնոյն ժամանակ երկրպագում էին եւ իրանց աստուածներին: Այսպիսով խառն ժողովուրդը կազմեց մի խառն դաւանութիւն, որ ճշմարիտ Եբրայեցիներից Սամարական աղանդ անուանուեցաւ:

69. ՏՈԲԻԹԸ ԵՒ ՆՐԱ ՈՐԴԻ ՏՈԲԻԱՆ.

Ասորեստան գերի տարած Իսրայէլացոց մէջ բարեպաշտ մարդիկ եւս կային։ Այդպիսիներից մինն էր եւ Տոբիթը։ Տոբիթը բնակւում էր Նինուէում եւ վաճառականութեամբ պարապելով՝ մեծ հարստութիւն էր դիզել։ Նա իր թշուառ եւ չքաւոր ցեղակիցներին մեծամեծ օգնութիւններ էր տալիս. քաղցածներին հաց էր տալիս, մերկերին շոր եւ անտէրունչ մեռեալներին թաղում էր։ Սկզբում ոչ ոք նրան չէր արգելում, բայց յետոյ Իսրայէլացոց դրութիւնն աւելի ծանրացաւ։ Սալմանասարի որդի Սենեքերիմը սկսեց հալածել եւ կոտորել նրանց։ Քաղաքի փողոցներում միշտ թափուած կարելի էր տեսնել սպանուած Հրէաների դիակներ։ Բարեպաշտ Տոբիթը ծածուկ ժողովում էր այդ դիակները եւ ամփոփում հողի տակ։ Արքունի կառավարութիւնն իմանալով Տոբիթի արարմունքը մահուան դատավճիռ կայացրեց նրա համար։ Տոբիթը ծածուկ փախաւ Նինուէից, իսկ նրա հարստութիւնը յափշտակուեցաւ։ Սենեքերիմի մահից յետոյ նա թոյլտուութիւն ստացաւ, վերադարձաւ Նինուէ, նորից ձեռք բերեց իր հարստութիւնը եւ սկսեց օգնել իր կարօտեալ եղբայրներին։ Մի օր, Պենտեկոստէի տօնին, Տոբիթը մի ճոխ սեղան պատրաստեց եւ իր Տոբիայ որդուն ուղարկեց, որ հրաւիրէ բոլոր աղքատ Իսրայէլացիներին սեղանակից լինել իրան։ Տոբիան վերադարձաւ եւ պատմեց հօրը, թէ մի Իսրայէլացի սպանուած եւ ձգուած է հրապարակում։ Տոբիթն իսկոյն վերկացաւ սեղանից, գնաց բերեց սպանուածի դիակը եւ թաղեց գիշերը։ Մովսիսական օրէնքով մեռած դիակին ձեռք տուողը պիղծ էր համարւում եւ չէր կարող տուն մտնել, մինչեւ չլուացուէր ու չ'սրբուէր։ Տոբիթը գաւթումը մնաց եւ պատի տակը պառկեց ու քնեցաւ։ Գիշերը թռչունի ծեր-

տը նրա աչքի մէջ ընկաւ եւ կուրացրեց։ Տոբիթն այլեւս չէր կարողանում գործ կատարել։ Ընտանիքը կերակրում էր նրա Աննա կինը իր ձեռքի աշխատանքով։ Նրանք աղքատացան եւ ցամաք հացով էին կերակրւում։ Բարի մարդիկ մի անգամ Աննային իր մանածի փոխարէն մի ուլ էին ընծայել։ Տոբիթը լսեց նրա մկկոցը եւ զարմացաւ։ Նա սկսեց կասկածել՝ մի գուցէ չքաւորութիւնից ստիպուած գողացել են այդ ուլը։ «Ո՞րտեղից է դա», հարցրեց նա իր կնոջը։ Մարդու կասկածը սաստիկ վշտացրեց Աննային։ Նա դժուարութեամբ կարողացաւ համոզել իր մարդուն, որ դա գողացած չէ, եւ խօսքի վերջումն աւելացրեց բարկութեամբ. «Դու քո ողորմածութեամբ եւ առաքինութիւններով շատ ես պարծենում, բայց ո՞ւր են նրանք, ահա դրանց ապացոյցները երեւում են աչքերիդ մէջ»։ Դառնացաւ Տոբիթի սիրտը, երբ այսպիսի կծու յանդիմանութիւն լսեց իր կնոջ բերանից եւ մահ խնդրեց Աստուածանից։

70. ՏՈՒԲԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ.

Այդ դառն չքաւորութեան միջոցին Տոբիթը մտաբերեց, որ իր հարուստ ժամանակը Գաբայէլ անունով մի մարդու տասը տաղանդ (25,800 մանէթ) է պահ տուել։ Գաբայէլն ապրում էր Մարաց Հռագաւ քաղաքում։ Տոբիթը ցաւեցաւ, որ ինքը յուսահատութեամբ մահ էր խնդրել Աստուծուց, երբ նա դեռեւս ունէր մի այդպիսի նշանաւոր գումար։ Նա կանչեց իր որդի Տոբիային, գեղեցիկ խրատներ տուեց նրան *),

---

*) Ահաւասիկ այն խրատների համառօտութիւնը, որ Տոբիթն աւանդեց իր որդուն ճանապարհ ձգելուց առաջ։ «Երբ ես մեռնեմ, թաղես ինձ և միայն չ'թողնես քո մօրը. բոլոր կեանքի մէջդ

յանձնեց Գաբայէլի տոմսակը եւ պատուիրեց, որ մի հմուտ առաջնորդ գտնէ եւ նրա հետ ուղեւորուի դէպի Հռագաւ քաղաքը: Տոբիան հրապարակ դուրս եկաւ եւ շուտով գտաւ մի երիտասարդ մարդ, որ յայտնեց նրան թէ ինքը գիտէ Հռագաւ քաղաքի ճանապարհը, միքանի անգամ եղել է այնտեղ եւ ճանաչում է Գաբայէլին, եւ թէ պատրաստ է առաջնորդել նրան; Տոբիան տարաւ նրան իր հօր մօտ: Հայրը հարցրեց երիտասարդի կամքը եւ ստուգելով՝ որ նա կամենում է գնալ, խոստացաւ վերադարձին վարձատրել նրան: Իր որդու համար ճանապարհի պատրաստութիւն տեսնելուց յետոյ, Տոբիթն օրհնեց նրանց եւ ասաց. «Աստուած օրհնէ ձեր ճանապարհը եւ Նրա բարի հրեշտակն ուղեկից լինի ձեզ»:

Երեկոյեան ժամին ճանապարհորդները հասան Տիգրիս գետի եզերքը: Տոբիան մօտեցաւ գետափին, որ լուացուի: Յանկարծ մի մեծ ձուկը յարձակուեցաւ նրա վրայ եւ կարծես կամենում էր կլանել նրան: Նա վախեցաւ եւ բացականչեց: Ուղեկիցը խրախուսեց նրան եւ հրամայեց աներկիւղ բռնել, ափը նետել ձուկը: Տոբիան այնպէս էլ արեց: Ձուկը կտրեցին, սիրտը, լերդն ու լեղին պահեցին, իսկ միւսը

պատուիր նրան և երբէք վիշտ մի՛ պատճառիր: Երբոր նա մեռնի, ինձ մօտ թաղիր նրան։ Յիշի՛ր մեր Տէր Աստուծուն և մի՛ շեղուիր Նրա պատուիրաններից ու մի՛ մեղանչիր։ Ունեցածիցդ մասն ու բաժին հանի՛ր աղքատներին, չքաւորներին ու տնանկներին ողորմիր։ Եղիր ողջախոհ և զգուշացիր զեղխութիւնից։ Քո հօր սերունդից կին ընտրիր քեզ համար։ Զգոյշ և խոհեմ պահիր քեզ ամեն գործի մէջ։ Ինչ-որ ինքդ ատում ես, նոյն բանը ուրիշին մի՛ անիր։ Գինի մի՛ խմիր այնքան, որ արբենաս։ Իմաստուն մարդկանց խրատներն ու խորհուրդները մի՛ արհամարհիր։ Ամեն ժամանակ օրհնի՛ր և փառաբանի՛ր Աստուծուն և խնդրիր Նրանից, որ քո ճանապարհդ ուղիղ լինի և գործերդ յաջողակ»։

խորովեցին եւ կերան: Ուղեկիցն ասաց Տոբիային, որ այդ ձկան լեղին կարող է բժշկել աչքի կուրութիւնը:

Ճանապարհը շարունակելով՝ նրանք հասան Եկբատան քաղաքը եւ իջեւանեցին մի Հռագուէլ անունով Իսրայէլացու տանը: Հռագուէլը Տոբիայի ազգականներից էր: Նա մի աղջիկ ունէր, Սարրա անունով: Եօթն անգամ ամուսնացրել էին նրան եւ ամեն անգամ, առաջին իսկ գիշերը, չար հոգու հարուածից մեռել էր նրա փեսան: Աղջիկը շատ բարետեսիլ եւ բարեպաշտ անձն էր: Տոբիայի ուղեկիցը ճանապարհին խորհուրդ տուեց, որ կին առնէ նրան. Նա գովեց աղջկայ առաքինութիւնն ու բարութիւնը եւ ասաց թէ Աստուած կ'օրհնէ այդ ամուսնութիւնը: Տոբիան յանձնառու եղաւ: Հռագուէլը սիրով ընդունեց ճանապարհորդներին եւ երբ իմացաւ, որ Տոբիան իր ազգականն է, շատ ուրախացաւ եւ տեսակ տեսակ կերակուրներ պատրաստեց նրա համար: Բայց Տոբիան չ'կամեցաւ բերանը մի բան դնել, մինչեւ որ Հռագուէլը չ'խոստանայ Սարրային կին տալ իրան: Հռագուէլը սկզբումը դժուարանում էր, վերջապէս երկար տատանումից յետոյ յանձն առաւ կատարել նրա առաջարկութիւնը եւ օրհնեց նրանց ամուսնութիւնը: Տոբիայի ուղեկիցը դեռ ճանապարհին սովորեցրել էր նրան, թէ ինչ ճանապարհով կարող էր նա ազատուել չար հոգու հարուածից: Պէտք է ձկան սիրտն ու լեարդը ծխէր սենեակի մէջ եւ հարսի հետ միասին ջերմեռանդութեամբ աղօթէր դէպի Աստուած: Տոբիան հետեւեցաւ այդ խրատին եւ վտանգաւոր ժամն ապահով անցկացրեց: Նրա հարսանիքի ուրախութիւնը 14 օր տեւեց: Այդ միջոցին Տոբիայի ուղեկիցը միայնակ գնաց Հռագաւ քաղաքը, Գաբայէլից ստացաւ արծաթը եւ նրա հետ հարսանիք եկաւ: Տասնուչորս օրից յետոյ Տոբիան պատրաստուեցաւ վերադառնալ տուն: Վերջին մնաս բարեւն ասելիս՝ հայրը խրատեց իր աղջկան. «Պատուիր, որդեակ,

քո ամուսնու ծնողներին. այժմ նրանք եւ քո ծնողներն են։ Յոյս ունիմ, որ քո մասին միշտ բարի համբաւ կլսեմ»։ Մայրն էլ Տոբիային ասաց. «Աստուած տայ, որ ես արժանանամ տեսնել քո եւ Սառրայի որդիքը, յանձնում եմ քեզ իմ դուստրը, որպէս մի թանկագին գրաւական. չ՚վշտացնես նրան»։

Այդ միջոցին Տոբիայի ծնողները սաստիկ տրտում էին, նրանք չ՚գիտէին իրանց որդու ուշանալու պատճառը եւ կասկածում էին, մի գուցէ մեռել է։ Ամեն օր Աննան դուրս էր գնում եւ դիտում էր այն ճանապարհը, որտեղից պիտի վերադառնար նրա զաւակը։ Մի անգամ հեռուից նա նկատեց իր սպասած ուղեւորին եւ իր մարդուն իմաց տալուց յետոյ, ընթացաւ նրանց առաջը եւ պինդ գրկախառնեց իր որդուն։ Տան դռներում որդին հօրը պատահեց։ Տոբիան ձկան լեղուց նրա աչքի մէջ ձգեց եւ ասաց. «Տրորի՛ր հայր»։ Տոբիթն սկսեց աչքերը տրորել եւ նրա կուրութիւնը անցաւ։ Տեսաւ նա իր որդուն եւ ուրախութիւնից արտասուեցաւ։ Տոբիան պատմեց իր հօրն ու մօրը բոլոր պատահած բաները եւ նրա հետ միասին դուրս եկաւ Սառրային ընդունելու։

Վերջապէս հասաւ ժամը, երբ պիտի բաժանուէին բարի ուղեկցից։ Հայրը եւ որդին, ի նշան շնորհակալութեան, առաջարկեցին նրան իրանց ստացուածքի կէսը։ Բայց ուղեկիցը պատասխանեց. «Փառաբանեցէք միայն Աստուծուն, ահա յայտնում եմ ձեզ, որ երբ դու, Տոբիայ, եւ քո հարս Սառրան աղօթում էիք, ես էի որ ձեր աղօթքը մատուցանում էի Ամենաբարձրեալին, եւ երբ դու, Տոբիթ, թաղում էիր մեռելներին, ես միշտ քեզ հետ էի։ Եւ ահա Աստուած ուղարկեց ինձ, որ առողջացնեմ քեզ ու քո հարսին։ Ես Ռափայէլն եմ, մինը այն եօթը հրեշտակներից, որոնք սուրբերի աղօթքը մատուցանում են Աստուծուն»։ Հայրն ու որդին զարհուրեցան եւ չոքեցան գետնի վրայ։ Ռափայէլն ասաց.

«Մի՛ երկնչէք, այլ փառաբանեցէք Աստուած յաւիտեան։ Ես եկել էի Նրա հրամանով, այժմ վերադառնում եմ Նրա մօտ։ Գրեցէք գրքի մէջ այն բոլորը, ինչ-որ պատահեցաւ ձեզ»։ Տոբիթն ու Տոբիան վեր կացան, բայց պահապան հրեշտակն անյայտացել էր արդէն։ Այս բոլոր անցքերը նրանք գրեցին այն գրքի մէջ, որ կոչւում է Գիրք Տոբիթայ։

71. ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ.

Սողոմոնի որդի Ռոբովամը իր թագաւորութեան առաջին տարիներում հաւատարիմ մնաց ճշմարիտ Աստուծուն։ Բայց անցաւ միքանի տարիներ, եւ նա թողեց Մովսիսական օրէնքն ու իր երկրի բարձրութիւնների վրայ Փիւնիկեցի աստուածների անունով աղօթատներ շինեց։ Կռապաշտութեան հետ ամբարշտութիւնն էլ մտաւ ժողովրդի մէջ եւ խոր արմատներ արձակեց։ Ամբարիշտ թագաւորները յաջորդում էին միմեանց։ Երբեմն երբեմն Յուդան ունենում էր եւ բարեպաշտ թագաւորներ, որոնք վերականգնում էին ճշմարիտ աստուածպաշտութիւնը, կռատունները կործանում էին եւ ամեն կերպ յորդորում էին մոլորեալ ժողովրդին դառնալ դէպի ճշմարիտ Աստուած։ Բայց ժողովրդի դարձը հաստատ չէր լինում։ Յուդայի բնակիչներն սկսում էին զոհ մատուցանել Սողոմոնեան տաճարում, շաբաթն ու ամսամուտը տօնել, պաս պահել եւ կարծում էին, թէ այսպիսով կատարեցին բոլոր օրէնքները։ Ոչ մէկի մտքից չէր անցկենում ուղղել իր սիրտը, մաքրել զգացմունքը, ազնուամիտ եւ ճշմարիտ լինել եւ փոխադարձապէս սիրել միմեանց։ Այս էր ահա պատճառը, որ քանի բարեպաշտ թագաւորը կենդանի էր լինում, նրանք ճշմարիտ Աստուած էին պաշտում, բայց

հէնց նա մեռնում էր թէ չէ, նրանք կրկին դէպի կռապաշտութիւն էին դառնում: Իզուր էր անցնում քահանայապետների եւ մարգարէների յորդորները՝ բոլոր սրտով դառնալ դէպի Տէրը. նրանց լսող չէր լինում, մինչեւ անգամ հալածում ու սպանում էին ճշմարտութեան քարոզիչներին: Այսպէս ամբարշտութիւնն աւելի ու աւելի տարածուելով ժողովրդի բոլոր դասակարգերի մէջ, Յուդայի թագաւորութեան եւս կորստեան պատճառ եղաւ: Աստուծոյ թոյլտուութեամբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը նուաճեց Յուդայի թագաւորութիւնը, այրեց Սողոմոնի տաճարը, կործանեց Երուսաղէմը, իսկ երկրի բնակիչներին գերի վարեց: Յուդայի թագաւորութիւնը 390 տարի գոյութիւն ունեցաւ: Այդ ժամանակամիջոցում իշխեցին 17 թագաւորներ, որոնք բոլորն էլ Դաւթի ցեղից էին:

72. ԱՍԱՅ, ՅՈՎՍԱՓԱՏ ԵՒ ՅՈՎԱՍ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ.

ՄԻՔԻԱՅ ՄԱՐԳԱՐԷՆ.

Ռոբովամի որդին՝ Ասան, աշխատում էր ջնջել իր հօրից մնացած կռապաշտութիւնը: Նա կործանեց կռապաշտական սեղանները, քանդեց եւ հրամանագրեց ամենքին ճշմարտութեամբ կատարել Աստուածային օրէնքները եւ մահուան պատժով սպառնացաւ այն մարդուն, ով չի դառնալ դէպի Տէրը: Այս ամենը նա կատարում էր մեծ հաստատամտութեամբ: Մի անգամ նա կուռք գտաւ իր մօր սենեակում, կործանեց նրան եւ իր մօրն իսկ չ՚խնայեց, այլ զրկեց նրան արքայական կոչումից:

Ասային յաջորդեց նրա որդի Յովսափատը, որ աստուածպաշտութիւնը վերականգնելու համար իր հօրից աւելի աշխատեցաւ: Կռապաշտական մնացորդները ոչնչացնելուց յետոյ՝

նա հրամայեց Ղեւտացիներին եւ քահանաներին, որ բոլոր թագաւորութեան մէջ շրջեն, քարոզեն եւ սովորեցնեն ժողովրդին աստուածային օրէնքները: Բացի այս, թագաւորը սաստիկ հոգս էր քաշում, որ իր ժողովուրդը արդարադատութիւնից զուրկ չ՚մնայ, որ կամայականութիւնն ու անիրաւութիւնները վերանան: Այս նպատակով նա բոլոր քաղաքներում դատարաններ հիմնեց, իսկ Երուսաղէմում հաստատեց մի մեծ ժողով քահանաներից, ղեւտացիներից ու ժողովրդի ծերերից բաղկացած եւ դրանց դատաստանին յանձնեց բոլոր բողոքները:

Այսպիսի օրինակելի բարեպաշտութեան փոխարէն Աստուած պահպանում էր նրան իր բոլոր թշնամիներից եւ յաջողութիւն էր տալիս նրա ամեն գործողութիւններին: Յովսափատը հարուստ էր եւ փառաւոր անուան տէր բոլոր դրացի ազգերի մէջ:

Բայց առաքինի թագաւորը մի ակամայ սխալ գործեց, որ մեծ թշուառութիւն բերեց Յուդայի թագաւորութեանը: Կամենալով Յուդայի եւ Իսրայէլի թագաւորութիւնների մէջ տիրող սառնութեանը եւ թշնամական յարաբերութիւններին վերջ դնել, իր որդու համար կին առաւ Իսրայէլի թագաւոր ամբարիշտ Աքաաբի դուստր Գոթողիան: Յովսափատն ինքն էլ հասկացաւ իր սխալը, բայց արդէն ուշ էր. երբոր նա եկաւ Սամարիայ իր նոր ազգականներին տեսնելու, Աքաաբը նրանից օգնութիւն խնդրեց Ասորոց դէմ պատերազմելու համար: Յովսափատը համաձայնեցաւ, միայն առաջարկեց հարցնել այս մասին Աստուծոյ կամքը: Աքաաբը հաւաքեց չորս հարիւր մարգարէներ: Նրանք ամենքն էլ ասացին. «Գնա, Տէրը նրանց քո ձեռքը կըմատնէ»: Յովսափատը հարցրեց, թէ չ՚կա՞յ արդեօք մի այլ ճշմարիտ մարգարէ: «Մինը կայ, Միքիայ անունով, պատասխանեց Աքաաբը, բայց ես նրան չեմ սիրում, որովհետեւ երբէք լաւ բան չէ գու-

շակում ինձ, այլ միշտ վատ»: Յովսափատը խնդրեց, որ կանչեն Միքիային: Երկու Թագաւորներն էլ նստած էին գահերի վրայ, Սամարիայի դռների առաջ: Նրանց մօտ կանգնած էին բոլոր մարգարէները եւ միաբերան յաջողութիւն էին գուշակում»: Միքիան եկաւ եւ ասաց.—«Ես տեսնում եմ բոլոր Իսրայէլացոց սարերի վրայ ցրուած ինչպէս ոչխարներ, որոնք հովիւ չ'ունին: Եւ այսպէս է ասում Տէրը. «որովհետեւ նրանք առաջնորդ չ'ունին, թող ուրեմն իւրաքանչիւրը խաղաղութեամբ յետ դառնայ իր տունը»: «Ճշմարիտ չէ՞ի ասում, որ ամեն անգամ՝ երբ ես որեւիցէ բանի մասին հարցնում եմ սրան, ինձ երբէք բարի պատասխան չէ տալիս»: Այս ասաց Աքաաբը եւ հրամայեց բանտարկել Միքիային *): Թագաւորները չ'անսացին մարգարէին եւ գնացին պատերազմ. նրանց զօրքը ջարդուեցաւ, իսկ Աքաաբը մահացու վէրք ստացաւ: Աստուած փրկեց Յովսափատին: Երբոր նա տուն էր դառնում, մի մարգարէ ընդառաջ եկաւ նրան եւ ասաց. «Քեզ արժան չէր օգնել այն ամբարիշտ Թագաւորին, այդ էր պատճառը, որ Աստուած բարկացաւ քեզ վրայ եւ քո զօրքն էլ նրա զօրքի հետ թշնամու ձեռքը մատնեց»:

Այս ձախորդութիւնից յետոյ՝ Յովսափատն Աստուծուց շուտով օգնութիւն եւս ստացաւ: Ամմոնացիք, Մովաբացիք, եւ Եդովմացիք միասին պատերազմելու ելան նրա դէմ: Երբոր նա բոլոր ժողովրդի հետ ջերմեռանդութեամբ աղօթում էր, Աստուածային ներշնչմամբ մի Եբրայեցի գուշակեց, թէ իրանք առանց պատերազմելու կը յաղթեն: Միւս օրը Յովսափատի զօրքերը կրօնական հանդիսակատարութեամբ եւ սաղմոսերգութեամբ դուրս ելան թշնամու դէմ: Բայց նրանք սաստիկ զարմացմամբ տեսան, որ թշնամու բանակատեղը թափուր էր, իսկ բոլոր դաշտը ծածկուած էր նրանց զինուորների դիակներով: Դաշնակիցները կռուել էին միմեանց հետ եւ իրար կոտորել. բոլոր բանակը մնաց Յուդայի ձեռքը:

*) Միքիան մարգարէացաւ Սամարիայի և Երուսաղէմի կործանման մասին. Նա գուշակեց նաև Փրկչի գալստեան մասին. «Եւ դու Բեթղեհէմ տուն Եփրաթայ, սակաւաւոր իցես ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի»: (Միքիայ Ե. 2):

Յովսափատի մահից յետոյ միմեանց յետեւից յաջորդեցին նրան իր Յովրամ որդին եւ Ոքոզիայ թոռը: Սրանք երկուսն էլ Գոդողիայի թելադրութեամբ կռապաշտութիւնը նորից մտցրին ժողովրդի մէջ, որի համար Աստուած պատժեց նրանց: Յովրամի ժամանակ Եդովմացիք, որ առաջ հարկատու էին Յուդայի թագաւորներին, ապստամբուեցան նրանից եւ դադարեցին հարկ տալուց: Փղշտացիք եւ Արաբացիք յարձակուեցան Երուսաղէմի վրայ, կողոպտեցին թագաւորական պալատը եւ գերի արեցին արքայական տան բոլոր անդամներին. դրանցից ազատուեցաւ միմիայն թագաւորի կրտսեր որդին: Վերջապէս ինքը Յովրամը հիւանդացաւ եւ սաստիկ տանջանքներով գերեզման իջաւ:—Յովրամի Ոքոզիայ որդին մի տարի միայն թագաւորեց եւ սպանուեցաւ Իսրայէլի երկրում Յէուի ձեռքով:

Ոքոզիայի մայրը, Գոդողիան, երբոր որդու սպանման լուրն առաւ, կոտորեց արքայական տան բոլոր անդամներին եւ կառավարութեան ղեկն իր ձեռքը ձգեց: Բայց Աստուած չ'կամեցաւ ջնջել Դաւթի սերունդը եւ սպանուած թագաւորի որդիներից մինին ազատեց: Յովիդայէ քահանայապետի կինը Ոքոզիայի կրտսեր որդուն թագցրեց տաճարի շինութիւններից մինի մէջ եւ իր ստնտուի հետ պահում էր այն սենեակում, որ յատկացրած էր քահանայապետին: Այդտեղ քահանաները ծածուկ դաստիարակում էին Յովասին (այսպէս էր մանկան անունը), այնպէս որ ոչ ոք այդ մասին տեղեկութիւն չ'ունէր: Երբոր Յովասը եօթը տարեկան դար-

ձաւ, քահանայապետը թագաւոր հրատարակեց նրան։ Ժողովուրդը երդուեց հաւատարմութեամբ ծառայել մանուկ թագաւորին, ապա կործանեց Բահաղի կուռքը եւ Գոթողիային էլ սպանեց։ Քանի որ թագաւորը քահանայապետի հսկողութեան տակն էր աստուածահաճոյ գործեր էր կատարում։ Նա նորոգեց Աստուծոյ տաճարը եւ նրան իր նախկին փայլը տուեց։ Այս նպատակի համար թագաւորի հրամանով քահանաները Յուդայի բոլոր բնակիչներից հաւաքում էին օրէնքով նշանակած տուրքը (կէս սիկղ. 43 կոպ.). բացի սրանից տաճարի դռանը մի արկղ դրեցին, որի մէջ կամաւոր նուէրներ էին ձգում ցանկացողները։

Յովիդայի մահից յետոյ ամեն կարգ ու կանոն փոխուեցաւ։ Իշխանները թոյլտուութիւն խնդրեցին թագաւորից, որ երկրպագեն կուռքերին։ Նուաստով Աստուծոյ տաճարն արհամարհանքի մէջ ընկաւ։ Երեւեցան մարգարէներ, որոնց բոլոր քարոզներն ու յորդորներն իզուր էին անցնում, լսող չ'կար։ Երբոր Յովիդայի որդին, Զաքարիան, սկսեց սպառնալ ամբարիշտ մեծամեծներին Աստուծոյ պատուհասով, թագաւորի հրամանով տաճարի գաւթումը քարկոծեցին նրան։ Այս ամեն չարագործութիւնների համար Տէրը նրան Ասորոց թագաւորի ձեռքը մատնեց։ Ասորիք եկան, նրա զօրքը ջնջեցին, տաճարի բոլոր թանկագին իրեղէնները կողոպտեցին, պալատն աւարի տուին։ Ինքը թագաւորն էլ սպանուեցաւ որպէս մի հասարակ մեղապարտ եւ արքայական թաղման իսկ չ'արժանացաւ։

---

73. ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՆ.

Երբ կռապաշտութիւնը սաստիկ տարածուեցաւ Յուդայի թագաւորութեան մէջ, յայտնուեցաւ Եսայի մարգարէն, որ խստիւ կշտամբում էր ժողովրդի ամբարշտութիւնները եւ Աստուածային պատուհասներով սպառնում էր նրանց։ Առաջին անգամ Տէրը երեւեցաւ նրան՝ նստած ամենափառահեղ գահի վրայ եւ շրջապատուած հրեշտակների բազմութեամբ, որոնք երգում էին. «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեան, լի է ամենայն երկիր փառօք Նորա»։ Եսային սարսափած բացականչեց. «Վա՜յ ինձ, ես մի տառապեալ եւ պղծաշրթն մարդ եմ, եւ ապրում եմ նոյնպէս պղծաշուրթն ժողովրդի մէջ, այն ինչ իմ աչքերս տեսան երկնաւոր Թագաւորին, զօրութիւնների Տիրոջը»։ Այդ միջոցին Քերովբէն ձեռքի ունելիքով երկնային սեղանի կրակից մի կայծ վերառաւ, մօտեցրեց կայծը Եսայի մարգարէի շրթունքին եւ ասաց. «Ահա սա շօշափելով քո շրթունքը, կսրբէ ու կմաքրէ քո մեղքը եւ քո անօրէնութիւնը»։ Այնուհետեւ Եսային լսեց Աստուծոյ ձայնը, որ ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, ով կ'երթայ այն ժողովրդի մօտ»։ Եսային պատասխանեց. «Ահաւասիկ եմ ես, ինձ ուղարկիր»։ Տէրն ասաց նրան. «Գնա՛ եւ ասա՛ այդ ժողովրդին. լսելով կլսէք եւ չէք իմանայ եւ տեսնելով կտեսնէք ու չէք տեսնի, որովհետեւ կոշտացել է այս ժողովրդեան սիրտը եւ իրանց ականջները ծանր են լսում, եւ իրանց աչքերը փակեցին, որ աչքով չ'տեսնեն եւ ականջով չ'լսեն եւ սրտով չ'իմանան եւ չ'դառնան, որ Ես բժշկեմ նրանց»։ Եսային հարցրեց. «Երկար կտեւէ այդ, Տէր»։ Տէրը պատասխանեց. «Մինչեւ որ քաղաքները կդատարկուեն եւ կմնան առանց բնակչի, իսկ տներն առանց մարդկանց, եւ մինչեւ որ այս երկիրը

բոլորովին ամայի կըդառնայ։ Եւ ինչպէս որ բեւեկնի եւ կաղնի ծառից, երբ նրանք կտրւում են անգամ, մնում է նրանց արմատը, այնպէս էլ սուրբ Զաւակը կըլինի նրա արմատը»։

Այնուհետեւ Եսայի մարգարէն գնաց քարոզելու կամակոր եւ ապերախտ ժողովրդին, խօսելու անզգամ կռապաշտների հետ։ Նա սպառնագին կշտամբում էր նրանց կռապաշտութեան համար, կշտամբում էր, որ մոռացել են իրանց Ստեղծողին եւ Բարերարին, Որը սիրում էր իրանց եւ խնամում որպէս քնքուշ խաղողենի, մոռացել են իրանց Տիրոջը, մինչդեռ եզն ու էշը չեն մոռանում իրանց խնամողին։ Մարգարէն նախատում էր նրանց, որովհետեւ կարծում էին, թէ լոկ զոհաբերութիւններով կարող են արժանանալ Աստուծոյ գթութեան, առանց իրանց սիրտը Նրան նուիրելու։ Նա Աստուծոյ անունով ուղղակի ասում էր նրանց, որ երկրաւոր ամէն տեսակ տանջանքների պիտի հանդիպին իրանց խաբեբայութեան, երդմնազանցութեան, որբերին եւ այրիներին զրկելու համար, եւ որ նրանց զոհաբերութիւնը առանց սիրոյ եւ արդարադատութեան՝ պիղծ է Աստուծոյ առաջ եւ եթէ նրանք դարձի չ՚գան եւ չ՚ուղղեն իրանց գործերը, Աստուած գերութեամբ կըպատժէ նրանց։

Բացի Աստուծոյ պատիժներն ու սպառնալիքները նրանց յայտնելուց, Եսային միեւնոյն ժամանակ եւ Տիրոջ ողորմութեան համբաւաբերն էր։ Բարեպաշտ անձանց մխիթարելու համար Նա շատ անգամ խօսում էր ապագայ Փրկչի մասին։ Մարգարէն Նրան անուանում էր հզօր Աստուած. Թագաւոր արդարութեան, Իշխան խաղաղութեան, Որի Թագաւորութեանը վախճան չ՚պիտի լինի, ասում էր, որ Նա առատապէս պիտի ստանայ Հոգւոյն Սրբոյ շնորհքը եւ պիտի լինի Քրիստոս կամ Մեսիա (որ կընշանակէ օծեալ), որ Նա հրաշքներ կըգործէ՝ Նրա խօսքով կաղերը կըգնան, կոյրերը

կըտեսնեն, մեռեալները յարութիւն կ՚առնեն, որ Նրան մարդիկ չեն ճանաչիլ, կ՚սպանեն որպէս մեղապարտ եւ Նրա արիւնը փրկութեան զոհ կըլինի մարդկանց մեղքերի համար։ Փրկչի ապագայ տառապանքները Եսային այնպէս պարզ էր նկարագրում, կ՚ասես, թէ իր աչքով տեսած լինէր նրանց։ (Այս է պատճառը, որ նրան մարգարէ—աւետարանիչ են անուանում)։

Եսային մարգարէացաւ նոյնպէս, որ Կիւրոս Թագաւորը Յուդային կ՚ազատէ գերութիւնից։ Բայց անօրէն ժողովուրդը չէր լսում եւ չէր անսում նրա խօսքերին։ Աւանդութիւնն ասում է, որ նա որպէս նահատակ մեռաւ, նրան փայտէ սղոցով սղոցեցին։

74. ԱՔԱԶ, ԵԶԵԿԻԱՅ ԵՒ ՄԱՆԱՍԷ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ.

Այն ժամանակուայ դատաւորները հաստատեցին Եսայի մարգարէի սպառնալից խօսքերը։ Ասորոց Ռասոն թագաւորը Իսրայէլի Փակէէ Թագաւորի հետ համաձայնուելով մտադիր եղան նուաճել Յուդայի երկիրը։ Այդ միջոցին Յուդայի վրայ Թագաւորում էր ամբարիշտ Աքազը։ Նա սեղան կանգնեց Բահաղին, զոհեր էր մատուցանում բարձրութիւնների վրայ եւ ստուերաշատ ծառերի տակ, իր զաւակներին բոցավառ կրակի վրայից անց էր կացնում, որ կռապաշտների կարծիքով մեղքերից քաւում էր նրանց։ Այս ամենի համար Աստուծոյ ձեռքը ծանրացաւ նրա վրայ։ Ռասոն եւ Փակէէ Թագաւորները յաղթեցին Յուդայի զօրքին, նրանցից շատերին գերի արին եւ մտադրեցին բնաջինջ անել Դաւթի ցեղը, Աքազին գահից զրկել եւ նրա գահի վրայ ուրիշին բազմեցնել։ Թշնամին մօտ էր աչն Երուսաղէմին։ Այդ միջոցին Եսային եկաւ Թագաւորի մօտ եւ ասաց. «Մի՛ երկնչիր

Ռասոնից եւ Փակէէից, նրանք երկու ծխող գլուխներ են, որոնք շուտով կըմարեն եւ նրանց մտադրութիւնը քո տան վերաբերութեամբ չի կատարուիլ։ Բայց աւելի վստահ լինելու համար մի նշան խնդրիր Աստուածանից»։ Աքազը չ՚հաւատաց մարգարէի խօսքին, բայց կեղծաւորութելով ասաց. «Չեմ փոր-ձի Տիրոջը»։ Այն ժամանակ Եսային ասաց.—Տէրն ինքը ցոյց կըտայ քեզ այդ նշանը. «Ահա կոյսը կըյղանայ եւ կըծնի որդի եւ նրա անունն Էմմանուէլ կըկոչեն, որ կընշանակէ Աստուած մեզ հետ»։ Աստուածորդու մասին ասած այս մար-գարէութիւնը պիտի մտաբերէր Աքազին Դաւիթ Թագաւորին արած խոստումը, որ Փրկիչը պէտք է նրա սերունդից ծագէ, եւ հետեւապէս պիտի վստահացնէր, որ նրա բոլոր տունը ջնջուել չէ կարող, քանի որ աշխարհ չէ եկել Փրկիչը։ Եսայի խօսքերը կատարուեցան. դաշնակից Թագաւորները թողին Երուսաղէմն ու հեռացան։

Բայց անհաւատ Աքազին չ՚զգաստացրեց եւ չ՚հանդըս-տացրեց ոչ Թագաւորների անսպասելի կերպով հեռանալը եւ ոչ մարգարէի խօսքերը Փրկչի գալստեան մասին։ Նա Ասորեստանցոց Թագաւորի մօտ դեսպան ուղարկեց եւ ստո-րութեամբ աղերսեց, որ գայ օգնէ իրան իր Թշնամիների դէմ, եւ արքայական պալատի բոլոր ոսկին ու Թանկագին իրերը, որպէս եւ Աստուծոյ տաճարի Թանկագին անօթները նրան ընծայ ուղարկեց։ Աքազն այնքան կարճատես էր, որ չէր կարողանում հասկանալ, Թէ Ասորեստանցոց օգնութեան կանչելով Ասորոց եւ Իսրայէլի դէմ, միեւնոյն ժամանակ իր տէրութիւնն էլ վտանգի էր ենթարկում, որ երկու զօրեղ տէրութիւններին յաղթելուց յետոյ, կասպաշտ Թշնամին յը-պիտի խնայէ եւ նրա թոյլ իշխանութիւնը։ Այսպէս էլ եղաւ։ Ասորեստանի Թագաւորը նուաճեց Ասորիքը եւ Իսրայէլի հիւսիսային նահանգների բնակիչներին տեղափոխեց Ասորես-տան։ Աքազը սաստիկ վախեցաւ. խորին հպատակութեամբ

նա գնաց Դամասկոս յաղթող Թագաւորի մօտ, որին ինքը օգնութիւն էր կանչել. այնտեղ Դամասկոսի կուռքերին զո-հերով մեծարեց եւ այնտեղի զոհարանի նմանութեամբ Սո-ղոմոնեան տաճարում եւս սեղան կազմեց։ Աքազը կարծում էր, Թէ Դամասկոսի աստուածներն են օգնել Ասորեստանցոց։ Ասորեստանի Թագաւորը հարկատու անելով Աքազին, վերա-դարձաւ իր երկիրը։

Ամբարիշտ Թագաւորի որդին՝ Եզեկիան, Մովսիսական օրէնքի ջերմեռանդ կատարողն էր։ Գահը բարձրանալով, նրա առաջին գործն այն եղաւ, որ ճշմարիտ Աստուածպաշ-տութիւնը վերականգնէ։ Նա տաճարը ամայի գտաւ, նրա-նում այլեւս զոհ չէին անում, կնդրուկներ չէին ծխում, կանթեղները հանգած էին եւ դռները փակած։ Թագաւորի հրամանով բաց արին տաճարը եւ մաքրեցին։ Եզեկիան այ-նուհետեւ մի առանձին հանդիսով կատարեց Զատկական տօնը, որին Թագաւորի հրաւէրքով ներկայ էին նաեւ շատ Իսրայէլացիք։ Յետոյ բոլոր տէրութեան մէջ եղած կուռքերը եւ բարձրութիւնների վրայ եղած սեղանները կործանուեցան, բոլոր սրբազան համարուած ծառերը կտրատուեցան եւ Մով-սիսական օրէնքը վերականգնեցաւ։ Եզեկիան հրամայեց ոչըն-չացնել մինչեւ անգամ պղնձէ օձը, որ անապատում բարձ-րացրել էր Մովսէսը, որովհետեւ հրէաները նրա առաջ խըն-կարկութիւն էին անում։

Տէրը բարեպաշտ Թագաւորին օգնում էր իր արտա-քին Թշնամիների դէմ։ Նրա ժամանակն էր, որ Սալմանա-սարը կործանեց Իսրայէլի Թագաւորութիւնը. բայց Եզեկիան նրան իր վրայ իշխան չ՚ճանաչեց։ Սալմանասարի որդի Սե-նեքերիմը իր Ռափսակ զօրապետին ուղարկեց, որ Երուսա-ղէմը նուաճէ։ Եզեկիան վճռեց մինչեւ վերջին շունչը պաշտ-պանուիլ եւ Աստուծոյ օգնութեամբ դիմեց։ Այդ միջոցին նրա մօտ եկաւ Եսայի մարգարէն եւ Աստուծոյ կողմից ասաց.

«Ասորոց թագաւորի ծառայի խօսքերից մի վախենար. ես նրան այնպիսի լուր կըտամ, որ ստիպուած կըլինի վերադառնալ իր երկիրը եւ այնտեղ սրով կըկործանեմ նրան»: Եւ իսկ որ Սենեքերիմը լուր առաւ, որ Եթովպացոց թագաւորը յարձակուել է իր երկիրների վրայ. այդ բանից ստիպուած նա Ռափսակին յետ կանչեց: Յուդայի սահմաններից դուրս գալով՝ Սենեքերիմը նամակ գրեց Յուդայի թագաւորին, որի մէջ ծաղրում էր, որ իր յոյսը Աստուծոյ վրայ է դրել եւ ասում էր, որ Եհովան նոյնքան անզօր է նրա դէմ, որքան միւս ազգերի աստուածները: Եզեկիան այս նամակը ձեռքին մտաւ տաճարը եւ Աստուծոյ դատաստանին յանձնեց նրան: Եսայի մարգարէն նորից եկաւ թագաւորի մօտ եւ հաւատացրեց, որ Սենեքերիմը չի մտնիլ Երուսաղէմ. եւ ոչ մի նետ չի արձակիլ նրա վրայ: Նոյն գիշերը Տիրոջ հրեշտակը Ասորեստանցոց զօրքից 185,000 հոգի կոտորեց: Սենեքերիմն էլ Նինուէ հասնելով՝ սպանուեցաւ իր որդիներից:

Այս անցքից մի տարի յետոյ Եզեկիան վտանգաւոր կերպով հիւանդացաւ: Եսայի մարգարէն եկաւ նրա մօտ եւ Աստուծոյ կողմից ասաց, որ նա կըմեռնի: Եզեկիան սկսեց աղօթել Աստուծուն: Մարգարէն նոր էր ոտքը դուրս դրել քաղաքից, երբ նորից յայտնութիւն եղաւ, որ Տէրը դարձեալ տասն եւ հինգ տարի կեանք է տալիս թագաւորին: Նա վերադարձաւ եւ յայտնեց թագաւորին Աստուծոյ գթութիւնը, հրամայելով մահաբեր ուռոյցքի վրայ, որից նա տանջւում էր, թզենու տերեւ դնել: Իբրեւ նշան, որ իր խօսքերը պիտի կատարուէին, արեգակնային ժամացոյցի վրայ ստուերը տասն աստիճան յետ գնաց խոյն՝ թագաւորի աչքի առաջ: Եզեկիան առողջացաւ եւ երեք օրից յետոյ կարողացաւ տաճար գնալ:

Արեգակնային ժամացոյցի յետ քաշուիլը նկատելի եղաւ մինչեւ անգամ հեռաւոր երկիրներում: Բաբելոնի թագաւորը

շնորհաւորութեան նամակ եւ ընծաներ ուղարկեց Եզեկիային. նա լսել էր նրա հիւանդութեան մասին եւ կամեցաւ իմանալ այն մեծ նշանը, որ եղաւ երկրի վրայ: Թագաւորը սիրով ընդունեց դեսպաններին եւ փոքր ինչ գոռոզացած՝ տարաւ ցոյց տուեց նրանց իր տան ներքնատունները, տան հարստութիւնը եւ զինարանը: Այն ժամանակ Եսայի մարգարէն եկաւ նրա մօտ եւ հարցրեց. «Ի՞նչ էին ասում այս մարդիկը եւ ո՞րտեղից էին եկել սրանք»: Եզեկիան պատասխանեց. «Հեռու երկրից, Բաբելոնից»:—Իսկ ինչ տեսան սրանք քո տանը: Թագաւորը պատասխանեց. «Բոլորը տեսան իմ թանգարանում. մի բան չ՚մնաց, որ ցոյց չ՚տայի ես նրանց»: Մարգարէն պատասխանեց. «Լսի՛ր Տիրոջ խօսքերը. ահա կըգան օրեր եւ բոլորը, ինչ-որ կայ տանդ մէջ, Բաբելոն կըտարուի եւ քո որդիքդ Բաբելոնի թագաւորի դռանը ներքինիք կըլինին»: Եզեկիան երբ լսեց իր ժողովրդի գերութեան երկրորդ գուշակութիւնը, սաստիկ վշտացաւ եւ աղօթում էր, որ գոնէ իր օրերում խաղաղութիւն եւ օրհնութիւն լինի իր երկրում:

Բարեպաշտ Եզեկիայի մահից յետոյ գահը բարձրացաւ նրա Մանասէ անունով որդին: Սա վերականգնեց կռապաշտութեան բոլոր տեսակները, մինչեւ անգամ տաճարի սրահներում եւ տաճարի մէջ եւս կուռքեր կանգնեցրեց, կրակի բոցի միջից անցկացրեց իր որդուն, հմայութիւն, գողութիւն, մեռելահարցուկ, կախարդների ազատութիւն, բոլորը գործում էր եւ իր վատթար օրինակով այնտեղը հասցրեց, որ նրա հպատակներն սկսան աւելի վատ վարուել, քան այն ազգերը, որոնց Աստուած պատժել էր նրանց պատճառով: Մարգարէների բերանով Տէրը նախագուշակեց, որ Երուսաղէմը պիտի կործանուի, ինչպէս կործանուեցաւ Սամարիան: Բայց Մանասէն՝ փոխանակ զղջալու, մահով պատժում էր մարգարէութիւն անողներին: Աւանդութիւնն ասում է, որ Ե-

սային նրա ձեռքով նահատակուեցաւ: Մանասէն ինքն էլ սարսափելի պատժի ենթարկուեցաւ: Ասորեստանցոց թագաւորի զօրապետները գերի տարին նրան եւ շղթայակապ Բաբելոն տարան: Սաստիկ տանջանքներ կրելուց յետոյ՝ նա զղջաց եւ Տէրը ներեց նրան ու վերադարձրեց իր կորցրած թագաւորութիւնը: Այդ ժամանակ Մանասէն քանդել տուեց կռատունները, կուռքերը կործանեց, ճշմարիտ աստուածպաշտութիւնը վերականգնեց, բայց նա չկարողացաւ արմատախիլ անել այն թերահաւատութիւնը, որին ընտելացել էր ժողովուրդը:

75. ՅՈՎՍԻԱՅ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ. ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷՆ.

Յովսիայ թագաւորը (Մանասէի թոռը) հաստատապէս գնաց իր արժանաւոր նախորդների շաւղով: Նա Բահաղի սեղանը կործանեց, նրան նուիրած ծառերը կտրատեց, կուռքերի արձանները փշրեց եւ ցրուելով այն անձանց գերեզմանների վրայ, որոնք նրան զոհեր էին մատուցած, հանեց եւ այրեց բոլոր քուրմերի ոսկրները. Նա գնաց նախկին Իսրայէլի թագաւորութեան սահմանը, ուր ապրում էին շատ Իսրայէլացիք եւ այնտեղ եւս ջնջեց կռապաշտական արձանները: Այս ճանապարհորդութեան ժամանակ մեծամեծ հարստութիւններ եւ նուէրներ ժողովեց տաճարի վերանորոգութեան համար: Երբոր տաճարի վնասեալ մասերը նորոգել ձեռնարկեցին, Քեղկիայ քահանայապետը գտաւ Մովսէսի օրինաց գիրքը: Երբ այս գիրքը կարդացին թագաւորի առաջ, նա սաստիկ նեղութիւնից պատառոտեց իր հանդերձը եւ երդուեց չշեղուիլ Աստուծոյ խօսքերից: Այն ժամանակ Աստուած յայտնեց նրան, որ նա իր թագաւորութեան ժամա-

նակ չի տեսնիլ օրէնքի խոստացած սպառնալիքները: Յովսիան կատարեալ եռանդով ձեռնակեց մաքրել տաճարը կռապաշտական աղտոտութիւններից: Նրա հրամանով Աստուծոյ տանից դուրս բերին այն ամեն բաները, որ շինած էին ի պատիւ Բահաղի, Աստարոտի եւ երկնային լուսատուների, այրեցին նրանց եւ փոշին Բեթէլ տարան: Աստարոտի կուռքն եւս դուրս բերուեցաւ տաճարից այրուեցաւ եւ փոշին ժողովրդական գերեզմանատանը ցրուեցաւ, իսկ այնտեղը, ուր մանուկներին անց էին կացնում կրակի միջով ի պատիւ Մոլոք աստուծոյ, ապականութեան տեղ դարձրին: Բեթէլ քաղաքում Յերոբովամի ձեռքով շինած բարձրութիւնը քանդեց, նոր կաղնեայ ծառաստանն այրեց, քուրմերի ոսկորները գերեզմանից հանեց եւ կրակի մէջ ձգեց, միայն ձեռք չտուեց Յուդայի երկրից գնացած մարգարէի գերեզմանին, այն մարգարէի, որ սեղանի կործանումը նախագուշակել էր: Սեղանը կործանելուց առաջ նրա վրայ մորթոտեց բոլոր կենդանի մնացած քուրմերին եւ ապա այրեց: Այդ ամենից յետոյ պասէքի տօնն այնպէս շքեղութեամբ կատարեց, որ առաջ էլ հազիւ էր պատահած:

Յովսիայի օրով երեւեցաւ մեծ մարգարէն Երեմիայ: Տէրն ասաց Երեմիային. «Հիւսիսից ամենատեսակ թշուառութիւններ կըթափուի այս ժողովրդի գլխին այն ամեն չարութիւնների համար, որ դրանք գործեցին. Ինձ ուրացան եւ սուտ աստուածների երկրպագեցին: Իսկ դու ասա նրանց բոլորը, ինչ-որ Ես քեզ կըհրամայեմ. չվախենաս նրանցից: Ահա, որ Ես այսօր կացուցանում եմ քեզ որպէս ամուր քաղաք, որպէս պղնձէ պարիսպ այս բոլոր երկրի դէմ, Յուդայի բոլոր թագաւորների, քահանաների եւ իշխանների դէմ: Նրանք կըթշնամանեն քեզ, բայց չեն կարող վնասել քեզ, որովհետեւ Ես հետդ կըլինիմ եւ կըպաշտպանեմ քեզ»: Եւ երեւեցաւ Երեմիան եւ խիստ յանդիմանական խօսքերով

քարոզում էր, սպառնում էր նրանց եւ ասում, որ հզօր թագաւորը կըգայ հիւսիսից եւ իր հետ կըբերէ աւերիչ պատերազմ եւ անտանելի թշուառութիւններ: Այս քարոզութիւնների պատճառով նրա թշնամիներն օրէ ցօր բազմանում էին:

Յովսիայի մահից յետոյ մարգարէի գուշակութիւնները կատարուել սկսան: Եգիպտոսի Նէքաւով թագաւորը մեռցնելով Յովսիային, նրա Յովակիմ որդուն Յուդայի վրայ թագաւոր կարգեց եւ իրան հարկատու արաւ: Այդ միջոցին Բաբելոնի թագաւորը նուաճեց Ասորեստանի թագաւորութիւնը եւ պատերազմ սկսեց Եգիպտոսի հետ: Այդ ժամանակ Երեմիան Տիրոջ անունից ասաց Երուսաղէմի բնակիչներին. «Ահա Ես կ'ուղարկեմ այս երկրի վրայ Բաբելացոց Նաբուգոդոնոսոր թագաւորին, որպէս եւ բոլոր շրջակայ ցեղերի վրայ: Նա գերի կ'անէ այս ժողովուրդը եւ եօթանասուն տարի նրանց իշխանութեան տակ կըմնան: Իսկ երբ եօթանասուն տարին կըլրանայ, Ես կըպատժեմ Բաբելացոց թագաւորին եւ նրա ժողովրդին իրանց անօրէնութիւնների համար եւ Քաղդէացոց երկիրը յաւիտեան անապատ կըդարձնեմ»: Երեմիայի խօսքերը կատարուեցան. Նաբուգոդոնոսորը յաղթեց Եգիպտացոց թագաւորին, նուաճեց Երուսաղէմը, Յովակիմին իրան հարկատու արաւ եւ իբրեւ պատանդ Բաբելոն տարաւ շատ շնորհալի եւ գեղեցիկ պատանիներ, թէ թագաւորական եւ թէ նշանաւոր իշխանական տներից. (670 թ. Ք. ա.) բայց Յովակիմը շուտով ապստամբեցաւ Բաբելոնի իշխանութիւնից եւ այդ պատճառով շղթայակապ գերի տարուեցաւ Բաբելոն: Նրա որդի Յեքոնիան հարիւր օր միայն թագաւորեց: Նա եւս իր հօր պէս ապստամբեցաւ, բայց Նաբուգոդոնոսորը երրորդ անգամ պաշարեց Երուսաղէմը, յաղթեց, կողոպտեց քաղաքը եւ տաճարը: Յեքոնիան ստիպուած էր անձնատուր լինել: Այս անգամ Նաբուգոդո-

նոսորը Բաբելոն քշեց բոլոր արքայական տունը, իշխաններին, նշանաւոր զինուորականներին եւ արուեստաւորներին: Նա տարաւ իր հետ տաճարի սրբազան անօթներն ու շատ թանկագին բաներ: Յուդայի վրայ նա թագաւորեցրեց Յովսիայի երկրորդ որդուն՝ Սեդեկիային:

Այդ ժամանակը Երեմիայ մարգարէն յորդորում էր ժողովրդին, որ Բաբելոնի թագաւորներին հաւատարմութեամբ ծառայեն եւ նախազգուշացնում էր, որ եթէ Եբրայեցիք դարձեալ կըդաւաճանեն Նաբուգոդոնոսորին, ապա Երուսաղէմը հրոյ ճարակ կըտրուի եւ թագաւորն ու ժողովուրդը գերի կըտարուին: Բայց նրան ականջ դնող չ'եղաւ: Սեդեկիան Եգիպտոսի հետ դաշն կապեց ընդդէմ Բաբելացոց:

Նաբուգոդոնոսորը վերջին անգամ պաշարեց Երուսաղէմը: Երեմիան խորհուրդ տուեց անձնատուր լինել: Բայց այդ խորհրդի համար նրան տղմով լիքը մի գուբի մէջ ձգեցին, ուր նա կըմեռնէր, եթէ մի Եթովպացի չ'բարեխօսէր թագաւորի առաջ եւ չ'փրկէր նրան: Երեմիայի խօսքերն այս անգամ եւս կատարուեցան: Նաբուգոդոնոսորը վերցրեց քաղաքը, տաճարն ու արքունի պալատն այրեց եւ քաղաքի պարիսպներն ու բոլոր տները քանդեց: Սեդեկիայի որդիքը հօր աչքի առաջ սպանուեցան. իրան Սեդեկիային էլ կուրացրին, շղթայեցին եւ վարեցին Բաբելոն, ուր նա մեռաւ բանտի մէջ: Այս անգամ Յուդայի բոլոր բնակիչները գերի տարուեցան Բաբելաստան, միայն ամենաչքաւորները մնացին իրանց հայրենիքում՝ երկիրը մշակելու համար (589 թ. Ք. ա.): Երեմիան Երուսաղէմում մնաց: Քաղաքի աւերակների վրայ նստած՝ նա ողբում էր իր հայրենիքի վիճակը եւ չէր դադարում խրատել եւ ուսուցանել մնացած ժողովրդին: Բայց Եբրայեցիք այժմ եւս չէին լսում մարգարէի իմաստուն խրատներին: Զ'կամենալով հպատակուել Նաբուգոդոնոսորին, նրանք բոլորը Եգիպտոս գաղթեցին, իրանց հետ տանելով

եւ մարգարէներին, որոնց եւ քարկոծեցին այնտեղ: Երեմիան թողել է իր մարգարէութիւնների գիրքը եւ մի «ողբ» Երուսաղէմի աւերակների մասին:

Երեմիան իր մարգարէական գրուածների մէջ Փրկչի գալստեան մասին եւս գուշակութիւններ արեց. Նա մարգարէացաւ, որ Փրկիչը կըծնանի Դաւթի ցեղից, որ Նրա անունը կըլինի Տէր եւ Նա կըլինի արդարադատ Թագաւոր եւ նոր ուխտ ու նոր աւետիք կըբերէ ժողովրդեան, որ Նա Յուդային ու Իսրայէլին կըփրկէ գերութիւնից:

Սամուէլից մինչև Յուդայի թագաւորութեան անկումը պատահած բոլոր անցքերը գրուած են Թագաւորների չորս գրքի մէջ և Մնացորդների երկու գրքի մէջ, բացի այն գրքերից, որոնք յիշուեցան իրանց տեղը:

Բաբելոնեան գերութեան ժամանակները.

76. ԵԲՐԱՅԵՑՈՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ. ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ԳԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ. ԵԶԵԿԻԷԼ ՄԱՐԳԱՐԷՆ:

Այս ընդհանուր գերութիւնից յետոյ Բաբելոնի թագաւորները մեղմացրին Եբրայեցոց ստրկական կացութիւնը: Նրանք իրաւունք ստացան ազատ պաշտել իրանց կրօնը, ունենալ իրանց իշխանները եւ դատուիլ իրանց օրէնքներին համեմատ: Նրանք թոյլտուութիւն ստացան պարապել վաճառականութեամբ, գնել տներ եւ հողեր եւ մինչեւ անգամ արքունի ծառայութեան մէջ պաշտօններ վարել: Նրանց վերջին Թագաւորը հանուեցաւ բանտից, պալատում բնակարան ստացաւ արքայավայել ռոճիկով եւ նրա գահը դրուեցաւ աւելի բարձր, քան Բաբելոնեան իշխանութեանը ենթակայ

միւս թագաւորների գահերը: Բայց այսուամենայնիւ Յուդայի բնակիչները սաստիկ վշտանում էին, որ օտար երկրում են ապրում, Երուսաղէմից հեռու, որ զրկուեցան Ուխտի Տապանակից եւ չեն կարողանում զոհ մատուցանել Եհովային: «Գերութեան երգի» մէջ նրանք արտայայտում էին իրանց վշտերը, իրանց սրտի թախիծը *):

Եբրայեցոց մխիթարելու եւ նրանց հաւատը դէպի Աստուած հաստատ պահպանելու համար, Աստուած ուղարկեց մարգարէներ՝ Եզեկիէլին եւ Դանիէլին:

Եզեկիէլն ամենայն հոգով սիրում էր Աստուծոյ ժողովուրդը, միւսներից աւելի էր զգում Իսրայէլի թշուառութեան ծանրութիւնը եւ այդ տառապանքների միջից տեսնում էր Աստուծոյ ողորմութիւնը, որ պատժում է նրան, որին սիրում է: Մի անգամ Տէրը տեսիլքի մէջ ցոյց տուեց նրան Իր փառքը եւ ապա հրամայեց գնալ եւ քարոզել Իսրայէլացոց՝ առանց ուշադրութիւն դարձնելու՝ կըլսեն արդեօք իրան, թէ չեն լսիլ: Ու եկաւ Եզեկիէլը Յուդայի ժողովրդի մէջ եւ խիստ կերպով յանդիմանում էր նրանց.

---

*) Ահաւասիկ այն երգը. «Բաբելոնի գետի ափը նստած էինք մենք և ողբում էինք, երբ մտաբերում էինք Սիօնը, կախելով մեր տաւիղները գետափնեայ ուռենիների վրայից. Մեզ գերի վարողներն ասում էին՝ երգեցէք մեզ համար Սիօնի երգերից. բայց ի՞նչպէս երգէինք մենք Աստուածային երգը օտար երկրի մէջ, օտար երկնքի տակ: Թող մոռացուի իմ աջս, եթէ ես քեզ մոռանամ, Երուսաղէմ. թող լեզուս ցամաքի կոկորդիս մէջ, եթէ չ՚մտաբերեմ քեզ, եթէ Երուսաղէմը իմ բոլոր ուրախութիւններիս գլուխը չ՚համարեմ: Յիշիր, Տէ՛ր, Եդոմի որդոցը Երուսաղէմի օրը, երբոր նրանք ասում էին. քանդեցէք, կործանեցէք նրան հիմնովին: Դուստր Բաբելոնի, աւերիչդ երկիրների, Օրհնեալ է, որ կըհատուցանէ քեզ այն ամենի համար, ինչ-որ դու արեցիր մեզ. Օրհնեալ է, որ վեր կ՚առնէ քո մանուկները, և քարին զարկելով կ՚սպանէ նրանց»:

Նա նախագուշակեց, որ Տէրը բարձի թողի կ'անէ նրանց, բայց կըգայ ժամանակ, երբ Նա կըդառնայ եւ յաւիտեան կըթագաւորէ նրանց մէջ։ Եզեկիէլը տեսաւ մի դաշտ ոսկորներով լի։ Եւ ահա Աստուծոյ խօսքով ջղերը միացրին այդ ոսկրները. նրանց վրայ միս աճեց եւ կաշիով ծածկուեցաւ, իջաւ նրանց վրայ հոգին եւ նրանք կենդանացան։ Եւ ասաց Աստուած. «Այս ոսկրները Իսրայէլի տունն է։ Ես կըփրկեմ նրան եւ կըմաքրեմ եւ կըլինին Իմ ժողովուրդը, իսկ Ես կըլինիմ նրանց Աստուածը։ Ես նրանց հետ խաղաղութեան ուխտ կըկապեմ. այդ ուխտը յաւիտենական կըլինի»։

77. ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷՆ ԵՒ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԸ.

Դանիէլը դեռեւս շատ երիտասարդ էր, երբ նրան գերի տարան։ Նա եւ նրա հետ մի քանի Եբրայեցի երիտասարդներ սաստիկ հաճելի թուեցան Նաբուգոդոնոսոր թագաւորին։ Թագաւորը հրամայեց, որ կրթեն նրանց բաբելական լեզուի մէջ, որպէսզի նրա իշխանութեան մէջ կարողանան պաշտօն վարել։ Ուսանելու ժամանակ եւս Դանիէլը եւ նրա ընկերները՝ Անանիան, Ազարիան, եւ Միսայէլը, խըստութեամբ էին կատարում իրանց հաւատի կանոնները։ Նրանց արքայական սեղանից էին կերակրում. բայց որովհետեւ այդ կերակուրները շատ անգամ բաղկացած էին լինում այնպիսի խորտիկներից, որոնք Մովսիսական օրէնքով արգելուած էին, այդ պատճառով նրանք իրանց դաստիարակից թոյլտուութիւն խնդրեցին, որ միմիայն հացով եւ բանջարեղէնով կերակրուեն։ Երբոր երիտասարդների դաստիարակութիւնն աւարտուեցաւ, թագաւորն անձամբ քննեց աշակերտների գիտութիւնը եւ նրանց մէջ Դանիէլից ու նրա երեք ընկերներից խելօքն ու զարգացածը չ'գտաւ։ Նա իր պալատում պաշտօններ յանձ-

նեց նրանց։ Շուտով մի անցք պատահեցաւ, որ ապացուցեց թէ Դանիէլը մարգարէ է։ Մի անգամ Նաբուգոդոնոսորը սարսափելի երազ տեսաւ, բայց երբոր զարթեց, այլեւս չէր մտաբերում նրան։ Նա կանչեց իր երկրի երազահաններին, որ պատմեն եւ բացատրեն իր երազը, եւ սաստիկ զայրացաւ նրանց վրայ, երբ չ'կարողացան կատարել իր ցանկութիւնը։ Իբրեւ խաբեբայ ճանաչելով՝ թագաւորն ամենին մահուան դատապարտեց։ Այդ միջոցին Աստուած յայտնեց Դանիէլին եւ երազը, եւ նրա նշանակութիւնը։ Դանիէլն եկաւ թագաւորի մօտ եւ ասաց նրան. «Այն գաղտնիքը, որի մասին արքան հարցնում է, չեն կարող բացատրել իմաստունները։ Բայց կայ երկնքում մի Աստուած, բացատրող ամեն գաղտնիքների։ Դու մտածում էիր, արքայ, թէ ինչ կըպատահի այսուհետեւ եւ Աստուած երազի մէջ ցոյց տուեց քեզ ինչ-որ պիտի պատահի։ Դու տեսել ես երազումդ մի արձան, որի գլուխը մաքուր ոսկուց էր, կուրծքը եւ ձեռներն արծաթից, բունը պղնձից, ոլոքները երկաթից, իսկ ոտները մասամբ երկաթից, մասամբ կաւից։ Յետոյ դու տեսար, որ սարից պոկուեցաւ մի քար, զարկեց արձանի ոտներին եւ փշրեց նրան։ Եւ ոչինչ հետք չ'մնաց արձանից, իսկ քարը մեծացաւ եւ դարձաւ իբրեւ լեառն ու լցրեց երկիրը։ Սա երազն էր. բայց ահա եւ նրա բացատրութիւնը. ոսկեայ գլուխը դու ես. քեզանից յետոյ մի այլ թագաւորութիւն կըյառաջանայ, ստոր քան թէ քոնը, իսկ նրանից յետոյ կ'սկսուի մի այլ թագաւորութիւն, պղնձէ թագաւորութիւն, որ կըտիրէ բոլոր երկրին։ Այս թագաւորութիւնից յետոյ չորրորդ թագաւորութիւնը կըգայ՝ ամուր որպէս երկաթ, բայց նա բաժան բաժան կըլինի եւ կըդառնայ դիւրաբեկ որպէս կաւ։ Այդ ժամանակ Տէրը կըկացուցանէ մի այլ թագաւորութիւն, որ կ'աճէ եւ կըտարածուի ու կըլցնէ երկիրը եւ յաւիտեան չի կործանուիլ»։ Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը տեսաւ, որ

Իսրայէլի Աստուածն է աստուածների Աստուած եւ թագաւորների իշխող։ Նա մինչեւ գետին երկրպագեց Դանիէլին եւ նրան Բաբելոնեան նահանգի կառավարիչ նշանակեց, միեւնոյն ժամանակ աւագ անուանելով Բաբելոնում եղած բոլոր իմաստունների վրայ։ Բայց Դանիէլը խնդրեց Թագաւորին, որ նա Բաբելոնեան նահանգի կառավարութիւնը յանձնէ իր երեք ընկերներին՝ Անանիային, Ազարիային եւ Միսայէլին, իսկ իրան թոյլ տայ մնալ արքունի պալատում։ Թագաւորն ընդունեց նրա առաջարկութիւնը։

Բայց Թագաւորի հաւատը եւ յարգանքը դէպի Իսրայէլի Աստուածը աւելի եւս սաստկացաւ հետեւեալ անցքից յետոյ։ Բաբելոն քաղաքի մօտ (Դէերայ դաշտումը) նա մի ոսկէ արձան կանգնեցրեց, որի բարձրութիւնն էր վաթսուն կանգուն եւ լայնութիւնը վեց կանգուն, եւ հրաման արձակեց, որ իր տէրութեան բոլոր կուսակալները, զօրավարները, զօրագլուխները, պետերը, գործակալները եւ իշխանները ժողովուին եւ երկրպագութիւն տան այդ արձանին, որպէս ճշմարիտ Աստուծոյ։ Բոլոր մեծամեծները կատարեցին Թագաւորի հրամանը, բացի Անանիայից, Ազարիայից եւ Միսայէլից։ Զայրացած Թագաւորը հրամայեց բորբոքեալ հնոցի մէջ ձգել Դանիէլի ընկերներին, բայց Աստուած փրկեց նրանց։ Նրա հրեշտակը ցած իջաւ հնոցի մէջ եւ կանգնելով երիտասարդների հետ, ոչնչացրեց կրակի այրող զօրութիւնը եւ ցօղ դարձրեց նրան։ Խստասիրտ տանջողը կրակի միջից փոխանակ հառաչանքների՝ փառաբանական օրհներգութիւններ էր լսում. երեք ընկերներն աղօթում եւ օրհնաբանում էին Աստուծուն։ Նաբուգոդոնոսորը ապշած էր այս հրաշալի երեւոյթի վրայ։ Նա հրամայեց նրանց դուրս գալ հնոցից, խոստովանուեց, թէ կայ մի Աստուած, որ անհամեմատ վեր է իրանից եւ հզօր ձեռքով պաշտպանում է իր հպատակներին—աշխարհի բռնաւորների տանջանքներից։ Նա հրաման արձակեց բոլոր իր տէրութեան մէջ, յայտնելով՝ թէ կըպատժուի այն մարդը, որ կըհամարձակուի հայհոյել Յուդայի Աստուծուն։

78. ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԻ ՊԱՏԺՈՒԻԼԸ.

Դանիէլի ընկերների հրաշալի ազատութիւնը հարկադրեց Թագաւորին խոստովանել Տէր Աստուծոյ ամենակարողութիւնը, բայց չ'ոչնչացրեց նրա գոռոզութիւնը։ Այն ժամանակ Տէրը նորից զգուշացրեց նրան։ Մի անգամ Նաբուգոդոնոսորը երազի մէջ տեսաւ, որ երկրի միջից բարձրացել է մի ծառ, որի ճղները տարածուել են բոլոր երկրի վրայ։ Նրա տակը հանգստանում էին գազանները. ոստերի մէջ բոյն էին շինել թռչունները, իսկ պտուղներով կերակրվում էին բոլոր երկրի վրայ ապրողները։ Եւ ահա երկնքից ցած իջաւ Սուրբը եւ ասաց. «Կտրեցէք այդ ծառը եւ քշտեցէք նրա ճղները, բայց գլխաւոր արմատը թողէք հողի մէջ եւ նա երկաթէ կապանքներով կապկապած թող խոտերի մէջ թաց լինի ցօղից եւ գազանների հետ կերակրուի խոտով։ Նրա մարդկային սիրտը հեռանայ իրանից եւ գազանային սիրտ տրուի նրան եօթը տարի շարունակ։ Թող գիտենան, որ Ամենաբարձրեալն է կառավարում մարդկային թագաւորութիւնները»։ Նաբուգոդոնոսորն այս երազը Դանիէլին պատմեց եւ նրանից բացատրութիւն խնդրեց։ Դանիէլը շփոթուեցաւ, բայց Թագաւորից խրախուսուելով՝ այսպէս խօսեց. «Թագաւոր, այդ երազը քո ատելիներին եւ նրա բացատրութիւնը քո թշնամիներին լինի։ Ծառը դու ես, Թագաւոր. քեզ կ'անջատեն մարդկանցից. քո բնակութիւնդ կըլինի դաշտային գազանների հետ եւ եօթն տարի խոտով կըկերակրեն

քեզ, որպէս եզն, մինչեւ որ ճանաչես, թէ Բարձրեալն է թագաւորում մարդկանց վրայ եւ ում կամենում է, տալիս է նրան: Իսկ գլխաւոր արմատը հողի մէջ թողելը նշանակում է, որ բոլոր այդ ժամանակի ընթացքում թագաւորութիւնդ քո ձեռքին կըմնայ: Այժմ, թագաւոր, աւելացրեց Դանիէլը, եթէ կըբարեհաճիս՝ ընդունիր ինձանից հետեւեալ խորհուրդը. քաւիր քո յանցանքները ողորմութիւնով եւ քո անօրէնութիւնները—տնանկներին խղճալով, գուցէ երկայնամիտ լինի Աստուած քո յանցանքների մասին»:

Մի տարուց յետոյ թագաւորը ճեմում էր իր պալատի պատշգամբի վրայ եւ գոռոզութեամբ նայում էր մայրաքաղաքի փառահեղութեան եւ գեղեցկութեան վրայ: Յանկարծ նա մի ձայն լսեց երկնքից, որ կրկնում էր նրան սուրբի խօսքը՝ ինչ-որ լսել էր երազում: Թագաւորի խելքն իսկոյն նսեմացաւ. նրա բանականութիւնը խաւարեցաւ եւ ընկաւ կատաղութեան մէջ: Այն ժամանակ նրան շղթայեցին եւ թողեցին բաց երկնքի տակ: Նրա մարմինը առիւծի մազերի պէս երկայն մազերով ծածկուեցաւ եւ նրա եղունգները մեծացան որպէս թռչունի ճանկեր: Եօթն տարուց յետոյ Նաբուգոդոնոսորի ուշ ու միտքը վերադարձաւ. նա խելօքացաւ, աչքը դէպի երկինք բարձրացրեց եւ փառաբանեց Աստուծուն, խոստովանելով, որ Նա է տիրում թագաւորներին: Նրա հիւանդութեան ժամանակ տէրութիւնը կառավարում էին իր մերձաւորները նրա անունով:

---

79. ԲԱՂԴԱՍԱՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ. ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ.

Նաբուգոդոնոսորի մեռնելուց յետոյ՝ Բաբելոնեան թագաւորութիւնն սկսեց տատանուել: Նրա յաջորդի՝ Բաղդասարի ժամանակ՝ Բաբելոնին պաշարում էին Մեդացիք եւ Պարսիկները: Չնայելով այս վտանգներին, Բաղդասարն անդադար խնջոյքներ էր տալիս Բաբելոնի մէջ: Մի անգամ, խնճոյքի ժամանակ, նա հրամայեց բերել այն սրբազան անօթները, որ վերցրած էին Երուսաղէմի տաճարից եւ սկսեց նրանցով գինի խմել, կամենալով ցոյց տալ թէ չէ վախենում Եբրայեցոց Աստուծուց: Յանկարծ օդի մէջ երեւեցաւ մէկ ձեռք եւ սկսեց գծագրել պատի վրայ մի քանի անյայտ խօսքեր: Բաղդասարը սարսափեց, դողդողաց եւ աղաղակեց, որ դուշակողներ կանչեն: Եկան Բաբելոնի բոլոր իմաստունները, բայց նրանցից ոչ մինը մինչեւ անգամ կարդալ չ՚կարողացաւ գրածը: Խնճոյքի մէջ մտաւ մայրը. «Մի՛ շփոթուիր, ասաց նա որդուն, քո թագաւորութեան մէջ կայ մի մարդ, որի մէջ ապրում է Աստուծոյ հոգին. գաղտնիքը միայն Դանիէլը կարող է բացատրել»: Այդ ժամանակները Դանիէլին պալատից հեռացրել էին. այդ էր պատճառը, որ Բաղդասարը նրան չէր ճանաչում: Երբոր Դանիէլը ներս մտաւ, Բաղդասարն ասաց նրան. «Եթէ կարողանաս կարդալ եւ բացատրել այդ գիրը, ծիրանի կըհագնես եւ ոսկէ մանեակ կըկախես պարանոցիցդ եւ իշխանութեամբ երրորդը կըլինիս իմ տէրութեան մէջ»: Դանիէլը պատասխանեց. «Քո պարգեւներդ քեզ լինին եւ պատիւդ ուրիշներին տուր, բայց այդ գիրը ես կըկարդամ եւ մեկնութիւնը ցոյց կըտամ քեզ: Թագաւոր, Բարձրեալ Աստուածը քո հայր Նաբուգոդոնոսորին շնորհեց թագաւորութիւն եւ փառք եւ ամենքը նրանից

սարսափում էին: Բայց երբոր նա միայն իր անձի վրայ էր մտածում, պատժվում էր: Եւ դու այս բոլորը գիտենալուց յետոյ՝ յանդգնեցար Աստուծոյ դէմ, Նրա տան անօթներով ըմպեցիր, անհոգ կուռքերին բարձրացրիր, իսկ Աստուծուն չ՚փառաւորեցիր: Դրա համար եւ ուղարկեց Աստուած այն ձեռքը, որ գրեց այդ գիրը: Եւ ահա ինչ է գրած. Մանէ, Թէկէլ, Փարէս: Մանէ—չափեց Աստուած քո թագաւորութիւնը եւ վերջացրեց նրան: Թէկէլ—կշռեց եւ թեթեւ գտաւ քեզ: Փարէս—բաժանեց քո թագաւորութիւնը եւ տուեց Մեդացոց եւ Պարսից»: Այս խօսքերն ասելուց յետոյ՝ Դանիէլը դուրս գնաց: Նոյն գիշերը Մեդացիք եւ Պարսիկները տիրեցին քաղաքին: Թագաւորն սպանուեցաւ: Այսպիսով կործանուեցաւ Բաբելոնի հզօր թագաւորութիւնը: Նրա տեղը բռնեց Մարաց—արծաթէ թագաւորութիւնը՝ Նաբուգոդոնոսորի տեսիլքին համեմատ:

80. ԴԱՆԻԷԼԻ ՀՐԱՇԱԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՌԻՒԾՆԵՐԻ ԳՈՒԲԻՑ.

Մարաց Դարեհ թագաւորը անչափ յարգում էր Դանիէլին. Նա կարգեց նրան մինը այն երեք գլխաւոր հրամանատարներից, որոնք պիտի կառավարէին տէրութիւնը եւ մտադիր էր իր թագաւորութեան մէջ ամենաաւագը նշանակել նրան: Բայց Դանիէլի բարձրանալը միւս իշխանների եւ մեծամեծների նախանձը շարժեց դէպի նա, եւ նրանք մտածեցին մի կերպով ոչնչացնել նրան: Մի որեւէ յարգելի պատճառ չկարողանալով գտնել, նրանք աշխատեցին թագաւորից այնպիսի հրաման հանել, որ ընդդէմ լինի Մովսիսական օրէնքին, հաստատ գիտենալով, որ Դանիէլն այդ

տեսակ հրաման չի կատարիլ եւ իրանք պատճառ կ՚ունենան ամբաստանել նրան: Նրանց դրդմամբ Դարեհը հրամանագրեց, որ իր հպատակներից ոչ ոք երեսուն օրուայ ընթացքում չ՚համարձակուի ոչինչ խնդրել՝ ոչ Աստուածանից, ոչ մարդկանցից, բացի թագաւորից. իսկ ով որ այս հրամանը կըխախտէ, նրան կըձգեն առիւծներով լի վիրապի մէջ: Հրամանն ստորագրուեցաւ: Դանիէլի թշնամիներն սկսեցին դիտել նրա գործողութիւնները: Դանիէլն առաջուայ պէս շարունակում էր օրը երեք անգամ աղօթել Աստուծուն: Մարգարէի թշնամիները տեղեկութիւն տուին այս մասին թագաւորին եւ պահանջեցին, որ նա առիւծների գուբը ձգուի, որպէս թագաւորի հրամանը խախտող: Դարեհը հասկացաւ իր նախարարների խորամանկութիւնը եւ մինչեւ մութը պաշտպանում էր Դանիէլին, բայց վերջապէս ստիպուեցաւ տեղի տալ: Դանիէլին առիւծների գուբը գլորեցին: Նրանից բաժանուելիս՝ Դարեհն ասաց. «Թող պահպանէ քեզ այն Աստուածը, Որին դու շարունակ ծառայում ես»: Գուբի բերանը քարով ծածկեցին եւ թագաւորի ու մեծամեծների կնիքներով կնքեցին, որպէսզի արտաքուստ ոչինչ վնաս չ՚պատճառեն նրան: Թագաւորն ամբողջ գիշեր չ՚կարողացաւ քնել. Նա սաստիկ տրտմեցած ու վշտացած էր:

Լուսադէմին թագաւորն շտապեց դէպի գուբը: Նա համարեա հաւատացած էր, որ Դանիէլը կորած է, այդ պատճառով ողբալի ձայնով կանչեց. «Դանիէլ, կենդանի Աստուծոյ ծառայ, քո Աստուածը, Որին այնպիսի անդաւաճան կերպով ծառայեցիր, կարողացա՞ւ արդեօք փրկել քեզ առիւծներից»: Գուբի խորքից պատասխան լսուեցաւ. «Իմ Աստուածն ուղարկեց Իր հրեշտակը եւ խցեց առիւծների բերանը եւ նրանք չ՚կարողացան ինձ վնասել, որովհետեւ ուղղութիւն գտայ Նրա առաջ, որպէս եւ քո առաջ, թագաւոր, ոչինչ յանցանք չ՚ունիմ գործած»: Թագաւորն ուրախացած՝ հրա-

մայեց անպատճառ ազատել Դանիէլին եւ նրա տեղը ձգել նրա թշնամիներին, որոնց մի ակնթարթում յօշոտեցին առիւծները: Այն ժամանակ թագաւորը հրաման արձակեց, որ բոլոր իր հպատակները մեծարեն Դանիէլի Աստուծուն, որը մեծամեծ նշաններ ու հրաշքներ էր անում: Դանիէլը թէ Դարեհի եւ թէ Պարսից Կիւրոս թագաւորի ժամանակները մեծ յաջողութիւն եւ նշանաւորութիւն ունէր:

Այսպիսով երեւեցաւ, որ Բաբելոնեան գերութիւնը թէ Եբրայեցոց եւ թէ հեթանոսներին մեծամեծ օգուտներ բերեց: Եբրայեցիք հրաժարուեցան կռապաշտութիւնից, իսկ հեթանոսներից շատերն ընդունեցին կենդանի Աստուծուն:

Այսքան փառքի եւ պատուի մէջ Դանիէլն ունէր եւ իր վշտերը: Յայտնի է, որ Երեմիայ մարգարէն եօթանասունամեայ գերութիւն էր նախագուշակել Յուդայի բնակիչներին եւ որ Երուսաղէմը աւեր ու թափուր պիտի մնար մինչեւ այն ժամանակը, երբ Աստուած կկործանէր Բաբելոնեան տէրութիւնը: Եւ ահա լրանում էր եօթանասուն տարին, հաշուելով այն օրից, երբ առաջին գերիները Երուսաղէմից դէպի Բաբելոն գերի տարուեցան: Բաբելոնի թագաւորութիւնն էլ կործանուել էր արդէն, իսկ Եբրայեցիք մնում էին դեռ եւս գերութեան մէջ: Երուսաղէմը դեռ եւս աւերակ էր: Դանիէլը մտածում էր, թէ շուտով արդեօք կ'ազատէ Տէրը Իր ժողովրդը գերութիւնից, շուտով կըգայ արդեօք մարգարէների բերանով խոստացած Փրկիչը: Այդ ժամանակ Աստուած Գաբրիէլ հրեշտակապետի ձեռքով յայտնեց Դանիէլին, որ Փրկիչը կ'ազատէ մարդկանց մեղքերից եւ յաւիտենական պատժից եօթանասուն՝ եօթներորդ տարուց յետոյ (70×7=490), հաշուելով այն օրից, երբ Եբրայեցոց իրաւունք կըտրուի վերանորոգել Երուսաղէմը:

Պարսկական իշխանութեան ժամանակները.

81. ՅՈՒԴԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ. ԱՆԳԷՈՍ ԵՒ ԶԱՔԱՐԻԱՅ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ.

Դարեհի մահից յետոյ՝ Պարսից Կիւրոս թագաւորը միահեծան տէր դարձաւ բոլոր Միջին Ասիայի (537 թ. Ք. ա.): Նրա իշխանութեան տակ ընկան բոլոր գերի Իսրայէլացիք: Ցանկանալով իր երկրի սահմաններում իրան հաւատարիմ ժողովուրդ ունենալ եւ գիտենալով, որ Եբրայեցիք շարունակ տենչում են Երուսաղէմի վերականգնելու մասին, նա նրանց թոյլտուութիւն տուեց վերադառնալ իրանց հայրենիքը եւ իրանց Աստուծոյ համար տաճար կառուցանել այնտեղ: Բացի դրանից՝ Կիւրոսը նրանց շատ անօթներ տուեց, որոնք վերցրած էին Սողոմոնեան տաճարից եւ այդ նահանգի գլխաւոր կառավարիչներին հրամայեց, որ ամեն բանում օգնեն նրանց եւ մինչեւ անգամ արքունի հաշուով տան նրանց արջառ եւ ոչխար Եհովային զոհ մատուցանելու թագաւորի եւ թագաւորական տան բոլոր անդամների համար: 42,000 Եբրայեցիք ցանկութիւն յայտնեցին հայրենիք վերադառնալու: Զորաբաբէլի առաջնորդութեան ներքոյ; որ Յուդայի վերջին թագաւորի թոռն էր, եւ Յեսու քահանայապետի առաջնորդութեամբ նրանք վերադարձան Յուդայի երկիրը եւ տեղաւորուեցան իրանց նախկին քաղաքների մէջ:

Երուսաղէմ գալուն պէս՝ Եբրայեցիք ամենից առաջ Աստուծոյ համար սեղան կանգնեցրին, ճիշտ առաջուան տեղը, եւ սկսեցին շնորհակալութեան զոհ մատուցանել: Միւս տարի նրանք հին տաճարի աւերակների վրայ նոր

տաճարի շինութեան հիմքը դրին: Այդ միջոցին Սամարացիք առաջարկեցին նրանց իրանց օգնութիւնը, միայն այն պայմանով, որ իրանց էլ թոյլ տան զոհ մատուցանել նոյն տաճարում: Բայց Եբրայեցիք մերժեցին նրանց առաջարկութիւնը. նրանք երկիւղ էին կրում, որ յարաբերութիւն հաստատելով Սամարական աղանդի հետ, իրանց Աստուածպաշտութիւնը կարող է կորցնել իր նախնական մաքրութիւնը: Այս բացառութիւնը սաստիկ վշտացրեց Սամարացոց. նրանք վրէժ առնելու համար, սկսեցին ամեն տեսակ արգելքներ պատճառել տաճարի շինութեանը: Կիւրոսին առաջ ամբաստանութիւն արին, որ Յուդայեցիք ոչ թէ տաճար են կառուցանում, այլ ամրացնում են Երուսաղէմի պարիսպները, որ յետոյ կարողանան ապստամբել եւ գլխագրել թագաւորին: Կիւրոսը հաւատաց եւ հրամայեց դադարեցնել շինութիւնը. բայց Հրէաները հեշտութեամբ արդարացան եւ թոյլտուութիւն ստացան շարունակել սկսածը: Տասնեւինն տարուայ ընթացքում վերջացրին նրան, չնայելով բազմաթիւ արգելքներին: Այդ արգելքների եւ դժուարութիւնների ժամանակ նրանց շատ էին օգնում Անգէոս եւ Զաքարիայ մարգարէները: Հրէաները կարծում էին, որ իրանց նոր տաճարը նոյնչափ փառաւոր չէ, որչափ հինն էր: Անգէոսը Աստուծոյ կողմից պատասխանեց. «Կըգայ ամեն ազգերի Հայցեալը (այսինքն Փրկիչը) եւ Ես այս տաճարը փառքով կլցնեմ, եւ այս վերջին տաճարի փառքն աւելի կլինի, քան առաջիններինը: Այստեղ ես խաղաղութիւն կտամ աշխարհին» (Անգ. II. 7. 8.): Իսկ Զաքարիան կարծես իր աչքով տեսնում էր Փրկչին Երուսաղէմ մտնելիս եւ ցնծութեամբ բացականչում էր. «Ուրախացիր, դուստր Երուսաղէմի, ահա Թագաւոր քո գայ առ քեզ. արդար եւ Փրկիչ, նոյն հեզ՝ հեծեալ յէշ եւ յաւանակի նորոյ» (Զաք. Թ. 9): Անգէոսը եւ Զաքարիան թողել են իրանց մարգարէութիւնների գրքերը:

82. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ. ԵԶՐ, ՆԷԵՄԻ ԵՒ ՄԱՂԱՔԻԱՑ ՄԱՐԳԱՐԷՔ.

Պարսից թագաւորները Եբրայեցիներից միմիայն հարկ էին պահանջում. նրանց թոյլ էր տուած ապրել իրանց օրէնքների համաձայն եւ մինչեւ անգամ իրաւունք էր տուած ունենալ իրանց զօրքի հրամանատարները եւ դատաւորները: Հայրենի երկրի մէջ նոր տեղաւորուելու ժամանակ՝ նրանց շատ օգնեցին Եզրը եւ Նէեմին:

Եզրը մի գրագէտ քահանայ էր, շատ հմուտ Սուրբ Գրքի գիտութեան: Պարսից թագաւորը մեծամեծ ընծաներով Երուսաղէմ ուղարկեց նրան եւ հրամայեց վերահսկել, որպէսզի բոլոր Եբրայեցիք իրանց հայրենի օրէնքներին համաձայն ապրեն եւ իրաւունք տուեց պատժել, մինչեւ անգամ մահով մեռցնել նրանց, որոնք կխախտեն Մովսիսական օրէնքը: Եզրը՝ երբոր Երուսաղէմ հասաւ, ամենից առաջ լուծեց եւ անվաւեր համարեց բոլոր այն պսակները, որ Հրէաները կապել էին այլ ազգերի հետ, որովհետեւ Մովսիսական օրէնքով արգելուած էր դա. նա վերականգնեց շաբաթական տօնն ու Տաղաւարահարաց տօնին ժողովրդի առաջ կարդաց Օրինաց Գիրքը, որի մէջ ժողովուած էին բոլոր սուրբ գրուածները: Նրա եռանդոտ յորդորանքին անսալով՝ ժողովուրդը երդմամբ խօսք տուեց սրբութեամբ կատարել բոլորը, ինչ-որ օրէնքի մէջ գրուած է, իսկ ժողովրդի ծերերը, քահանաները եւ Ղեւտացիներն ստորագրեցին այդ խոստմնագիրը:

Այդ միջոցներումն էր, ինչպէս երեւում է, որ բոլոր Յուդայի քաղաքներում հիմնուեցան Սինագոգներ, այսինքն այնպիսի աղօթատներ, ուր ամեն շաբաթ օրեր Հրէաները պիտի հաւաքուէին աղօթելու եւ Աստուծոյ խօսքը լսելու:

Դպիրները այդ աղօթատներում ուսուցիչներ կարգուեցան՝ ժողովրդին կրթելու համար, եւ տուեցան մեծարելի անունս ռաբբի (վարդապետ, ուսուցիչ)։ Ժողովուրդը յարգում էր ռաբբիներին այնպէս, ինչպէս իրանց ծնողներին եւ հայր էր անուանում նրանց։ Շաբաթ օրերն ամէն Երրայեցի անպատճառ սինագոգումը ներկայ պիտի լինէր հասարակաց աղօթքին։ Ով որ այցելում էր աղօթատուն, նա հրէայ էր համարւում, իսկ եթէ նրանցից մէկը յայտնապէս եղծում էր Աստուածային կանոններից մէկը, նրան մերժում էին Սինագոգից։ Այս մերժումը սարսափելի պատիժ էր համարւում նրանց համար։ Ամէն մի Սինագոգի մօտ կար մի ուսումնարան եւ մի մատենադարան։

Նէեմին Պարսից Արտաշէս թագաւորի տակառապետն էր։ Սա երբոր իմացաւ, թէ Պաղեստինի հրէաները շատ զրկանքներ են կրում Սամարացիներից եւ թէ Սամարացի սատրապները չեն պաշտպանում նրանց, թոյլտուութիւն խնդրեց թագաւորից վերանորոգել Երուսաղէմի պարիսպները, որպէսզի կարողանան դրացի ցեղերի ճնշումներից զերծ մնալ։ Արտաշէսը նրան ուղարկեց այդ շինութիւնը գլուխ բերելու համար (456 թ. Ք. ա.)։ Երբոր Նէեմին ընդհանուր ժողովրդի համակրութեամբ եւ գործակցութեամբ սկսեց շինել պարիսպը, Սամարացիք աշխատեցին արգելք լինել նրանց՝ առաջ արհամարհանքով ու սպառնալիքներով, իսկ յետոյ մինչեւ անգամ ույժ գործ դնելով. բայց նրանց աշխատանքը հետեւանք չ'ունեցաւ, որովհետեւ Նէեմին գործը իմաստութեամբ էր առաջ տանում. նա ժողովրդի կէս մասը աշխատեցնում էր մինչեւ ճաշ, իսկ միւս կէսը զէնքը ձեռին սպասում էր թշնամուն դիմադրելու։ Ճաշից յետոյ պաշտօնները փոխւում էր։ Քաղաքի պարիսպը պատրաստուեցաւ 52 օրումը եւ այնուհետեւ Երրայեցիք Սամարիայի սատրապի իշխանութեան տակից դուրս եկան։ Այս հանգամանքն աւելի

եւս սաստկացրեց այն ատելութիւնը, որ Հրէից ու Սամարացոց մէջ գոյութիւն ունէր. բանն այն տեղը հասաւ, որ Յուդայի բնակիչները չէին կամենում ոչինչ յարաբերութիւն ունենալ Սամարացոց հետ, մեղք էին համարում նրանց տունը մտնել, սեղանակից լինել, նրանց ձեռքից ու նրանց ամանով ջուր խմել անգամ եւ այլապէս չէին կոչում Սամարացոց, եթէ ոչ շներ։

Նէեմիի մահից յետոյ Յուդայեցոց կառավարում էին քահանայապետները։ Քահանայապետը նախագահ էր համարւում այն բարձրագոյն դատարանի, որ բաղկացած էր եօթանասուն ծերերից եւ գտնվում էր Երուսաղէմում։ Այդ ժողովն Սինէդրիոն (ծերակոյտ) էր կոչվում։ Բացի դրանից ամէն քաղաք իր դատարանն ունէր, որոնք բարձրագոյն դատարանի իրաւասութեան ներքոյ էին գտնվում եւ կոչվում էին փոքր սինէդրիոններ։

Եզրի եւ Նէեմիի կառավարութեան ժամանակ Աստուած ուղարկեց իր ժողովրդի համար վերջին մարգարէին՝ Մաղաքիային։ Մաղաքիան յանդիմանում էր Հրէաներին, որ յոյս էին դնում, թէ զոհաբերութեամբ կարող են փրկուել առանց սրտերը մաքրելու. նա իր մարգարէութիւնների մէջ խօսում էր Փրկչի եւ Նրա Կարապետի մասին. «Ահա Ես ուղարկում եմ Իմ հրեշտակը, որ պատրաստէ Իմ ճանապարհը Իմ առաջին, եւ յանկարծակի տաճարը կըգայ Տէրը, Որին դուք որոնում էք եւ ուխտաց Հրեշտակը, Որին ցանկանում էք» (Մաղ. III. 1.)։ «Եւ ահա Ես կ'ուղարկեմ Եղիային, քանի որ չէ եկել մեծ եւ երեւելի Տիրոջ օրը. նա հայրերի սիրտը դէպի որդիքը կըդարձնէ, իսկ մարդու սիրտը դէպի իր ընկերը . . .»։ (Մաղ. IV 5, 6.)։ Մաղաքիայ մարգարէն թողել է իր մարգարէութիւնների գիրքը։

83. ԵՍԹԵՐ ԵՒ ՄՈՒՐԹՔԷ.

Պարսից իշխանութեան ժամանակ այն Հրէաներին, որոնք բնակւում էին Պարսկական Թագաւորութեան ներքոյ, մեծամեծ օգնութիւններ հասցրեց մի Եսթեր անունով Հրէայ աղջիկ, որ զրկուած էր իր ծնողներից՝ եւ ապրում էր իր հօրեղբօր որդի Մուրթքէոսի մօտ: Մուրթքէն ծառայում էր Պարսից Արտաշէս մեծի պալատում: Մի անգամ Արտաշէս Թագաւորը բարկացաւ իր կնոջ վրայ եւ տիկնութիւնից զրկեց նրան. իսկ նրա փոխանակ իրան ներկայացրած բազմաթիւ աղջիկների միջից կին ընտրեց Եսթերին, առանց գիտենալու թէ նա Հրէայ է եւ Մուրթքէի ազգական: Մի անգամ Մուրթքէն պատահմամբ տեղեկացաւ, որ պալատի երկու ներքինիք խօսքը մին են արել, որ Թագաւորին սպանեն: Նա իսկոյն յայտնեց այդ բանը Եսթերին, իսկ սա պատմեց Թագաւորին: Չարագործներն սպանուեցան, իսկ Մուրթքէի ծառայութիւնը գրուեցաւ արքունի յիշատակարանի մէջ:

Այդ միջոցին Համան անունով մի իշխան շատ սիրելի էր դարձած Թագաւորին: Արտաշէսի հրամանով բոլոր ծառայողները՝ Համանին պատահելիս, պարտական էին ծունր դնել եւ երկրպագութիւն տալ նրան:

Մուրթքէն այդ պայմանը չկատարեց: Խստասիրտ եւ հպարտ Համանը, կամենալով վրէժ առնել Մուրթքէից, մաքումը դրեց բնաջինջ անել Պարսից իշխանութեան ներքոյ եղած բոլոր հրէաներին: Այդ մտադրութեամբ գնաց Թագաւորի մօտ եւ ասաց. «Քո տէրութեան մէջ, ո՛րքայ, ցրուած է մի ժողովուրդ, որի օրէնքները նման չեն ոչ մի ազգի օրէնքներին եւ որը արհամարհում է արքունի հրամանները: Եթէ ինձ իրաւունք կըտաք նրանց ջնջելու, այն ժամանակ ես գանձարանին տասն հազար արծաթ տաղանդ

(25,800,000) օգուտը հասցնեմ: Թագաւորը համաձայնեցաւ եւ այդ գործը Համանին յանձնեց: Նա տուեց նրան իր մատանին եւ ասաց. «Վարուի՛ր այդ ժողովրդի հետ, ինչպէս կամենաս»: Համանն իսկոյն Թագաւորի անունից հրովարտակ գրեց, որի մէջ նշանակուած էր օրը, երբ պիտի ջնջուէին բոլոր հրէաները, իսկ նրանց կարողութիւնները յափշտակուէին: Կոտորածի օրը վիճակով նշանակուեցաւ վեցերորդ ամսի տասներեքերորդ օրը: Հրէայք սարսափի մէջ ընկան, երբ այդ հրովարտակի հրատարակման լուրն առան: Մուրթքէն խնդրեց Եսթերին փրկել իր ազգը: Պարսից օրէնքով ո՛չ ոք առանց Թագաւորից կանխապէս հրաման կամ հրաւէր առնելու, իրաւունք չ'ունէր մտնել նրա սենեակը, եւ այդ կանոնը չկատարողը մահուան պատժի էր ենթարկւում: Սակայն Եսթերը իր ազգի համար վճռեց զոհել մինչեւ անգամ իր անձը եւ առանց ժամանակ կորցնելու մտաւ Թագաւորի սենեակը: Արտաշէսն այս անակնկալ եւ անսովոր այցելութեան վրայ զարմացած, այնպիսի խոժոռ եւ զայրագին նայեց նրան, որ Եսթերն ուշաթափ եղաւ: Թագաւորի գութը շարժեցաւ, բարձրացաւ գահից եւ աշխատում էր ուշքի բերել նրան, եւ երբոր նա փոքր ինչ հանդարտեցաւ, ձգեց իր գաւազանը դէպի նա եւ ասաց. «Ի՞նչ ես կամենում, Եսթեր, ես քո եղբայրն եմ. մի՛ վախենար, չես մեռնիլ, մեր երկուսիս Թագաւորութիւնը մի է»: Եսթերը սիրտ առաւ եւ խնդրեց Թագաւորին, որ Համանի հետ իր մօտ ճաշելու շնորհ բերէ: Արտաշէսը կատարեց Թագուհու խնդիրը եւ Համանի հետ գնաց նրա մօտ: Ճաշից յետոյ Թագաւորն առաջարկեց Եսթերին, որ իրանից մի արքայական շնորհ խնդրէ: Եսթերը խնդրեց, որ միւս օրն եւս Համանի հետ բարեհաճէ այցելութիւն անել իրան: Թագաւորը խոստացաւ, որ կըգայ: Համանը գոռոզացած դուրս եկաւ Թագուհու մօտից եւ պատահեցաւ Մուրթքէին: Վերջինս ոչ միայն երկրպագութիւն

չտուեց նրան, այլ տեղից անգամ չ՚կանգնեց: Այդ արհամարհանքը սաստիկ զայրացրեց Համանին. նա իր կնոջ եւ բարեկամների խորհրդով յիսուն կանգուն բարձրութեամբ մի կախաղան պատրաստել տուեց իր բակում եւ մտքում դրեց առաւօտեան շատ վաղ գնալ թագաւորից հրաման խնդրել եւ Մուրթքէին կախել: Բայց Աստուած այլապէս էր կարգադրել: Այդ գիշերը Արտաշէս թագաւորի քունը չտարաւ եւ ժամանակ անցկացնելու համար նա հրամայեց բերել արքունի յիշատակարանը եւ կարդալ իր առաջ: Երբոր հասաւ այն տեղ, ուր գրած էր թէ ինչպէս Մուրթքէն ազատեց թագաւորի կեանքը, Արտաշէսը հարցրեց. «Իսկ ինչ պարգեւ ստացաւ Մուրթքէն այդ ծառայութեան համար»: —Ոչինչ, պատասխանեցին նրան: Լոյսը բացուել էր: Թագաւորը հարցրեց. «Իմ խորհրդականներից ով կայ դուրսը»: Եւ երբոր յայտնեցին թէ Համանը դուրսը կանգնած է, հրամայեց ներս կանչել: Համանն եկել էր իր մտադրութիւնը կատարելու եւ բոլորովին վստահ՝ ներս մտաւ թագաւորի մօտ: Արտաշէսը հարցրեց. «Ի՞նչ պէտք է անել այն մարդուն, որին կկամենայի փառաւորել եւ մեծացնել»: Համանը մտածեց՝ եւ կարծելով թէ թագաւորն իրան է կամենում պարգեւատրել, ասաց. «Այդպիսի մարդուն պէտք է թագաւորական պատմուճան հագցնել, արքայական երիվարի վրայ նստացնել, թագաւորական պսակով զարդարել նրա գլուխը եւ հրամայել իր իշխաններից գլխաւորին, որ նրա ձիու սանձից բռնած ման ածէ մայրաքաղաքի փողոցներում եւ բարձրաձայն յայտարարէ. «Ահա որպիսի մեծարանք է տրւում այն մարդուն, որին թագաւորը կամենում է փառաւորել»: Թագաւորը հրամայեց. «Արա այդ ամենը Մուրթքէին, այն այն հրէային, որ նստում է արքայական դռների առաջ. բայց զգուշ կաց, որ ասածներիցդ ոչ մի բան չպակասեցնես»:

Համանը կատարեց թագաւորի հրամանը եւ յուսահատ ու զայրացած տուն դարձաւ. իսկ Մուրթքէն վերադարձաւ եւ պալատի առաջ իր սովորական տեղը բռնեց: Բայց ահա մօտեցաւ ճաշի ժամանակը: Համանն շտապեց թագուհու մօտ: Այնտեղ եկաւ եւ թագաւորը: Հացկերութեան ժամանակ Արտաշէսը հարցրեց իր կնոջը. «Ի՞նչ ես խնդրում ինձանից, որ անեմ քեզ»: Եսթերը պատասխանեց. «Ես խնդրում եմ միայն, որ ինձ շնորհես իմ կեանքը, եւ աղաչում եմ, որ իմ ցեղակիցներին եւս ազատես: Ինձ եւ իմ ժողովուրդը կամենում են սպանել, կոտորել եւ բնաջինջ անել»: —Ո՞վ է այն մարդը եւ ինչպէս է համարձակւում նա այդպիսի գործ գործել, զայրացած կանչեց թագաւորը: «Այդ չարագործը Համանն է», պատասխանեց Եսթերը: Թագաւորը վրդովուեցաւ եւ դուրս եկաւ այգին: Համանն ընկաւ Եսթերի ոտները, գրկեց նրանց եւ գթութիւն էր խնդրում: Այդ միջոցին ներս մտաւ թագաւորը եւ Համանին թագուհու ոտների տակ տեսնելով, աղաղակեց. «Ի՜նչպէս, նա մինչեւ անգամ համարձակւում է թագուհուն անպատուել»: Ծառաներն իսկոյն Համանի գլուխը ծածկեցին: Դա նշան էր, որ նա մահով պիտի պատժուի: Ծառաներից մինն ասաց. «Նա արդէն իր տան առաջ կախաղան էր պատրաստել Մուրթքէի համար»:

—Իրան կախեցէք նրա վրայ, հրամայեց թագաւորը:

Համանի բոլոր հարստութիւնը թագաւորը Եսթերին շնորհեց եւ երբ իմացաւ, որ Մուրթքէն նրա հօրեղբայրն է, իր մօտ կանչեց եւ Համանի փոխանորդ նշանակեց, տալով նրան իր մատանիքը: Բայց որովհետեւ թագաւորի մի անգամ գրուած հրովարտակը չէր կարող ոչնչանալ, այդ պատճառով Արտաշէսը նոր հրովարտակ հրատարակեց, որով իրաւունք էր տալիս հրէաներին նշանակեալ օրը զէնքը ձեռին պաշտպանել իրանց անձը եւ կարողութիւնը: Վեցերորդ ամսի 13-ին

բոլոր թագաւորութեան մէջ յարձակումներ եղան Հրէաների դէմ, բայց նրանք արդէն պատրաստ էին եւ յաղթող հանդիսացան: Մուրթքէի խորհրդով այդ օրուայ յիշատակն անմոռանալի պահպանելու համար, ազգային տօն սահմանեցին, որ Փուրիմ (վիճակ) կոչուեցաւ: Բոլոր այս պատահարները Մուրթքէն գրեց մի առանձին գրքի մէջ, որ կոչւում է Գիրք Եսթերայ:

84. ՅՈՒԴԻԹ.

Բաբելացոց Նաբուգոդոնոսոր թագաւորը, իր թագաւորութեան տասն եւ երկուերորդ տարին՝ կամեցաւ պատերազմ բանալ Մարաց Արփաքսադ թագաւորի հետ: Պատերազմն սկսելուց առաջ՝ նա իր հարեւան ազգերին հրաւէր ուղարկեց, որ օգնական զօրք տան. բայց հարեւանները՝ պատերազմի փոփոխական բնաւորութիւնից երկիւղ կրելով, մերժեցին Նաբուգոդոնոսորի առաջարկութիւնը: Բաբելացոց թագաւորը յաջողութեամբ վերջացրեց իր սկսած պատերազմը եւ այնուհետեւ մտքումը դրեց վրէժխնդիր լինել այն ազգերին, որոնք իր առաջարկութիւնը մերժել էին: Իր Հոլոփեռնէս զօրավարին նա մեծ զօրքերով այդ ազգերին պատժելու ուղարկեց: Ուր տեղից որ անցնում էր Հոլոփեռնէսը, հրով եւ սրով կործանում էր այն երկիրը. շատերը ամենախոր հպատակութեամբ նրա առաջն էին դուրս գալիս եւ ծանր պայմաններով հազիւ կարողանում էին իրանց աշխարհը զարհուրելի կոտորածից ազատել: Հրէաներն եւս, միւս ազգերի պէս, Հոլոփեռնէսի սոսկալի հարուածներին պիտի ենթարկուէին. նրանք եւս թագաւորի հրաւէրը մերժողներից էին: Աստուծոյ ժողովուրդը՝ երբոր լսեց Հոլոփեռնէսի արարքը, սաստիկ անհանգիստ եղաւ. ժողովրդեան

աւագների հրաւիրանքով բոլոր Իսրայէլացիք ծոմով եւ աղօթքով Աստուծոյ օգնութեանը դիմեցին: Նրանք ամրացրին Բետուղիայ քաղաքը, որի վրայ էր գալիս թշնամին, նրա շրջակայ բարձրութիւններն ու կիրճերը բռնեցին եւ վճռեցին մինչեւ վերջին շունչը պաշտպանուել:

Հոլոփեռնէսը զարմացաւ Հրէաների անակնկալ ընդդիմութեան վրայ, նա իր ձեռքի տակ եղած իշխաններին եւ նուաճած երկիրների մեծամեծներին խորհրդի հրաւիրեց եւ նրանցից տեղեկութիւն հարցրեց Հրէաների մասին, որոնց ինքը չէր ճանաչում: Բոլոր իշխաններից միմիայն մինը վստահացաւ ճշմարտութիւնը բացայայտ կերպով յայտնել Հոլոփեռնէսին: Դա Ամոնացոց առաջնորդ Աքիոլին էր: Համառօտ կերպով պատմելով բաբելացի զօրապետին Հրէից ազգի, նրանց ծագման, կրօնի եւ պատերազմական կարգութիւնների մասին, նա յայտնեց որ Իսրայէլացոց յոյսը Աստուծոյ վրայ է, որ նրանք անպարտելի են, քանի որ Աստուծոյ դէմ չեն մեղանչել, որովհետեւ Տէրը, ինչպէս ամեն ժամանակ, այնպէս էլ հիմա, կ՚օգնէ նրանց եւ կ՚ազատէ Բաբելացոց ձեռքից, եթէ ջերմ սրտով Նրա օգնութեանը դիմեն: Այնուհետեւ Աքիոլը խորհուրդ տուեց Հոլոփեռնէսին պատերազմ չտալ Իսրայէլացոց հետ, այլ սպասել, մինչեւ նրանք կը յուսահատուին եւ կը բարկացնեն իրանց Տէր Աստուծուն: Աքիոլի ճշմարտախօսութիւնը դուր չեկաւ Հոլոփեռնէսին. նա սաստիկ բարկացաւ եւ հրամայեց ոտն ու ձեռը կապել եւ տանել Իսրայէլացոց բանակի մօտ վայր գցել նրան, որպէսզի իր աչքովը տեսնէ նրանց կործանումը եւ ինքն էլ նրանց հետ սատակի:

Իսրայէլացիք ցաւակցութեամբ ընդունեցին Աքիոլին եւ ժողովելով բոլոր նշանաւոր մարդկանց՝ ամենքի առաջ պատմել տուին իր ասածները եւ Հոլոփեռնէսի մտադրութիւնները: Այնուհետեւ բոլոր ժողովուրդը՝ աւելի եւս ջեր-

միաբանութեամբ, դիմեցին դէպի Աստուած եւ խնդրեցին կործանել Ասորոց իշխանի ամբարտաւանութիւնը:

Այդ միջոցին Հողեփեռնէսը մեծ զօրքով մօտեցաւ Բետուղիային. շրջապատեց նրան եւ բոլոր քաղաք մտնող ջրերի առաջը փակելով՝ խիստ նեղը գցեց բնակիչներին: Երեսուն եւ չորս օր համբերելուց յետոյ՝ ժողովուրդը պահանջեց իր առաջնորդներից, որ քաղաքի դռները բաց անեն եւ թշնամին կամաւորապէս ներս հրաւիրեն: Ուրիշ ելք չգտնելով՝ քահանայապետն ու իշխանները համոզեցին ժողովրդին, որ հինգ օր եւս սպասեն. իսկ եթէ մինչեւ հինգ օրը Տէրը ոչինչ ելք չի ցոյց տալ, այն ժամանակ քաղաքը թշնամուն կը յանձնեն:

Այդ ժամանակ Բետուղիայում ապրում էր մի անչափ գեղեցիկ եւ առաքինի կին, Յուդիթ անունով: Նա շատ հարուստ էր, տնանկներին ողորմող, Աստուծոյ բոլոր պատուիրանները ճշտութեամբ կատարող, խելօք ու հեռատես: Իր մարդու մահից յետոյ՝ Յուդիթը դեռեւս երիտասարդական հասակում, մերժեց աշխարհային վայելքները եւ սկսեց կանոնաւոր սրբակեաց կեանք անցկացնել: Երբոր նա իմացաւ, թէ ժողովրդի առաջնորդները վճռել են հինգ օրից յետոյ քաղաքը թշնամուն յանձնել, սաստիկ վշտացաւ, եւ յոյսն Աստուծոյ վրայ դնելով՝ վճռեց ազատել իր հայրենիքը բռնակալի վրէժխնդրութիւնից: Քահանայապետից եւ իշխաններից խօսք առնելով՝ որ մինչեւ հինգ օրը հաստատ կըմնան իրանց խօսքին, նա հանեց իր սուգի զգեստը, ամենաշքեղ կերպով հագնուեցաւ եւ իր աղախնի հետ դուրս գալով Բետուղիայից, ուղղուեցաւ դէպի թշնամու բանակը: Ոչ ոք չվստահացաւ հարցնել, թէ ինչ նպատակով է նա դուրս գնում քաղաքից. ամենքը համոզուած էին, որ նա, որպէս խելացի եւ հեռատես կին, որեւիցէ սխալմունք չի անիլ: Յուդիթի աղախինն իր պարկի մէջ մի քանի օրուայ ուտելու պաշար ունէր, հրէից օրէնքներին համեմատ պատրաստած:

Երբոր Յուդիթն ու իր աղախինը թշնամու առաջապահ զինուորներին հասան, որանք իսկոյն բռնեցին եւ տարան նրան Հողեփեռնէսի մօտ: Հողեփեռնէսը զարմացաւ հրէայ կնոջ աննման գեղեցկութեան վրայ եւ շատ քաղցրութեամբ ընդունեց նրան: Յուդիթը հաւատացրեց Հողեփեռնէսին, թէ Հրէայք մեղանչեցին իրանց Աստուծոյ դէմ եւ թէ Տէրը մի քանի օրից յետոյ նրանց Բաբելացոց ձեռքը պիտի մատնէ. յետոյ խոստացաւ, որ շուտով ինքը, Աստուծոյ հրամանով, հնար կըգտնէ առաջնորդել նրան մինչեւ Երուսաղէմ եւ իր իշխանական գահը նրա մէջ հաստատել: Այնուհետեւ Յուդիթը խնդրեց, որ իրան մի քանի օր իրաւունք տրուի ապրել իր հայրենական օրէնքներին համեմատ, ուտել իր աղախնու պատրաստած կերակուրը եւ ամեն առաւօտ եւ երեկոյ Բաբելացոց բանակից դուրս գնալ Աստուծուն առանձին աղօթք անելու, մինչեւ որ Նա ցոյց կըտայ Իսրայէլացոց կորստեան ժամը: Հողեփեռնէսը կատարեց Յուդիթի բոլոր խնդրուածքը եւ հրամայեց, որ նրա՝ առաւօտեան եւ երեկոյեան ել ու մուտին ոչ ոք արգելք չդնէ: Յետոյ նա իր գանձարանում Յուդիթին առանձին սենեակ յատկացրեց եւ իր ներքինապետին հրամայեց, որ ամեն զգուշութեամբ պահպանէ նրան: Երեք օր Յուդիթը Բաբելացոց բանակում մնաց. Նա բոլորովին առանձնական կեանք էր վարում, ոչ ոքի հետ չէր տեսնւում եւ միմիայն առաւօտ ու երեկոյ դուրս էր գնում բանակից, լուացւում էր Իսրայէլացոց օրէնքներին համեմատ եւ աղօթելով Աստուծուն՝ վերադառնում էր:

Չորրորդ օրը Հողեփեռնէսը կամեցաւ վերջ դնել գեղեցիկ եբրայեցի կնոջ առանձնական կեանքին. մեծ խնջոյք պատրաստեց եւ Յուդիթին էլ ճաշի հրաւիրեց: Յուդիթը ուրախութեամբ ընդունեց Հողեփեռնէսի հրաւէրը եւ ընթրիքի ժամանակ իրան որքան կարելի է ուրախ էր ցոյց տալիս: Հողեփեռնէսն էլ Յուդիթի գեղեցկութեամբ յափշտա-

կուած, սովորականից աւելի խմեց եւ երբոր խնջոյքը վերջացաւ եւ ամէնքը ցրուեցան, նա համարեց թէ ուշքը կորցրած, ընկաւ իր մահճակալի վրայ եւ քնեցաւ: Յուդիթն օգուտ քաղեց յարմարաւոր րոպէից, դարձաւ դէպի Աստուած եւ ասաց. «Տէր, զօրացրու ինձ այս ժամիս»: Յետոյ նա համարձակօրէն վեր առաւ Հողեփեռնէսի սուրը եւ ուժգին հարուածով կտրեց նրա գլուխը: Աղախինը, որ այդտեղ մօտիկ սպասում էր, Հողեփեռնէսի գլուխը իր պարկի մէջ գցեց եւ նրանք, սովորականին պէս, լուսաբացին դուրս գնացին բանակից աղօթք անելու: Փոքր ինչ հեռանալով թշնամու բանակից, նրանք շտապով մօտեցան Բետուղիային եւ ներս մտան: Մի րոպէի մէջ բոլոր իշխաններն ու քահանայապետը շրջապատեցին նրան: Յուդիթը պատմեց իր արածները եւ խորհուրդ տուեց, առանց ժամանակ կորցնելու, յարձակուիլ թշնամու վրայ: Երբ որ Իսրայէլացիք առաջին յարձակումն արին, Բաբելացիք սկսեցին ծիծաղել եւ ծաղրել նրանց. նրանք ժողովուեցան իրանց զօրապետի վրանի առաջ եւ անհամբերութեամբ նրա հրամանին էին սպասում: Վերջապէս տեսնելով որ Հրէայք իրանց յարձակումը սաստկացնում են, իսկ Հողեփեռնէսը չէ զարթում, վճռեցին վրանի դուռը բանալ եւ ներս մտնել: Բայց ի՜նչ. Հողեփեռնէսն ընկած էր յատակի վրայ եւ իր սեպհական արիւնի մէջ լողում էր: Սարսափը տիրեց ամէնքին. զօրապետի սպանման լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ բոլոր բանակի մէջ. ամէնքը իրարանցմամբ ընկան եւ զօրքը բանակը թողած՝ խառն ու անկարգ կերպով սկսեց փախչիլ: Իսրայէլացիք հալածեցին նրանց եւ Բաբելացոց բանակատեղը մտնելով՝ այնքան աւար ու հարստութիւններ գտան, որ երեսուն օրուայ ընթացքում հազիւ կարողացան ժողովել: Այդ ժամանակ Յուդիթը փառաբանական երգ երգեց դէպի Աստուած եւ բոլոր Իսրայէլացիք ձայնակցեցան նրան:

Յուդիթի արածները գրուած է Սուրբ Գրքում և կոչվում է գիրք Յուդիթայ:

Մակեդոնական իշխանութեան ժամանակները.

85. ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ.

Աղեքսանդր մեծը՝ Մակեդոնական թագաւորը, մեծ ույժերով պատերազմելու ելաւ Պարսից թագաւորի դէմ: Նա ջնջեց Պարսից բազմաթիւ զօրքը, նուաճեց Դամասկոս ու Սիդոն քաղաքները եւ Տիւրոսն էլ պաշարեց: Այդտեղից նա դեսպաններ ուղարկեց Յադդոս քահանայապետի մօտ, պատուիրելով, որ օգնական զօրք եւ պաշարեղէն ուղարկէ: Քահանայապետը պատասխանեց, որ նա երդուել է հաւատարմութեամբ ծառայել Պարսից թագաւորին եւ իր երդումը խախտել չէ կարող: Այս մերժումը սաստիկ զայրացրեց Աղեքսանդրին: Բայց Սամարիայի կառավարիչը այդպէս չ՛վարուեցաւ. նա իր ձեռքի տակ եղած երկիրներն ինքնայօժար կերպով Աղեքսանդրի իշխանութեանը յանձնեց, միայն խնդրեց, որ իրան իրաւունք տայ առանձին տաճար շինել Սամարիայում, Գարիզին լերան վրայ: Տաճարը շինուեցաւ եւ Սանաբաղատի (այսպէս էր իշխանի անունը) խնդրանքով նրա փեսայ Մանասէն քահանայապետ կարգուեցաւ: Մանասէն Յադդոսի եղբայրն էր եւ սամարուհու հետ պսակուելու պատճառով՝ մերժուած էր Երուսաղէմի Սինագոգից: Քահանայապետ կարգուելուց յետոյ՝ Մանասէն սկսեց ընդունել այն ամէն անձանց, որոնք, որպէս օրինազանց, մերժւում էին Երուսաղէմի Սինագոգից: Այս գործողութիւններն աւելի եւս մեծացրին այն երկպառակութիւնը, որ տիրում էր Հրէից եւ Սամարացոց մէջ:

Մինչ այս, մինչ այն՝ Աղէքսանդրը նուաճեց Տիւրոս քաղաքը եւ դիմեց դէպի Երուսաղէմ՝ Հրէաներին պատժելու համար: Քահանայապետն անկարող էր Աղէքսանդրի զօրքին դիմադրել: Պարսից թագաւորից օգնութիւն չստանալով եւ ստանալու ամենեւին յոյս չունենալով, որոշեց քաղաքը կամաւորապէս ենթարկել մեծ աշխարհակալի իշխանութեանը, որպէսզի աւելորդ արիւնհեղութեան պատճառ չլինի: Երբոր Աղէքսանդրը մօտենում էր քաղաքին, Յադդոսը քահանայապետական շքեղ զգեստով զգեստաւորուած, բազմաթիւ քահանաներով եւ ղեւտացիներով շրջապատուած, որոնք ամենքն էլ սպիտակ զգեստ ունէին հագած, խուռն ժողովրդի ուղեկցութեամբ, հանդիսաւոր կերպով դուրս եկաւ նրա առաջը: Աղէքսանդրն ապշեցաւ այս փառահեղ ընդունելութիւնից եւ յարգանքով երկրպագեց Յադդէին: Նրա զօրապետներից մինը այդ տեսնելով՝ ասաց. «Տէր, դու որ ամենքից երկրպագութիւն ես ստանում, ինչպէս եղաւ, որ մի հրէայ քահանայապետի առաջ այնքան ստորացար, որ նրան երկրպագութիւն տուիր»: Աղէքսանդրը պատասխանեց. «Ես երկրպագեցի ոչ թէ քահանային, այլ այն Աստուծուն, Որին նա ծառայում է: Երբ ես դեռ եւս Մակեդոնիայումն էի, երազումս մի մարդ տեսայ ճիշդ այսպիսի զգեստով. նա խոստացաւ ինձ, որ պարսկական իշխանութիւնն իմ ձեռքը կը մատնէ: Այժմ ես մտաբերեցի այն երազը եւ հաւատում եմ, որ ես ուղարկուած եմ Աստուծուց եւ պիտի կործանեմ Պարսից իշխանութիւնը»: Այնուհետեւ մտնելով Երուսաղէմի տաճարը՝ Աղէքսանդրը զոհ մատուց Աստուծուն: Այնտեղ կարդացին նրա առաջ Դանիէլի մարգարէութեան այն տեղը, ուր ասած էր, թէ Յունաց թագաւորը պիտի կործանէ Պարսից իշխանութիւնը: Աղէքսանդրը սաստիկ ուրախացաւ եւ այնուհետեւ մեծամեծ շնորհներ էր անում Հրէաներին: Նրա թոյլտուութեամբ նրանք ապրում էին եւ կառավարւում իրանց

օրէնքներին համեմատ, եւ շաբաթական տարին, երբ երկիրը չէին մշակում, հարկից ազատ էին: Բացի սրանից՝ նա միեւնոյն իրաւունքները խոստացաւ շնորհել այն հրէաներին, որոնք ապրում էին Մարաց աշխարհում եւ Բաբելոնում:

Միեւնոյն տարին Աղէքսանդրը տիրեց Եգիպտոսին եւ այնտեղ հիմնեց Աղէքսանդրիա քաղաքը, եւ բոլոր պարսկական թագաւորութիւնն իր ձեռքի տակ նուաճելուց յետոյ, յանկարծակի վախճանուեցաւ Բաբելոնում: Նրա ընդարձակ իշխանութիւնը բաժանեցին իրանց մէջ չորս զօրապետները: Պաղէստինը գտնվում էր Ասորոց երկրի եւ Եգիպտոսի մէջ: Ասորոց երկրում սկսեց պայազատել Սելեւկիոսը, իսկ Եգիպտոսում՝ Պտղոմէոսը: Այս երկու երկիրների թագաւորները շարունակ վիճում էին միմեանց հետ, թէ որին պիտի ընկնի Պաղեստինը: Սկզբումը նրան տիրեց Պտղոմէոս Լագոսը:

Հրէաստանին տիրելուց յետոյ, Պտղոմէոս Լագոսը մի քանի հազար հրէայ տարաւ իր հետ Աղէքսանդրիա, որպէսզի նրանց միջնորդութեամբ դէպի ինքն գրաւէ մնացած Հրէաներին: Նա նրանց իր հպատակ մակեդոնացիներին հաւասար իրաւունքներ տուեց եւ մինչեւ անգամ, որպէս նշան առանձին հաւատարմութեան, բերդերի պահպանութիւնը նրանց յանձնեց: Եւ արդարեւ այս շնորհներից խրախուսած՝ Հրէաներից շատերը կամովին գաղթեցին Եգիպտոսի մայրաքաղաքը: Սրանից յառաջացան այսպէս անուանեալ եգիպտական կամ Աղէքսանդրիական հրէաները:

Եգիպտոսին տիրող Մակեդոնացի թագաւորներից Եգիպտական Հրէաներին ամենից աւելի առանձնաշնորհութիւններ արեց Պտղոմէոս Փիլադելփոսը: Բոլոր ստրուկ հրէաներին նա գնեց եւ ազատութիւն շնորհեց: Նա ցանկացաւ Երուսաղէմից բոլոր սրբազան գրուածները Յունական լեզուով ունենալ, որ այն ժամանակուայ բոլոր ուսումնականների գործածական լեզուն էր: Նրա խնդրանքով Երուսաղէմի քահանայապետը

ուղարկեց 72 ծերեր, որոնք շատ հմուտ էին Եբրայական եւ Յունական լեզուների մէջ։ Սրանք միաբան աշխատութեամբ Սուրբ Գիրքը Եբրայերէնից Յունարէնի թարգմանեցին։ Սա կոչուեցաւ Եօթանասնից Թարգմանութիւն։ (Այս եօթանասնից թարգմանութիւնը համարվում էր ամենաընտիր օրինակը Սուրբ Գրքի, մանաւանդ քրիստոնէութիւնն սկսելուց յետոյ Եբրայական բնագրի մէջ մտան անհարազատ նորամուծութիւններ, իսկ հին օրինակները կորան։ Եօթանասնից թարգմանուած Յունական հարազատ օրինակից թարգմանուեցաւ եւ Հայերէն Աստուածաշունչը)։ Սրանով Պտղոմէոսը ոչ միայն եգիպտական հրէաներին մեծամեծ օգուտներ տուեց, այլեւ շատ յոյներ ու հռոմայեցիք սկսեցին կարդալ հրէից Սուրբ Գրքերը եւ հաւատացին Աստուծուն։ Այսպիսով նորահաւատների թիւն աւելի ու աւելի շատանում էր։

86. ՀՐԷԱՅՔ ԱՍՈՐՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ. ԱՆՏԻՈՔՈՍ ԵՊԻՓԱՆԻ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ.

Հրէայք երկար ժամանակ չմնացին Եգիպտական իշխանութեան ներքոյ։ Ասորոց թագաւորները, Անտիոքոս մեծը, եգիպտացոց իշխանութիւնից խլեց Պաղեստինը եւ միացրեց Ասորոց հետ։ Նոր թագաւորի իշխանութեան տակ հրէաներն սկզբում շատ բարեբախտ էին. Անտիոքոսը թոյլ տուեց նրանց ապրել իրանց օրէնքներին եւ սովորութիւններին համաձայն եւ մինչեւ անգամ հրամայեց, որ արքունական գանձարանից հոգան Երուսաղէմի տաճարի սեղանը վերանորոգելու ծախքը։ Բայց հրէից բարօրութիւնը երկար չտեւեց։ Անտիոքոս Մեծը մեռաւ եւ նրա տեղը նստեց մի ուրիշ Անտիոքոս, որ կոչվում էր Էպիփէյ կամ յունարէն Էպիֆան։ Այս Անտիոքոսի օրերով հրէաները սարսափելի թշուառութիւնների եւ հալածանքների ենթարկուեցան։

Ասորոց թագաւորութեան մէջ բազմաթիւ ցեղեր կային, որոնք իրարից տարբերվում էին ազգային սովորութիւններով, դաւանութիւններով եւ լեզուներով, այս պատճառով էլ այնտեղ այդ ցեղերի մէջ համերաշխութիւն չկար եւ յաճախ երկպառակութիւններ էին տեղի ունենում։ Փոխանակ այդ ազգերից իւրաքանչիւրին ազատ եւ հաւասար իրաւունք տալու, որ յարգեն իրանց ազգային սովորութիւնները, հաշտ նայեն իրանց դրացիների կրօնական խորութիւնների վրայ եւ լինեն ընդհանուր հայրենիքի քաղաքացի, Եպիփանը թիւր ճանապարհ ընտրեց նրանց հաշտեցնելու իրար հետ. նա կամեցաւ բռնութեամբ ոչնչացնել նրանց դարերով սեպհականած եւ նուիրագործած ազգային սովորութիւնները եւ ինքնուրոյնութիւնները եւ նրանցից ձուլել ու կազմել մի մեծ ազգութիւն։ Բայց բարեբախտաբար նրան այդ բանը չյաջողեցաւ, ինչպէս չէ յաջողել ոչ մի բռնաւորի, որ կամենում է իր նմանների իրաւունքները ոտնակոխ անել բոլորովին։ Եպիփանն ինքը յոյն էր. նա կարծում էր, թէ յունաց լեզուից ու հաւատից լաւը չկայ, այդ պատճառով հրամանագրեց իր բոլոր հպատակներին, որ ամենքն էլ հագնուեն որպէս Յոյն, խօսեն Յունարէն եւ երկրպագեն Յունաց աստուածներին։ Ով որ այդ հրամանը չէր կատարիլ, մահով պիտի պատժուէր։ Այս հրովարտակի մի օրինակն էլ Հրէաստան ուղարկուեցաւ։ Հասկանալի է, որ ոչ մի տեղ նա այնպիսի ընդդիմադրութեան չըպիտի հանդիպէր, ինչպէս այստեղ։ Երբէք հրէայք այսպիսի նեղ դրութեան մէջ չէին ընկած։ Նրանց ազգային բոլոր առանձնութիւնները, լեզուն, կրօնը, սովորութիւնը խլում էին նրանցից։ Թագաւորի հրամանի հետ Հրէաստան եկաւ եւ մի յոյն գիտնական, որի պաշտօնն էր սովորեցնել դարձող հրէաներին նոր հաւատի էութիւնը եւ արարողութիւնները եւ ջանք անել նրա յաջողակ տարածման մասին։ Սրա կարգադրութեամբ Երուսաղէմի տաճարի մէջ բազմեցրին

յունաց գլխաւոր աստուծու՝ Արամազդի պատկերը: Թերահաւատ եւ անհաստատ հրէաներից շատերն ընդունեցին եւ հնազանդեցան Թագաւորի հրամանին, շատերն էլ երկիւղից առ երես երկրպագում էին կուռքերին, բայց կային եւ այնպիսի հաստատամիտ անձինք, որոնց ոչ մի տեսակ պատիժ իրանց հաւատից չէր կարողանում դարձնել: Այսպիսիների թիւն էլ պակաս չէր: Դրանց մէջ նշանաւոր էր մի Եղիազար անունով ծերունի: Նա հմուտ գրագէտ էր, տեղեակ իր հաւատի աւանդութիւններին: Նրան ամենքն էլ յարգում էին իր առաքինութեան համար: Յոյներն աշխատում էին հէնց այսպիսի մարդկանց հաւատափոխ անել, գիտենալով որ նրանց օրինակին անգիտակցաբար պիտի հետեւէին հազարաւոր մարդիկ: Եղիազարին տարան կուռքերի սեղանի առաջ եւ առաջարկեցին, որ խոզի միս ուտէ (Մովսիսական օրէնքով հրէաներին արգելած էր այդ): Եղիազարը հրաժարուեցաւ: Նրա բարեկամները յորդորում էին նրան, որ ձեւացնէ, իբր թէ կատարում է Թագաւորի հրամանը: Բայց Եղիազարը չ'համաձայնեցաւ. «Իմ հասակն ու տարիքն ունեցող մարդու համար ամօթ է կեղծաւորութիւն անել: Երբոր երիտասարդները տեսնեն, թէ իննսուն տարեկան Եղիազարը կուռքերին երկրպագում է, նրանք աւելի շուտով կը գրաւուին»: Եղիազարին չարաչար սպանեցին:

Բայց աւելի սարսափելի էր մի Մակաբայեցի կնոջ եւ իր որդիների տանջանքը: Շամունէ անունով մի կին բերեցին Թագաւորի մօտ իր եօթն արու զաւակների հետ: Թագաւորն անձամբ առաջարկեց նրանց ուտել արգելեալ կերակուրը: Նրանք հրաժարուեցան: Այն ժամանակ սկսեցին ծեծել նրանց: Բայց ծեծի հարուածների տակ նրանք ասում էին. «Մենք շուտով կ'մեռնինք, քան թէ կ'եղծենք հայրենի օրէնքները»: Խստասիրտ Թագաւորն սկսեց սարսափելի տանջանքների ենթարկել նրանց. մօր աչքի առաջ որդիներից վեցի ձեռն ու ոտը

կտրատեցին, գլուխների կաշին, դեռ կենդանի, քերթեցին, եղունգերն արմատից կտրեցին, մարմինը մաշկեցին եւ վերջապէս տապակեցին թաւայի վրայ: Բայց պատիժների սաստկութիւնը չ'կարողացաւ «Մակաբայեցի» նահատակներին իրանց կրօնից եւ ազգային աւանդութիւններից ձեռք վերցնել տալ: Միայն ամենից կրտսեր որդուն դեռ եւս ձեռք չէին տուել: Եպիփանը յոյս ունէր գոնէ նրան համոզել: Նա սկսեց փաղաքշել պատանուն, պատիւ ու հարստութիւն խոստանալ, բայց ոչինչ չ'օգնեց: Այն ժամանակ նա կանչեց մօրը եւ յորդորեց նրան, որ խրատէ իր որդուն՝ չմերժել Թագաւորի առաջարկութիւնը եւ չ'հրաժարուիլ իր բախտից: Շամունէն դարձաւ դէպի իր որդին եւ ասաց. «Մի՛ վախենար այս գազանանման բռնաւորից եւ գնա՛ դէպի մահը այնպիսի համարձակութեամբ, ինչպէս քո եղբայրները, որպէսզի Աստուած քեզ յարութեան եւ արդարների վիճակին արժանացնէ»: Պատանին ընդունեց չարչարանքը եւ հաստատամտութեամբ համբերեց նրանց: Նրան սպանելուց յետոյ՝ նահատակեցին նաեւ մօրը: Այս նահատակները Սուրբ Գրքի մէջ յայտնի են «Մակաբայեցի եղբայրներ» անունով:

87. ԵԲՐԱՅԵՑՈՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՍՈՐՈՑ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿԻՑ: ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ.

Այս հալածանքների եւ թշուառութիւնների ժամանակ մի Մատաթիայ անունով քահանայ յայտնապէս գլուխ բարձրացրեց բռնաւորի դէմ եւ վճռեց իր հայրենիքն ազատել նրա ձեռքից: Նրա շուրջը հաւաքուեցան շատ հրէաներ, որոնք դեռ եւս հաւատարիմ էին մնացած իրանց հաւատին: Մատաթիան Երուսաղէմից քաշուեցաւ իր հայրենի քաղաքը՝ Մոդիին: Շուտով Թագաւորից ուղարկուած անձը հասաւ այդ քաղաքը եւ ժողովեց բնակիչներին, որ կռապաշտական զոհ

մատուցանեն։ Նա յորդորում էր Մաթաթիային, որ միւսներին օրինակ լինի եւ մեծամեծ ընծաներ էր խոստանում։ Բայց Մաթաթիան պատասխանում է. «Թող բոլոր մարդիկ թագաւորին հաճելի լինելու համար ուրանան իրանց հայրենաւանդ օրէնքները, բայց ես եւ իմ որդիքս հաւատարիմ կ'մնանք նրանց։ Աստուած ազատէ մեզ, որ նրա օրէնքները չ'թողենք եւ պատուէրները չ'կատարենք»։ Այդ միջոցին մի Եբրայեցի մօտեցաւ զոհի սեղանին, որպէսզի կռքերուն ծխէ նրա վրայ. քահանան սպանեց աստուածուրացին էլ, թագաւորի պատգամաբերին էլ, ինչպէս որ պահանջում էր Մովսիսական օրէնքը, ապա կործանեց սեղանը եւ ասաց իր շուրջը հաւաքուած ժողովրդին... «ով որ հաւատարիմ է իր հայրենի օրէնքներին, թող գայ իմ յետեւից»։ Քաղաքի բնակիչներից շատերը վեր առան իրանց ընտանիքն ու ստացուածքը եւ նրա հետ միասին դիմեցին դէպի անապատը (168 թ. Ք. ա.)։ Անտիոքոսի զօրապետը յետամուտ եղաւ նրանց։ Մի քարայրի մէջ նա գտաւ նրանցից մինչեւ հազար հոգի եւ վերանները յարձակուեցաւ։ Օրը շաբաթ էր։ Եբրայեցիք ոչ միայն չ'պաշտպանուեցան, այլ եւ այրերի ու կիրճերի դռները չ'կտրեցին։ Թշնամին կոտորեց նրանց։ Այդ անցքից յետոյ Մաթաթիան խորհուրդ կազմեց, որի մէջ վճռեցին, որ շաբաթ օրերն էլ պաշտպանուեն։

Բոլոր ջերմեռանդ հրէաները հաւաքուեցան Մաթաթիայի շուրջը. Նա բաւական նշանաւոր զօրք կազմեց եւ նրանց օգնութեամբ սկսեց պատերազմել թէ իրանց հալածողների եւ թէ այն հրէաների դէմ, որոնք ուրացել էին իրանց հաւատը։ Ասորոց վրայ յարձակուելով, նա փոքր առ փոքր հալածեց նրանց հրէից քաղաքներից եւ կռապաշտական սեղանները կործանեց։ Մեռնելու ժամանակ նա բոլոր որդիներին իր շուրջը հաւաքեց եւ իրանց հայրենիքի ազատութեան սրբազան գործը նրանց աւանդեց։ Նա պատուիրեց, որ հաստա-

տամտութեամբ առաջ տանեն նրան, եւ իր աւագ որդուն՝ Սիմոնին, խորհրդի նախանդամ նշանակեց, իսկ Յուդայ Մակաբայեցուն՝ իւր միւս որդուն, զօրքի հրամանատար կարգեց։

Յուդան զօրքի գլուխն անցնելով՝ մտաւ հրէից քաղաքները եւ ամեն տեղ կոտորեց աստուածուրացներին։ Անտիոքոսի զօրապետները երեք անգամ դուրս եկան նրա դէմ մեծամեծ զօրքերով եւ երեք անգամն էլ Յուդան ջարդեց նրանց զօրքը եւ մեծ աւար խլեց նրանց ձեռքից։ Թագաւորի գլխաւոր հրամանատարն ստիպուեցաւ վերադառնալ իրանց մայրաքաղաքը՝ պատերազմի համար նորից պատրաստութիւն տեսնելու։ Այդ միջոցից օգուտ քաղելով՝ Յուդան հրէաներին առաջարկեց տաճարը մաքրել եւ ճշմարիտ Աստուածպաշտութիւնը վերականգնել։ Դառնապէս արտասուեցան նրանք, երբ տեսան թէ մինչեւ որ աստիճան ապականած են Աստուծոյ տունը։ Բոլոր կռապաշտութեան վերաբերեալ իրերը ձգեցին անմաքուր տեղեր, հին սեղանը՝ որպէս պղծուած, քանդեցին եւ նրա փոխանակ նորը շինեցին, փոխեցին անօթները, մոմակալները, կանթեղները, բեմը, առաջաւորաց հացը վերան դնելու սեղանը եւ վարագոյրները։ Նորոգեալ տաճարի մէջ հանդիսաւոր զոհ մատուցին Աստուծուն։ Այդ օրը Եբրայեցոց համար մեծ տօնախմբութեան օր էր, եւ դրա յիշատակը պահպանելու համար հաստատեցին Տօն Նուիրման տաճարին։ Տօնի ժամանակ բոլոր տներում եւ սինագոգներում կանթեղներ էին վառում, այդ էր պատճառը, որ դա կոչուեցաւ տօն ճրագալուցի։ Բայց Յուդային չէր վիճակուած վերջացնել այսպէս յաջողութեամբ առաջ մղած գործը. այս ամենից յետոյ նա սպանուեցաւ թշնամու զէնքից մի կռուի ժամանակ։

Զօրքի հրամանատարութիւնն ընդունեց Յուդայի եղբայր Յովնաթանը։ Այդ ժամանակ Ասորոց թագաւորութեան մէջ մեծամեծ շփոթութիւններ էին սկսել գահաժառանգութեան

համար։ Անտիոքը մեռել էր։ Յովնաթանն օգուտ քաղեց այս հանգամանքից եւ այնքան արեց, որ Ասորոց գահը որոնողներից մինը Նրան Հրէից վրայ քահանայապետ կարգեց, ուղարկելով միեւնոյն ժամանակ ծիրանի պատմուճան եւ արքայական թագ։ Այսպիսով Ասորոց թագաւորը խոստովանուեցաւ, որ հրաժարւում է հաւատի համար Նրանց հալածելուց։ Չնայելով այս արտաքին բարեկամական ձեւերին, Յովնաթանին շուտով բռնեցին խորամանկութեամբ եւ սպանեցին։

Յովնաթանի տեղը Նրա աւագ եղբայր Սիմոնը բռնեց։ Սա իր քաջութիւններով ստիպեց Ասորոց թագաւորներին հրաժարուել Եբրայեցոց վրայ իշխելուց եւ յանձնել իրան Սիօն ամրոցը։ Շնորհապարտ Հրէաներն այս ամենից յետոյ Սիմոնին քահանայապետ եւ զօրքի գլխաւոր առաջնորդ (զօրապետ) հրատարակեցին եւ այս կոչումը հաստատեցին Նրա եւ Նրա որդոց վրայ մինչեւ մեծ Քահանայապետի՝ Քրիստոսի գալուստը (143 թ. Ք. ա.)։ Այդ ժամանակից սկսած Հրէայք կազմեցին անկախ թագաւորութիւն։ Սիմոնի որդին՝ Յովհաննէս Գիրկանոս առաջինը, տիրեց Գալիլիային, Սամարիային եւ Եդովմին։ Սա կործանեց Սամարացոց տաճարը, որով աւելի եւս զարգացրեց այդ երկու ցեղակից ժողովուրդների փոխադարձ ատելութիւնը։ Գիրկանոսի ժամանակ Հրէաստանում որոշ կերպարանքով երկու մեծ կուսակցութիւն կազմուեցաւ, Փարիսեցիք եւ Սադուկեցիք։ Այս կուսակցական չարիքների վրայ աւելացան եւ Գիրկանոսի յաջորդների ներքին երկպառակութիւնները։ Այդ կռիւներն առիթ բռնելով՝ Հռովմայեցիք Նրանց գործերի մէջ խառնուեցան։ Նրանք արքայական գահը խլեցին Գիրկանոս Բ-ից եւ միմիայն քահանայապետական տիտղոսը թողին Նրան։ Այսպիսով Պաղեստինն ընկաւ Հռովմայեցոց իշխանութեան ներքոյ։

Հրէից պատմութիւնը, Բաբելոնեան գերութիւնից ազատուելուց սկսած մինչև Հերովդէսի ժամանակը, Աստուածաշնչի մէջ գրուած է Եզրասի, Նէեմի և երեք Մակաբայեցոց գրքերի մէջ։

88. ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ. ՀԵՐՈՎԴԷՍ ԹԱԳԱՒՈՐԸ. ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՓՐԿՉԻ. ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԴՆԵՐ.

Յովհաննէս Գիրկանոս Բ-ի ժամանակը Հրէից մէջ նշանակութիւն ստացաւ մի Եդովմացի մարդ, Հերովդէս անունով։ Նա ամուսնացաւ թագաւորի թոռան վրայ եւ իր գաղտնի հնարների շնորհիւ այն տեղը հասաւ, որ Հռովմայեցիք Նրան Հրէից թագաւոր նշանակեցին (80 տ. Ք. ա.)։ Հերովդէսը խորամանկութեամբ տիրանալով գահին, միշտ երկիւղ ունէր, մի գուցէ գահի օրինաւոր ժառանգները երբ եւ իցէ աշխատեն խլել նրանից թագաւորութիւնը։ Կասկածամտութիւնը տիրեց Նրան եւ Նա սկսեց անխնայ ոչնչացնել ամենին, ումից երկիւղ ունէր։ Նա իր աներորդուն գետմահ արեց, սպանեց աներոջն ու փեսային, կնոջն ու զոքանչին, մինչեւ անգամ՝ իր երկու որդիներին եւս չ'խնայեց եւ իր խստասրտութեամբ սարսափի մէջ ձգեց ամենին։ Միեւնոյն ժամանակ կամենալով ժողովրդի սէրը եւ համակրութիւնը վաստակել, վերանորոգեց եւ փառաւորապէս զարդարեց Երուսաղէմի տաճարը եւ ժողովրդական թշուառութիւնների ժամանակ մեծամեծ բարեգործութիւններ արեց։ Չնայելով այս ամենին, Եբրայեցիք ատում էին Նրան եւ միայն այն բանով էին մխիթարւում, որ Աստուած շուտով պիտի ուղարկէ Նրանց Մեսիային որպէս թագաւոր, Որը եւ պիտի փրկէր Նրանց Հռովմայեցիներից եւ Հերովդէսից։

Մարգարէների խօսքերն արդէն կատարուել էին. Փրկչի գալստեան ժամանակը մօտեցել էր։ Այսպէս օրինակ, Յակոբ նահապետն ասել էր, որ Յուդայի ցեղից իշխաններ եւ առաջնորդներ չ'պիտի պակասեն, մինչեւ որ կըգայ Խաղաղարարը. իսկ այժմ Հրէայք հարկադրուած էին Հերովդէսին

թագաւոր ճանաչել, որ ոչ միայն Յուդայի ցեղից չէր, այլ եւ Հրէայ չէր: —Դանիէլ մարգարէն նախագուշակել էր, որ Քրիստոսը կըչարչարուի եօթանասներորդ եօթնեակի կիսին (486½ տ.) Երուսաղէմի նորոգութեան հրովարտակը տալուց յետոյ, եւ ահա այդ հրովարտակից մինչեւ այդ օրը անցել էր 413 տարի, երբ Հերովդէսը Հրէից թագաւոր նշանակուեցաւ: —Այդ ժամանակներումն էր նմանապէս, որ Սիմէօն ծերունուն Աստուածանից յայտնութիւն եղաւ, թէ չի մեռնիլ, մինչեւ չ'տեսնէ Քրիստոսին:

Այս մարգարէութիւններից եւ նշաններից Երբայեցիք հասկանում էին, թէ ով պիտի լինի Մեսիան եւ ինչ պիտի անէ. Նա պիտի ծնուի Բեթղեհէմում, Դաւթի ցեղից առաջացած կոյսից: Նա առատապէս պիտի ստանայ Հոգւոյն Սրբոյ շնորհը եւ պիտի լինի մեծ Մարգարէ Աստուծոյ. Նրա մի խօսքով կոյրերը պիտի տեսնեն, կաղերը պիտի գնան, բորոտները սրբուին, մեռեալները յարութիւն առնեն: Բայց մարդիկ շուտով չ'պիտի հաւատան Նրան եւ իբրեւ մեղապարտ՝ խաչի վրայ պիտի մեռցնեն. այնուհետեւ Նա իր մահով կ'ազատէ մարդկութիւնը, եւ կըքաւէ նրանց մեղքերը. ինչպէս Մովսէսի պղնձէ օձը փրկում էր իրան նայողներին, Նա եւս կըփրկէ իրան հաւատացողներին: Քրիստոսը մեռած կըմնայ երեք օր, ինչպէս Յովնանը մնաց ձկան փորումը երեք օր. երրորդ օրը Նա յարութիւն կ'առնէ եւ երկրի վրայ կըհաստատէ ճշմարտութեան եւ սիրոյ թագաւորութիւնը, որ վախճան չի ունենայ: Երբայեցոց այն եւս յայտնուած էր, որ Մեսիան որպէս հասարակ մարդ չի լինիլ, այլ Որդի Աստուծոյ եւ Տէր, որ Նա Աստուածամարդ պիտի լինի: Հրէից բարեպաշտները եւ գիտունները տեղեակ էին այս ամենին եւ այսպիսի Մեսիայի էին սպասում. բայց նրանց մեծամասնութիւնը վարակուած եւ կուրացած էր նախապաշարմունքներով եւ օրէնքներն ու մարգարէութիւնները թիւր կերպով

ըմբռնելով, բոլորովին սխալ գաղափար ունէր Մեսիայի մասին: Մեծամասնութիւնն սպասում էր, որ Մեսիան կըգայ աշխարհային փառքերով, իբրեւ երկրաւոր հզօր թագաւոր եւ իրանց կ'արժանացնէ աշխարհային ամենատեսակ վայելչութիւններին:

Երբայեցիներից մի քանիսները՝ ֆարիսեցիք, իրանց Աստուածոյ բարեկամներ էին համարում, որովհետեւ Աբրահամի ցեղից էին սերուած եւ իրանց հայրերի օրէնքներն ու աւանդութիւնները ճշտութեամբ էին կատարում. բոլոր օրէնքներն [illegible] ամենայն խստութեամբ կատարելով, նրանք միայն աշխատում էին, որ իրանց գործերը համաձայն լինին այդ օրէնքներին, բայց ամենեւին չէին հոգում, որ իրանց մտքերը, ցանկութիւնները եւ զգացմունքներն օրինաւոր լինին. Նրանք կարծում էին, թէ բարեպաշտ երեւել միեւնոյն է թէ բարեպաշտ լինել: Իրանց ծագմամբ եւ արտաքին ճշմարտասիրութեամբ հպարտացած, փարիսեցիք արհամարհանքով էին նայում հեթանոսներին եւ ամեն մի անբախտ մարդու, որ իրանց աղանդին չէր պատկանում, մերժում էին իրանցից, համարելով թէ նա դատապարտուած է Աստուածանից: Մեսիայից Նրանք սպասում էին, որ Նա կըլինի զօրեղ թագաւոր եւ բոլոր հեթանոսներին իր ձեռքի տակ կընուաճէ, երկրի վրայ հաստատելով իր երկրաւոր յաւիտենական թագաւորութիւնը եւ այդ թագաւորութեան մէջ առաջնակարգ դիրք կըբռնեն ֆարիսեցիք:

Փարիսեցոց ամենազօրեղ թշնամիները Սադուկեցիքն էին: Նրանք հերքում ու արհամարհում էին բոլոր հայրենական աւանդութիւնները, չէին հաւատում մարգարէներին, եւ մեռելների յարութեանը, չէին ընդունում ապագայ կեանքը եւ հրեշտակների գոյութիւնը: Մեսիայից Նրանք ոչ թէ փրկութիւն, այլ երկար կեանք եւ աշխարհային բարեբախտութիւն էին սպասում:

Երրորդ աղանդաւորները, որոնք լուացուողներ էին կոչվում, վիճում էին թէ Փարիսեցոց եւ թէ Սադուկեցոց հետ. Նրանք այն պատճառով էին լուացուող կոչվում, որ ամեն օր սրբազան լուացումն էին կատարում եւ երդմնեցուցանելով հիւանդին, կարծում էին թէ կըբժշկեն բոլոր տկարութիւնները: Նրանք հաւատում էին, որ չարը մարդկային մարմնից է ծագում. մարմինը հոգու բանտն ու սատանայի ստեղծագործութիւնն էին համարում եւ քարոզում էին, որ փըրկուելու համար ոչ զոհեր են հարկաւոր, ոչ օրինաւոր գործեր, այլ ամենախիստ պահեցողութիւն եւ զգուշութիւն այն ամեն բաներից, ինչ-որ կարող է բաւականութիւն տալ մարմնին: Նրանք առանձնակ եւ պահեցողական կեանք էին վարում՝ ամենախիստ ժուժկալութեամբ, եւ սպասում էին, որ Մեսիան կըլինի ամենախիստ անապականը եւ մարդկանց հոգիքը կ՚ազատէ բանտից:

Մեսիայի գալստեանն այնպիսի անհամբերութեամբ էին սպասում բոլոր աղանդաւորները եւ Նրա գալստեան գաղափարն այն աստիճան տարածուած էր հրէից մէջ, որ ամեն արկածախնդիր մարդիկ, որոնք կամենում էին փառքի ու պատուի արժանանալ, իրանց անձը իբրեւ Մեսիայ էին քարոզում եւ միշտ գտնում էին բազմաթիւ հետեւողներ, որովհետեւ խոստանում էին ազատել Իսրայելացոց Հռովմէական իշխանութիւնից եւ ամբողջ աշխարհի տէր դարձնել Նրանց:

Վ. Ե Ր Ջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Երես

1. Անտեսանելի հոգիների ստեղծումը 5
2. Աշխարհի ստեղծագործութիւնը 7
3. Մարդու ստեղծագործութիւնը 8
4. Նախահայրերի մեղանչելը 11
5. Մեղքի հետեւանքը 11
6. Կայէն և Աբէլ 14
7. Սէթի և Կայէնի սերունդը 16
8. Համաշխարհական ջրհեղեղ 18
9. Նոյի զոհաբերութիւնը և մարգարէութիւնը որդիների վիճակի մասին 20
10. Բաբելոնի աշտարակաշինութիւնը և ազգերի բաժանումը 22
11. Կռապաշտութեան երեւիլը մարդկանց մէջ . . . 23
12. Աբրահամի կոչումը 25
13. Ղովտի գերութիւնն ու ազատութիւնը. Մելքիսեդէկ . 27
— Իսմայէլի ծնունդը 28
14. Աստուծոյ ուխտը Աբրահամի հետ 29
15. Երեք անցորդները. Սոդոմ և Գոմոր քաղաքների կործանումը 30
16. Իսահակի ծնունդը և զոհաբերումը 33
17. Իսահակի ամուսնութիւնը 35
18. Իսահակը և Նրա որդիքը 38

19. Յակոբի ճանապարհորդութիւնը և բնակութիւնը Լաբանի մօտ 42
20. Յակոբի հայրենիք վերադառնալը 44
21. Յովսէփի երազները 46
22. Յովսէփի վաճառուիլը 47
24. Յովսէփը եգիպտական արքունիքում 51
25. Յովսէփի եղբայրների Եգիպտոս գալը 53
26. Եղբայրների երկրորդ անգամ գալը . . . 55
27. Յակոբի Եգիպտոս տեղափոխուիլը 59
28. Յակոբ նահապետի մահը 60
29. Իսրայէլացոց տառապանքները Եգիպտոսում . . 61
30. Բազմաչարչար Յոբը 63
31. Առաջնորդների ժամանակները, Մովսէսի ծնունդը, կըրթութիւնը և փախուստը 66
32. Մովսէսի կոչումը 66
33. Իսրայէլացոց ազատութիւնը 71
34. Իսրայէլացոց Եգիպտոսից դուրս գալը և Կարմիր ծովից անցնիլը 75
35. Իսրայէլացոց ճանապարհորդութիւնը մինչև Սինայ լեառը 77
36. Սինայի օրէնքները 79
37. Տասնաբանեայ պատուիրանների խախտումն և նորոգումը. 82
38. Խորան, սրբազան պաշտօնեաներ, տօներ և պաշտամունքներ 85
39. Հորէբից ուղևորութիւնը մինչև Քանանացոց երկիրը . 87
40. Կորխի, Դաթանի և Աբիրոնի խռովութիւնը, Ահարոնի գաւազանը 90
41. Աստուծոյ պատասխանը Մովսէսի և Ահարոնի վրայ. Պղնձէ օձը. Ամորհայեցոց և Բասանի թագաւորութիւնների նուաճումն 93
42. Մովսէսի վերջին կարգադրութիւնները և մահը . . 97
43. Իսրայէլացոց Աւետեաց երկիր մտնիլը . . . 99
44. Աւետեաց երկրի նուաճումը և բաժանումը . . 100
45. Է. դատաւորների ժամանակները. Եբրայեցոց վիճակը դատաւորների ժամանակ 104
46. Դեբովրա և Բարակ 106
47. Գեդէօն 107
48. Հեփթայէ 109

49. Սամսոն 110
50. Հեղի քահանայապետը և Սամուէլ մարգարէն . . 112
51. Հռութ 116
52. Թագաւորների ժամանակները. Սաւուղի ընտրութիւնը և թագաւոր օծուիլը 117
53. Աստուծոյ ցասումը Սաւուղի վրայ 120
54. Դաւթի օծումը և փառաւորուիլը 121
55. Սաւուղի հալածանքը Դաւթի դէմ 124
56. Սաւուղի մահը 126
57. Դաւթի թագաւորիլը 128
58. Դաւթի մեղանչումն 130
59. Դաւթի տառապանքը և մահը 132
60. Սողոմոնի իմաստութիւնը 137
61. Տաճարի շինութիւնը և օծումը 138
62. Սողոմոնի փառքը և նրա անկումը 139
63. Եբրայական թագաւորութեան բաժանումը . . . 142
64. Իսրայէլի թագաւորութեան պատմութիւնը, Յերոբովամը և նրա յաջորդները. մարգարէք 143
65. Աքաաբ և Ոքոզիայ թագաւորները. Եղիայ մարգարէն . 146
66. Եղիսէ մարգարէն. Յովրամ և Յէու թագաւորները . 153
67. Յովնան, Ամովս և Ովսիայ մարգարէները. Յերոբովամ II թագաւորը 160
68. Իսրայէլի թագաւորութեան կործանումը . . . 163
69. Տոբիթը և նրա որդի Տոբիան 164
70. Տոբիայի ճանապարհորդութիւնը և վերադարձը . . 165
71. Յուդայի թագաւորութեան պատմութիւնը. Յուդայի թագաւորութեան վիճակը 169
72. Ասայ, Յովսափատ և Յովաղ թագաւորը. Միքիայ մարգարէն 170
73. Եսայի մարգարէն 175
74. Աքազ, Եզեկիայ և Մանասէ թագաւորները . . . 177
75. Յովսիայ և Յուդայի վերջին թագաւորները, Երեմիայ մարգարէն. 182
76. Եբրայեցոց գրութիւնը. Բաբելոնեան գերութեան ժամանակները. Եզեկիէլ մարգարէն 186
77. Դանիէլ մարգարէն և նրա ընկերները 188

707

78· Նաբուգոդոնոսորի պատժուիլը 191

79· Բաղդասարի կորուստը. Բաբելոնեան թագաւորութեան անկումը 193

80· Դանիէլի հրաշալի ազատութիւնը առիւծների գուբից. 194

71· Յուդայի ազատութիւնը և տաճարի շինութիւնը Երուսաղէմում, Անգէոս և Զաքարիայ մարգարէները . . 197

82· Եկեղեցական և քաղաքական կարգերի վերանորոգումը. Եզր, Նէեմի և Մաղաքիայ մարգարէք . . . 199

83· Եսթեր և Մուրթքէ 202

84· Յուդիթ 206

85· Եբրայեցիք Աղէքսանդր Մակեդոնացու և Եգիպտական թագաւորների իշխանութեան ներքոյ 211

86· Հրէայք Ասորոց իշխանութեան տակ. Անտիոքոս Եպիփանի հալածմունքները 214

87· Եբրայեցոց ազատութիւնը Ասորոց թագաւորների իշխանութեան տակից. Մակաբայեցիք 217

88 Հռովմէական իշխանութեան ժամանակները. Հերովդէս թագաւորը. Անկախութիւն Փրկչի. Կրօնական աղանդներ 221

ՀՀ Ազգային գրադարան
NL0135275
ՀՀ Ազգային գրադարան
NL0135274